



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ

№ 17

А Р Т А Ш А Т

II

Ж. Д. ХАЧАТРЯН

АНТИЧНЫЕ НЕКРОПОЛИ

(РАСКОПКИ 1971—1977 ГГ.)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1981

Ռ 64999

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ *«Նյուն»*

№ 17

Ա Ր Տ Ա Շ Ա Տ

II

ժ. Դ. Խ Ա Չ Ա Տ Ր Ց Ա Ն

Ա Ն Տ Ի Կ Դ Ա Մ Բ Ա Ր Ա Ն Ա Դ Ա Շ Տ Ե Ր

(1971—1977 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ)

2052-80



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ ճեղքատուրքային և սզգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանում խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ,
պատմական գիտությունների թեկնածու Ա. Ա. ՔԱԼԱՆՔԱՐՅԱՆԸ
և կրտսեր գիտաշխատող Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

Խաչատրյան, Ժ. Գ.

Խ282 Անտիկ դամբարանադաշտեր: (1971—1977 թթ. պեղումները)
/Պատ. խմբ. Բ. Ն. Առաքելյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981.—
204 էջ, նկ. 18:

(ՀՍՍՀ ԳԱ, Հնագիտ. և ազգագր. ին-ա., Հնագիտ. պեղումները
Հայաստանում № 17, Արտաշատ, 2).

Աշխատությունը նվիրված է Արտաշատի հնագիտական արշավախմբի կողմից
պեղված անտիկ շրջանի դամբարաններին: Երևան են բերվում Հայաստանին և
հին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատին բնորոշ քաղման ձևերին վերաբերող
և որ հետաքրքիր փաստեր: Գամբարանային նյութերը, խեցեղենը, ապակին, կավե
արձանիկները և այլն, աղերսվում են Արտաշատ քաղաքի և միջնաբերդի նյութերի
հետ: Ամբողջ նյութը դասակարգված է, որոշված են Արտաշատի նյութական մշա-
կույթի տեղական գծերը, կուլտուր-տնտեսական և առևարական կապերը Հայաս-
տանի մյուս քաղաքների և Վարկան երկրների հետ:

Աշխատանքը նախատեսված է հնագետների, ազգագրագետների, պատմա-
բանների և արվեստագետների համար:

Խ 0507000000
703(02)—81 34—79

ԿԿԴ 69. 4(22)
902. 6(C43)

Ա. Ռ. Ա. Զ Ա. Ր Ա. Ն

Հայաստանի անտիկ շրջանի նյութական մշակույթի ուսումնասիրման համար բացառիկ նշանակություն ունեն Արտաշատի պեղումները, որոնք ձեռնարկվել են 1970 թ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից (արշավախմբի պեա աղագեմիկոս Բ. Ն. Առաքելյան) և շարունակվում են մինչև այսօր:

Արտաշատը հիմնադրել է Արտաշես I-ը մ. թ. ա. II դարի 80—70-ական թվականներին. կործանվել է 368 թվականին Շապուհ II-ի արշավանքի ժամանակ: Ասկայն սահմանափակ ձևով իր դոյուքությունը շարունակել է մինչև VIII դարը:

Արտաշատի բլուրների (I, II, VII, VIII) պեղումների շնորհիվ հայտնարեբվել են քաղաքի հիմնադրման օրից մինչև նրա կործանման ժամանակներին վերաբերող նյութական մնացորդներ:

Պեղումների արդյունքներին վերաբերող հոդվածներ՝ և գիտամասսայական ընույթի ռոքույն արդեն հրապարակվել են: Պատրաստվում են հրատարակության Արաաշատի I. բլրի պեղումների արդյունքները: Ներկա ուսումնասիրությունն ամփոփում է Արաաշատի տաբաժքում գտնվող դամբարանների պեղումների արդյունքները:

Անտիկ դարաշրջանի դամբարաններ հայտնարեբվեցին, պատահաբար, նոր կյանք և Շիրազ գյուղերի դաշտերի թմբերը հարթեցնելիս, հին Արտաշատ քաղաքի արևելյան և հարավարևելյան կողմերում:

Արտաշատի հնագիտական արշավախմբի մի ջոկատ, հնագետներ Ժ. Դ. Խաչատրյանի (ջոկատի պետ), Ա. Ա. Քալանթարյանի և ճարտարապետ Ա. Գ. Կանեցյանի մասնակցությամբ, 1971 թ. պեղումներ կատարեց այդ դամբարանադաշտերում: Արտաշատի բլուրների արևմտյան կողմում նույնպես հայտնարեբվեց դամբարանադաշտ, որը պեղել է տղերիս հեղինակը, իսկ բլուրների վրա և քաղաքի արաժքում տարբեր տարիներին բացված առտնձին դամբարաններ պեղել են արշավախմբի պետ Բ. Ն. Առաքելյանը և Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսովը:

¹ Բ. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах, ИФЖ, 1974, № 4, նույնի, Հին Արտաշատ, Երևան, 1975, Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, Արաաշատի VIII բլրի շերտագրությունը, 129, 1974, № 9, Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի կորուպլատիկան, 129, 1977, № 5, էջ 37—60, նույնի, Ու ճեկնեիտական շրջանի ձգպիր դամբարան, 129, 1977, № 1, էջ 55—63 և ալն:

I. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ


Արատշա մայրաքաղաքը, որը հսկայական տարածություն էր ղրաղեցնում, րացի խորվիրապի շրջակայքում գտնվող 11 մեծ ու փոքր ըլուրներից, փոխած է եղել նաև ըլուրներից հյուսիս, հյուսիս-տրեելք: Մեծ ու րագմամարդ այգ քաղաքն ունեցել է մի քանի դերեղմանատներ քաղաքի տարածքում և նրանից դուրս: Քաղաքի թաղամասերում տեղ-տեղ հանդիպում են գերեղմաններ, որոնք գտնվում են երբեմն շենքերի արանքում, պարսպի տակ և այլուր:

Առավել ընդարձակ դերեղմանոցները գտնվել են քաղաքի արածքից դուրս, այժմյան Նոր կյանք և Շիրաղ գյուղերի դաշտերում:

Նոր կյանք գյուղի դաշտերում (քաղաքից արևելք) գտնվող դեբեգումանները շատ վատ էին պահպանվել: Այստեղ թաղման հիմնական ձևը կարասալին էր, րայց եղել են նաև հրմահողայրն ղամբարաններ: Ամբողջ ղամբարանաղաշտը տեղավորված էր մոխրախտոր կաշուն ավաղահողի մեջ: Դամբարանները բավականին խիտ էին ու մակերեսային, և դաշտը բազմից ո հերկելու պահանջով հիմնտողային թաղումները խառնվել էին իրար: Պեղումների ընթացքում հողաշերտից ի հայտ էին գտլիս արրեր անսակի անոթների ըեկորներ: Ավերված և իրար խառնված գամբարաններից հայտնարերված ուղեկցող նյութերը քննության են առնվում միասին: «Նոր կյանք»-ի ոաշտում մեղ հաջողվեց պեղել մոտ 13 կիսավեր և ամբողջական կարասալին թաղումներ, ըլուրն էլ շարքային, որոնք ունեին արրեր դիրք, առտնց որոշակի կողմնորոշման (նկ. 1):


Խամբարան № 1: Կարասային թաղում: Ուղղությունը՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Կարասը ամբողջովին ճաքած էր, շրջակայքն ու մեջը ավաղախառն ամուր հող, կմախքը շատ վատ էր պահպանված: Գլխի վրա նսւյնանման կարասի մի ըեկոր էր դրված: Կարասի և գունաղարգ ջրամանի ըեկորներ կային նաև դանդի կողքերին ու աակը, արրեր բարձրությունների վրա: Հանգուցյալը թաղված է եղել խիտ կուռ եկած, ծնկները ծալած վիճակում, դուրսը կարասի ըերանի կողմը, դեմքով դեպի արևելք ծնոր և ղանդի ակլի մասը րացակայում էին: Չվաձև փրանով կարասը (բարձր. 1 մ, պս. տր. 37 սմ, հատ. ար. 22 սմ) լավ թրծած է, դեղնանանաղաւուն անգորով պատած, փայլեցրած, հատակը հարթ է, պսակը դեպի դուրս լայնացող, վրան ունի ակոսավոր լայն գոտի: Կտրասի մեջ կար նաև՝ փայտածխի մի քանի կտոր (աախտ. I, VIII, նկ. 35, 1-5):

Դամբարան № 2: Կարասային, մանկական թաղում: Կարասը գանվում



Նկ. 1 Արտաշատ, ճարավարեկյան դամբարանադաշտի տեղադրության պլանը

20 0 20 40



Նկ. 2 Արտաշատ, Արևելյան դամբարանադաշտի տեղադրության պլանը

էր կողքի պառկեցրած վիճակում, ուղղութիւնը՝ հյուսիս-արեւելքից հարավ-արեւմուտք: Ոսկորները շատ վատ էին պահպանվել: Դիրքը հնարավոր չէր որոշել: Կարասը գրեթե զլանած է, ձգված, սուր նստուկով (բարձր. առանց պսակի 84 սմ, հատ. տր. 3 սմ), մակերեսն անփայլ է (տախտ. II₄):

Դամբարան № 3: Կարասային թաղում, Կարասը պառկեցրած էր կողքի: Ուղղութիւնը՝ հյուսիս-արեւմուտքից հարավ-արեւելք: Կարասը ճաքած էր, վատ պահպանված, ուներ ձվաձև իրան, հարթ հատակ: Պսակը չէր պահպանվել (պահպ. մասի բարձր. 77 սմ, հատ. տր. 18 սմ), Դամբարանում գտնվել են կմախքի որոշ ոսկորներ և ականջօղի նման մի իր, պատրաստված պղնձե ոլորած լարից (նկ. Շ_{10,8,9,35,7}):

Դամբարան № 4: Կարասային թաղում (բացվել է տրակտորիստի կողմից): Դիրքը՝ հյուսիս-արեւելքից հարավ-արեւմուտք: Կարասի բերանը հյուսիսարեւելյան կողմում (բարձր. 97 սմ, պս. տր. 33 սմ, հատ. տր. 20 սմ): Դամբարանում գտնվել է թուխ գույնի մի քրեղան և մի պուլիկ, որը չի պահպանվել (տախտ. IX₁, նկ. 35,8):

Դամբարան № 5: Կարասային թաղում: Կարասը կողքի պառկեցրած վիճակում էր (կեսը՝ երկայնքով բացակայում էր): Դիրքը՝ հյուսիս-արեւելքից հարավ-արեւմուտք, Կարասի բերանը հյուսիսարեւելյան կողմում (պահպ. մասի բարձր. 110 սմ, պս. տր. 40 սմ, հատ. տր. 20 սմ): Կարասը հնում կոտորված է եղել և կարկառված: Հանդուցյալի կմախքը խիստ կուշ եկած վիճակում էր, ձախ զոդքով վրա, գլուխը կարասի բերանի մոտ, ծնկներին մոտեցրած, դեմքով դեպի գետին: Դանգի կողքերին դրված էին մի այլ ավելի փոքր կարասի շրթի բեկորներ (տախտ. I₂):

Դամբարան № 6: Կարասային թաղում: Կարասը զոդքով պառկեցրած վիճակում էր, դիրքը՝ հյուսիս-արեւելքից հարավ-արեւմուտք: Կարասի բերանը հյուսիսարեւելյան կողմում, հանգուցյալի կմախքը խիստ կուշ եկած, ծնկները ծալած վիճակում: Պատկած էր աջ կողքի՝ գլուխը հյուսիսային կողմում, դեմքը դեպի ներքե: Դամբարանում գտնվել է մի այլ կարասի մեծ բեկոր, որը ձգվել էր կմախքի կողքերը (տախտ. I₃): Կարասը վատ էր պահպանված, նույնպես ուներ ձվաձև իրան, դուրս լայնացող ուղիղ պսակ և հարթ հատակ (բարձր. 115 սմ, պս. տր. 40 սմ, հատ. տր. 30 սմ):

Դամբարան № 7: Կարասային թաղում (բացվել էր տրակտորիստի կողմից): Կարասը կողքի պառկեցրած վիճակում, դիրքը՝ հարավ-արեւմուտքից հյուսիս-արեւելք: Կարասի բերանը հյուսիսարեւելյան կողմում (բարձր. 110 սմ, պս. տր. 36 սմ, հատ. տր. 26 սմ): Դամբարանում գտնվել է ոսկորների մի մասը, խառնված վիճակում, և մի այլ կարասի մեծ բեկոր: Կարասը նման էր № 6-ին:

Դամբարան № 8: Պահպանվել էր կարասի կեսը, կանգնեցրած վիճակում, որը ծառայել է իբրև աճյունասափոր: Կարասը նման էր մյուսներին (հատ. տր. 20 սմ): Դամբարանը լցված էր ավազախառը մոխրաշերտով, փայտածխի կտորներով և առանձին ոսկորների մնացորդներով:

Դամբարան № 9: Կարասային թաղում: Կարասը մյուսների համեմատ քիչ ավելի ուռուցիկ էր (բարձր. 110 սմ, պս. տր. 50 սմ, հատ. տր. 17 սմ):

Թաղված էր կողքի վրա, ուղղութիւնը՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, ընդանը հարավարևելյան կողմում, այն ծածկված էր մի այլ կարասի ընկեր- ներով, որոնց վրա ունիւնք, ատամնավոր դոտեղարդ կար, դիակր մտցրել են կողքից, պսակի հետ միասին կտրել են մի հատված, որը նորից տեղն են դրել: Կարասի մեծ մասը դաաարկ էր, հողը միայն ներքևի մասում էր: Հան- դուցյալը թաղված էր իրիստ կուշ եկած, ծնկները ծալած վիճակում, գլուխը առաջ թեքած, դասքով դեպի արևմուտք: Մնտի տակ, վզի մոտ, գտնվեց մի բրոնզե շքասեղ (ձողիկ)՝ ակոսավոր դարդերով, իսկ դեպի գեմքը ծալած ձեռքի մոտ, վաա պահպանված մի երկաթյա մասանի (տախա. I, նկ 35,9,11):

Արտաշատի մյուս՝ հարավարևելյան դամբարանադաշտում, գլուղացի- ների վկայութեամբ, եղել են մի շարք ցածր թմբեր, որոնք հարթեցվել են նախկինում: Հարթեցման ժամանակ հայտնարբրվել են կարասային թաղում- ներ և կմախքներ (հիմնահողային թաղումներ): Այդ տարածութիւնը 10 հեկ- տարից ավելի է: Մենք պեղեցինք վերջին հարթեցման ժամանակ րացված գամբարանների մնացորդները, որոնք սփռված էին մոտ 2 եռ տարածու- թյան վրա: Պեղվեց մոտ 50 կարասային և հիմնահողային թաղում, որոնց մի մասի հետքերն էին միայն պահպանվել: Այստեղ թաղումների մեծ մասը կաարված էր դիակիզման եղանակով:

Հատկապես ուժվառ էին հիմնահողային թաղումների պեղումները, քանի որ դրանք բոլորն էլ ուղեկցվել էին դոհարերութեան կրակով և հոգեհացով: Հողի կտրվածքում կատարված թաղումների և նրանց կողքին եղած հոգեհա- ցի հետքերը խոնավել էին փրար, և շատ դեպքերում մեկը մյուսից զատելը մեծ դժվարութիւն էր ներկայացնում: Հարավարևելյան դամբարանադաշտում կային երկու տիպի թաղումներ՝ դիակիզման եղանակով՝ հողի կտրվածքում, և դիակիզմամբ ու թաղումով՝ կարասների մեջ (նկ. 2):

Դամբարան № 10: Կարասային թաղում (մանկական): Գրեթե գլանաձև րարակիրան կարաս, հավանաբար սուր նստուկով, դուրս լայնացող ուղիղ պսակով, վղին ուղիք դոտի: Դիրքը՝ պտակած, ուղղութիւնը՝ հյուսիս-հարավ, կարասի բերանը հյուսիսային կողմում: Հանդուցյալը թաղված էր կուշ եկած վիճակում, գլուխը կարասի բերանի մոտ, րայց հակված դեպի հատակը (հա- րավ): Դիակր մտցրել էին հատակի կողմից. ջարդել, հետո մի այլ մեծ անո- թով փակել էին: Խոնավութեան պատճառով և՛ կարասը, և՛ կմախքը շատ վաա էին պահպանվել (աախտ. II, VI, նկ. 5,1):

Դամբարան № 11: Դիակիզմամբ կատարված թաղում: Կարասը, որ ծառայել էր իրրև աճյունասափոր, հարթ հատակով էր կանգնեցրած, ուսերից թերի: Դամբարանում գտնվել են անորոշ փոքր ոսկորներ, թուխ քարից պատրաստված սրաքար, որի մէ ծայրը շաա օգտագործելու հետևանքով մաշ- ված էր, հասապաա թասի մի բեկոր և մի այլ անոթի լավ փայլեցրած, կար- միր բեկոր (նկ. 5,2,4,6):

Դամբարան № 12: Հողի կտրվածքում կաարված հիմնահողային թա- ղում դիակիզմամբ, րավականին մեծ տարածութեամբ 150×150 սմ: Դամ- րարանում գտնվել են կիսավառված ոսկորներ խոոր վրձակում: Ամբողջ դամբարանը ծածկված էր հողի սև կպշում շերտով և մոխրով, որոնց մեջ

խոշոր եղջերավոր անասունի, ձիու և ոչխարի ոսկորների կիսավառված մնացորդներ, տափաշների, ջրամանների, ամֆորաների, կճուճների, թասերի դրեթե ամրողջական, փշրված և առանձին բեկորներ, այդ թվում նաև ջնարակած (երկնագույն) անոթի մի բեկոր, որոնք կրակից սևացած էին և վաա պահպանված: Գտնվել է նաև կավե խողովակի մի բեկոր (աախտ. III, VI, XI, 2, 4, XIII, 3-5, XV, 5, XVIII, 1, 3, նկ. 3, -5, 7, 4, 1-6, 5, 3, 5, 7-10):

Դամբարան № 13: Հիմնահողային թաղում գիակիղմամբ: Վրան դրված էր երեք աձև փոքր քար, տակը և շուրջը մոխրաշերտ և ածխի մնացորդներ, Այս շերտի մեջ հայտնարբրվեցին վաա պահպանված կիսավառված ոսկորներ, խառը ւրճապոս, որոնց թվում նաև խոշոր եղջերավոր անասունների ատամներ, տարրեր դիրքերում գտնվող կարասների բեկորներ, մի փոքր կարասի շուրթ, ուսին արված գունավոր և ակոսավոր զարդեր: Մեծ թվով կավանոթների բեկորներ հայտնարբրվեցին նաև գերեզմանի շուրջը եղած հողի միջից (աախտ. VI, նկ. 6, 1-7, 7, 1-7):

Դամբարան № 14: Հիմնահողային թաղում գիակիղմամբ: Խիստ ավերված, պահպանվել էր միայն սևացած հողի, ոսկորների մնացորդները:

Դամբարան № 15: Հիմնահողային թաղում դիակիղմամբ: Ավերված, պահպանվել էին միայն սևացած հողի և ոսկորների մնացորդները:


Դամբարան № 16: Հիմնահողային թաղում գիակիղմամբ: Ավերված, պահպանվել էր միայն սևացած հողի և ոսկորների մնացորդները:

Դամբարան № 17: Հիմնահողային թաղում, վրան երկու քար դրած, զրահեցնում էր փոքր տարածություն: Ոսկորները շատ քայքայված լինելու պատճառով հնարավոր չեղավ կմախքի դիրքը որոշել: Կմախքի մոտ հաստ մոխրաշերտ կար, որի սրջից գտնվեց խորը թասի, ճրագի, ձկան ափսեի և այլ անոթների բեկորներ, երկաթյա թերի մի դաշույն, երկաթյա դամբ (նկ. 8, 1-10):

Դամբարան № 18: Հիմնահողային թաղում գիակիղմամբ: Ավերված, պահպանվել էր միայն սևացած հողի և ոսկորների մնացորդները:

Դամբարան № 19: Հիմնահողային թաղում գիակիղմամբ: Դամբարանագաշտի հետաքրքիր գերեզմաններից մեկն էր: Պատրաստված էր կավե շաղախով, դրեթե շրջանաձև, երկու կողմից ուներ քիչ կլորավուն ելուսաներ, որոնք հատուկ պատրաստված էին գիակիղման, թաղման կրակի համար: Կավը ուժեղ կրակից կարմրել, թրծվել էր, մեջը շատ հասա մոխրաշերտ կար վառված ոսկորների և ատամների մնացորդներով: Դամբարանում հայտնարբրվել են, մոխրաշերտի միջից և վրայից, սևացած ու խոնավությունից քայքայված աարրեր անոթների՝ կարասի, քրեղանների, նրրախեցե անոթների, կրճուճների, խփերի բեկորներ, կավե փոքրիկ եղջյուր (աախտ. III, նկ. 9, 1-12, 10, 1-10):

Դամբարան № 20: Հավանարար, հողի կտրվածքում կատարված թաղում: Պահպանվել էր հողեհացի ու զոհարբրության համար պատրաստված հարթակը, որը ուղղանկյան ձև ուներ, ուղղությունը արևելքից-արևմուտք (երկ. 130—135 սմ, լայն. 60—67 սմ), Միաշար քարերն իրար հետ ամրացված էր կավով, իսկ վրան թիթեակի հարթեցված էր կրաշաղախով, արևելյան կողմի քարերն համեմաաարար խոշոր էին: Հարթակի կողքերին նույն մակարդակի



Σχ. 3. 1-5, 7-ησάμρ. № 12, 6, 8, 9-ησάμρ. № 3

վրա մոխրաշերտ կար, դամբարանի մեռին մասը ավերված էր (տախտ. 11₂, VI₁);

Դամբարան № 21: Հիմնահողային թաղում դիակիրմամբ: Հարթ երեսով, տձև, մեծ քարերով շարված երկարավուն հարթակը նման էր պատի, որը տեղ-տեղ լայնանում ու նեղանում էր:


Քարերի վրա և կողքերին, հատկապես հարավային մասում 10—15 սմ հաստությամբ սևացած կրաշերտ կար, ածխի մնացորդներով: Կրակից կավահողը թրծվել և կարմրել էր: Մոխրաշերտերի մեջ կրակից սևացած կճուճի, խոհանոցային անոթների ու կարասների բազմաթիվ բեկորներ կային:

Դամբարան № 22: Հիմնահողային թաղում դիակիրմամբ: Ավերված, պահպանվել էր միայն սևացած հողի և ոսկորների մնացորդների մի մասը: Դամբարանում գտնվել է սուր նստուկով անոթ դնելու մի մեծ կավե հենակի կեսը, պսակնորի ասկ արված առամնաձև և պարանաձև դարգերով (աախտ. XVI, 6, նկ. 11, 1):

Դամբարան № 23: Դիակիրմամբ թաղում. կարաս, որը ծառայում էր աճյունաստփոր: Պահպանվել էր կարասի ներքին մասը, դրեթե ուղղահայաց դիրքով: Այրված ոսկորների մնացորդները վատ էին պահպանված: Դամբարանում դանվել են խորը թասի, գավաթի և այլ անոթների կանթ և բեկորներ (նկ. 11, 2, 3):

Դամբարան № 24: Հիմնահողային թաղում դիակիրմամբ: Պատրաստված էր գրեթե ուղղանկյունաձև մի հարթակ (երկ. 180—220 սմ, լայն. 150—170 սմ), տարբեր աեսակի սալաքարերով, աղորիքներով և մանր գետաքարերով, այդ թվում կարծր մարմարատիպ կրաքարերով, որոնք քրշ ավելի բարձր մակարդակի վրա էին գտնվում աղորիքի քարերից: Քարերի տրանքից գտնվեցին սկուտեղի, սնակի բեկորներ: Վճռն հարթաձև տակ կար քարերի երկրորդ շարքը, որը նորից կազմված էր տձև քարերից և աղորիքներից (այդ թվում նաև լծակավոր, ընդամենը 8 հատ): Երկու շարքերի առանջում հանդիպում էին ոսկորներ և խեցեղենի բեկորներ: Կենտրոնական մասում սևացած հող էր, որի մեջ կային մարդու ոտքի, այլ ոսկորների և առամի մնացորդներ, ծածկված գունազարդ ամանի բեկորներով: Սևացած հողի մեջ երևում էին ածխի և մոխրի մնացորդներ: Ոսկորներ գտնվեցին նաև կողքի ավաղահողերի միջև:

Դամբարանի հարավային ծայրում բացված մեծ, գրեթե քառակուսի տձև քարի տակ, սևացած հողաշերտում, նույնպես մարդու ստույգ ոսկորներ և ամանների բեկորներ դուրս եկան: Ամանների մեջ և շուրջը գտնվեցին խոշոր և մանր եղջերավոր անասունների մեծ քանակությամբ ոսկորներ: Բոլոր կավանոթները կտրված էին և խառը վիճակում լքված: Հայտնաբերված խեցեղենի մեջ կային մեծ սկուտեղի 1/3-ը, ոլորուն շորս կանթով կրճուճի երկկանթանի կարմիր փայլեցրած սափորների, թասերի, խոհանոցային արբեր տիպի անոթների մասեր: Անաղաշերտի մեջ փորված դասբարանում կային փայլածխի և մոխրի հետքեր: Վերին քարից հաշված խորութունը մոտ 1 մ էր (տախտ. XII₁, XIV₁, XV₁, նկ. 11, 4—6, 12, 1—7, 13, 1—9, 14, 1—3, 15, 1, 5):



Նկ. 4. 1-6—դամբ. Մ 12

Դամբարան № 25: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ: Դամբարանում հայտնարերվել են նաև եռատերև շրթով մեծ սափորի պսակ՝ ներճկված կանթի մասով, մի մեծ անոթի ուլորուն կանթի կեսը և գունաղարդ գավաթի մի մասը (նկ. 14,4-8):

Դամբարան № 26: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված, պահպանվել էր սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ:

Դամբարան № 27: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ: Դամբարանում հայտնարերվել են սպիտակ մարմարատիպ քարից պատրաստված մի սրաքար և կոպիտ պատրաստված ձկան ափսեի հատակի մաս (աախա. XIV, 5, XV, 1, նկ. 15, 1-3):

Դամբարան № 28: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ:

Դամբարան № 29: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ:

Դամբարան № 30: Դիակիրզմամբ կաարված թաղում: Դամբարանն իր ձևով արրերվում էր մյուսներից: Այն մասամբ հիշեցնում էր № 19 դամբարանը: Պարաստված էր մանր դեաաքարերից, շրջանաձև, կենտրոնում, փոսիկից 52 սմ): Նույն քարերից շարված հաակի կենտրոնում շրջանաձև փոսիկ էր արված (տր. 30 սմ, խոր. 10 սմ): Դամբարանը ներսից հարթեցված էր կրաշաղախով: Դամբարանը, որը թաղման կողմից համար էր, լցված էր կրակից սևացած մոխրախառն հողաշերտով, որի մեջ հանդիպում էին խոշոր եղջերավոր անասունի ոսկորներ, փայտածխի և սևացած անոթների բեկորներ, իսկ կենարոնի փոսիկում միայն մոխիր էր, ըստ երևույթին առաջացած դիակիրզմից (աախա. III, VI, XI, նկ. 15, 16, 17):

Դամբարան № 31: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Շուրջը եղած սվազաշերտից առանձնանում էր մուգ դուլնով: Մեծ կարասի 1/3 մասը, որը վրան ուներ ուլիեֆ պարանաձև դարդ, ծածկված էր մարդու և անասունների վառված ոսկորների մնացորդներով, սևացած մոխրախառն հողի մեջ ուղղահայաց դիրքով կանգնեցրած էր կրակից սևացած մի փոքր կարաս: Հայտնարերվել են նաև մեծ քանակությամբ սարքեր ախպի կարասների բեկորներ, դեպի ներս ծոված շրթով թաս (աախա. IX, 1, նկ. 15, 7):

Դամբարան № 32: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված: Պահպանվել էին սևացած հողի մնացորդները, որի մեջ հայտնարերվել են գունաղարդ փիալայի շրթի, կավե թասերի, բաժակների, մեծ անոթների, սափորների, սոճուների, ձկան ափսեի բեկորներ, կավե ճրագ (նկ. 17, 2-8, 18, 1, 3, 5, 7, 8):

Դամբարան № 33: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված, պահպանվել էին սևացած հողի և ոսկորների մնացորդները: Դամբարանում հայտնարերվել են թասերի, քրեզանների և կճուճի բեկորներ (նկ. 18, 2, 4, 6, 9, 10, տախա. XI, 3):

Դամբարան № 34: Հիմնահողային թաղում դիակիրզմամբ: Ավերված,

պահպանվել էր սեւացած հողի և ոսկորների մնացորդներ: Դամբարանում գտնվել են տարրեր աեսակի անոթների, բաժակի, հատակների և շրթերի բեկորներ (նկ. 19, ^{1-3,5}):

Դամբարան № 35: Կարասային թաղում, պտոկեցրած վիճակում: Ուղղութիւնը հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում (բարձր. 114 սմ, պս. տր. 35 սմ, հատ. տր. 19 սմ): Դիակը, թաղված է եղել ծնկները ծալած, խիստ կոպ եկած վիճակում, գլուխը դրեթե կենարոնում, դնքով դեպի հարավ-արևելք: Ոսկորները խոնավութիւնից փտել էին, գանգը ապփակել էր: Դամբարանում գտնվել են ղոնաղարդ քրեղանի հատակ արասհայավող ոտքով և անոթի մի շուրթ (տախտ. IV, ₁, նկ. 19, ^{1,6,9}):

Դամբարան № 36: Դիակիզմամբ կատարված թաղում: Սուր նստուկով ուղղահայաց կանգնեցրած կարասը ծառայել է իբրև աճյունասփոր: Այն ուսերից թերի է (պահպ. մասի բարձր. 80 սմ, հատակի ար. 7 սմ, ուռ. մասի ար. 66 սմ): Դամբարանում գտնվել են փայտածխի առանձին կտորներ, ոսկորների մասեր, թուղնի ճանկերի ոսկորներ, ինչպես նաև թուխ ամանի և փոքր թասի բեկորներ: Ընդլը կրակից սեւացած հողաշերտ էր, դիակիզումը կատարվել է դամբարանի կողքին (ապխտ. III, ₁, նկ. 19, ¹²):

Դամբարան № 37: Կարասային թաղում, պտոկեցրած վիճակում: Ուղղութիւնը հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում: Կարասի հաասկը հարթ էր: Կարասի կեսը երկայնքով ռացակայում էր, սակայն պեղելուց ռացվեց մանկական մի կմախք. մոտ 7—8 ասրեկան հասակի, կաթնաամներով, գլուխը հյուսիսարևելյան կողմում, թաղված էր կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, ոսկորները շատ վառ էին պահպանված: Դամբարանում կմախքի վզի և թեքի մոտ գտնվել են երկու ականջօղեր, մի ապակե կնիք. որի ներքին մակերեսին պակկերված է կանգնած մարդու պայքարը վարաղի հեռ և ապակյա ուլունքներ (ապխտ. IV, ₂, նկ. 19, ^{7,8,10,11}):

Դամբարան № 38: Դիակիզմամբ կատարված թաղում: Սուր նստուկով, ուղղահայաց կանգնեցրած կարասը ծառայել է իբրև աճյունասփոր (պահպ. մասի բարձր. 60 սմ, հատ. ար. 6 սմ, ուռ. մասի տր. 54 սմ): Դամբարանում գտնվել են կողերի առանձին կիսավառված ոսկորներ, մոխրի սև շերտի մեջ կրակից թրծված աղյուսի կտոր, ոչխարի մի վեգ և խցեղենի՝ բաժակի, խորր թասի, կարասի բեկորներ, հատակի մասում մոխրի և փայլածխի հաստ շերտ: Դիակիզումը կատարվել է կարասի կողքին (ապխտ. XXVI, ₁):

Դամբարան № 39: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Ավերված, շրջակա ավազահողից տարրերվում էր թուխ սոխրով և կրակից սեւացած հողաշերտով: Դամբարանում գտնվել են վառված ոսկորների մնացորդներ, կենդանու ոսկորներ, այդ թվում ընորոշ ոչխարի վեգը, խցեղեն ասրեր անոթների բեկորներ, դնդաձև իրանով, կարմիր անդորով պասած փայլեցրած սփորի մասեր (նկ. 20, ¹⁻⁴):

Դամբարան № 40: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Սա ամենամեծ դամբարանն է: Դժբախտաբար, վերին շերտը գրեյդերով քանդած լինելու

սյուռճաւով հնարավոր շեղում սահմանազատել դամբարաններու շափանարար ալտեղ եղել է երևք թաղում, Վրայի քտրերր շէին պահպանվել, կրտկից սեացած մոխրի հոստ շերտերով հողի մեջ կալին մարդու վառված ոսկորների տտանձին մասերու Գտնվեցին մեծ քանտնութիւնսմը կենդանիների՝ խոշոր եղջերավոր անասունների, ձիու և ոչխարի վեպերու, Հայանարերվեցին կարասների, սկոտեղների, ջրամանների խփերի, ձկան ափսեի, ճրագների, աարրեր տիպի ու խորութիւն գունաղարգ թասերի, քրեղանների շաա բեկորներ, այդ թվում նաև անտիկ, ընորոշ երկնագուն շնարակով անոթի մի բեկորու Ուշագրավ են նաև սպիտակ կավից պատրաստված գունազարգ մեծ անոթի բեկորը և հատկապես կավե արձանիկները, որոնցից մեկը կնոջ արձանիկի վերին կեսն է, ձախ ձեռքին բոնսծ քնարի մի մասով, մյուսը՝ ձիավորի արձան է, լավ մշակված մանրամասներով, գծրախտարար, պահպանվել է ձիավորի և ձիու իրանի մի մասը միայն: Այստեղ ամենակարևոր նորութիւններից մեկը թասերի վրա եղած նավթի (մաղութի) մնացորդներն են (աախտ. XV₁₀, XXV₅, XXVI₅, նկ. 20₅₋₁₄, 21₁₋₁₀, 22₁₋₈, 23₁₋₁₂, 24₁₋₁₄ 25₁₋₈, 26_{1-3,5}):


Դամբարան № 41: Հիմնահողային թաղում դիակիզմամբու Ավերված, պահպանվել էր միայն հողեհացի և ղոհարերութիւն համար պատրաստված հարթակը: Այն բաղկացած էր մանր քարերից շարված մեկ շարքից (1,60×1 մ), որը հարթեցվել էր կրաշաղախով:

Այս դամբարանի հարթակը նման է № 20-ին, սակայն քարերը փոքր են № 30 դամբարանի քարերի նման: Հարթակի վրայի շերտից փայտածխի մնացորդների հեա դանվել են նաև ղունաղարգ ջրամանի, ճրագի, փիալայի, քնարակած և այլ անոթների բեկորներ (աախտ. II₃, նկ. 26_{4,6-11}):

Դամբարան № 42: Դիակիզմամբ իրրև աճյունասափոր ծառայող կարասով թաղում, կարասն ունի հարթ հասակ, ուռուցիկ իրան, ուլիեֆ պարանաձև ղարգեր: Դիակիզումը կաաարվել էր կարասի մեջ, որի հեաևանքով կարասի ներսը սևացել էր, ներքևի մասում կային ածխի, վառված փայտի մնացորդներ և մոխրի յայն շերտ: Դամբարանում գտնվել են ոսկորների փոքրիկ կտորներ, այդ թվում նաև մի վեգ, սևացած խեցեղենի, պնակի, փոքր կարասի բեկորներ, ճարմանդ, նեաասւաք: Կարասի կողքի սևացած հողաշերտից հայտնարերվեցին տարրեր աիպի, մեծ քանակութիւնսմը խեցեղեն բեկորներ, մոզաիկ ապակուց պատրաստված անոթի մի հասակ, մանդաղի մաս և այլն (աախտ. IV₃, XXXII₃,⁷ նկ. 17₁₀, 26₁₂, 27₁₋₁₅):

Դամբարան № 43: Հիմնահողային թաղում դիակիզմամբու Ավերված, վերին մասը շղար, պահպանվել են մոխրի, կրակից սևացած հողի (50 սմ), վառված ոսկորների մնացորդներ, այդ թվում ոչխարի վեղ: Դամբարանում հայանարերվել են աարրեր տիպի թասերի, սափորների, կարասների, կճուճների, մեծ թասի, խոհանոցային այլ անոթների կրակից սևացած բեկորներ, ինչպես նաև շնարակած անոթի առևակոսներով ղարղարված մի բեկոր (նկ. 28₁₋₁₀):

Դամբարան № 44: Կարասային թաղում: Կողքի պառկեցրած կարասը աեղից խախտված էր, ուստի կմախքի ղիրքը հնարավոր շեղում որոշելու Միջի հողը խառնված էր. կողքին սևացած հողաշերտ կար: Դամ-



Նկ. 5. 1—դամբ. № 10, 2, 4, 6—դամբ. № 11, 3—10—դամբ. № 12

րարանում գտնվել են տարրեր տիպի անոթների՝ ճրաղների, թասերի, սափորների, կարասի սուր նստուկ, կճուճի վերին կես և երկաթյա տափակ ընրանով, երկար պոչով մի իր (տախա. IV, նկ. 29, 1-10):

Դամբարան № 45: Կարասային թաղում: Աուր նստուկով, դիրքը հնարավոր չեղավ որոշել անդից ընթացված լինելու պատճառով: Հանդուցայի ոսկորները քայքայված էին: Շուրջը եղած մոխրի և սևացած հողի մեջ կային վառված ոսկորներ, ոչխարի վեզ և խեցեղենի սևացած ընկորներ (նկ. 30, 1-5, 7):

Դամբարան № 46: Դիակիզմամբ կաարված թաղում: Կարասը ծառայել է իրրև աճյունասափոր, ուներ սուր նստուկ, դիրքը հնարավոր չեղավ պարզել անդից խախտված լինելու պատճառով: Հայտնարերվեց մի մեծ աղյուս (30×40×15 սմ), որն հավանարար դրված է եղել կարասի ընրանին: Դամբարանում գտնվել են վառված ոսկորներ, այդ թվում ոչխարի վեզ և խեցեղենի ընկորներ: Շուրջը եղած կրակից սևացած հողը քիչ էր (նկ. 31, 1-11):

Դամբարան № 47: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Պահպանվել էին մոխրի հեաքերը և սևացած հողի մնացորդները, որոնց մեջ հանդիպում էին կարասների և խեցեղենի ընկորներ: Դամբարանի հյուսիսային անկյունում մեծ քանակությամբ ածուխ և ոսկորներ կային: Ածխի շերտը 15 սմ հաստությու՛ն ուներ և լավ պահպանված էր: Դամբարանում գտնուվել է հեծյալի կավե արձանիկ, որն իր կաարման արվեստով զիջում է № 40 դամբարանում հայտնարերված արձանիկի ընկորին (տախա. XXVI, 1):

Դամբարան № 48: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Ավերված, պահպանվել էր սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ: Դամբարանում հայտնարերվել են աարերի թասերի, ձկան ափսեի ընկորներ (նկ. 33, 1, 4):

Դամբարան № 49: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Ավերված, պահպանվել էր սևացած հողի և մոխրի մնացորդները: Դամբարանում գտնուվել են տարրեր կարասների, գնդաձև մեծ անոթի, քրեղանի, փիալանների ընկորներ (նկ. 33, 2, 6, 8):


Դամբարան № 50: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Ավերված, պահպանվել էր սևացած հողի և մոխրի մնացորդները: Դամբարանում հայտնարերվել են սափորի, ռաժակի, թասի և քրեղանների ընկորներ (նկ. 33, 3, 7, 10):

Դամբարան № 51: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Ավերված, պահպանվել էր սևացած հողի և մոխրի մնացորդները: Դամբարանում հայտնարերվել են միկանթանի կճուճի վերին մասը, թասի և այլ անոթների շրթեր ու գունաղարդ ընկորներ (նկ. 33, 9, 11-13):

Դամբարան № 52: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Ավերված, պահպանվել էին սևացած հողի և ոսկորների մնացորդները: Դամբարանում հայտնարերվել են կարասների շրթեր և կարմիր փայլեցրած թասի հասակը (նկ. 30, 6, 9, 11):

Դամբարան № 53: Հիմնահողային թաղում դիակիզմամբ: Ավերված, պահպանվել էր սևացած հողի և ոսկորների մնացորդները: Դամբարանում





Уд. 6. 1-7-фрагм. № 13

հայտնարեցվել են թասերի և այլ անոթների շրթեր, հատակների մասեր (նկ. 30, 8, 10, 12):

Դամբարան № 54: Հիմնահողային թաղում դիտարկվում էր Ավերված, պահպանվել էին սևացած հողի և մոխրի մնացորդները: Դամբարանում գտնվել են գնդաձև փոքր թասի և սկուտեղի բեկորներ (նկ. 34, 1):

Դամբարան № 55: Հիմնահողային թաղում դիտարկվում էր Ավերված, պահպանվել էին սևացած հողի և սկուտեղների մնացորդները: Դամբարանում գտնվել են կարմիր փայլեցրած խորը թասերի բեկորներ (նկ. 34, 2-3):

Դամբարան № 56: Հիմնահողային թաղում դիտարկվում էր Դամբարանում մոխրաշերտի և սևացած հողի միջից գտնվել են վառված սկուտեղներ, խեցեղենի բեկորներ, երկաթյա նիզակ և տեգի ծայրեր, դոնադարդ կիսագնդաձև թասերի բեկորներ: Գավաթի մաս, օղակաձև ոտքով հասակներ և ոչխարի մի վեգ (նկ. 32, 1-10):

Դամբարան № 57: Հիմնահողային թաղում դիտարկվում էր Դամբարանում գտնվել են մոխրաշերտի միջից դոնադարդ խեցեղենի՝ նրրախեցի դնդաձև թասի, սկուտեղի բեկորներ և ոչխարի մի վեգ (նկ. 34, 6, 7):

Մյուս դամբարանադաշտը գտնվում է Խորվիրապի բլուրների արևմտյան մասում: Այստեղ ցածրադիր բարձունքը հարթեցնելիս արակառորիսաբ հանգիստ էր կարասային թաղման, որը սակայն ավերվել էր:

Քննությունը ցույց տվեց, որ 2 և ավել տարածություններ բարձունքը ծածկված է արրերի ժամանակների մ. թ. ա. I—մ. թ. IV դդ. դամբարաններով: Այստեղ ևս մեծ քանակությամբ փայտածխի և մոխրի շերտ կար, մաշակային և կենդանական սկուտեղների մնացորդներով, խոնավ կավահողը շատ կաշտում էր: Այս դամբարանադաշտում, ի արրերում թաղման նախորդների, թաղումը կատարվել է մեծ մասամբ փայտե դադաղների մեջ: Հողի շերտում վառ պահպանված կմախքների կողքին հայտնարեցվել են երկաթի փոքր դամբարաններ, որոնք բավականին հաստ, կլոր կարվածքով աստիճանաբար հաստացող մեխեր են, որոնց վրա պահպանվել են փայտի հետքերը: Գտնվել են նաև երկաթյա ժապավենաձև ուղիղ և անկյունավոր թիթեղներ: Այս դամբարանադաշտում հանդիպում են նաև կավե դադաղ-սարկոֆագներ:

Դամբարան № 58: Կարասային թաղում: Բացվել է բլուրն հարթեցնելիս, արակառորիսաբ կողմից, կարասի և կմախքի դիրքն անհայտ է: Գտնվել է կավե գնդաձև, երկկանթանի շրաման և ապակյա, ձվաձև իրանով, աեղական համարվող երկու սրվակ (ախա. XX, 5, նկ. 42, 1-3):

Դամբարան № 59: Փայտե դադաղի մեջ կատարված թաղում: Հանգուցյալին պառկեցրել էին մեջքի վրա, գլուխը արևելյան կողմում: Շուրջը հողը մոտ 3 մ տրամագծով հոգեհացի կրակից սևացել էր և մեջը կային փայտածխի և մոխրի շերտեր: Դամբարանում գտնվել են խոշոր կենդանիների՝ եգան, ձիու սկուտեղներ՝ խոտը վիճակում, վղի մասում գտնվեցին մեծ քանակությամբ ուլունքներ ապակու պասաայից, այդ թվում ոսկեջրած, երկշերտ և գրաֆիտի պարասաված տարրեր ձևերի ուլունքներ, որոնցից մասանի, ականջող, փոքրիկ մեղալիոն, ճարմանդ, դանդակ, քարե ճարմանդ և փայտե դադաղի մեծ քանակությամբ երկաթյա դամբարան (նկ. 43, 1-7):

Դամբարան № 60: Փայտե դագաղի մեջ կատարված թաղում: Կմախքը վատ պահպանված: Դամբարանում հայանարերվել են երկկանթանի, օղակաձև ուղեղով, տանձաձև իրանով մի անոթ, բրոնզյա, 8 սմ տրամագծով թիթեղ (երևի հայելի) և փայտե գագաղի երկաթյա գամեր (տախտ. XV₂, 45,6-9):

Դամբարան № 61: Կարասային թաղում: Բացվել էր հարթեցնելիս, գրեյզերը ասարել էր կարասի գրեթե կեսը: Այն պահած վիճակում էր, հյուսիս-հարավ ուղղությամբ, կարասի բերանը հարավային կողմում (բարձր. 90 սմ, բեր. տր. 30 սմ, հտ. տր. 15 սմ): Խոնավ կավահողի մեջ կարասը ջառ վառ էր պահպանվել: Կարասի բերանը ծածկված էր բարակ խեցու ռեկորով, կմախքը մանկական էր: Այն կարասի մեջ էր մտցվել կողքը շարժելուց հետո, սակայն ռեկորները լավ չեն սմբացվել, ուստի հետագայում նրանք նույնությամբ ընկել են ներս և շարժել զանգր: Ոսկորները շատ վատ էին պահպանվել, ոտքերը ծալած էր ետ, գանգր նույնպես ետ էր ծոած, գեմքով ղեպի արևելք: Գանգի մոտ գտնվեց բրոնզյա երկու փոքրիկ ականջօղ, վղի մոտ՝ բրոնզյա փոքրիկ հայելի և ապակու պաստայից պատրաստված տարրեր տիպի ուլունքներ, թեխն՝ բրոնզյա ապարանջան (նկ. 44,3,7,8,11,12):


Դամբարան № 62: Փայտե դագաղի մեջ կատարված թաղում: Մեջքի վրա պահած վիճակում, ոսկորները վատ պահպանված: Շուրջը հոգեհացի կրակից սևացած հող, փայտածխի և մոխրի մնացորդներով: Դամբարանում հայտնաբերվել են գնգաձև իրանով, կարմիր շրջանաձև փայլեցրած, երկկանթանի ջրաման, սափորի վիղ և ոչխարի 3 վեգ, գագաղի երկաթյա գամերը փայտի հետքերով (նկ. 45,1):

Դամբարան № 63: Փայտե դագաղի մեջ կատարված թաղում: Հարթեցման ժամանակ սվերվել էր, խոնաված ոսկորների շուրջը հոգեհացի կրակից սևացած հողաշերտ էր, որի մեջ նկատվում էին կենդանիների վառված ոսկորներ, հավանաբար եգան և ոչխարի: Գտնվել է միկանթանի սափոր, լագինոս (սեղմված իրանով անոթ) և դագաղի երկաթյա գամեր, երկաթե անկյունավոր ժապավենաձև թիթեղ (նկ. 44,4, 50,4):


Դամբարան № 64: Փայտե գագաղի մեջ կատարված թաղում: Ավերված, կմախքի դիրքը հնարավոր չեղավ պարզել: Շուրջը սևացած կավահող, փայտածխի և մոխրի հետքերով. մեջը նկատվում էին կենդանիների վառված ոսկորներ: Դամբարանում գտնվել են գնդաձև, քիչ ձգված իրանով մի ջրաման, մեծ քանանությամբ երկաթյա գամեր (տախտ. XV₃, նկ. 45,5):

Դամբարան № 65: Փայտե գագաղի մեջ կատարված թաղում: Ավերված, կմախքի գիրքն հնարավոր չեղավ պարզել, շուրջը հոգեհացի կրակից սևացած կավահող, ոսկորների մնացորդներով: Դամբարանում գտնվել են ուռուցիկ իրանով միկանթանի (թերի) սափոր, ներձկված վղով մեծ թասի ռեկոր, կարմիր ներկած, փայլեցրած, երկաթե 10 գամ փայտի մնացորդներով (նկ. 47,1,3):



Դամբարան № 66: Փայտե դագաղում կատարված թաղում: Ավերված, կմախքի գիրքը հնարավոր չեղավ պարզել, շուրջը հոգեհացի կրակից սևացած հող էր, որի միջից գտնվել են ուռուցիկ իրանով միկանթանի սափոր (թերի) և երկաթյա գամեր:



2





4





7



6




1



3



5



Обл. 7. 1-7-группа. № 18

Դամբարան № 67: Փայտե դագաղի մեջ կատարված թաղում: Կմախքը մեջքի վրա պտոկած, մոտը դրված դնդաձև, կարմիր, երկկանթանի ջրաման, երկու կողմից սեղմված երկկանթանի տափաշիշ, բրոնզյա հալոն. որը շատ վատ էր պահպանված, ուստի վերցնել հնարավոր չեղավ, երկաթյա գտմեր, վրան փայտի հետքերով: Շուրջը մեծ տարածութեան վրա մոխրաշերտ կար, փայտածուխ, խոշոր անասունների վառված ոսկորներ և խեցեղենի բեկորներ (տախտ. VII,3, VIII,2, նկ. 46,1,2,4):

Դամբարան № 68: Հավանարար փայտե դագաղի մեջ կատարված թաղում, հանգուցյալը պտոկեցրած էր մեջքի վրա, արեելք-արեմուտք ուղղութեամբ, գլուխն արևելյան կողմում, նույն մակարդակի վրա շուրջը սև մոխրաշերտ էր կենգանինների վառված ոսկորներով, Դամբարանում գտնվեց երկկանթանի մի շրաման, կարմիր, շրջանաձև փայլեցումով (տախտ. VII,4, նկ. 46,3):

Դամբարան № 69: Ամֆորայի մեջ կատարված թաղում: Գրեթե գլանաձև, կլոր հատակով ամֆորան (պսակը թերի, բարձր. 47 սմ, վրի տր. 18 սմ) դրված էր կանգնեցրած գիրքով, մեջը մանկական մի կմախք, ոտքերը ծալած վիճակում, դեմքով դեպի արեմուտք, ոսկորները շատ վատ էին պահպանվել: Դամբարանում գտնվեց ուղղահայաց եղրերով մի ափսե (տախտ. V3, XIV,4, XVIII,4, նկ. 47,1,6):

Դամբարան № 70: Կավե դագաղ (սարկոֆագ), ուղղութեամբ հարավ-հյուսիս, կոպիտ պատրաստված (երկ. 90 սմ, լայն. կենտր. 32 սմ, խոր. 13 սմ), գլխի մասում ավելի ուղիղ ու լայն (31 սմ), ոտքերի կողմում ավելի նեղ (13 սմ): Այն հանգուցյալի համար կարճ է եղել, ուստի ոտքերի մասում սարկոֆագը ջարդել են և տեղավորել, գիտկը գրել են մեջքի վրա պտոկեցրած, գլուխը հյուսիսային կողմում, թեքած դեպի ձախ, թևերը կողքից երկարացրած (տախտ. V2): Սարկոֆագը ծածկված էր. նույնպես կոպիտ պատրաստված, մեծ կղմինդրով, որը կոտրատված էր և բեկորները տեղից շարժված, որով այն ստացել էր մի տեսակ թաղի ձև (պահպ. մասի. երկ. 105 սմ, լայն. մի կողմում 48 սմ, մյուսում 53 սմ):

Դամբարան № 71: Կավե սարկոֆագ, ուղղութեամբ արեելք-արեմուտք, լայն մասը արևմտյան կողմում (երկ. 190 սմ, լայն. գլխի մասում 47 սմ, ոտքերի մասում 25 սմ), սարկոֆագի վերին մասը չէր պահպանվել: Այն ըստ երևույթին դեռևս հնում կողոպտվել է, որովհետև մեջը դասարկ էր: Գտնվեցին թևի մի քանի փոքր ոսկորներ միայն, վտտ պահպանված վիճակում:

Դամբարան № 72: Կավե սարկոֆագ՝ խնամքով պատրաստված (երկ. 165 սմ, գլխի մասում 44 սմ, ոտքերի մոտ 20 սմ, խոր. 30 սմ), ներս լայնացող պսակով, ուղղութեամբ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, գլուխը հյուսիս-արևմտյան կողմում: Սարկոֆագը ծածկված էր կողք-կողքի շարած թրծած կրեք աղյուսով (51×60, 56×50, հաստ. 5 սմ): Հանգուցյալը թաղված էր մեջքի վրա, ուղիղ, թևերը կողքերին: Մեջը ուղեկցող իրեր չկային (տախտ. V4):

Վերևում նշվեց քաղաքի տարածքում և պարիսպներով ամրացված ընդուն

ների վրա պեղումներով և շինարարական աշխատանքների ժամանակ րացված դամբարանների մասին: Բացի դրանցից, քաղաքի աերիտորիայում արևելյան և հյուսիսարևելյան հատվածներում հայտնարերվել են նաև քարարկղային և հիմնահողային այլ դամբարաններ: Դրանք հավանարար պահանում են քաղաքի տարրեր դամբարանադաշարերի: Հայտնի է, որ քաղաքը տարրեր ժամանակ ունեցել է տարրեր սահմաններ, ուստի նախկինում եղած դամբարանները քաղաքի ընդարձակման հետևանքով հաճախ մնացել են նորակառույց ընակելի թաղամասերի տակ, ինչպես Արդիշտիի ինիլրում, Գաոնիսւմ, Կամ արդեն լքված թաղամասերի վրա ստեղծվել են նոր դամբարանադաշտեր:

I, VII և VIII բլուրների պեղումներով պարզվել է, որ Հայասանում եղել է նաև հանգուցյալին ուղղակի սենյակի հատակի տակ, պարիսպների հիմքերի մոտ թաղելու սովորութուն: Դրանք հիմնականում, իհարկե, մանկական թաղումներ են, կատարված կարասների, քարարկղների մեջ կամ հողի կտրվածքում: Այդպիսի սովորություն հնում եղել է նաև Շումերում, Ասորեստանում, խուտիների¹, հույների, վրացիների մոտ և այլուր:

Հետաքրքիր է, որ պարթևական շրջանում, ի տարրերություն հունական ու պարթևական քաղաքների, Միջադեատքում քաղաքներն ու դամբարանադաշտերն իրարից անջատված չեն և նրանք հստակ սահմանադժեր չունեն, իսկ Բարելունին ընորոշ են քաղաքային պարսպից ներս դուրություն ունեցող դերեղմանները²:

VIII բլրի վրա, 5a քառակուսում բացվել են մանր քարերով շարված երեք դամբարաններ առանց ուղեկցող նյութերի: Հնադիտական նյութերի աղքատիկ և ճարտարապետական մնացորդների անկանոն լինելը նկատի ունենալով՝ Ց. Տեր-Մարտիրոսովը³ ենթադրել է, թե տվյալ ընակարանը պատկանել է ընակչության ավելի աղքատ խավերին, հնարավոր է ստրուկներին, և հայտնարերված խեցեղենով թվադրում է մ. թ. I դարով: Սակայն այդ և կողքի քառակուսիներում բացվել են նաև այլ դամբարաններ՝ ուղեկցող նյութերով:


Պեղումներով պարզված է, որ VIII բլուրը եղել է քաղաքի արհեստավորական թաղամասերից մեկը, այստեղ ընակիչները իրոք հարուստ չեն եղել և նրանց ընակարաններում ունեցվածքային տարրերություններ համարյա չեն նկատվում, սակայն ուղեկցող նյութեր չունեցող դամբարանները ստրուկներին վերադրելը հաղիվ թե կարելի լինի հիմնավորված համարել:

Դամբարան: Փոքր Վեդի դուրի հարավարևելյան ծայրին ջրմուղի դիժ անցկացնելիս ի հայտ են եկել լատիներեն երկու արձանագրություն՝ մեկը շատ խոշոր տառերով, որը կրում է հոռմեական Տրայանոս կայսեր անունը, իսկ մյուսը մանր տառերով տապանաքար է: Երկուսն էլ փորված են Վեդու կրաքարից պատրաստված սալերի վրա: Բացի արձանագրված քարերից,

¹ И. М. Дьяконов, Народы древней передней Азии, ПЭС, 1, М., 1958, стр. 32, 57.

² Г. А. Кошелев, Культура Парфии, М., 1966, стр. 114, 116.

³ Ф. И. Тер-Мартиросов, Античные печи из раскопок Арташата, ВОН, 1975, № 7, стр. 72.



Նկ. 8. 1-10—դամբ. № 17

տեղում հայտնաբերվել էին մի սյան խարիսխ՝ շինված ավելի մանրահատիկ կրաքարից, շարվածքի սր քար, երկու հնաաիպ աղորիք: Հավաքվել են մ. թ. I—III դարերի խեցեղենի բեկորներ:

Ձեռնարկված մասնակի պեղումների շնորհիվ հայտնաբերվել են հելլենիսական ժամանակաշրջանի աղորիքներ, խեցեղենի ռազմաթիվ բեկորներ մի փոքր տարածության վրա, արձանադրությանր ժամանակակից. անտաշ կոպիտ քարերով պատրաստված սալահատակի մի մասը, որը երեի ծածկված է եղել կրաշաղխով, իսկ մոտ 150 մ հեռավորության վրա գտնվել է կրաքարից պատրաստված ևս մի սյան խարիսխ՝ ավելի փոքր չափերի:

Հատիներեն արձանագրությունները գտնվել են ըլուրներից 2,5 կմ դեպի հյուսիս-արեելք:

Փոքր Վեդի գյուղի կենտրոնում, դպրոցի հիմքեր փորելիս նույնպես գտնվել է կրաքարե մի խարիսխ: Կրաքարե խարիսխներ և մշակված առանձին քարեր հավաքվել են նաև Արտաշատի սահմաններում գտնվող դաշտերում:

Տրայանոս կայսեր զորքերը 114 թ. նվաճել էին Հայաստանը և կայսեր թողած արձանագրության մեջ նշվում է, որ սկյութական IV լեգեոնը 116 թ. ինչ-որ շինություն է կատարել այստեղ⁴:

Երկրորդ արձանագրությունը փորագրված է տապանաքարի վրա, որը շարված է և հայտնաբերվել է բեկորներով, որոնք մասամբ թերի են: Տապանաքարը ունեցել է 0,72 մ լայնք և 1,67 մ երկայնք: Տասը առղանոց արձանագրությունից պահպանվել են առաջին 4 տողերը, իսկ մնացած առղերն անբնթեղանելի են: Արձանագրությունը հետևյալ կերպ է կարդացվում. «Ատորերկրյա տսավածներին (Մաներին) կայուս Վալ (Երիուս) Կրե..., զինվոր իտալիկների I լեգիոնի զորաշոկատի, ծառայեց... հուշարձանը/ըրվեց»⁵:

Բ. Ն. Առաքելյանը նշում է, որ պարզ չէ, թե ինչ է կառուցել սկյութական IV լեգեոնը: Դա եղել է սովյալ լեգեոնի ռազմական ամրությունը, զորանոցը, տաճարը, գերեզմանոցը, թե այլ շինություն, դժվար է ասել:

Եվ, իրոք, այն ժամանակ ձեռնարկված փոքր ծավալի պեղման աշխատանքների միջոցով դժվար էր պատասխանել այդ հարցին: Սակայն այժմ դամբարանների պեղումները թույլ են ապիս ենթադրելու, որ Բ. Ն. Առաքելյանի վերը բերած կարծիքներից հավանականն այն է, թե հայտնաբերված արձանագրություններից մեծը կանգնեցվել է սկյութական IV լեգեոնի կողմից՝ գերեզմանոցում, որտեղ հավանարտը թաղված են եղել Արտաշատը նվաճելիս զոհված հռոմեական, ավյալ դեպքում հայտնաբերված արձանագրություններից մեկ հայանի, IV սկյութական և իտալիկների I լեգեոնի զինվորները: Պեք է ենթադրել, որ ընդհանուր գերեզմանոցին վերաբերող և գտնված ապանաքարի արձանագրությունից բացի եղել են նաև արձանագրված այլ ապանաքարեր, որոնք, պետք է հուսալ, որ կհայտնաբերվեն այս

⁴ Բ. Ն. Առաքելյան, Հատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, ՊՔՀ, 1967, № 4, էջ 302:

⁵ Նույն տեղում, էջ 307 և հտ.:

⁶ Նույն տեղում, էջ 309:

տերիտորիայի պեղումներից: Ճեղքված, կուպիտ քարերով պատրաստված շաղախով հարթեցված սալահատակը նման է Արաաշաաի մյուս գամբարանադաշտերում (Փոքր Վեդի և Շիրադ գյուղի դաշտերում) հայտնաբերված սալահատակ հարթակներին: Կարելի է ենթադրել, որ դա եղել է կամ հողահացի համար պատրաստված հարթակ և կամ մեծ արձանադրության առջև հատուկ պատրաստված սալահատակ: Թերևս այդ են վկայում նաև ադորիքների քարերը, որոնք հավանաբար շարված են եղել դերեղմանի վրա, ինչպես քաղաքի հարավարևելյան № 24 դամբարանում, նույնպես և խեցեղեն անոթների այն ռազմաթիվ ըեկորները, որոնք հողահացի ժամանակ օգտագործվելուց հետո կտորատվել ու նետվել են գերեղմանի վրա:


Դամբարան № 73: Հիմնահողային թաղում դիակիղմամբ: Գտնվել է Փոքր Վեդիի դաշտերում, ըլուրներից հյուսիս-արևելք, ճանապարհի կողքին: Այստեղ հայտնաբերվել են մի քանի խարխսխ՝ նման Շիրադի և Խորվիրապի ըլուրներից հայտնաբերվածներին: Պեղումներով րացվել են քառանկյուն տաշած մի կրաքար, շաղախի ըեկորներ, քարի կողքին կավից պատրաստված հարթակ (մոտ 8 քմ), որի վրա ածխի և մոխրի շերտ կար (30—35 սմ հաստությամբ): Դամբարանից և մոխրաշերտի միջից հայտնաբերվել են տարրեր ախպի խեցեղենի շուրջ 500 ըեկորներ, այդ թվում խոհանոցային խեցեղենի, դունդաղարդ կճուճների, ջրամանի ըեկորներ:

Դամբարան № 74: Հիմնահողային թաղում: Կավով սվաղած (երկ. 55 սմ, լայն. 50 սմ, խոր. 20 սմ), վրան ու կողքերին անփուլթ շարած քարերով, մանկան թաղում, I ըլրի (18B քառ.) հյուսիսարևելյան մասում, պարսպի տակ, ներսից, դուխր դտնվում էր արևմտյան կողմում, դեմքով դեպի արևելք: Մանկական փակը թաղված էր կուշ եկած վիճակում, ոսկորները շաա վատ էին պահպանված: Դամբարանում հայտնաբերվել են ածխի մի քանի կտոր, գանդի հետևում կողքի դրած մի քրեղան, դեմքի առջև՝ երկու փոքրիկ դավթ, հոտտերև պսակով և մի կանթով (տախտ. V₁, X_{1,3}, նկ. 43, 2-4):

Դամբարան № 75: Կարասային թաղում: Բացվել է Խորվիրապ տանող ճանապարհի կողքին, ջրանցք անցկացնելու ժամանակ: Կարասը սուր նստուկով էր: Դամբարանից գտնվել է ապակյա դրեթե դլանաձև երկու շիշ (նկ. 49, 1, 2):

Դամբարան № 76: Հիմնահողային թաղում VII ըլրի վրա (քառ. 5 C, F, խոր. 60 սմ): Ոսկորները վատ էին պահպանված, բայց դատելով կողոսկրների դիրքից, կարելի է ենթադրել, որ ուղղությունը եղել է արևելք-արևմուտք, դուխր արևմտյան կողմում: Դամբարանի շուրջը մոխրախառը հող էր ոսկորների հետքերով, որի միջից գտնվել է թևին հաղցրած մի ապարանջան, պատրաստված կլոր լարից և երկաթյա ինչ-որ իրի պոշ (նկ. 44, 5, 6):

Դամբարան № 77: Կարասային թաղում: Մանկական, VII ըլրի վրա (72 քառակուսի) սենյակի հատակի տակ: Կարասը դտնվում էր կողքի պակեցրած վիճակում (րարձր. 38 սմ, սլս. տր. 25, 5 սմ, հատ. տր. 14 սմ), ուղղությունը հյուսիս-հարավ: Կարասի ըերանը ծածկված էր խոհանոցային անոթի ըեկորներով: Մանկան դուխր դտնվում էր կարասի ըերանի մոտ, դիակը թաղված էր կուշ եկած վիճակում, դեմքով դեպի արևմուտք: Դիակը



Նկ. 9. 1-12—դամբ. № 19

մտցրել էին կարասի բերանը ջարգելուց հետո, ոսկորները շաա վաա էին պահպանված: Դամբարանում գտնվել են թևին հագցրած բրոնզե, հաստացող ծայրերով մի ապարանջան և աչքերով մի ուլունք (նկ. 44, 9, 10, 50, 51):


Դամբարան № 78: Հիմնահողային, մանկական թաղում VIII բլրի հյուսիսային պարսպի տակ, ներսից: Դամբարանի տակ քարեր էին գրված: Հանգուցյալը թաղված էր կուչ եկած վիճակում, ծնկները ծալած, գլուխը արևմուտքի կողմում, դեմքով գեպի հարավ: Դամբարանում հայտնաբերվել են կապաավուն բարակ թափանցիկ ապակուց մի սրվակ, ականջօղ և բրոնզե ապարանջան (տախտ. XX, 1, նկ. 44, 1, 2):

Դամբարան № 79: Թեթևակի փորված ժայռի մեջ (VIII բլուր 5B քառ.), եզրերին մի քանի տձև քարեր շարած, որը արևմտյան հասվածում քիչ նեղանում էր: Հանդուցյալը թաղված էր աչ կողքի վրա, ծնկները քիչ ծալած վիճակում, գանգը, որը բացակայում էր, եղել է արևմտյան մասում: Դամբարանում գտնվել է երկու ոսկրե շքասեղ, կրծքի հատվածում՝ գունազարդ կիսագնդաձև մի թաս, մեջը սուզ շագանակագույն խաշի աեսքով, եղևնաձև դարդերով, որոնց միջև դարչնագույն ներկով արված է ծաղկաշղթայաձև զարդ: Թասի մեջ դրված էր մի կաոր ոսկոր և մի հավի ձու: Գտնվեցին նաև մարմարե ուլունքներ, մանր, տձև, առանց անցքի, և ոչխարի երկու վեգ՝ մշակված (տախտ. IX, 1, 3, նկ. 34, 8-11):

Դամբարան № 80: Կարասային թաղում, մանկական, VIII բլրի հյուսիսային պարսպի մոտ: Փոքր կարասը թուխ էր, գտնվում էր թեք դրված վիճակում (բարձր. 40 սմ), բերանն ուղղված էր դեպի հարավ: Կմախքը վատ էր պահպանված, դիրքը պարզել հնարավոր չեգավ: Կճուճի կողքին գտնվեց մի կանթանի սափոր, միջից բրոնզե շրջանաձև փոքր շայելի և ապակե մի կնիք, մի կողմը ուռուցիկ, վրան՝ ձիու պատկերով (նկ. 49, 6, 7):

Դամբարան № 81: Հիմնահողային, VIII բլրի հյուսիսային պարսպի մոտ, ներսից (38F քառ., խոր. 70 սմ): 12—15 տարեկան երեխայի թաղում աչ կողքի վրա, կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, գլուխը արևելյան կողմում, դեմքով դեպի հյուսիս: Դամբարանից գտնվել է շնարակած թասի մի շուրթ, սրաքար, կախելու անցքով, բարակ երկաթյա մի լար և խոհանոցային մեկճուճ (նկ. 50, 3, 5, 6):

Դամբարան № 82: Կարասային թաղում, VIII բլրի վրա, հյուսիսային պարսպի մոտ, ուղղութունը արևելք-արևմուտք: Կարասի բերանը արևմտյան կողմում: Կարասն ուներ սուր նստուկ, կլոր պսակ (բարձր. 105 սմ, պսակի տր. 35 սմ, նստ. ար. 7 սմ): Դիակը մտցրել էին կարասի ուսը շարդելուց հետո: Հանգուցյալը թաղված էր կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, գլուխը արևմտյան մասում, դեմքով գեպի արևելք: Ձեռքերը գտնվում էին կրծքի մոտ, ձախ ձեռքի մասին կար արծաթե մի մասանի, ապակե օվալաձև ակով, որի հեաքերն էին պահպանվել միայն: Կարասի միջից, հանգուցյալի գեմքի մոտից, գտնվեց նաև ապակյա երկու սրվակ (մեկը թերի) ուռուցիկ, քիչ սեղմված իրանով, գավաթ, օղակաձև ոտքով՝ վերից վար ակոսավոր մի կանթով, կարմիր ներկած, փայլեցրած, և մի պնակ օղակաձև ոտքով, կարմիր անգորով շրջանաձև փայլեցումով և գունաղարդ մի բեկոր, ինչպես նաև երկու



в4. 10. 1-10—гладр. № 19

հոռմետկան դրամ, մեկը Տրայանոս կայսրինը, երկրորդը վատ է պահպանված: Կարասի դրսի մասում, բերտնի մոտ գտնվեց ներմուծված, գլանաձև զույգ կանթերով մի ամֆորա, հատակի մոտ զնգաձև իրանով միկանթանի սափոր (աախա. XIII,¹, XVI,¹⁻⁵, XIX,³, նկ. 50,³, 51,¹⁻⁹):

Մեծ ըլուրներից արևմուտք, ճահճուտի մեջ գտնվող ցածր ըլրի լանջին հայտնարերվել է երկու դամբարան, որոնցից մեկը ընակիչների կողմից ավերվել էր:

Դամբարան № 83: Փոքր քարանձավի մեջ կատարված թաղում, ավերված, Գտնվել է կավե ձվաձև մի անոթ (վիզը թերի, տախա. XVIII,¹):

Դամբարան № 84: Ժայռափոր, պատերից երկուսը՝ Նյուսիսայինը և արևմրայանը հարթեցված ժայռն էր, իսկ հարավայինը և արևելյանը շարված են ջարդած մեծ քարերով: Դամբարանը ծածկված էր երեք խոշոր տձև քարերով: Դամբարանի ուղղությունը արևմուտք-արևելք է (երկ. 150 սմ, լայն. 65 սմ, խոր. 85 սմ): Կմախքը լրիվ քայքայված էր, ուստի հնարավոր չեղավ նրա դիրքը պարզել: Գտնվեցին միայն գանգի ու կողոսկրների որոշ մնացորդներ: Արևմայան հատվածում, որտեղ գանգն էր, հայանարերվեց թղթի նման րարակ ոսկյա աերենների մասեր, շրթերը ծածկելու ոսկե թիթեղ, կանացի գլխով ոսկյա երկու ականջող, փայակ զագաղի մասեր, բրոնզե շրջանաձև հայկի և երկու գրամ, մեկը արծաթյա, մյուսը պղնձյա: Առաջինը պարթևական թագավոր Հրահա III-ի դրախման է (մ. թ. ա. 75—57), մյուսը, որը վատ է պահպանվել, Տիգրան II-ինն է (աախա. VI,³, XXI,^{1-3,6-8}, նկ. 52,^{1-7,9}):

Դամբարան. Կարասային թաղում, բացվել է ըլուրների հարավային ժայրին, քարհանքի մոտ: Սուր նստուկով ուռուցիկ կարաս (բարձր. 105 սմ, պս. ար. 40 սմ, նսա. ար. 10 սմ), թեք պտկեցրած գիրքով: Ուղղությունը հարավ-Նյուսիս, կարասի բերանը Նյուսիսային կողմում: Դիակը թաղված էր կուչ եկած վիճակում, գլուխը կարասի բերանի մոտ, ոսկորները շաա վաա էին պահպանվել, մեջը ոչինչ չկար, բացի ոչխարի երկու վեզից:

Քարհանքի ըանվորների վկայութամբ նրանք այս տերիտորիայում քանդել են մեծ քանակութամբ կարասային թաղումներ, որոնց միջից դուրս են եկել ապակյա սրվակներ և ուլունքներ: Մեզ հանձնվեց նաև օժանելիքի համար օգտագործվող մի փոքրիկ կարմիր պուլիկ, շատ նման թաղումներից հայանարերված մյուս պուլիկներին: Ամբողջ շրջապատում, մեծ աարածության վրա, մոխրի, կրակի և ոսկորների մնացորդներ են նկատվում:

II. ԹԱՂՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին տարիների պեղումները վկայում են, որ Հայաստանում հելլենիստական շրջանում և մ. թ. առաջին դարերում դոյություն է ունեցել թաղման ձևերի մեծ ըաղմադանություն, ըստ որում, առանձին հնավայրերում գերակշռում են այդ ձևերից մեկը կամ երկուսը: Արաաշատում, քի տարրերություն Գառնիի և մյուս հնավայրերի, ավանդական սալարկղային, քարարկղային թաղումները քիչ են: Այստեղ հանդիպում են դամբարանների հետևյալ ձևերը՝ հիմնահողային, կարասային, կավե և փայտե դադաղներ: Դա հավանաբար բացատրվում է ընական պայմաններով՝ Արտաշատում սալեր պատրաստելու համար համապատասխան քարատեսակներ չկան, մինչդեռ կավը շատ առատ է, ինչպես նաև տեղական ընակելության սովորություններով: Արտաշատի բոլոր տեսակի թաղումներն ուղեկցվել են հողեհացով և թաղման հետաքրքիր ծիսակատարություններով:

Արտաշատի դամբարանների մի խումբը կարասային թաղումներն են, որոնք լինում են կողքի պառկեցրած կամ կանգնեցրած դիրքում (արևմայան դամբարանադաշտ, դամբ. № 62): Արտաշատում նույնպես կարասային թաղումները որոշակի ուղղություն չունեն, նույն դամբարանադաշտում կողք-կողքի կարասները դրված են տարբեր դիրքով: Դիակը կարասի մեջ են մտցրել կարասի ուսը կամ հատակը շարդեկուց հետո, այնուհետև անցքը խնամքով ծածկել են: Կան կարասներ, որոնց մեջ հող չի լցված (Նոր Կյանք, արևելյան դամբարանադաշտ, դամբ. № 9): Դիակները թաղված են կուլ եկած, ծնկները ծալած վիճակում, մեծ մասամբ դեմքով դեպի ներքև, մայր հողը: Արևելյան դամբարանադաշտի կարասային թաղումների մի մասը ուղեկցող նյութեր չի պարունակում, իսկ մյուս մասում՝ հանդուցյալի դիտի տակ կամ վրան դրված են այլ կարասների և տափաշշերի բեկորներ: Բացառությամբ VII և VIII բլուրների վրա բացված թաղումների. որտեղ անհնարին էր հողեհացի մնացորդներն անջատել շերտի նյութերից, մնացած դամբարանների կողքին պահպանվել էին ղոհարբություն, կրակի և հողեհացի հետքերը: Հելլենիստական շրջանի թաղման կարասները, բոլորն էլ տնտեսության մեջ արդեն օգտագործված, հարթ հատակով անոթներ են: Մ. թ. առաջին դարերին պատկանող կարասները հիմնականում սուր նստուկով են, ինչպիսիք դրսվել են Գառնիում: Դրանց մեջ կան բոլորովին նոր, շօղադարձված կարասներ:

¹ Б. Н. Аракелян, Гарни, II, Результаты раскопок 1951—1955 гг., Ереван, 1957, стр. 21, рис. 22.

Այս շրջանում հանդիպում են նաև ամֆորաների մեջ կատարված մանկական թաղումներ: Այդպիսիք առաջին անգամ են հանդիպում Հայաստանում: Ամֆորաները երկկանթանի են, սուր նստուկով կամ ուռուցիկ հաաակով:

Կարասային թաղումները նորութիւն չեն Հայաստանի համար. դրանք գալիս են դեռևս ուրարական շրջանից: Ուրարական ե վտղ հայկական կարասային թաղումներ հայանարեբվել են Արգիշտիխինիլիում²: Սակայն կարասային թաղումները տարածում են ստանում մ. թ. ա. III—I դդ., իսկ մ. թ. առաջին դարերում ընդունում են մասսայական ընույթ: Այդ են վկայում Արաաշատի և Հայաստանի մյուս հնավայրերի պեղումները³:

Ամենայն հավանականութամբ ցտրասների մեջ թաղելու սովորութիւնը Հայկական լեռնաշխարհ է թափանցել Միջագետքից, ուրարտացիների միջոցով, իսկ անարիկ շրջանում փոխաղղեցութիւն հետեանքով այն ավելի լայն կիրառութիւն է սաանում: Կարասային թաղման առավել հետաքրքիր ձեերից են Գաոնիում և Սեանի ավաղանում հայտնարեբված երկկարասային թաղումները:

Ուշագրավ են Աեանի ավաղանում⁴ և Օշականում⁵ րացված սալարկղներում ե 2—3 մ տրամագիծ ունեցող կրոմլեխներում հայտնարեբված, ուղղահայտց դիրքով կանգնեցրած, կարասային թալումները: Որոշ կրոմլեխներում եղել է կարասային երկու թաղում, ուղղահայաց կանգնեցրած մի կարասի մեջ գտնվում է մոր կմախքը, իսկ պտոկեցրած փոքր կարասի մեջ՝ երեխայինը: Կամ, կրոմլեխներում մեծ սալարկղի մեջ պաաահում են կողքկողքի կանգնեցրած երկու կարաստիին թաղում: Նշված ըուր կարասները նման են մյուս հնավայրերում հայտնարեբվածներին⁶ ե հանղուցյալները թաղված են կուլ եկած, ծնկները ծալած վիճակում:

Այսպիսով, քաղաքներում և քաղաքատիպ վայրերում կարասային թաղումները թեև դանվում են կողքկողքի թաղման մյուս ձեերի հետ, սակայն համեմատարար ինքնուրույն են հանդես դալիս, իսկ ոչ քաղաքատիպ վայրերում, ինչպես վեղր աեսանք, զուգակցվում են տեղական հին ձեերի հետ:

Հայասաանի կարասային թաղումները կապ չունեն առանձին էթնիկ լամերի հետ: Եթե անգամ կարասների մեջ, րացի հայերից, թաղվել են նաև օտարերկրացիներ, ապա զժվար է դրանք իրարից տարրերել: Քանի որ կարասները տեղական են, հանղուցյալները նույն դիրքով են թաղված, ինչ որ դրոմտային և սալարկղային դամրարաններում, իսկ հայանարեբված նյութերը նույնպես տեղական են և ոչնչով չեն տարրերվում մյուս աիպի թաղումների նյութերից:

² А. А. Мартиросян, Аргшттихпнвнл, Археологические памятники, 8, Урартские памятники, вып. 1, Ереван, 1974, стр. 51, 55.

³ Կարասային թաղումների մասին տե՛ս Ж. Д. Хачатрян, Гарни V, Ереван, 1976, стр. 23—28.

⁴ Աղզագրական հանգես, գ. 14, Թիֆլիս, 1906, էջ 25, 26, աե՛ս նաև Ի. Կարապետյանի Կարճաղբուրում կատարած պեղումները, նյութերը չեն հրատարակված:

⁵ С. А. Есаян, А. А. Калантарян, Античный некрополь Ошакана, ВОН, 1976, № 12, стр. 28, табл. 1, 3—6.

⁶ Աղզագրական հանգես, գ. 15, Թիֆլիս, 1907, էջ 206:

Արտաշատի և Վտղարշապատի պեղումները վկայում են, որ մ. թ. III—IV դարերում կուրասալին թաղումներն այդ քաղաքներում մասամբ փոխարինվում են կավե գաղաղներով: Արտաշատի կավե դագաղները նման են Հայաստանի մյուս վայրերից հայտնարեբրված կավե սարկոֆագներին, ունեն 150—200 սմ երկարություն, գլխի մասում ավելի լայն են, քան ոտքերի մասում, խորը չեն (25—30 սմ): Արտաշատի սարկոֆագային թաղումները մյուս ձևերի նման հաստաաուն կողմնորոշում չունեն: Կողք-կողքի հանդիպում են ռոլորովին իրար հանդուհուհու ուղղության թաղումներ: Արտաշատի սարկոֆագները, հավանաբար, պահպանում են IV դարի կեսին: Այստեղ, ի տարբերություն հելլենիստական շրջանի կողքի, կուշ եկած, ծնկները ծալած թաղումների, գիակները թաղված են մեջքի վրա, թևերը կողքերից երկարած վիճակում: Կավե սարկոֆագներ Հայաստանում շատ են հայտնարեբրվել Վաղարշապատում, որտեղ նրանք երկու ախյի են: Մեկը Արտաշատի կավե դագաղների նման է՝ դեպի ոտքերն աստիճանաբար նեղացող ուղղահայաց պատերով և հարթ հատակով, գլխի և ոտքերի մասը ազեղնաձև կլորացրած: Սրանք ծածկված են կավե բարակ սալերով, որոնք իրենց վրա երբեմն ունենում են նշաններ (Λ,+): Դագաղների բերանը տակից կամ կողքից գարգարված է լինում աամնաձև հատվածքներով (երկ. 1,75—2 մ, լայն. գլխի մոտ 40—45 սմ, ոտքերի մոտ 15—20 սմ, խոր. 20—30 սմ): Մյուս անսակը մասամբ դլանաձև կիսակոշկի տեսք ունի, ոտքերի կողմում լայն անցքով: Բերանի բացվածքը հավասար է երկարության 2/3-ին, որը քիչ հեռվից եղբրված է շղթայաձև ուղիղ գարգով: Բերանը փակվել է առանձին աղյուսներով:

III դարի երկրորդ կեսին IV դ. սկզբին վերաբերող կավե դագաղներ և կոշկաձև սարկոֆագներ հայտնարեբրվել են նաև Սևանի ավաղանում՝ Լիճք և Լեոնակերտ գյուղերում⁹:


Հայաստանում ամենահին կավե սարկոֆագները վերաբերում են ուրարտական և հելլենիստական շրջանին: Նրանք իրենց ծավալով, չափերով ու ձևերով ասարեբրվում են վերոհիշյալ III—V դդ. կավե դագաղներից: Ուրարտական շրջանի կավե սարկոֆագ հայտնարեբրվել է Օշականից¹⁰, որը համեմատաբար կարճ է, սակայն շատ խորն է, գլխի մասն ավելի լայն ու բարձր, քան ոտքերի հարկածը, իսկ հելլենիստականը՝ Սիսիանի իշխանական դամբարանից: Սիսիանի կավե սարկոֆագը (երկ. 115 սմ, լայն. 57 սմ, խոր. 60 սմ) հարգարված է պարանաձև երեք ուղիղ դոտիներով և ունի երկարուկ տաշաձև կափարիչ (երկ. 110 սմ, լայն. 52 սմ, խոր. 14,5 սմ): Եվ՝ Օշականի, և՛

⁷ Թ. Քոբանյան, ՆյուՅորկ հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 269 և հտ. նկ. 257, նշյալ. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, էջ 40, նկ. 13, Ռ. Քոբանյան, Ա. Կեղաբաբյան, Հնագիտական նորություններ էյմիսոնից, ՊԲՀ, 1971, № 4, էջ 286—289, նկ. 2, Ժ. Կ. Խաչատրյան, Ռ. Մ. Քոբանյան, Նորահայտ ՆյուՅորկ Վաղարշապատի հյուսիս-արևելյան դամբարանադաշտից, ԼՀԳ, 1976, № 5, էջ 99 և հտ.:

⁸ Աղյս. Քալանթար, Եզվ. աշխ., էջ 40, նկ. 13, դ, գ:

⁹ Ժ. Կ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան, Մարտնու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները, ԼՀԳ, 1972, № 1, էջ 60:

¹⁰ С. Есаян, А. Калантарян, Позднеурартское погребение Ошаканского могильника, ИФЖ, 1976, № 3, стр. 269—275.



Նկ. 11. 1—դամբ. № 22, 2, 3—դամբ. № 23, 4—6—դամբ. № 24

Սիսիանի կավե սարկոֆագներն աղերսվում են Միջագետքի կավե սարկոֆագների հետ: Սիսիանի կավե սարկոֆագը իր ձևով ձայնակցում է Պերսեպոլսում¹¹ հայտնարևրվածներին, միաժամանակ շատ նման է Նիմրուդի¹² հեղինիստական շրջանի կավե սարկոֆագներին, որպիսիք հանդիպում են նաև Աշուր¹³ դեղեցիկ ձևավորված սարկոֆագներին մեջ ե այլուր: Կավե սարկոֆագներ շատ են հայտնարևրվել Դուրա-էվրոպոսում¹⁴, որանդ հանդիպում են նաև կոշկածե սարկոֆագներ, և պատկանում են մ. թ. II դարի վերջին, Տիգրիսի վրայի Սելեկիայում¹⁵, Քիշում¹⁶, Բարելոնում. որանդ որպես թաղման ձև եղել են ամբողջ արևելական շրջանում¹⁷, Միջին Ասիայում¹⁸ (Դալվերդին-Բեհե):

Սարկոֆագների մեջ մանկական թաղումները հեղինիստական շրջանի հունական քաղաքներում հաճախակի հանդիպող ձևերից են: Այդպիսիք շատ են հայտնարևրվել Աթենքում, Տանագրայում, Ալեքսանդրիայում¹⁹, Սպարտայում²⁰ և այլուր: Վրաստանի²¹, հակապես Ուրբնիսի քաղաքի կավե սարկոֆագները շատ հասապատ են, կոզիա ե դսից դարդարված են 3—4 շարք շղթայաձև ուղիղ նախշերով²²: Աղրեջանում այն հանդիպում է ատրեր վայրերում, րայց ավելի շատ Աղվանքում: Դրանք օվալաձև են, ոչ մեծ չափերի (57—110 սմ), և պատկանում են մ. թ. ա. առաջին հաղարամյակի վերջին քառորդին ե մ. թ. առաջին հաղարամյակի առաջին կեսին²³, Անդրկովկասից հյուսիս կավե սարկոֆագներ մեղ հայանի շին:

¹¹ E. F. Schmidt, Persepolis, vol. II, Chicago, 1957, pl. 86—88; R. Ghirshman, Les fouilles de Suse 1946—1951, „Revue des arts“, 1951, III, p. 188.

¹² David and Joan Oates, Nimrud 1957, The Hellenistic settlement, Iraq, vol. XX, p. 2, 1958, pl. XXVII.

¹³ Andrae W. und Lenzen H., Die Partherstadt Assur, Leipzig, 1933, Taf. 43, d, h, 45, a-f, 47, h. 1.

¹⁴ N. P. Toll, The Necropolis, The Excavations at Dura-Europos. Preliminary Report of the Ninth season of work 1935—1936, New Haven, London, 1946, pp. 95, fig. 3—5, pl. XXVII—XXVIII.

¹⁵ L. Waterman, Second Preliminary Report upon the Excavations at Tel Umar, „Iraq“, Ann Arbor, 1933, p. 48, pl. XVI₂; Antonio Invernizzi, The Excavations of Tell Umayr, „Mesopotamia“, II, 1967, Torino, fig. 11; M. C. Cavallero, The Excavations at Choche. „Mesopotamia“, II, Torino, 1967, pp. 54, fig. 37—42.

¹⁶ S. Langdon, Excavations at Kish, vol. I (1923—1924), Paris, 1924, p. 87—89, pl. XXIII, № 3.

¹⁷ N. P. Toll, The Necropolis, p. 95; E. Strommenger, Grabformen in Babylon, BM, Band 3, 1964, Berlin, Abb. 3,4.

¹⁸ Г. А. Пугаченкова, Новое в изучении Дальверзин-Тепе (к истории бактрийско-кушанской городской культуры), СА, № 4, 1971, стр. 201, рис. 14.


¹⁹ E. Breccia, La necropoli di Sciatby, Le Cairo, 1912, XXIII.

²⁰ A. Brückner, E. Pernice, Ein Attischer Friedhof, Mitteilungen des Deutschen Archäologischen Instituts Athenische Abteilung, XVIII, 1893, S. 163.

²¹ Н. В. Хоштария, Археологические исследования Уреки, Археологические находки в сел. Даблагоми и Агаяни, СА, V, 1940, стр. 396, и сл.

²² Л. А. Чилашвили, Городище Урбнис, Тбилиси, 1964, табл. XIX.

²³ Ф. Л. Османов, Глиняные саркофаги, найденные на территории Азербайджана, МКА, VII, Баку, 1973, стр. 245—249, рис. на стр. 247; С. М. Казиев, Историко-археологическое исследование городища Кабалы, МКА, V, Баку, 1964, стр. 47;



Նկ. 12. 1—7—դամբ. № 24

Այսպիսով, ինչպես ասենում ենք, կավե սարկոֆագները, ի տարրերություն կարասային թաղումների, ասարածման ավելի նեղ շրջանակներ ունեն և հիմնականում ընդգրկում են Կրեան կղզին (մ. թ. ա. 1800 թ.), Միջագետքը, որտեղ այն գալիս է դեռևս մ. թ. ա. 2300 թվականից²⁴, և նրան հարող շրջանները: Ինչպես իրավագիտորեն նկատել է Աշխ. Փալանթարը, կոշկածե սարկոֆագները պարթևներից է ընդունվել և Հայաստան է անցել Միջագետքից²⁵: Իրանք որոշակի նմանութուն ունեն Բարելունից, Ուրուկից²⁶ և այլ վայրերից²⁷ հայտնարերված կապ՝ շքող սարկոֆագների հետ:

Արտաշատի և Վաղարշապատի վերոհիշյալ ուղղահայաց պատերով սարկոֆագները, նույնպես, Հայաստան և, ընդհանրապես, Անդրկովկաս են թափանցել Միջագետքից, քանի որ գրանք լայնորեն տարածված էին Միջագետքում և նրան հարող շրջաններում: Սիսիանի և Օշականի կավե սարկոֆագները իրենց ընդհանրութուններով հանդերձ որոշակիորեն տարրերվում են վերրբերված զուգահեռներից: Սիսիանի կավե սարկոֆագի կափարիչը ոչ մի անդ չի հանդիպում, իսկ Օշականին տարրերվում է փր ձևով: Սրանք երկուսն էլ պատրաստվել են տեղում, հատուկ վառարաններում, սակայն այս շրջանում դեռևս հաղվաղեպ են երևան գալիս և Հայաստանում կավե սարկոֆագները հանդես գալով հելլենիսական շրջանում, մ. թ. I—II դարերում շեն հանդիպում, և ասարածում են սաանում միայն մ. թ. III դարից: Կավե սարկոֆագների սրտաղրության արհեստանոցներ կարող էին լինել միայն խոշոր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, որանդ դրանց համար վաճառահանսան շուկա կար, ինչպես Վաղարշապատում և Արտաշատում, ուր անպայմանորեն եղել է կավե սարկոֆագների արտաղրություն: Այդ են վկայում նաև Վաղարշապատի կավե դադաղների ծածկի սալերի սյուայի նշանները, որոնք հավանարար արհեստանոցի նշաններն են: Կավե սարկոֆագներն արտաղրվել են տարրեր լափերի, ասարեր հասակների համար:

Կավե սարկոֆագները, նույնպես, չի կարելի կապել որոշակի էթնիկ խմբերի և կրոնական հավատալիքների հետ: Դրանք առաջացել են քարազուրկ շրջաններում, նպատակահարմարությունից ելնելով: Հայաստանում նրանք հանգիպում են թաղման մյուս ձևերի հետ միասին, կողք-կողքի, իսկ ուղեկցող նյութերը նույնն են, ինչ որ սալարկղային, հիմնահողային կամ կարասային թաղումներին: Թաղումը կապ՝ սարկոֆագներում փոխաղեցնության արդյունք է և, ինչպես վերը նշեցինք, շատ վաղուց Հայաստան է անցել Միջագետքից:

Թաղման մյուս ձևը փայտե դադաղների մեջ կաարված թաղումներն են, որոնք առաջին անգամն են հայտնարերվում Հայաստանի անաիկ շրջանի դամարաններում: Դժարախարար, մեզ հասել են միայն մեծ թվով երկաթյա գա-

Исгар Алиев, Ф. Л. Османов, Бассейн рек Геокчай—Гурдманчай—Ахсучай в античное время (предварительное сообщение), СА, 1975, № 1, стр. 194, рис. 6.

²⁴ Г. Чауїлѳ, Прогресс и археология, М., 1949, стр. 147.

²⁵ Աշխ. Փալանթար, նշվ. աշխ., էջ 51 և հտ.:

²⁶ M. I. Rostoutzeff, Dura and the Problem of Parthian Art. Yale, Classical Studies, vol. 5, New Haven, London, 1935, pp. 185 ff; fig. 29, 30.

²⁷ R. Ghirshman, Iran, Parthians and Sasanians, Thames and Hudson, 1962, fig. 131.

սեր, երկաթյա ժապավենաձե թիթեղներ գամերով և խիստ քայքայված փայտերի առանձին բեկորներ, որոնց ձեռն ու տիպը պարզել հնարավոր չեղավ: Դատելով գամերի երկարությունից, տախտակները եղել են բավականին հասա:

Այս հարցի պարզաբանմանը որոշ չափով օգնում է ըլուրներից արևմուտք, դաշտի մեջ գտնվող ցածր բլրի արեելյան լանջին բացված ժայռափոր դամբարանը, որտեղ գտնվեցին փայտե տրկղի եզրի մաքուր մշակված տախտակի մասեր և երկաթյա ժապավենաձե թիթեղի բեկորներ գամերով: Վերջիններս, ըստ երեսույթին, օգաագործվել են գազաղի անկյուններն ամրացնելու համար: Ուրեմն, կարելի է ենթադրել, որ արևմտյան դամբարանադաշտում հանգուցյալների մի մասը թաղվել է փայտե գազաղների մեջ, որոնք ամրացված են եղել նույնպիսի սեխերով ու թիթեղներով:

Փայտե շքեղ սարկոֆագներում թաղելը սովորական է եղել Հունաստանում և հյուսիս-մերձսեծովյան շրջաններում²⁸: Ուրեմն, գա թաղման տարածված սովորույթ էր:

Հատկապես ուշագրավ են գիակիղումով կատարված թաղումները: Դիակիղումը Հայաստանում նորություն չէր. այն հանգիպում է գեոսե վաղ, միջին և ուշըրոնդեդարյան, երկաթի և վաղ հայկական շրջանում, էջմիտծնի շրջանի Շրեշ ըլուրում և Կոտայքի շրջանի էլար գյուղում²⁹: Բրոնզի և վաղ սրկաթի դարաշրջանի գիակիղումով գամբարաններ հայտնարերվել են նաև Զվարթնոցի³⁰ շրջակայքում, Սահփանավանում, Ոսկեվագում, Աևանի սվազանում³¹ և այլուր:

Դիակիղումը հատուկ է եղել նաև ուրարտացիներին: Ալթին-Թեփեի (Ոսկե բլուր) շքեղ ընակարանատիպ գամբարանների կողքին հայտնի են Արգիշախիխիլիի, Նոր Արեշի և Մալաքլուփի գիակիղումով գամբարանները: Դրանք հանգուցյալն աճյունը լգարունակող ուրարական տիպի կարմիր կավե ամաններ են, գամբարանային իրեր³² պարունակող կճուճներ, որոնք զրվել են հողում փորված փոսերը մեջ, ինչպես Նոր Արեշի կոլումբարիումն է, կամ ժայռերի ճեղքերում, գեանի բնական փոսերում, ինչպես Մալաքլուում, երեսապապվում էին մանր քարերով, իսկ աճյունասափորները ծածկվում էին տուֆե սալաքարերով:

²⁸ Н. И. Сокольский, Деревообрабатывающее ремесло в Античных государствах Северного Причерноморья, М., 1971, стр. 113—123; М. Парович-Пешикан, Некрополь Ольвии эллинистического времени, Киев, 1974, стр. 56.

²⁹ Ե. Լալայան, Հուղարկավորության և գերեզմանների գարգացումը Հայաստանում, «Տեգեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1928, № 3, էջ 94 և հտ.:

³⁰ Ա. Բալանբար, նշվ. աշխ.: էջ 44:

³¹ Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 110 և հտ., Յ. Վ. Ханзадян, Лчашенский курган, № 6, КСИА, вып. 91, 1962, стр. 71; Ե. Լալայան, Նոր Բալաղեաի գավառ կամ Գեղարքունիք (1906 թ. կատարած պեղումներ), «Ազգագրական հանդես», գ. 15, 1907, էջ 166—173, 175 և հտ.:

³² Է. Մարտիրոսյան, Է. Մեղակաեյան, Նոր Արեշի ուրարական կոլումբարին, ԳԱՏ, 1958, № 10, էջ 63 և հտ., Բ. Ա. Купфчик, Урартский колуибарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, ВГМГ, т. XIII-В, Тбилиси, 1943, стр. 4 п сл.

Դիակիզումը կատարվել է տեղում, հանդուցյալի իրերի հետ միասին, որոնք ընդունելի կրում էին ուժեղ կրակի հեռքեր:

Մ. թ. ա. VI—V դարերի դիակիզումով հետաքրքիր կուրզան է պեղվել Շամշադինի շրջանի Գլուզու կոչվող վայրում³³, որտեղ փորված է գրեթե շրջանաձև փոս (խոր. 1,5 մ, տր. 3,7×4 մ). որի կենտրոնում կա ավելի փոքր շափերի երկրորդ փոսը (տր. 1,2×1 մ): Վերջինս լցված էր մոխրով ու ածխով, որի մեջ կային ոսկորների վառված կտորներ և առամի մաս: Վերին փոսում դետաքարերի մեջ կային հարյուրից ավելի ամրոզջական և կոտրված ամաններ, անասունների ոսկորներ, որոնք վառված չէին: Այսպիսով, դերեղմանը բաղկացած է ներքին բաժնից, որտեղ կատարվել է դիակիզումը և վերին բաժնից, որտեղ դրվել են հանդուցյալի իրերը: Վերջինիս վրա լցված քարերից էլ կազմվել է դամբարանարևույթը:

Արտաշատի դամբարանադաշտի պեղումները ցույց են առել, սակայն, որ դիակիզումը, յուրաքանչյուր թաղման ծիսակատարությունում լայնորեն տարածվել է Հայաստանում հելլենիստական շրջանում: Թաղման ծիսակատարությունը դիակիզումով, զոհարերություններով և հոգեհացով Արտաշատի հարավարևելյան դամբարանադաշտի թաղման ընդունելի է: Թաղումները ասորերի ափերի են. գերակշռում են հողի կտրվածքում կատարվածները, որոնք մեկ կամ մի քանի մեար տրամագիծ ունեն, պարունակում են մոխրի, փայտածխի և սևացած հողի հասա շերտ՝ մարդկային վառված ոսկորների առանձին կտորների, կենդանիների ոսկորների և խեցեղեն թեկորների մնացորդներով: Դամբարանի վրա դրված է լինում երկու նամ երեք տձև քար:

Դամբարանների մի մասի կողքին քարերից պատրաստված է ասորերի շափերի հարթակ, որը ծառայել է զոհարերության և հոգեհացի համար: Հանդիպում են նաև կրակի համար հատուկ պատրաստված կավով սվաղած, ինչպես նաև գետաքարերով շարված վառարաններ:

Հելլենիստական շրջանի դիակիզումով թաղում հայտնաբերվել է նաև Գառնիում, ամրացի ներսում, յոթերորդ աշարակի մոտ, որտեղ դիակիզումը իրերի հետ միասին նստարվել է կարասի մեջ:

Ուշագրավ է 1970 թ. Սիսիանի ավանի (շրջկենտրոնի) արևելյան թաղամասում բացված հելլենիստական շրջանի իշխանական դամբարանը: Դամբարանի ներքին դասավորությունը խախտվել էր ընկալիչների կողմից, դրտնով իսկ դժվարացնելով պարզելու նրա սկզբնական տեսքը: Դամբարանը ծածկված էր կրաքարե երեք լավ սշապված սալերով (150×70×24 սմ), որոնք ծածկված էին հողի շերտով: Սալերի կողքերին շարված խոշոր (63×49×20 սմ) շափի հում աղյուսներով պատրաստված էր հարթակ, մոտ 25 քմ. տարածությունում: Վերջինս հատկապես լավ էր պահպանվել արևելյան և հյուսիսային մասերում: Ամրոզջ հարթակը ծածկված էր 10—12 սմ հաստությամբ մոխրախառն կաշտի հողով, որի մեջ կային կրակից սևացած մեծ քանակությամբ ասորերի անոթների թեկորներ: Դամբարանի հյուսիսարևելյան և հարավարևմտյան անկյունում տեղավորված էր երկու խարիսխ. հյուսիսարևմտյանը, որը բաղալից էր և

³³ С. А. Есаян, Погребення VI—V вв. до н. э. в горах Шамшадина, СА, 1965, № 3, стр. 229 и сл.

քիչ ավելի մեծ, համառոտ սալերին կպած, իսկ հարավարևմտյանը, որը կրաքարից էր, ավելի հեռու: Սառըերկրյա շինությունը սրբատաշ կրաքարից պատրաստված կանոնավոր, ինքնաաիպ աստիճանաձև նեղացող շարվածքով դամբարան էր: Դամբարանում դրված կավե սարկոֆագի մեջ կար միայն մոտ 5 սմ հաստությամբ մոխրախառը բարակ հող:

Դիակիղումը, որպես թաղման ձև, դոյուլթյուն է ունեցել հին աշխարհի շատ ժողովուրդների կենցաղում, ինչպես, օրինակ, խեթերի, հույների, վրացիների մոտ³⁴: Հունաստանում սովորական թաղման հետ միասին IX—VIII դդ. լայնորեն տարածված էր դիակիղումը, իսկ որոշ վայրերում (Կրետեում, էլեսինում և այլուր) այն անդամ տիրապետող է եղել: Հունաստանում դոյուլթյուն ունեցող դիակիղման ձևը, նյութական մնացորդները հիշեցնում են ուրարտականը: Հունաստանում գիակիղումը կաարվում էր և առանձին տեղում, ինչպես և թաղման վայրում, ապա մոխիրը լցվում էր սափորի մեջ³⁵:

Դիակիղմամբ թաղումներ հայանարելվել են Փոքր Ասիայում, Միդիայում, Թերալում, Օլինթոսում³⁶ (հելլ. շրջ.), Վրաստանում, Իտալիայում, Բոսպորում և հունական մյուս գաղութներում: Դրանք մեծ նմանություն ունեն հունական դիակիղված դամբարանների հետ³⁷:

Հաղավային թրակիացիների մոտ, ինչպես Հերոդոտոսն³⁸ է վկայում, հանդուցյալներին թաղում էին կամ դիակիղումով, կամ դիակը հողում դնելով: Այդ սովորությունը շատ ատարածված էր մ. թ. ա. IV—III դարերում ամբողջ գեթական աշխարհում, որտեղ նույնպես այն գալիս էր հնուց³⁹:

Դիակիղումով թաղումը Հունաստանում մ. թ. ա. VI—V դդ. աստիճանաբար վերանում է, սակայն գոտուլթներում այն հարաանու է մինչև մեր թվականության սահմանազրուխը (մ. թ. ա. II—I դդ.):

Դեռես այսօր էլ դժվար է ճիշտ պատասխան առլ այն հարցին, արդյոք ի՞նչն է դրդել մարդուն այրել մահացածի գիակը: Այս առիթով դիանականները ատրերը կարծիքներ են հայտնել:

Հնում թաղման հետ կապված էին տարրեր ծեսեր և ըմբոնումներ, Մեկնություններում նշվում է, որ եգիպտացիները դիակը մշակում էին, մուսիա էին դարձնում, որպեսզի հողին երկար ժամանակ չրածտնվի մարմնից, իսկ հոռմետցիները, ընդհակառակը, վառում էին դիակը, որպեսզի հողին արագո-

³⁴ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, стр. 81, 86.


³⁵ H. Dragendorf, Theraische Graber, Thera, Bd. II, Berlin, 1903, S. 83.

³⁶ E. Pottier, S. Reinach, La nécropole de Myrina, I, Paris, 1887, SS. 157—158; H. Dragendorf, — — —, էջ 237.

³⁷ Е. Г. Кастанаян, Грунтовые некрополи Боспорских городов VI—IV вв. до н. э. и местные их особенности, МИА, № 69, М.—Л., 1959, стр. 274 и сл.; М. И. Ростовцев, Скифия и Боспор, Л., 1925, стр. 330; Г. А. Цветаева, Грунтовый некрополь Пантикапея, его история этнический и социальный состав, МИА, № 19, 1951, стр. 64.

³⁸ Herodot, V. 8.

³⁹ И. Т. Никумица, Погребальный обряд гетов в IV—III вв. до н. э., СА, 1973, № 2, стр. 27 и сл., 41 и сл.



Նկ. 18. 1-9—դամբր. № 24

րեն ռաժանվի մարմնից և վերադառնա իր սկզբնական վիճակին⁴⁰։ Մարդիկ միևնույն ժամանակ աշխատել են ամեն կերպ իրենց ծանր վիշտան հայտնել, նվիրվածությունը ցուցադրել, նվիրաավություններ ու զոհարբություններ անել, հնարավորին շափ հարմարավետ առն պատրաստել և այլ միջոցներով սիրաշահել ննջեցյալի հոգին, որպեսզի նա լավ զգա իրեն անդրշիրիմյան աշխարհում և կենդանի մարդկանց աշխարհը վերադառնալու ցանկություն չունենա, չարանա ու չվնասի նրանց։ Միևնույն ժամանակ նրանք կարծում էին, որ բարեկամական հարարբություններ պահպանելով և մշտապես հոգ անելով հանգուցյալի հոգու համար, կարող են նրա բարյացկամությունը շահել և օգտվել դրանից։ Աշխատում էին կրակի միջոցով հնարավորին շափ արագ ոռնչացնել մարմինը, որպեսզի կտրվեր նաև սեռյալի հոգին կենդանի մարդկանց աշխարհի հետ կապող թելը, օգնելով հոգուն շուտ ռաժանվելու մարմնից։

Հայաստանում դիակիզման ծիսակատարությունը հասնում է մինչև քրիստոնեությունից ընդունումը, սակայն նրա հետքերը վերապրուկալին ձևով գոյատևել են մինչև XX դարի սկզբները։ Օրինակ, խոյեցիները թաղումից հետո, հանգուցյալի հետ մխասին դերեզման ասարած ցախը գարսում էին դերեզմանի վրա և վառում։ Անդրկովկասի շատ շրջաններում, օրինակ, Գանձակի քաղաքի Բանանց գյուղում այդ անում էին նույն օրվա երեկոյան⁴¹։

Արտաշատի դամբարաններից շատերում կային ածուխի մեկ կամ մի քանի կտորներ և որոշ քանակությամբ մոխիր։ Պարզ է, որ սրանք ևս կապված էին կրակի պաշտամունքի հետ։ Թաղման ծիսակատարության ժամանակ ածուխի կտորները և մոխրի մնացորդները հանդիսանում էին կրակով շարողներին վանելու, դերեզմանը նրանցից մաքրելու միջոց⁴²։ Այն կապվում է նաև նախնիների պաշտամունքի հետ, որպես նապ մահացածի և ընտանեկան օջախի հետ⁴³։

Միսիանի և Արտաշատի դամբարաններում թաղման ծիսակատարությունը կատարվել է թաղման կրակի շուրջը, որն ուղեկցվել է զոհարբություններով և հոգեհացով։ Հայտնարերվել են մեծ քանակությամբ տաշաքեր, մեծաաղե, կավե և ապակե օծանելիքի անոթներ ու բեկորներ, նրանց հետ նաև բրոնզե թիակիկներ։

Հայտնի է, որ թաղումը դիակիզումով կատարելը կապված էր որոշ դժվարությունների ու ծախսերի հետ։ Եվ, ըստ երևույթին, բնակչության ստորին խավերը դիակիզումը կատարում էին առանց զոհարբությունների, և տալիս էին համեստ հոգեհաց, կամ հաճախ խուսափում էին դիակիզումից և թաղումը կատարում էին հողի կտրվածքում, կարասների մեջ։

⁴⁰ E. Rhode, Psyche, Bd. I, Leipzig, 1898, S. 30, 4.

⁴¹ Ե. Լալայան, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, էջ 55.

⁴² B. C. Зеленичук, Очерки молдавской народной обрядности, Кишинев, 1959, стр. 38; Г. К. Завойко, Верования и обычаи великоруссов Владимирской губернии, ЭО, 3—4, М., 1914, стр. 97; В. Харузина, К вопросу о почитании огня, ЭО, 3—4, М., 1907, стр. 159.

⁴³ В. Харузина, 2-й. աշխ., էջ 59.

Հայաստանում, ուշ հելլենիստական շրջանում, կիրառվող դիակիրոնաբարդյունք էր հելլենիստական մշակույթի ազդեցության, որի հեռանկարով թաղման այդ ավանդական ձևն տոլսուսանում է. նոր երանդավորում սահանում: Դիակիրոնաբարդյունքը անուղղակի էր Արաշատ քաղաքի հարավարևելյան և արևելյան մ. թ. ա. I—մ. թ. III դարերի դամբարանների համար:


Թաղման ծիսակատարության հետ կապված հետաքրքիր տարրողություններից մեկն էլ ակնակալներ, շրթնակալներ ու մահացածին նվիրված հուղարկավորության պատկերներն էին: Արաշատի ընդհանուր առմամբ արեւմտյան շրջանակում գտնվող քարե թիթեղը, որի վրա ոչ մի դարձյալ է ասել այստեղ ակնակալներ եղել են, թե ոչ. որովհետև պահպանված ոսկյա թերթիկների մեջ այդպիսի չեն երևում: Շրթնակալներ ու ակնակալներ են հայտնաբերվել նաև հարավարևմտյան Հայաստանի դամբարաններից⁴⁴: Վերջիններիս վրա սխեմատիկորեն դրված ձևեր և շրթեր, բացվածքները տրված ձևերով, իսկ ծայրերին կապելու համար արված են անցքեր: Թաղման ժամանակ պսակ կապելու, ակնակալներ և շրթնակալներ դնելու այս սովորությունը միջերկրածովյան և առաջավորասիական ծագում ունի, որովհետև հայտնի դարձած ամենահին թաղումները, որոնք վերաբերում են մ. թ. ա. III—II հազարամյակներին, կառավարվել են այս շրջաններում⁴⁵: Ենթադրվում է, որ այն առաջացել է հանդուցյալների դեմք դիմակով ծածկելու ծիսական սովորությունից⁴⁶: Դիմակները, ակնակալները, շրթնակալները և այլն լինում էին տարբեր նյութերից, այդ թվում նաև ոսկուց և արծաթից: Վերջիններս հիմնականում ասարածված էին հոմեոպատիկ ժամանակաշրջանում առաջավորասիական, միջերկրածովյան և հյուսիս-մերձսևծովյան շրջաններում: Ոսկյա և բրոնզյա թաղման պատկերներ են հայտնաբերվել Վրաստանից⁴⁷, Ալգեթից մ. թ. ա. VI—IV դդ.: Կլեոսթից I—II դդ. և Մյսոսից II—III դդ.: Հանդուցյալի ճակատին կապվող թիթեղը եթե ժապա-

⁴⁴ *Ömit Serdaroğlu*, Agin and Kalaycik Excavations 1968, Preliminary Report, KP 1968 activities. ser. 1, № 1, Ankara, 1970, p. 51, pl. 27; *R. P. Harpér*, Pagnik Orent Excavations, 1969, KP, 1969 Activities, ser. 1, № 2, Ankara, 1971, p. 95, pl. 65, 1; *Ömit Serdaroğlu*, Agin and Kalaycik Excavations, 1970, KP, 1970 activities, ser. 1, № 3, Ankara, 1972, p. 43, pl. 21, 5.

⁴⁵ *Այդ մասին դրականություններ տե՛ս N. P. Toll*. The Necropolis, p. 115; *H. H. Погребова*, Золотые лицевые пластины из погребений мавзолея Неополя скифского, ИАДК, Киев, 1957, стр. 149 н сл.

⁴⁶ *А. В. Орешников*, Несколько замечаний о древностях, найденных в с Парутине в 1891 г., «Древности», Труды Московского археологического общества, т. 15, вып. II, стр. 78; *Б. А. Куфтин*, Археологические раскопки в Трналетти, I, Тбилиси, 1941, стр. 24; *Н. Н. Погребова*, *Նշվ. աշխ.*, էջ 149 և հտ.:

⁴⁷ *Б. А. Куфтин*, Археологические раскопки в Трналетти, стр. 39—40, табл. IX; *Г. А. Ломтадзе*, Кддеетский могильник, Тбилиси, 1957, стр. 112, 168, рис. 19 (на груз. яз.); *А. М. Апакидзе*, *Г. Ф. Гобеджигвили*, *А. Н. Каландадзе*, *Г. А. Ломтадзе*, Мцхета, I, Тбилиси, 1958, стр. 58, рис. 25, стр. 114, 115, рис. 62, табл. LII, LXXXVII; *П. М. Пиртлашвили*, К вопросу о глазных и губных прикритиях и «Траурном венце», погребяемых с покойником, Сообщения АН Грузинской ССР, т. XXVIII, 1962, № 5, стр. 637, рис. 1.



Նկ. 14. 1-3—դամբ. Մ 24, 4-8—դամբ. Մ 25

վինսաձև էր, առդա լինում էր մեկ կամ երկու հաա⁴⁸, ինչպես հյուսիս-մերձսե-
ծովյան դամբարաններում, փսկ եթե տերևներ էին, կարող էին լինել մի քա-
նիսուր: Թաղման պսակի համար սովորաբար օգտադործում էին կարոսի եռա-
ման տերևները: Հայտնի է. որ հույները կարոսն օգտադործում էին միայն
հողեհացի ժամանակ, որպես մահացածներին նվիրված ռույս⁴⁹:

Թաղման պսակները, ակնակալներն ու շրթնակալները միշտ չէ, որ
միասին են հանդիպում: Հաճախ լինում են միայն տերևներ կամ ժապավեն-
ներ, զամ. շրթնակալներ: Այդ երևույթը հատուկ է դարձյալ Առաջավոր Ասիա-
յին: Օրինակ, Թեւ-Հալաֆում մ. թ. ա. II հադ. վերջի դամբարաններում
դտնվել են միայն շրթնակալներ. նույն երևույթը նկատվել է նաև Կիպրոս-
ում⁵⁰, Դուրա-էվրոպոսում և այլուր:

Շաա հնարավոր է, որ Արաաշաաի դամբարաններում ևս եղել է միայն
թաղման պսակ և շրթնակալ, իսկ ակնակալներ չեն եղել:

Ակնակալներ և շրթնակալներ Հայաստանի վաղ շրջանի թաղումներում
չեն հանդիպում: Բացակայում են նրանք նաև Վաղարշապատի, Գառնիի, Օշա-
կանի և այլ հնավայրերի անտիկ դամբարաններում: Ինչ վերաբերում է Ար-
աաշատի դամբարանին, ապա այն դեռես միակն է: Կառելի է ենթադրել,
որ այս սովորութունը Հայաստան է թափանցել Սիրիայից և Փոքր Ասիայից
մ. թ. ա. I դարում, Տիգրան II-ի և Արտավազդ II-ի կողմից այստեղ դադ-
թեցրած ընակչության միջոցով: Այլ պատկեր է նկատվում հարավարևմտյան
Հայաստանի անտիկ դամբարաններում, որանդ ակնակալներ և շրթնակալներ
ավելի հաճախ են հանդիպում: Դա սիրիական և փոքրասիական շրջաններին
ավելի մոտ դանվելու արդյունք է:

Այսպիսով, ուղեկցող նյութերից դատելով, կարելի է ենթադրել, որ Ար-
աաշատի այս դամբարանը պատկանում է քաղաքի վերնախավի ներկա-
յացուցիչներից մեկին: Նրան թաղել են ծիսական մի արարողությամբ, որն
իր արմատներով հին արևելյան է և Հայաստան է անցել Փոքր Ասիայից
կամ Սիրիայից: Այն հելլենիստական մշակույթի փոխադրեցություն արդյունք
է: Վերնախավի որոշ մասի կողմից ընդունված թաղման ծիսական այդ նոր
սովորույթը աարածում շաաացավ ժողովրդի մեջ: Կարելի է ենթադրել նաև, որ
դամբարանը պատկանում է օաարերկրացի մի կնոջ, որին թաղել են իրենց
ծեսերի համաձայն:


Ենթադրվում է. որ նշված սովորությունը հյուսիս-մերձսեծովյան շրջան-
ներն է թափանցել Փոքր Ասիայից, Անդրկովկասի և Կովկասի միջոցով մ. թ.
ա. II—I և մ. թ. I դարերում և աարածվել հունական քաղաքներում (Խեր-
սոնես, Օլվիա, Պանտիկապեյոն), քանի որ ո՛չ հույների, ո՛չ սկյութների, ո՛չ
մեհոտների մոտ այդ սովորությունը նախկինում ընդունված չի՝ եղել⁵¹: Սակայն
ավելի հավանական է. որ այն նշված շրջաններն անցած լինի ուղղակի Միջերկ-

⁴⁸ Н. В. Пятшова, Ювелирные изделия Херсонеса, конец IV века до н. э.—
IV век н. э., М., 1956, стр. 65.

⁴⁹ Н. В. Пятшова, *ibid.* աշխ., էջ 67:

⁵⁰ Н. Н. Погребова, *ibid.* աշխ., էջ 151:

⁵¹ նույն աեղում, էջ 153:



Նկ. 15. 1—3—դամբ. № 27, 4—5—դամբ. № 24, 6—դամբ. № 30, 7—դամբ. № 31

րականի արեելյան ափերի երկրներից կամ Փոքր Ասիայից, որոնց հետ առևտրու-
անտևական ու մշակութային կապերը շատ ավելի ուժեղ էրն. քան Անդր-
կովկասի ու Կովկասի հետ:

Իսաղման ծիսակատարությունների ժամանակ կատարվող կարևոր արա-
րողություններից մեկն էլ հոգեհացն է եղել:

Հայաստանում, ինչպես նաև ուրիշ երկրներում, սկսած ամենավաղ շր-
ջանի դամբարաններից մինչև քրիստոնեական դերիդամանները. հայտնաբեր-
վել են կավե տարրեր տեսակի անոթներ, որոնց մեջ եղել է ննչեցյալի բաժին
ուսեղիքը Այս առաջացել է հանդերձյալ կյանքի մասին եղած այն պատկե-
րացումից, թե այն երկրային կյանքի ճիշտ պատճենն է:

Արտաշատի և Միսիանի դամբարաններում այս երևույթը կատարվել է
այլ ձևով. դիակիզման և դիակի թաղման արարողության ժամանակ աեղում
կատարվել են ղոհարերություններ և տրվել է հոգեհաց:

Արտաշատի դամբարաններում հայտնաբերված իրեղը և կենդանական
ոսկուների մնացորդները ցույց են տալիս, որ դամբարաններից մի քանի-
սում հոգեհացը թավականին ճոխ է եղել: Հոհարերվել են տարրեր տեսակի
մեծ ու փոքր կենդանիներ, ցուլեր, ոչխարներ, որոնց միսն ուսեղուց հետո
ոսկորները դրել են կրակի մեջ, Օգտադործվել են նաև մեծ քանակությամբ
խմիչքներ, որովհետև կան դամբարաններ, որտեղ հայտնաբերվել են տար-
րեր շափերի մի քանի կարասներ, սափորներ, թասեր և կճուճներ: Հոգեհացի
համար բերված ըլլող անոթները ջարդվել ու նեավել են կրակի մեջ կամ
դերեղմանի վրա, ուստի նույն անոթի բեկորները գտնվում են դամբարանի
աարեր մասերում: Ըստ երևույթին, հոգեհացի ժամանակ անոթների մի
մասը վերածվել է շաա մանր բեկորների: Անոթների բեկորները որոշ դամ-
բարաններում հասնում են մի քանի հարյուրի: Գերեղմաններից մի քանիսի
մոտ, ինչպես վերը նշեցինք, քարերով պարաստվել են հատուկ հարթակ-
ներ, որոնց մակերեսն հարթեցրել են շաղախով (դամբ. № 20, 21, 41), հո-
գեհացի և ղոհարերությունների համար: Միսիանի դամբարանում հոգեհաց
ուսեղուց րացի, դամբարանի ներսում պղնձե կաթսաներով և ղանաղան ա-
նոթներով ու թասերով, ինչպես նաև ղնդածե երկկանթանի ջրամաններով և
երկու փոքր ջնարակած աափաշշերով աարեր տեսակի ուսեղիք ու խմելիք
են դրել հանդուցյալի համար: Այս երևույթը նկատվել է նաև Արտաշատի
հարավարևելյան դամբարանադաշտի № 12 և 24 բլուրներից դեպի արևմուտք
գտնվող ցածր թմբի վրայի թաղումներում:

Հայաստանում հոգեհացի և ղոհարերության սովորությունը նույնպես
ունի հին արմատներ: Այդ են վկայում Մեծամորի դամբարանների վրա և
նրանց մոտ հայտնաբերված կոարված ամանների բեկորները⁵²:

Ըստ հնագետ Ստ. Ծսայանի բանավոր հաղորդման, այդպիսի հետքեր
են նկատվել Շամշադինի շրջանի Ղրղի գյուղում՝ «Կաղնի ծառ», «Դառանչ»,
«Վղուտ» կոչված վայրերի I հաղարամյակի սկզբի դամբարաններում, որ-

⁵² Է. Վ. Խանգաղյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Վ. Պարսամյան, Մեծամոր (ուսումնասիրություն
1965—1966 թթ. պեղումների ավարտներով), Երևան, 1973, էջ 166—169, 185:

տեղ նրանց վրա եղած քարի և հողի լիցքի մեջ, մինչև ըուն դերեզմանին հասնելը, հանդիպում են անոթների ընկորներ, ոսկորների հետ խառը, երբեմն էլ կրակի հետքեր: Այդպիսի հետքեր, ինչպես վերը տեսանք, հայտնաբերվել են Շամշադինի շրջանի Գյողլուի կուրգանում:

Արտաշատի դամբարաններում հոգեհացը տրվել է ոչ միայն թաղելուց հետո, որը ընտրոջ է սովորական գամբարտներին, այլև դիակիղման ժամանակ, երբ դրանցը այրելու ընթացքում կրակի մեջ էին գցում ուսելիքի մնացորդները, այդ են վկայում մոխրի մեջ գտնվող կենդանիների ոսկորները: Զարդել նետել են նաև հոգեհացի համար օգտագործված անոթները: Այդպիսի գեպքում հոգեհացը կազմակերպվում էր թաղման կրակի շուրջը⁵³:

Արտաշատում հանդիպում են նաև կրկնակի հոգեհացի հետքեր (№ 24, 30): Այսինքն՝ մի անգամ հոգեհաց ուտելուց և դամբարանը ծածկելուց հետո երկրորդ անգամ են այցելել ու հոգեհաց տվել: № 30 գամբարանում կրակի հեաքերը, մոխրի ու անոթների մնացորդները ծածկված էին քարերով և հողով, որոնց մեջ և վրան նորից հանդիպում էին կրակի, մոխրի կենդանական ոսկորների ու խեցեղենի մնացորդները: № 24 դամբարանի առաջին հարթակի վրա հայտնաբերված հոգեհացի հետքերը ծածկված էին երկրորդ հարթակում, որի վրա նույնպեսի հետքեր կային:

Ձոհարերության, հոգեհացի ծիսակատարությունների հին լինելու մասին են վկայում թաղման արարողությանը վերաբերող խեթական տեքստերը, որտեղ կենդանիների, գինու, դարեջրի, հացի և մրգերի զոհարերությունից հետո կոտրաաում էին անոթները⁵⁴: Այդ մասին ավելի կատարյալ պատկերացում են տալիս Հունաստանի և Ռուսաստանի հարավարևմտյան շրջանների դամբարանների պեղումները, որանը հանդուցյալի պատվին կաարված այդպիսի ծիսակատարությունների հեաքեր հաճախ են հայտնաբերվել: Հոգեհացի հետքերը Հունաստանում ընտրոջ են հիմնահողային թաղումներին: Այստեղ նույնպես հանդիպում են կրկնակի հոգեհացի հեաքեր: Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ Հին Հունաստանում հանգուցյալի մահվան երրորդ, իններորդ և երեսուներորդ օրը մահացածի տանը կամ նրա դերեզմանի վրա հոգեհաց էին մատուցում⁵⁵, Հոգեհացի ծիսակատարությունը շաա տարածված է եղել հյուսիս-մերձսեծովյան շրջաններում, Բոսֆորյան թագավորությունում մ. թ. ա. V դ. վերջից—I դ., հաակապես, հելլենիստական շրջանում: Այն ճոխությամը կաարվել է մեծ կուրգաններում⁵⁶ (օր. «Բակսինյան», «Մելեկ-Չեսմենյան», Յուդ-Օրա», «Ձմեյան», «Սեմիրրատնի», «Բուլշայա ըլիդնեցի», «Վասյուրինյան» և այլն): Այստեղ հոգեհացի արարողությունը մեծ մասամբ կաարվել է դերեզմանափոսի, դամբարանի, մասամբ ծածկված կուրգանութմրի վրա կամ կողքին, որտեղ զոհարերության համար

⁵³ E. Г. Кастаная, Обряд тризны в Боспорских курганах, СА, XIV, 1950, стр. 128.

⁵⁴ H. Otten, Hethitische totenrituale, Berlin, 1958, S. 13—16.

⁵⁵ E. Г. Кастаная, նշվ. աշխ., էջ 126, ծան. 7:

⁵⁶ Գրականությունը նույն աեղում, էջ 124 և հտ.:

հատկացված կրակատեղին շրջափակվել է կավե հում աղյուսներով կամ քարերով: Երբեմն այդ նպասակի համար պատրաստվել են հատուկ հարթակներ քարերից կամ կավից, դրանց վրտ հաճախ պատրաստվել են զոհասեղաններ: Քիչ չեն նաև կրկնակի հոգեհացի հետքերը: Հոգեհացի հետքեր կան նաև շարքային դամբարաններում: Բոսֆորում գեոևս առաջին գարեբում շտրունակում էին մահացածի պատվին զոհեր մատուցել, հոգեհաց առ:

Ձոհարեբության և հոգեհացի հետքեր հայտնաբերվել են նաև Ագրբեշանում, Մինգեշաուրում⁵⁷: Այստեղ կտրասային թաղման մոտ հաճախ հայտնաբերվել է օջախ, որի մեջ գտնվել են վառված ոսկորներ:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ մյուս երկրներում մահացածի հետ թաղում էին նրա հագուստը, ղենքերը, ղարգերը, առօրյա օգտագործման նրտն պատկանող իրերն ու առարկաները, հնում, երբեմն նաև, կանանց ու ծառաներին, ընանի, հեծնելու և բեռնակիր կենդանիներին:

Աստվածներին նվիրված րացի սովորական ղոհարեբություններից, Ուրարաուում, ենթադրվում է. որ եղել են նաև մարգկային ղոհարեբություններ⁵⁸: Հստ Ատրարոնի⁵⁹ մարգկային ղոհարեբության սովորություն եղել է նաև Աղվանքում:

Չնայած հելլենիստական և մ. թ. I դարերին վերաբերող դամբարանների պեղումները մարգկային ղոհարեբության փաստեր չեն տվել, սակայն, ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ սովորությունը սահմանափակ և փոփոխված ձևով շարունակվել են նաև հեաագայում: Այս առումով հետաքրքիր է Արիստոն Փեղղացուց վերցրած Մ. Խորենացու ալն հատվածը, որը վերաբերում է Հայոց Արաաշես թագավորի թաղմանը: Հնարավոր է, որ դրանում նկարագրված ծիսակատարությունը վերաբերում է այլ ժողովուրդների, սակայն նման սովորություններ կարող էին գոյություն ունեցած լինել նաև հայկական իրականության մեջ և Մ. Խորենացու հաղորդածը պետք է գիտել իրրև այդ ամենի արձագանքները⁶⁰: Նա Արտաշեսի թաղումը նկարագրելիս նշում է, թե Արտաշեսի մահվան ժամանակ ինչքան րաղմություն մեռավ, նրա սիրելի կանայք, հարձերր և մտերիմ ծառաները, թե դիակը թաղեցին ոչ թե րարրարոսների նման, այլ քաղաքակիրթ (աղգերի) կարգով և րաղմաանսակ շքեղ պատիվներ մատուցեցին: Նրա դագաղը, ասում է, ոսկեղեն էր, դահը և անկողինը բեհեզից և մարմինը պատող պամուռանր ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա ղենքն առչւը: Արտաշեսի դահը շրջապաաված էր նրա հարաղաաների, աղգականների, պաշտոնյաների, իշխան-

⁵⁷ С. М. Казиев, О двух кувшинных и двух катакомбных погребениях, МКА, III, Баку, 1953, стр. 9; С. М. Казиев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, стр. 20. ենթադրվում է. որ զոհ կամ ընծա մատուցելու միջոցով, կրակի օգնությամբ դամբարանը մարդիկ է աշար ոգիներից»: Մեր կարծիքով, դրանք ղոհարեբության և հոգեհացի սովորական հետքեր են:

⁵⁸ Б. Б. Пиотровский, Ванское царство, Урарту, М., 1959, стр. 223.

⁵⁹ Страбон, География (перевод Г. А. Стратановского), Л., 1964, стр. 477.

⁶⁰ Արտաշեսի շքեղ թագման նկարագրությունը շատ նման է Հովսեփոսի հաղորդած Հեբովղես թագավորի թաղման նկարագրությանը: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (Թարգմ. Ստ. Մախատյանի), Երևան, 1961, գ. 2, գլ. 4, ծան. 129:

ների, զորքերի կողմից, առջևից պղնձե փողեր էին հնչեցնում, իսկ ետևից սեազգեստ ձայնարկու կույսեր և լալկան կանայք էին դնում, ամենից վերջը ռազմիկների բազմութունն էր: Ծն այսպես տանելով թաղեցին: Նրտ զերեզմանի վրա կամավոր մահեր էին լինում:

Արաաշեսի մահվան ժամանակ հեթանոսական սովորություններ շատ կոտորածներ էրն լինում⁶¹: Այս արարողությունը հիշեցնում է Սեանի ավազանի, Լոռու և Հայաստանի մյուս շրջանների III հաղարամյակի երկրորդ կեսի ճոխ թաղումները և Շումերում դոյություն ունեցող սովորությունը, երբ թագավորական ընտանիքի անդամների հետ թաղում էին երածիշտներ, ծանոսներ, թիկնապահներ և այլն⁶²:

Հանդուցյալին մարդ և կենդանի ղոհարերելու սովորությունը տարածված է եղել շատ ժողովուրդների մեջ⁶³:

Հավանաբար մարդկային ղոհարերություններ կաարավում էին թագավորների, իշխանների, այսինքն՝ աչքի ընկնող մարդկանց թաղման ծիսակատարությունների ժամանակ: Մարդկային ղոհարերության հետ միասին գոյություն ունեցող նաև մարմնի որևէ մասը ղոհարերելու սովորությունը, այլ կերպ՝ մասով ամբողջը փոխարինելու դաղափարը, որն աստիճանաբար դառնում է ախրապետող⁶⁴: Հայաստանում հելլենիստական և մ. թ. առաջին դարերում տարածված է եղել ղոհարերության խեղանդամություն շառաջացնող մի ձև, որը շարունակվել է նաև հետագայում և վերապրուկային ձևով հասել է մինչև մեր օրերը:

Գնելի վրա կոծելիս, կինը՝ Փառանձեմը փեսուս էր մազերը⁶⁵: Այս սովորությունն այնքան տարածված է եղել Նայսրը մօջ, որ եկեղեցական ժողովներում հաուուկ որոշումներ են ընդունվել: Վաղարշապատի ժողովի (325 թ.) 17-րդ հոդվածում գրված է ՁՅԱԻԽԵԱՆ ԱՆԻԾՈՒԱԾ ԼԻՆԻ ՆԱ, ՈՎ ԿՐ ԿՄՐԻ ՀԻԱԼԵՐՈՒ: Նահապետ Քուչակն ասում է. «Ես մեռանեմ ի քո վերա, դու ղծամդ կտրես»⁶⁵ =:

Մինչև XX դարը հասած այդ սովորությունը Մուշ-Տարոնում, Վասպու-

⁶¹ «Մուսուխի ետրենացույ Պատմութիւն Հայոց». Տփղիս, 1913, գ. II, գլ. 4, 4և:

⁶² H. M. Дьяконов, նշվ. աշխ., էջ 17:


⁶³ Հերոդոտը պատմում է, որ սկյութացիները նախապես խեղդում էին ընտրված ղոհերին, հետո թաղում իրենց տիրոջ հետ (Ն. Լալայան, Հուդարկավորությունը..., էջ 113):

Երբ հունական նավերը Հելեսպոնտոսի հանգիստակաց ափը հասան, հայանվեց Աքիլեսի ուրվականը և պահանջեց իրեն ղոհարերել Պրիամոսի զստերը՝ Պոլիքսենին, որին մի ժամանակ կանխաեսեել էին կնության տալ իրեն: Պոլիքսենեն իր կամքով գնում է գեպի ղոհասեղանը և որպեսզի իրեն չդիպի ղոհաղանակը ձեռքին կանգնած պատանու ձեռքը, և Հաղեսի թագավորությունը չիջնի իրրև սարուկ, ինքն է մերկացնում իր կուրծքը, որտեղ մխրճվում է սպասանու սուրը: (Ն. Ա. Կուս, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1956, էջ 499, Եվրոպիցես, ՎԱՂՂՈՒՄԱՐԵԱ և ՎԷԿԿԱՐԵԱ ողբերգությունները):

⁶⁴ Իրիկանում միրմիգոնցիները իրենց կտրած մազերով պատում են Պաարուկեսի գիակը և գնում խարուկի վրա: Իսկ Աքիլեսը կտրելով իր մազերը, գնում է Պատրոկլեսի ափի մեջ: Հոմերոս, Իլիական (Թարգմ. Հ. Համարձումյանի), Երևան, 1935, էջ 425:

⁶⁵ «Փալասոս Բուզանդացույ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, IV, ԺԵ:

⁶⁶ Ն. Լալայան, Հուդարկավորության և գերեզմանների ղարգացումը Հայաստանում, էջ



կկ. 16. 1-8—դամբ. № 30

րականում, Բուլանրխում ննչեցյալի կինը, մայրը, բույրը կտրում էին իրենց մաղբրը և դնում ննչեցյալի կրծքի վրա⁶⁶:

Արտաշատում, ինչպես նաև Հայաստանի անտիկ շրջանի մյուս դամբարաններում մեծ թիվ են կաղմում խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորները, որոնք զոհաբերվել են թաղման ծիսակատարության ժամանակ: Սակայն ամբողջությամբ հետը թաղելու փոխարեն մի մասը իրրև ճաշ դրել են դամբարանում կամ կերել են ու ոսկորները նետել դամբարանի մեջ և վրան: Մ. Խորենացին վկայում է. որ Տիգրան վերջինը Բագավանում (Բաղրևանդի դավառ) դանվող իր եղբոր՝ Մաթան քրմապետի գերեզմանի վրա րաֆին է շինել տալիս, որպեսզի ալոպեղ զոհերից վալելեն բոլոր անցորդները և հյուրերը ընդունվեն դիշերելու համար⁶⁷:

Թաղման ժամանակ կաարված զոհաբերության հետ կապված հնադույն ձևերից մեկն էլ արյան հեղումն էր դերեղմանի վրա, երբ զոհը արյունը զոհասեղանի անցքերով կամ այլ ձևով հեղվում էր հողի մեջ⁶⁸, Միսական այդ սովորույթը Հունաստանում պահպանվել է մինչև մ. թ. ա. VI դարը⁶⁹: Սուրենի կողմից այն արդելվելուց հետո, արյան հեղումն աստիճանաբար իր տեղը դիջում է անարյուն հեղման, այսինքն՝ զոհաբերված անասունի միսն ուտում էին և զինու հեղում կաարում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում զոյություն են ունեցել զոհաբերության բոլոր ձևերը: Սեանի ավազանում հայնարեղված դամբարանների մի մասում դիակների հետ միասին հանդիպում են նաև եղան, ձիու և այլ կենդանիների վառված ոսկորները: Այստեղ մենք ունենք թուղման ծիսակատարության ժամանակ կաարված զոհաբերության ամենահին ձևը, երբ կենդանին մորթում և ննչեցյալի հետ միասին ամբողջությամբ այրում էին: Այդպիսի զոհաբերություն է նկարագրում Հոմերոսը Իլիականում⁷⁰ և Ոդիսականում⁷¹: Ըստ նրա զոհաբերության ժամանակ նախապատվությունը տալիս էին ցուլերին և խոյերին:

Հայաստանում ես եղը, ձին ու խոյը եղել են զոհաբերության տվանդական կենդանիները: Քսենոփոնը վկայում է, որ իր ավար վերցրած պառավ ձին նվիրում է դեղջավաղին, որպեսզի սնուցի ու զոհաբերի, քանզի լսել էր, որ այն նվիրաբերված էր Հելիոսին⁷²:

Միսիանի և Արաշատի դամբարաններում ներկայացված է զոհաբերության ավելի ուշ ձևը, երբ կենդանիները մորթում էին զոհասեղանի վրա, մի-

⁶⁶ Վ. Պետոյան, Սասունի ազգագրությունը, Երևան, 1965, էջ 304, գնդգ. հանգես, V, էջ 173, 177, XX, էջ 146, XXVI, 1917, էջ 188:

⁶⁷ Մ. Խորենացի, գ. II, գլ. 42:

⁶⁸ Pausan, IV, 32, 31, X, 4 7.

⁶⁹ Ոդիսևսը իր ուղեկիցներով, Հադեսի թագավորության ճանապարհին, ստորերկրյա ասավածներին զոհաբերում է մի ուխար և խոյ, որի համար խորունկ փոս է փորում, նրա մեջ երեք անգամ մեղրի, զինու և ջրի հեղում է կատարում, այնուհետև գարու ալյուր է ցանում և հետո մորթում զոհարևովող կենդանիները: Մեռյալների հողիները հավաքվում են զոհի արյունը խմելու: Համեռու, Ոդիսական (Թարգմ. Մ. Կրկյաշարյանի), Երևան 1957, XI, 25 (էջ 145),

⁷⁰ Իլիական, XXIII, 165, 170 (էջ 425):

⁷¹ Ոդիսական, XI, 45 (էջ 146):

⁷² Քսենոփոն, Անարասիս (Թարգմ. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1970, գ. IV, հ. V, էջ 98:

սր ուտում էին, իսկ մնացորդները կտրատած ասանեղենի հետ նեաում կրակի մեջ կամ գերեզմանի վրա: Արտաշատի դամբարաններից մի քանիսում և դամբարանադաշտի անբխորիայից գտնվել են երկայնքով կիսված ջրի կավե խողովակներ, ամանների կիսակլոր ընկորներ, որոնք հավանարար օգտագործվել են ստորերկրյա ասավածներին նվիրված զոհարերության արարողության ժամանակ, որի մոտ ուղևորվելու էր հանդուցյալը:

Հին հայերի մեջ Սանդարամետ հասկացողությունը նույնացվում էր երկրի խորքի, անդունդի հետ, այսինքն՝ նշանակում էր ստորերկրյա, անզրչիրիմյան աշխարհ⁷³, որտեղ ուղևորվում էին մեռյալների հոգիները: Այն կարելի էր նույնացնել հարավմիջագետքյան պանթեոնի էրեշկիզակի⁷⁴ կամ հունական պանթեոնի Հադեսի հետ:

Ծխակատարության ժամանակ կաարվող զոհարերությունները, հոգեհացը, հեղումները և այլն այնքան խոր տրամատներ են ունեցել ժողովրդի մեջ, որ վերապրուկային ձևով շարունակվել են մինչև մեր օրերը, օրինակ, գինու ըմպումով և հեղումով ուղեկցվող ծխակատարությունները:

Հոհարերությունների և հոգեհացի մասին խոսելիս, պե՞տ է նշել նաև դամբարանների վրա հայտնաբերված կրաքարե խարիսխները և երկանքները: Դժբխտարար, դրանք մեծ մասամբ խախաված էին և զժվար է ասել, թե որ դամբարաններին են պատկանել: Դամբարանների վրա խարիսխների այդքան հաճախ հանդիպելը թույլ է տալիս ենթադրելու, որ նրանք նախ ունեցել են ասան հիմքի. այսինքն՝ ընկալարանի նշանակություն, մասով փոխարինվել է ամրոցը: Հնարավոր է, որ դրանց մեծ մասը վերցված լինեն ավերված շենքերից: Իսկ թաղման ծխակատարության ընթացքում խարիսխները ժամանակավորապես ծառայել են նաև իրրև զոհասեղաններ:


Դամբարանների վրա հայտնաբերված լծակավոր աղորիքներն ու երկանքները ասելի են գերեզմանոց, թերևս տեղում հացահատիկ աղալու և այն հոգեհացի ու թաղման ծխակատարության ժամանակ օգտագործելու⁷⁵ համար կամ էլ ունեցել են հանգուցյալին ուղեկցող առարկաների զուտ ծխական նշանակություն:

Հայաստանում զոհարերության և հոգեհացի արարողությունները հին ավանդույթների շարունակությունն են, որոնք հանդիպում են և՛ հարուստ, և՛ շարքային դամբարաններում՝ հարաակելով մինչև մ. թ. III դարը: Այդ արա-

⁷³ Ազաթանգեղոսը նշում է, թե «Եւ եկն էջ եհաս մինչեւ մօտ ի յաաակս երկրիս ի շենամէջ քաղաքիս եւ անչափ թնգիւնք հնչեցին ի Սանդարամետս անգնդոցոս: «Ազաթանգեղայ պատմութիւն հայոց», Տփղիս, 1909, էջ 384: Մ. Խորենացու մոտ ևս այն, իր մյուս նշանակությունների կողքին, ներկայացնում է երկիրը, Մ. Խորենացի, «. III, գլ. 4Բ: Այն հայերի սօջ րավականին տարածված է եղել և սուրբ զրթի թարգմանության ժամանակ մտել է ավետարանի մեջ (գլ. 5, 6):

⁷⁴ Այնտեղ անդրլիրիմյան աշխարհը պատկերացվում էր իրրև ստորերկրյա սուայլ քաղաք. որանդ հանգուցյալների հոգիները մշապես սոված են ու ծարավ, և սերունդների պարտականությունն էր զոհարերություններով և հատկապես սառը ջրի հեղումով պահպանել նրանց (Մ. Մ. Անթրոսով, «24- արլ», էջ 17):

⁷⁵ Հնարավոր է հույների նման հանգուցյալի պատվին մյուս հեղումների հետ դամբարանում ցանել են նաև ճեղմակ ալյուր (Համբուս, Ոգիսական, էջ 145, երգ տասնմեկերորդ):



Նկ. 17. 1—դամբ. № 30, 2—8—դամբ. № 32, 9—դամբ. № 42

րողությունները ընդդէմ են Սիսիանի և հատկապէս Արտաշատի դամբարաններին, որոնք ընդհանրութեանն ունեն հոնական, առանձնապէս դադութներում հանգիպող արարողութեանն են: Այդ սովորութեան աշխուժացումը, ամենայն հավանականութեամբ, պետք է համարել փոխադրեցութեան արդունք: Հոնահացի սովորութեանը վերապրուկալին ձևով հասել են մինչև մեր օրերը: Կեսարիայի էֆօթրի գուղի շայերը ննջեցյալի դադալի վրա մի հաց են դնում, ասելով՝ «տար մեր մեռելներին»: Մոկացիները մի ամբողջ տարի շարունակ կերակուրներից «մեռելի րածին» են հանում և աալիս աղքատներին: Կեսարիայի հայերը թաղման առաջին գիշերը ննջեցյալի պառկած սենյակում մի դավաթ ջուր են դնում, հավատալով, որ ննջեցյալն այդ գիշեր կվերադառնա և կխմի այդ ջուրը: Ջավախքում շարաթ երեկոները ջուր չեն խմում, որպեսզի իրենց աղագականների հոգիները ծարավ չմնան⁷⁶ և ալլն:

Արտաշատի և Սիսիանի դամբարաններում հանդիպող անոթներից են աարերի ձևերի ու շափերի կարասները, ամֆորաները, որոնցով գինի են ընրել, կճուճները, սափորները, պնակները, քրեղանները, ափսները, սկուտեղները, ձկան ամանները, դավաթները և ալլն, այսինքն՝ այն ամենը, ինչը օգաագործվում էր սովորական խնջուլքների համար: Ինչպէս նաև կոնքեր, կավի պուլիկներ, սրվակներ, բրոնզե փոքրիկ թիակներ, շայելիներ: Գրանք անհրաժեշտ էին թաղման ծիսակատարութեանների ժամանակ լվացումներ կատարելու, մարմինն անուշահոտ յուղերով օծելու համար, որոնք ծիսակատարութեանից հետո դրվել են հանգուցյալի հետ: Օծտնելիքի և անուշահոտ յուղերի համար օգտագործվող կավի պուլիկներ, կավի և ապակե սրվակներ, հայելիներ, թիակներ շատ են գտնվել Վաղարշապատի, Գառնիի, Գեղադիի և Հայաստանի մյուս շրջաններից հայտնարեբրված հելլենիստական և մ. թ. I դարերի դամբարաններում: Հայելիները, որոնք ի հայտ են դալիս արդուարդի մյուս առարկաների հետ, ունեն ոչ միայն ուախիաար, տլլև պաշտամունքային նշանակութեան և կապված են անդրշիրիմյան պաակերացումների հետ:


Արտաշատի դամբարանների մեծ մասում հայտնարեբրվել են մեկ կամ մի քանի ձիթաճրագներ: Ձիթաճրագներ և բրոնզյա ձևավոր ոտքերով դեղեցիկ ճրագակալներ են հայտնարեբրվել նաև Սիսիանի դամբարանում:

Ե. չալայանը կճաջենում պեղել է մի գերեղման, որտեղ հանգուցյալ երեսայի ոտքերի առջև դրված էր ձիթի ճրագ⁷⁷: Ըստ երևուլթին, ձիթաճրագը, լուլսը նույնպէս թաղման արարողութեան հատկանիշներից մեկն էր, այն դրովել է ննջեցյալի հետ, որպեսզի նա այն աշխարհում խավարի մեջ չմնա և չվախենա, չվերադառնա կենդանիների լուսավոր ու աըևտ աշխարհը կամ չմոլորվի խավարում և դտնի անդրշիրիմյան աշխարհի ճանապարհը: Այս հեթանոսական սովորութեը, մոմեր վառելու ձևով, նույնպէս ժառանգել է քրիստոնեութեանը:

Հայերի մի սովորութեամբ, մինչև յոթը կաաարելը հանգուցյալի սենյակում անընդատ ճրագներ են վառում, որոնց թիվը երբեմն մինչև 80-ի է

⁷⁶ Ե. Կալայան, Հուղարգակութեան և գերեղմանների զարգացումը Հայաստանում, էջ 106—107:

⁷⁷ նույն տեղում, էջ 112:



Նկ. 18. 1, 3, 5, 7, 8—դամբ. № 52, 2, 4, 6, 9, 10—դամբ. № 33

հասնում, որովհետև աղագականները պարտք են համարում վառված ճրագներ, ձևթ, իսկ Սասունում կարագ կամ յուղ բերել իբրև «ճրագավառ»⁷⁸:

Բուլանրխում հանգուցյալի հոգին ավանդելու տեղում սեղան են դնում և վրան ճրագներ շարում (սովորարար 7 հատ): Այդ լուսավորութունը կոչվում է «մեռելների հոգու ճրագ»⁷⁹: Բորչալուի գավառում հանգուցյալին թաղելու երեկոյից սկսած 7 օր ձեթի ճրագ են վառում, որպեսզի «ենչեցյալի ճանապարհը լույս լինի»⁸⁰:

Ձանգեղուրում նույնպես լույսը 7 օր անմար էին պահում, վառում էին մոմ կամ ճրաղ: Ամեն ջանք թափում էին, որ անչեցյալը լույսի մեջ լինի, որովհետև նա գառնում է լուսահոգի, որը պիտի տեղափոխվի լույս աշխարհ: Վարանգսյում այդ սովորութունը կատարվում էր, որպեսզի հոգու համար երկրների ճանապարհը լուսավորված լինի:

Մեռած երեխայի ամեն մի ձեռքին դնում էին երեք անգամ վառած-հանդ-ցրած և նորից վառած մի-մի մոմ, որ մյուս աշխարհում վառած մոմերով գիմավորի ծնողներին և լույս ճանապարհով նրանց առաջնորդի գեպի արքայուհի⁸¹: Բնորոշ է սհոգին լույս դառնա» ժողովրդական օրհնանքը մեռածի հասցեին:

Արտաշատի VIII րրի վրա րացված և հարավարևելյան մի շարք դամբարաններում հայտնաբերվել է հավի ձու: Այդպիսիք հանդիպում են նաև Գառնիում, Մարաոյի բլրի վրայի հելլենիստական շրջանի կարասային թաղման մեջ և այլ վայրերում⁸²: Հայտնի է, որ Հունաստանում այն կապված էր թաղման ծիսակատարությունների հետ և շառ է պատկերված խեցեղենի վրայի նկարներում, կիրառական արվեստի մեջ, րարձրաքանդակների վրա⁸³: Չուն ոչ թե սովորական ուտելիք էր, այլ համարվում էր ամեն ինչի սկիզբը և կարող էր ծառայել միայն որպես մաքրագործող զոհաբերություն, ուստի ձուն չէին ուտում⁸⁴: Ընդհանրապես ձուն օգտագործվում էր կենդանի մարդկանց մաքրագործելու արարողության և հանգուցյալի պատվին կատարվող զոհաբերության ժամանակ:

Հետագայում, բնական ձվերը փոխարինվել են արհեստականով: Քարե ձվեր են հայտնաբերվել Սիսիանի դամբարանում՝ սերդոլիկից ու լեռնային բյուրեղից և Հասան-Կալբի գամբարանում՝ երկուսը կարմիր, հավանաբար սերգոլիկ, մեկը դապույտ⁸⁵:

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ Բենևս, Բուլանրխ կամ Հարք գավառ, «Աղգ. հանգ.», գ. V, Թիֆլիս, 1899, էջ 178:

⁸⁰ Ե. Լալայան, Բորչալուի գավառ, «Աղգ. հանգ.», գ. 8, Թիֆլիս, 1903:

⁸¹ Ս. Լիսիցյան, Ձանգեղուի հայեր, Երևան, 1969, էջ 211 և հտ.:

⁸² П. С. Уварова, Коллекция Кавказского музея, «Археология». т. V, Тифлис, 1902, № 2980 и 3006.

⁸³ P. Nilsson, Das Ei im Totenkult der Alten. „Archiv für Religions Wissenschaft“, t. XI, Leipzig, 1908, SS. 530, 533, 536, 540, Abb. 2, 3.

⁸⁴ E. Г. Кастанаян, Грунтовые некрополи Боспорских городов VI—IV вв. до н. э. и местные их особенности, стр. 268.

⁸⁵ С. В. Тер-Аветисян, Курганы Хасан-Калы, «Известия Кавказского историко-археологического Института», том IV, Тифлис, 1926, стр. 80.

Արտաշատի դամբարաններում, գրեթե անխաիր, գտնվել են ոչխարի մեկ կամ մի քանի վեգ (ճան): Վեգեր հայտնաբերվել են նաև Գառնիի⁸⁶, Կարմիր բլուրի⁸⁷ և Հայաստանի այլ վայրերի անտիկ դամբարաններում, բայց ոչ հասաարած ձևով:

Վեգերն, ընդհանրապես, օգտագործվում էին փրեկ խողտու առարկա: Դրանք շատ տարածված են եղել նաև բրոնզի և երկաթի լայն տարածման շրջանում՝ Հայաստանում, Հունաստանում և այլուր⁸⁸:

Հունաստանում այնքան սիրված ու տարածված է եղել այդ խաղը, որ իր տրտահայտությունն է գտել կորոպլաստիկայի և նկարչության մեջ: Օրինակ, Պոլիկնոսի նկարներում, որի մասին վկայում է Պսպսանիոսը⁸⁹, Վեգերը որպես հանգուցյալի ամենասիրելի խաղը դրել են նրա հետ⁹⁰, սակայն կախել են նաև վեգերից իրրև թալիսման⁹¹: Արտաշատի I, VII և VIII ըլուրների պեղումների ժամանակ շերտերից հաճախ են հայտնաբերվում ոչխարի վեգեր, երբեմն նույնիսկ մշակված: Մշակված երկու անգամ գտնվել է նաև VIII ըլրի վրա: բացված մ. թ. ա. I դարի դամբարանից:

Արտաշատի դամբարաններում վեգերի համատարած հանդիպելը պեաք է բացատրել հանգուցյալին նվիրարեբովող և նբան ուղեկցող առարկաների ծիսական նշանակությամբ:

Մեծ հեաաբբբություն է ներկայացնում դամբարաններում կավե արձանիկների հայտնաբերման փաստը: Ուշագրավ է, որ դրանք հայտնաբերվել են միայն հարավարևելյան և արևելյան գամբարտնաղաշտերում, որաեղ դիակիզումով թաղումներ կան, իսկ բլուրներից արևմուտք գտնվող դամբարանաղաշտում և բլուրների վրա բացված թաղումներում այդպիսիք չեն հանդիպում: Կավե արձանիկները տարբեր բովանդանություն ունեն: Հաճախ են հանդիպում Արտաշատի հովանավոր Կնա՛րտ աստվածուհու արձանիկները, սյունների մեջ նսաած և ձախ կողքին, դոմբու՛ղ դեպի կինը կանգնած կամ ծնկներին նսաած մերկ երեխայի պատկերով, Աֆրոդիաան, մերկացող կնոջ պաակերով, ձեռքերը կողքին կանթած, ոաքերը քրջ բացած վիճակում կանգնած տղամաբզու, հեծյալի, աջ ծունկը գետնին հենած նետաձգի ("), վահանի վրա հենված զինվորի և հատկապես երածիշտների պատկերով կավե արձանիկներ և կավե մի դիմակ:

Հայաստանի անտիկ շրջանի դամբարաններում այս երեուլթն առաջին անգամ է նկաավում: Սակայն Հունաստանի և նրա գաղութների դամբարանների պեղումները վկայում են, որ կավե արձանիկները, դիմակները թաղման արարողության կարևոր հատկանիշներից մեկն են: Կավե արձանիկներ շաա են

⁸⁶ «Гарни», II, стр. 18, 20, погр., № 50, 57.

⁸⁷ А. А. Вайман, Г. А. Тиравян, Кармир-блурский некрополь эллинистического времени, ВОН, 1974, № 8, стр. 66, табл. II.

⁸⁸ М. И. Артамонов, Работа на строительстве Мапычского канала, ИГАИМК, вып. 102, 1935, стр. 205 и сл.

⁸⁹ Paus., X, 30, 2.

⁹⁰ D. Robinson, Necrolynthia, A Study greek burial customs and anthropology. Excavations at Olynthus, XI, Baltimore, 1942, p. 198.

⁹¹ J. Boehlay, Aus Ionischen und Italschen Necropolen, Leipzig, 1898, S. 21.

հայտնաբերվել, հաակապես, Միրինայի, Ապոլոնիայի, Պանտիկապոլոնի, Ֆանապոլիսի և հյուսիս-մերձակածովյան մյուս հուշարձանների դամբարանների պեղումներից: Ոճի, շափերի, թեմաների, կավի նույնությունը դիտնականներին առիթ է տալիս ենթադրելու, որ այդ արձանիկները ձեռք են բերվել հատուկ, թաղման հասարակության⁹²: Որոշ դեպքերում նկատվել է նաև դամբարաններում կավե արձանիկների համաչափ դասավորություն⁹³, ենթադրվում է, որ հանգուցյալի շուրջը դրված արձանիկները ստեղծում են երկրաչիւն կյանքի պատրանք: Կենդանիների, մարդկանց այդ արձանիկները աստվածներին կատարված սիմվոլիկ զոհաբերություն էին:

Արտաշատում կավե արձանիկները հիմնականում հայտնաբերվել են մեկական, իսկ № 40 դամբարանում՝ մի քանի հատ: սակայն առանց որևէ համաչափության, մոխրի, փայտածխի, մեծ քանակությամբ խեցեղեն ընկորների և կենդանիների ոսկորների հետ միասին: Արձանիկների մեծ մասը դրվել է դամբարանադաշտերից, տեղերից խախտված վիճակում, ուստի դրանց այս կամ այն դամբարանին պահպանելը հնարավոր չի եղել որոշել: Ըստ երևույթի, Արտաշատի դամբարաններում այդ արձանիկները դրվել են որպես նվիրատվություն՝ պաշտամունքային նշանակությամբ:

Գերեզմաններում կավե արձանիկներ դնելու ծիսական սովորույթը նույնպես պետք է դիտել իրրև հարևան հելլենիսական երկրների հետ ունեցած փոխադրեցություն հեռանք, որը կարող էին և իրենց հեռ բերել Հայաստան դաղթեցված բնակիչները:

Հարկ է նշել, նաև հանգուցյալին իրենց վիշտն արտահայտելու մյուս ձևերի՝ լացուկոծի, երածշտություն հնչեցնելու, ծիսական պարերի մասին, որոնց վերաբերյալ վկայություններ պահպանել են մեր պատմիչները:

Արտաշեսի թաղումը նկարագրելիս Մ. Խորենացին հիշատակում է նաև պղնձե փողեր հնչեցնելու, սևազգեստ ձայնաբեկու կույսերի և լալկան կանանց մասին:


Գնելի սպանության մասին խոսելիս Փավստոս Բուղանդը ասում է Արշակը հրաման արձակեց, որ բանակում եղող բոլոր մարդրից, սօօ ու փոքր, տոհասարակ առանց բացառության, դնան կոծ անեն և ողբան սպանված Արշակունի մեծ սեպուհ Գնելին: Ասվում է, որ բազմությունը դիակի շուրջը մոլեգնաբար կոծում էր, իսկ Փառանձեմը մազերն էր փեհում, ճշում էր կոծելիս: ժՓառանձեմը ողբի մայր դարձավ. ձայնարկունները սկսեցին ողբաձայն խաղի նման երգել Տիրիթի սիրահարությունը (կնոջ վրա), աչք անկելը, քուրթությունը, մահվան հնարք դոնելը, սպանությունը: Սպանվածի վրա կոծ անելով ազդողորմ ձայնով երգում էին այս բաները⁹⁴:

Քրիստոնեությունը փորձեց փոխել թաղման հեթանոսական ծիսակատարությունը: Ներսես կաթողիկոսը IV դարում քարոզում էր, որ դա մեղք է,

⁹² E. Pottier et S. Reinach, 274. աշխ., էջ 108.

⁹³ E. Pottier et S. Reinach, 274. աշխ., էջ 108, М. М. Кобылина, Терракотовые статуэтки Пантикапея и Фанагория, М., 1961, стр. 15—19; Ц. Дремсизова-Нелчинова, Г. Тончева, Античные терракоты от България, София, 1971, стр. 102.

⁹⁴ Փ. Բուղանդ, դպր. IV, գլ. ԺԵ.



Նկ. 19. 1-3, 5-դամբ. № 34, 4, 6, 9-դամբ. № 35, 12-դամբ. № 36, 7, 8, 10, 11-դամբ. № 37, 13-կնիք Ծղականից

հակասակ է քրիստոնեության ողուն, քանի որ, նոր կրոնի տեսակետից, մահը սոսկ նախադուռն է Հանդերձյալ կյանքի, որն այժմ նոր ձևով էր պատկերացվում: Մ. Խորենացին նշում է, որ նա արգելեց մեռածների վրա հեթանոսական սովորությանը ուժերն եր դործել⁹⁵:

Նկեղեցական մի քանի ժողովներում ևս գատապարտվել են թաղման հեթանոսական սովորությունները⁹⁶, սակայն դրանք այնքան տարածված էին և այնքան խոր արմատներ ունեին ժողովրդի ավանդույթների մեջ, որ քրիստոնեությունը չկարողացավ դրանք վերացնել:

Փավստոս Բուզանդը վկայում է, որ Ներսեսի մահից հետո էլ մեռյալներին ողորում էին՝ փոքերով, փանդիռներով ու վիներով, կոծի պարեր էին բռնում, սորուքները կտրած, երեսները պատառոտած, կին և տղամարդ դեմ առ դեմ ճիվաղական պարեր իաղալով հուղարկավորում էին մեռելներին⁹⁷:

Թաղման ժամանակ ծիսական պարեր կատարելը Հայաստանում պահպանվել է ընդհուպ մինչև XIX դ. վերջը⁹⁸: Նման սովորություն եղել է նաև պարթևների մոտ, Մարդիանյում գտնված կավե օսուարների վրա պատկերված են պարող կանայք⁹⁹, Միջին Ասիայում և Օսեթիայում այդ սովորությունները հարատևել են մինչև XX դարի սկզբները: Այսինքն, հնում ծիսական պարը մի շարք ժողովուրդների մոտ եղել է թաղման արարողության հաականիշներից մեկը:

Ինչպես վերը նշեցինք, Արտաշատի դամբարաններից մի քանիսում պահպանվել էին կրկնակի հոգեհացի հետքեր: Սա հարադատների կողմից մահացածներին շնորհակալու, նրանց իրենց սերը, ուշադրությունը ցուցաբերելու ձևերից մեկն էր, որը դալիս էր այն պատկերացումից, թե հանդուցյալի հոգին կենդանի մնացածներին շարիքներ պատճառելու կամ օգնելու ընդունակություն ունի:

Մայրահեղ կարիքի և վտանգի ժամանակ մարդիկ դիմում էին մեռածներին, նրանցից պաշտպանություն և օգնություն հայցելով: Այս երևույթը վերապրուկային, բայց ցայտուն ձևով արտահայտված է հայկական ժողովրդական էպոսում, որանց պարզորոշ արտահայտված է կենդանի մնացածների և մահացածների միջև եղած սերտ կապը, փոխհարարերությունը, հոգու անմահության դադափարը, Մհերի հոգատարությունը իր նախնիների դերեղմանների նկատմամբ և նրա սրառողջ դիմումը մեռած ծնողների հոգիներին, որոնք այն աշխարհից հոգում են և որդուն մի ճար անելու համար ուղարկում վանա քարայրը¹⁰⁰:

Հանդուցյալների հոգիների հիշատակի համար պարերարար կատարվող

⁹⁵ Մ. Խորենացի, գ. III, գլ. Ի:


⁹⁶ С. Аревшатян, Шаапиванские каноны—древнейший памятник армянского права, Шаапиванские каноны, гл. XI, ИФЖ, 1959, № 2—3, стр. 343.

⁹⁷ Փ. Բուզանդ, պր. V, գլ. ԼԱ.

⁹⁸ С. Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958, стр. 34—40.

⁹⁹ Г. А. Кошеленко, О. Оразов, О погребальном культе в Маргнанае в Парфянское время, ВДИ, 1965, № 4, стр. 49—51.

¹⁰⁰ Մ. Սրբոյան, Հայ ժողովրդական վեպը, «Ազգ. հանդես», գ. 18, 1908, էջ 7 և հա.



Նկ. 20. 1-4—դամբ. № 39, 5-14—դամբ. № 40

ձեւերը՝ երկրպագութիւններն ու ղոհարերութիւնները ղեռնա շատ հնում տատիճանարար վերածվել էին մեռած նախնիների պաշտամունքի¹⁰¹։

Արաաշատուս հայտնաբերված նյութական մնացորդները, կենդանական ոսկորները, թաղման կրակի հետքերը վկայում են նաև քաղաքի բնակչութան, դամբարանների տերերի ունեցվածքային տարբերութիւն մասին։ Դամբարաններից մի քանիսի թաղման, հողեհացի կրակի հետքերը զբաղեցնում էին 8—10 քմ. տարածութիւն, որտեղից ի հայտ էին գալիս մեծ քանակութեամբ կենդանիների վառված ոսկորներ և խեցեղեն աարքեր տիպի անոթների՝ կարասների, կճուճների, խոհանոցային անոթների, սեղանի սպասքի բաղամթիվ բեկորներ, որոնք վկայում են թաղման ծիսակատարութեան ժամանակ տեղի ունեցած ընթրիքի ճոխութիւնը։ Սրանց կողքին հանդիպում են նաև այնպիսիները, որտեղ կրակի և նյութական մնացորդների հետքերը շատ աննշան են, երբեմն մի քանի բեկոր։

Արտաշատի դամբարանների պեղումները հնարավորութիւն են տալիս ավելի լավ պատկերացում կազմելու Հայաստանի ուշ հելլենիստական և մ. թ. առաջին դարերի թաղման ձևերի ու ծիսակատարութիւնների, բնակչութեան, նրա սոցիալական կազմի, տեղական և զաղթեցված բնակչութեան հնարավոր տեղարաշխման, սովորութիւնների, նախասիրութիւնների, կապերի, աղղեցութիւնների ու փոխաղղեցութիւնների գարգացման աստիճանի մասին։ Արտաշատը գտնվում էր առևտրական ճանապարհների հանգույցում, ավելի քան հինգ հարյուր ասրի Հայաստանի խոշոր քաղաքներից մեկն էր, երկրի տնտեսական, քաղաքական ու վարչական կենտրոնը։

Հայաստանի հելլենիստական շրջանի և մ. թ. առաջին դարերի թաղման ձևերն ու ծիսակատարութիւնները, անդական ավանդութիւնների շարունակութիւնը լինելով հանգերձ՝ որոշ ընդհանրութիւններ ունեն մերձավորարևելյան, փոքրասիական և մյուս վայրերի հելլենիստական երկրների թաղման ձևերի հետ։ Դա վերաբերում է ղիակիդմանը, կարասների և կավե սարկոֆագների մեջ թաղելու, ակնակալներ, շրթնակալներ ու պսակներ դնելու սովորութեանը, հողեհացի ժամանակ անոթների բեկորները և սննդի մնացորդները թաղման կրակի մեջ նեւեւում, ննջեցյալի բերանին կամ ձեռքին դրամ դնելուն, թաղման ժամանակ կավե արձանիկներ, թոչնի կամ քարե ձվեր նվիրարեւելուն, վեղեր դնելուն և արլն։ Արաաշատի թաղման ձևերի հասարայդ ընդհանրութիւնների բացատրութիւնը չի կարող միակողմանի լինել։ Դրանց մեջ կարելի է նկատել տեղական հնամենի ավանդութիւնների վերափոխված արտահայտութիւնները, ինչպես և հարևան հելլենիստական երկրների հետ ունեցած սերա կապերի ու փոխաղղեցութիւնների զրսւտրումները։ Հաշվի պեաք է առնել նաև այն, որ այդ սովորութիւնները Տիգրան II-ի և Արաավաղդ II-ի օրոք կարող էին իրենց հետ բերել Կիլիկիայից, Ասորիքից և այլ վայրերից բունի դաղթեցված բնակչութիւնը, որը բնակեցվում էր մեծ քաղաքներում։ Ըստ երևութիւն, Արաաշատում այդ բնակչութեան մի մասը տեղավորված է

¹⁰¹ Խ. Սամվելյան, Հայ ընտանեական պաշտամունքը, ՎԱՊԳ. հանդես, գ. 13, 1906, էջ 113 և հտ.։

եղել քաղաքի հարավարևելյան հատվածում: Հնարավոր է, որ դաղթականներն իրենց հետ բերել են թաղման ծիսակատարության հետ կապված դիակիդոֆան, Նոգեհացի և մյուս սովորույթները, որոնք պարարտ հող դաան տեղում: Տեղական սովորույթներն ընդունեցին որոշ հելլենիսական գծեր: Դամբարաններում հայտնարեբոված նյութական մնացորդների միջև որոշակի տարբերություն չի նկատվում, դրանք հիմնականում տեղական են, ինչպես երևում է, հելլենիստական բնույթի ընդհանրությունների շնորհիվ տեղի էր ունեցել թաղման ծեսերի նկատելի համահարթում, ուստի, Արաաշատի հարավարևելյան դամբարանադաշտում, անդացիներն ու եկվորները համանման արարողությամբ թաղված են կողք-կողքի:

Քննությունը ցույց է տալիս, որ Արտաշատում պեղված այս դամբարանները, բացառությամբ մեկի, աստկանել են շարքային և միջին կարողության քաղաքացիների:

Հուսանք, որ անտիկ շքանի հուշարձանների օրեցօր ծավալվող պեղումները նոր նյութեր կհայթայթեն թաղման ձևերի վերաբերյալ և հնարավորություն կտան ավելի բաղմամբողջմանիորեն ուսումնասիրելու տեղական ավանդույթներն ու ունեցած ընդհանրությունները հարևան երկրների հետ:


III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԶԵՆՔՆԵՐ, ԶԱՐԴԵՐ, ԿՆԻՔՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Դամրարանադաշտում հայտնարերված աշխատանքային դործիքներից ուշագրսով են լծակավոր աղորիքներն ու երկանքները: Այսանղ ջարունակում են հանդիպել նաև սովորական, ավանդական աղորիքներ: Ըստ երևույթին, նրանք հարատեել են նոր ձևերի հետ միասին: Մեծ թիվ են կաղմում լծակավոր աղորիքները, որոնք բոլորն էլ պատրաստված են ծակոտկեն ռազալից (տախտ. XXIՃ, նկ. 55, 3-5): Վերջինս շատ հարմար էր այդ նպասակի համար, որովհետև ողորկ քարերով աղալը շատ դժվար էր: Այդ պատճառով Հունաստանում և հունական դաղութներում ողորկ քարերից պատրաստված աղացների տակ ակոսներ են արվում: Լծակավոր աղորիքներն ունեն 35—45 սմ երկարություն, 18—26 սմ լայնություն և 6—16 սմ ըրուկություն: Դրանք տարբեր ձևերի են՝ օվալաձև և համեմատարար ուղղանկյուն, վրան երկայնքով արված ակոսները նույնպես տարբեր խորության ու լայնքի են (խոր. 3—8 սմ, լայն. 5—8 սմ): Աղորիքները երկու ծայրին կողքերից ունեն փոսիկներ 3—4 սմ խորությամբ, 5—6 սմ լայնությամբ, որոնց օջուկթյամբ ամրացվել են վրայի ակոսի մեջ ղրված լծակները: Աղորիքներից մի երկուսը, լծակներն ամրացնելու համար ունեն վրայի փոսիկների հետ միացնող, լրացուցիչ անցքեր: Նման աղորիքներ շատ են հայտնարերվել Հայաստանի մ. թ. ա. IV—I դդ. շերտերից, ըստ որում, լծակներն ամրացնելու համար արված տարբեր հնարանքներով:

Լծակի երեան զալը խթանեց աղալու-տրորելու դործիքների հետագա զարգացմանը, որն ի վերջո հասցրեց պտտվող կլոր երկանքի առաջացմանը: Լծակը փոխեց սլրիմիտիվ աղորիքի շարժման ձևը, հնարավորություն տվեւ մեծացնելու ներքին քարը, ուստի անհամեմատ ավելի արտադրանք կարող էր տալ: Այն առաջանալով մ. թ. ա. VI—III դդ., հարատեել է, մյուս ձևերի հետ միասին, մինչև մ. թ. առաջին դարերը:

Արտաշատի դամրարանների պեղումները նոր նյութեր ավեցին նաև Գառնիի պեղումներից հայտնի, լծակավոր աղորիքի ավելի զարգացած ձևերի վերարերյալ: Դրանք լծակավոր աղորիքից կրկնտկի մեծ են և լծակի տակ երկարուկ անցք ունեն, թեք կտրած եղրեր, հացահատիկը վրան արված փոսից, առանց աշխատանքը դադարեցնելու, ուղղակի երկու քարերի արանքը

¹ Ժ. Դ. Խաչատրյան, Երկանքի առաջացումը ըստ Գառնիի պեղումներից հայտնարերված նյութերի, ՊՐԶ, 1964, № 1, էջ 264 և հա., աախա. 1, ա, դ, 2, ա:



в. 21. 1-10—фрагм. № 40

լցնելու համար (վրայից՝ լայն. 32—35 սմ, տակից՝ 40—50 սմ, բարձր. 10—15 սմ, վրայի տկոսի լայն. 6—8 սմ, նկ. 55, 1): Լծակն ամրացվել է նույն եղանակով, ինչ որ լծակավոր աղորիքներին:

Հրվող Լրկանքները նույնպես նորութունն չեն. այդպիսիք հայտնաբերվել են Գառնիում², սակայն Արաաշաաի օրինակները ավելի վարպետորեն են պատրաստված, ունեն դասական ձևեր և շօն զիջում հունական նման երկանքներին:

Անցածը լծակավոր աղորիքներից հրվող Լրկանքներին այնքան երկար ժամանակ չպահանջեց, ինչպես պրիմիտիվ աղորիքներից լծակավորին անցնելը, որովհետև այս շրջանում Հայաստանը դարգացման բարձր աստիճանի վրա գտնվելով, ավելի սերտ կապերի մեջ էր հարևան հելլենիստական երկրների հետ: Հրվող երկանքները հանդես գալով մ. թ. ա. II—I դդ. իրենց դուրսը շարունակում են մինչև III—IV դդ.:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արտաշատի արեելյան և արեւմտյան դստարանադաշտերում հայտնաբերված իրենց առանցքի շուրջ պտավող յուրօրինակ երկանքները, որոնք առաջին անգամ են հանդիպում (տախտ. XXI₂, XXX_{1,2}, XXXI_{1,2}, նկ. 55, 2, 6, 7): Դրանք ուղիղ կամ թեք կողերով շրջանաձև քարեր են, վրան բարձր եզրերով շրջափակված լայն ակոսով (տր. 36—40 ում, բարձր. 12—15 սմ): Նրջանաձև անցքը (լայն. 4,5—5 ում) ծառայել է վրայի հասցահատիկն երկու քարերի արանքը լցվելու համար: Պտտելու ձողն ամրացվել է կողքերին և վրան արված երկուսնաձև անցքերի օղնութամբ, որոնց մօջ պահպանվել են կապարով ամրացված երկաթե ձողերի մնացորդները, այսինքն՝ ամրացվել են նույն ախտիկալով, ինչ որ Գառնիի ամրոցի պարսպի և տաճարի քարերը: Սրանք հրվող երկանքների անմիջական շարունակությունն են: Այստեղ կոնստրուկտիվ, կարեոր վերափոխությունն այն է, որ հրվող երկանքի հորիզոնական լծակը ուղղահայաց է դարձված, այն ամրացվել է եզրին մոտ: Այնուհետև, վրայի և տակի քարին տրված է շրջանաձև անսք, պլանիլիս չխանդարելու համար, երկուսն էլ համապատասխանաբար կոնաձև ակոս և թումբ ունեն, որպեսզի համակենարոն պտուլտն ապահովեն:













Կոնաձև երկանքների տակի և վրայի քարեր գտնվել են Գառնիում, Հացավանում³:

Այդ տիպի երկանքների արտադրողականությունն անհամեմատ բարձր էր հրվող երկանքներից: Սրանք, հավանաբար, հանդես են գալիս մ. թ. առաջին դարում: Հետագայում, տակի քարի կենտրոնում ավելացվում է սոնին, ուղղահայաց ձողը ամրացվում ուղղակի վրան, ձգոր մոտ և փոքրացվում է վրայի քարը, դրանով իսկ հեշտացվում է պատելը: Այս փոփոխություններով այն հարատևում է մինչև IV—V դդ., երբ երկանքների աշխատող մակերեսներն աստիճանաբար հորիզոնական տեսք են ստանում:

Արտաշատի երկանքները ձայնակցում են Խարակսից (մ. թ. ա. I դ.),

² նույն տեղում, էջ 266—270, տախտ. 2, բ, գ, 3, ա—բ:

³ նույն տեղում, էջ 270—272, տախտ. 4, ա—բ:



Ил. 22. 1-8—фрагм. М 40

Օլվիայից (I—III դդ.). Կերչից և հյուսիս-մերձսեծովյան սյուս հնավայրերից հայտնաբերված երկանքների հեռա՝

Այսպիսով, Արտաշատի դամբարանադաշտերում և ըլուրների վրա հայտնաբերված սղալու գործիքները լրացնում են մեր գիտելիքները մինչև այժմ հայտնի, անտիկ ջրջանի աղալու տեխնիկայի մասին և ավելի լավ պատկերացում ապիս երկանքի տոաջացման վերաբերյալ:

Քարե գործիքների մեջ հետաքրքիր են նաև սանգերը, որոնք պատրաստված են ռադալտից: Սանգերն այն գործիքներից են, որոնք ընդհանրապես, գտրեր շարունակ, էական փոփոխությունների չեն ենթարկվել, հիմնականում փոխվել են չափերը: Արտաշատի սանգերը դրսից նույնպես մշակված են և երբեմն շրթի մոտ ունեն երկու խուլ կանթ, գրանով իսկ տարրերվելով նախորդ և հաջորդ շրջանի սանգերից: Այդպիսի սանգեր հայանի են հյուսիս-մերձսեծովյան հնավայրերից⁵:

Այսպիսով, անտեսություն մեջ կարևոր դեր խաղացող այդ երկու գործիքները՝ երկանքն ու սանգը, անտիկ շրջանում լուրջ փոփոխություններ են կրում. և պայմաններ ստեղծում նրանց հետագա նաաարելագործման համար:

Աշխաաանքային քարե գործիքների թվին են պատկանում նաև սրաքարերը: Դրանցից մեկը, թուխ քարից պատրաստված, գանվել է հարավ-արևելյան դամբարանադաշտից (դամբ. № 11, նկ. 5, 8, 15, 8): Այն կեսից թերի է, օդտազործելու հետևանքով կենարոնական մասը խիստ մաշված, մյուսը՝ ըլրի վրա ռացված դամբարանից է, ռարակ, երկար (ծայրը թերի), կողքից կախելու համար արված անցքով (նկ. 50, 8): Այն ևս ռավականին օդտազործված է:

Հայանարերվել են նաև քառանկյուն և երկարուկ ձևի, թուխ, ամուր քարից պատրաստված կոկիչներ, որոնց մակերեսներն աշխատեցնելու հետևանքով փայլուն, ողորկ աեսք ունեն (նկ. 21, 8, 39, 11): Կոկիչներն օգաազործվել են խեցեգործության մեջ:

* * *

Արտաշատի դամբարաններում քիչ են հայանարերվել մետաղյա աշխաաանքային գործիքներ՝ զենքեր, զարդեր, կնիքներ: Աշխաաանքային գործիքներ և, հատկապես, զենքեր Հայասաանի անտիկ դամբարաններում ընդհանրապես քիչ են հանդիպում:

Աշխաաանքային գործիքներից հեաաքրքրության արժանի է հարավ-արևելյան դամբարանադաշտից գտնված (դամբ. № 44), երկաթյա պոռսվ (կտրվածքում կլոր), տափակ, աստիճանարար լայնացող ռերանով թիակը (նկ. 29¹⁰, պահպ. մասի երկ. 21,5 սմ, ռերանի լայն. 4,7 սմ, պոռք ար. 2 սմ): Ծիշա նման երկաթյա երկու թիակ դտնվել է Արմավիրի հելլենիստական շերտից, որոնց պոռն ավարտվում է կոոիկով⁶: Ծնթադրվում է, որ այն կապված

⁴ Այս մասին օոականությունը աեա նույն տեղում, էջ 272:

⁵ В. Д. Блаватский, Античная археология Северного Причерноморья, М., 1961, рис. 9.

⁶ Գ. Ա. Տիրացյան, Հնագիտական աշխաաանքները Արմավիրում, 129, 1973, № 5, էջ 99,

է հաց թխելու դործողութիւն հետ: Նրա կեռ ծայրը թոնրից հացերը հանելու համար են, ինչպիսիք մեր գլուղերում հաց թխելիս օգտագործում են մինչև տյօօր, իսկ լայն ըրերանով քերում էին պաաերը:

Դա շատ հավանական է, որովհետև թաղման ծիսակատարութիւն համար տարել են սանգեր, աղորիքներ, տեղում հացահատիկ աղալու և թխելու համար: Արտաշատի VIII բլրի վրա բացված ակով թոնիրները հավանաբար ծառայել են նաև հաց թխելու համար և միաժամանակ պատկերացում են աալիս նման թոնիրների կառուցվածքի մասին:

Այս թիակներն է հիշեցնում Արգիշտիխինիլիում գտնված երկաթյա, գրեթե քառանկյուն տափակ բերանով թիակը⁷: Հավանական է, որ վերջինս նույնպես ծառայել է այդ նպատակի համար:

Արտաշատի թիակը իր հետ գտնված խեցեղեն անոթներով թվագրվում է I—II դարերով:

Կենցաղալին առարկաներից ուշագրավ են երկաթյա մկրատները, որոնք գտնվել են նույն գամբարանադաշտից: Նրանցից մեկը տափակ պոչով է (դամբ. № 24) և ունի շաա պտրզ կառուցվածք (նկ. 122, երկ. 16 սմ, շեղրի երկ. 8,3 սմ, շեղրի լայն. 2 սմ, աափակ պոչի լայն. 2 սմ): Սա նման երրորդ մկրատն է Հայաստանից: Ընշտ այգպիսի մկրատներ գտնվել են Գառնիում⁸, № 121 դամբարանից և ամրոցի պեղումներից⁹ (մ. թ. I—II դդ.), միայն վերջիններս թերի են: Արտաշատի մյուս մկրատը (դամբ. № 42) ալլ ձևի է, պահպանվել է նրա ըրերանի մի մասը (երկ. 4 սմ): Այն նեղ է և նման է Արևմտյան Հայաստանում (Աշվան) դամբարանից գտնված մկրատին¹⁰: Այն հիշեցնում է ժամանակակից մկրատները:

Մկրատները լայնորեն աարածված են եղել անտիկ շրջանում և հաաանաբերվել են շաա հուշարձաններում: Վրաստանում¹¹ (II—III դդ.), Աղբբջանում¹² (Մինգբշաուրում), կարասային թաղումներից, Հյուսիսային Իրանում¹³ (I—III դդ.), Տանաիսում¹⁴ (III դ.) գտնված մկրատները ճիշտ նույնն են, ինչ որ Արտաշատի № 24 դամբարանի և Գառնիի մկրատները, միայն Մինգբշաուրի մկրատի պոչը օղակաձև է:

Մկրատներն օղտադործվել են տարբեր նպատակներով՝ տնտեսութիւն մեջ, կենցաղում և բժշկութիւն մեջ: Արտաշատի մկրատներն իրենց չափերի

նկ. 4. նույնի՝ Արմավիրի պեղումները, 129, 1974, № 12, էջ 65, նկ. 3 դ, ձախից առաջինը:

⁷ А. А. Мартыросян, Аргнштнхнннлн, рнс. 876, первый с левой стороны.

⁸ «Гарнн», V, стр. 102, рнс. 33, а.

⁹ «Гарнн», II, рнс. 126, первый с левой стороны.


¹⁰ D. French, Asvan Excavations, 1969, КР, 1969, Actlotties, Анкара, 1971, ser. 1, № 2, pl. 302.

¹¹ О. С. Гамбашидзе, Бнчвннта (Итоги раскопок 1958 г. на участке археологической экспедиции), МАГК, IV, Тбилиси, 1965, стр. 124, табл. 1, 4.

¹² С. М. Казиев, Альбом кувшинных погребении Мпнгечаура, Баку, 1960, стр. 25, табл. XXXVI, рнс. 3.

¹³ Toshihiko Sono and Shinji Fukai, Daitaman III, Tokyo, 1968, p. 62, pl. XLII, 10, XXXVI, 9.

¹⁴ Д. Б. Шелов, Нижне-Донская экспедиция в 1962—1963 гг., КСИА, вып. 107, 1966, стр. 94. рнс. 34, 7.



Նկ. 23. 1-12—դամբ. № 40

պատճառով կարող էին օդտագործվել, հավանաբար, միայն կենցաղում: Արաաշատի № 24 դամբարանի մկրաար հարակից նյութերով կարող է թվագրվել մ. թ. I դարով: Կարելի է ենթադրել, որ մկրատների այդ ձևը հանդես է գալիս հելլենիստական շրջանում և գոյատևում է նաև մ. թ. առաջին դարերում: № 42 դամբարանի մկրատը պատկանում է մ. թ. I—II դարերին: Այն վերոհիշյալ Գառնիի և Արաաշատի մկրատների ավելի զարգացած ձևն է:

Ջենքերից հեաաքրքիր է երկաթյա նիդակի ծայրը (երկ. 19 սմ), որն ունի երկար, խողովակաձև կոթառ (հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 56), դեպի երկու կողմն աստիճանաբար բարակող ընթան (նկ. 33^{14,5}):

Նիդակներն անտիկ աշխարհում ամենատարածված զենքերից էին: Այդպիսիք հայտնաբերվել են և՛ Հայաստանում, և՛ հարևան երկրներում: Նիդակներ շատ են հայանաբերվել Արմավիրի, Արտաշատի միջնաբերդերից, Գառնի ամրոցից, Գառնիի և Սիսիանի դամբարաններից, որոնք հիմնականում միջնաշիղ ունեն, սակայն նրանց մեջ հանդիպում են նաև մեր նիդակի նրմանները: Այն ձայնակցում է Գառնիի¹⁵, Սիսիանի դամբարաններից (3 հատ) և Արտաշատի I բլրի պեղումներից, շինարարական երկրորդ շրջանի շերտերից (1971 թ. № 41, 1972 թ. № 171, 192, 330) գտնված նիդակների հետ: Այսպիսով, Արտաշատի դամբարանի նիդակը նույնպես, կարող է թվագրվել մ. թ. ա. I դարի վերջով և մ. թ. I դարի սկզբով: Այդ թվագրմանը շին հակասում նույն դամբարանից գտնված խեցեղեն իրերը:

Մյուս զենքը, նույն դամբարանից գտնված, տեգի սնամեջ ծայրն է (նկ. 30¹, երկ. 7,2 սմ, լայն. պոչի մասում 2,3 սմ): Տեգը նույնպես Հայաստանում տարածված դինասանակներից մեկն է և հաճախ է հանդիպում Արմավիրի¹⁶, Արտաշատի, Հացավանի¹⁷ պեղումներից:

Արտաշատը դամբարաններից հայտնաբերվել են նաև երկաթյա կո սյուղով (ծայրը թերի) մի դաշույն (նկ. 8,2, հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 17, պահպ. մասի երկ. 12 սմ, շեղբի լայն. 2 սմ) և մի քանի նեաասլաք, որոնցից միայն մեկի ձևի մասին կարելի է քիչ թի շաա պատեհրացում կաղմել:


Գաշույնը երկսայր է, նման դաշույնները ընտրող են անաիկ շրջանի համար և շատ են գտնվել Գառնիի¹⁸, Արաաշատի և Արմավիրի բլուրներից, որոնք պահպանում են մ. թ. ա. II—մ. թ. II դդ.: № 17 դամբարանի դաշույնը իր հետ հայանաբերված խեցեղեն իրերով թվագրվում է մ. թ. I—II դարերով: Նետասլաքներից միայն մեկն է ուշադրության արժանի: Այն գտնվել է արևելյան դամբարանադաշտի մակերեսից, ունի շեղանկունաձև տեսք, միջ-

¹⁴ «Гарни», II, стр. 44, рис. 10.

¹⁵ Գ. Ա. Տիրացյան, Հնագիտական աշխատանքները Արմավիրում, նկ. 7:

¹⁷ Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1963 և 1965 թթ. պեղումների նյութերից, ՊՐՀ 1968, № 1, էջ 290, նկ. 7:

¹⁸ Б. Н. Аракелян, Гарни, I, результаты работ 1949—1950 гг., Ереван, 1951, рис. 40; «Гарни», II, стр. 45, рис. 11.



նաշիղ (նկ. 35,⁸), ինչպիսիք հարյուրներով գտնվել են Արտաշատի ըլուրներից մ. թ. ա. II—մ. թ. II դդ. շերտերից, Արմավիրից⁹ ու Գառնիից¹⁰:

* * *

Արտաշատի դամբարաններում արդուզարդի առարկաները նույնպես շատ շեն, որովհետև ապակու նման դրանցից շատերը նույնպես կրակի մեջ ոչնչացել են: Զարդարանքի առարկաներն հիմնականում հայտնաբերվել են կարասային թաղումներից: Չնայած սահմանափակ քանակին, դրանց մեջ կան ուշագրավ առարկաներ:

Հետաքրքրության արժանի են բրոնզե ապարանջանները: Դրանցից մեկը VII ըլուրի վրա (գամբ. № 77) բացված կարասային մանկական թաղումից է հայտնաբերված: Բրոնզե կլոր լարից պատրաստված ապարանջանը երկրորդ անգամն է օբյեկտործվել, այսինքն՝ այն եղել է մեծահասակի և մի ծայրը կտրվելուց հետո ծռել են և փոքրացնելով հարմարեցրել մանկան թեին (նկ. 44,⁷): Նրա ծայրերը իրար վրա են բերված, պահպանված ծայրը ոճավորված օձի տափակ գլուխ ունի: Հայանի է, որ օձագլուխ կլոր ապարանջանները դայիս են դեռես մ. թ. ա. I հազարամյակի սկզբից: Աքեմենյան շրջանում նրանք ստանում են ներձկված տեսք, ինչպիսիք շատ են հայտնաբերվել Հայաստանում և Անդրկովկասում: Նրանք հարատևել են մինչև մ. թ. I դարը: Պետք է ենթադրել, որ Արտաշատի այս ապարանջանը պատրաստվել է մ. թ. ա. II դարում, իսկ ձևափոխությունը կաարվել է մ. թ. ա. I դարում: Այդ թվագրման օգտին է խոսում նաև նույն դամբարանից գտնված ապակե պաստայից պատրաստված աչքերով ուլունքը: Մ. թ. ա. II դարի օձագլուխ ապարանջան հայտնաբերվել է նաև Արտաշատի ըլուրներից:

Նրկորդը շրջանաձև, կարվածքում օվալաձև, սուր ծայրերով փոքր չափի (տր. 4 սմ) մանկական սուպարանջան է (նկ. 44,⁸, արեմայան դամբարանտաջա, դամբ. № 61), որն հիշեցնում է վաղհայկական և հելլենիստական շրջանի օձագլուխ ապարանջանները: Այն մեծ նմանություն ունի Գառնիի հելլենիստական դամբարաններից (դամբ. № 105, 118, 119) հայտնաբերված ներձկված մեջքով ապարանջաններին, որոնք Արտաշատի ապարանջանից տարբերվում են միայն իրենց ներձկվածությունով: Արտաշատի ապարանջանը նախորդ ժամանակաշրջաններից եկող նման ապարանջանների հետադա օրինակն է, և կարող է պատկանել մ. թ. I—II դդ., ավելի հավանական է մ. թ. I դարին:

Այդ տեսակետից հետաքրքիր են նաև աստիճանաբար հաստացող ծայրերով, կլոր լարից պատրաստված շրջանաձև ապարանջանները, որոնցից մեկը գտնվել է VII բլրի վրա (նկ. 44,⁶, դամբ. № 76) բացված գրունտային թաղումից (տր. 5 սմ, դլխի տր. 5,5 սմ), մյուսը՝ VIII բլրի հյուսիսային պարսպի մոտ բացված դամբարանից (նկ. 44,², դամբ. № 78, մի ծայրը թերի, ար. 5,5 սմ, գլխի տր. 0,6 սմ): Դրանց նախօրինակները՝ առյուծի ոճավորված գլխով ապարանջանները Հայաստանում, ընդհանրապես Անդրկով-

¹⁰ Г. А. Тирация, Древнеармянская керамика из раскопок Армавира, ИФЖ, 1971, № 1, табл. IV.

²⁰ «Гарни», II, ркс. 13.

կասում և հարևան երկրներում զալիս են աքեմենյան շրջանից և հարատևում են նաև հելլենիստական շրջանում, երբ դրանց հետ միասին հանդես են դալիս արդեն առանց զարդերի ապարանջանների: Այդպիսի ապարանջաններ հայտնարեցվել են Գառնիի հելլենիստական գամբարաններից (գամբ. N° 96, 101, 110): Նման անզարդ մանյակներ գտնվել են Գեղարդիի IV—III դարերին պակասող սարկոֆագից: Արտաշատի ապարանջաններն աղերսվում են Ադրբեջանի աղյուսաշեն²¹ դամբարաններից (մ. թ. ա. I—մ. թ. I դար) և կարասային թաղումներից²² գտնված ապարանջանների հետ: Արևելյան Վրաստանում և հարավային Օսեթիայում²³ այդպիսի ապարանջաններ են հայտնարեցվել նաև Դաղստանից²⁴, որը, ըստ Կ. Ֆ. Սմիրնովի, մեր երկրի հաբավտյին շրջանների մ. թ. առաջին դարերի հուշարձաններում շատ է ասարածված հարակսից²⁵, Տիրիաակեից²⁶ (III դ.), սկյուֆական նեապոլից²⁷ և այլ վայրերից:

Արտաշատի ապարանջանները թվագրվում են մ. թ. I—II դարերով: Ն° 78 դամբարանում ապարանջանի հետ միասին հայտնարեցված կապտավուն, նուրբ ապակուց տեղական սրվակը նույնպես թվագրվում է նույն ժամանակով:

Արտաշատի արևմտյան դամբարանադաշտի N° 59 դամբարանից հայտնարեցվել է բրոնզե կիսազնդաձև մի զանգուկ (նկ. 43,2), պահպանվել է լեզվակը և այն կախելու օղակաձև կախիկը (քիչ թերի է. տր. 2,5 սմ): Կախիկի զանդակներ հայտնի են շաա հնուց, դրանք զայիս են դեռևս բրոնզի ու երկաթի դարաշրջանից և գտնազտն ձևափոխություններ կրելով հասնում միջին դարեր: Կոնաձև և կիսազնդաձև զանդակ-կախիկներ շատ են հայտնարեցվել Հայաստանի հելլենիստական շրջանի դամբարաններից, Վրաստանից, Ադրբեջանից: Կիսազնդաձև զանդակներ են գտնվել նաև Պերսևուկուսից²⁸:

Արտաշատի կիսազնդաձև զանգակը հարակից նյութերով թվագրվում է մ. թ. I—II դարերով:

Ուշագրավ են ոսկյա տերևները (ցածր բլրի վրա ժայռին կից, դամբ. N° 84), որոնք ճմրթված, սևղմված ու բեկորային վիճակում էին, ուստի մի մասը չհաշոգվեց ամբողջտցնել (աախա. XXI): Քիչ թե շաա ամբողջակտն-

²¹ Я. И. Гуммель. Археологические очерки, Баку, 1940, стр. 159—160, рис. 5, 12.

²² С. М. Казиев, Т. И. Голубкина, Об одном кувшинном погребении, «Известия» АН Аз. ССР, 1949, № 3, табл. VII, 3.

²³ Б. В. Техов, Очерки древней истории и археологии Юго-Осетии, Тбилиси, 1971, стр. 230, 233, рис. 84, 2.

²⁴ К. Ф. Смирнов, Археологические исследования в районе Дагестанского селения Тарки в 1948—1949 гг., МИА, № 23, М.—Л., 1951, стр. 260, рис. 18, 11.

²⁵ В. Д. Блаватский, Харакс, МИА, № 19, М., 1951, рис. 10, 5, 6.

²⁶ В. Ф. Гадюкевич, Некрополи некоторых Боспорских городов, МИА, № 69, М.—Л., 1959, стр. 222, 223, рис. 95, 2.

²⁷ В. П. Бабенчиков. Некрополь Неаполя скифского, ИАДК, Киев, 1957, стр. 98, табл. 1, 3, 7, III, 4.

²⁸ «Гарин», V, стр. 90, 126.



Ἰλ. 25. 1-8—ἡμάρ. № 40

ներք հինդն են, որոնք հռանկյունաձև են մի կողմում երեք սասի բաժանված, Չնայած չափերով բիշ մեծ են (երկարությունը 4—5 սմ, լայն. 3—4 սմ), սակայն ձեռով նման են կարոսի (լախուր) տերենների, թղթի պես բարակ են, հաղիլ նկատելի են նրանց նուրբ երակները:

Սովետական Հայաստանի տարածքի անսիկ դասաբաններու ոսկյա տերեններ հանդիպում են առաջին անգամ: Բայց ոսկյա տերեններ հայտնաբերվել են, ինչպես վերը նշեցինք, հարավարեմտյան Հայաստանում: Վերջիններս ասորերի ձևերի են, մերի նման, բայց ավելի փոքր, վերևում շորս մասով, երկարուկ սուր ծայրերով, ժապավենաձև, շողանկյունաձև և այլն:

Ոսկյա տերեններ են հայանարերվել նաև Արտաշատի I բլրի մակերեսից, որոնք բավականին լավ են պահպանված: Դրանցից 22-ը հավանաբար սոսենու տերեններ են, իսկ 4-ը՝ ձիթենու²⁹: Ոսկյա տերեններից ու ժապավեններից կազմված պսակներն օդտաղործվում էին հերոսներին, նշանավոր անձանց, կուտքերին պսակելու համար, ինչպես վերը նշեցինք, թաղման ժամանակ որպես մահացածին նվիրված, հուղարկավորության պսակներ: Կարոսի տերեններից կազմված թաղման պսակ հայանաբերվել է նաև Վրաստանից, Ալգեաիի (մ. թ. ա. VI—IV դդ.), Կլեբետիի (մ. թ. I—II դդ.) և Մցխեթայի դամբարաններից (մ. թ. II—III դդ.), որոնք նույնպես հոստամ են, բայց ավելի երկարուկ³⁰:

Արտաշատի դամբարանից գտնված տերենները ձայնակցում են Դուրա-էվրոպոսի³¹ մ. թ. ա. I—մ. թ. II դդ. դամբարաններից գտնված տերենների հետ և հնարավոր է, որ ներմուծվել են Սիրիայից, Միջագետքից կամ նրանց օրինակով պարաստվել են անգում:

Արտաշատի դամբարանի շրթնակալը (տախտ. XXI, նկ. 59, 9), ինչպես վերը նշեցինք, օվալաձև է, անղարդ: Օվալաձև շրթնակալներ և ակնակալներ նույնպես շատ են հայանարերվել Դուրա-էվրոպոսի³² մ. թ. ա. I—մ. թ. II դդ. դամբարաններում: Արտաշատի շրթնակալը իր ձևով նման է Դուրա-էվրոպոսի 24—XIX դամբարանի շրթնակալին, որը թվագրվում է մ. թ. ա. I—մ. թ. I դարերով:

Ակնակալներն ու շրթնակալները ասորերի ձևերի ու տարբեր հարդարանքով են լինում, սակայն հայտնի շրթնակալներից և ակնակալներից ոչ մեկի զարդերը մյուսին նման չեն: Հոռոմեական շրջանում զարդերն ավելի պարզունակ են դառնում և հաճախ պատկերվում են միայն աչքեր կամ շրթեր, կամ

²⁹ Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении (VI в. до н. э.—III в. н. э.). Ереван, 1976, стр. 83, табл. XXI (цв.).

³⁰ А. М. Апакидзе, Г. Ф. Гобеджшвили, А. Н. Калантадзе, Г. А. Ломтатидзе, Мцхета, I, Тбилиси, 1958, стр. 58, рис. 25, стр. 114—115, рис. 62, табл. LII, 9, LXXXVII, 6; Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 39—40, табл. IX; Г. А. Ломтатидзе, Клеветский могильник, стр. 112, 168, рис. 19 (на груз. яз.).
[³¹] N. P. Toll, The Necropolis, pp. 114—115, pl. XXXVI, tomb 6—VIII, pl. XV, tomb 11, 22, pl. XLII, tomb 16, pl. LVII, tomb 49.

³² N. P. Toll, The Necropolis, pp. 114—115, pl. XXXIV, tomb 6—III, pl. XXXVII, tomb 6—XV, pl. XLI, tomb 13, pl. XLV, tomb 24—XVI, 24—XIX, pl. XLVI, tomb 24—XIV, pl. XLVIII, tomb 28, pl. XLIX, tomb 32.

ուղղակի սովորական ճեղք կամ գիծ է արվում, ըսկ շատ դեպքերում գարդեր ընդհանրապես չեն լինում, ինչպես, օրինակ, Դուրա-էվրոպոսում, Սիրիա-յում, Եգիպտոսում, Պարթևաց աշխարհում³³։

Կանացի ամենատարածված դարձերից են ականջօղերը, որոնց մեջ ամենահետաքրքիրը կնոջ գլխով ոսկյա ականջօղերն են (տախտ. XXVI, 8-8 նկ. 52, 1)։ Վերջիններս նույնպես առաջին անգամն են հայտնաբերվում Հայաստանում։ Նրանք պատրաստված են շատ բարակ թիթեղից, ձուլելու եղանակով։ Ականջօղերի մասերը՝ գլուխը, պատվանդանը, աղեղը պատրաստված են առանձին և հետո միացված են իրար, գլուխը սնամեջ է և լցված է գիպսով։ Աղեղը իրար հետ ոլորած մի քանի լարից է, որի սուր ծայրը ազուցված է գլխի հտեկի մասում եղած օղակին։

Ականջօղին ավելի շքեղ տեսք տալու համար պատվանդանը վերևում և ներքևում դարձարել օն մանր ուլունքաշարով։

Կանանց դեմքերը կլոր են։ Երկու ականջօղերն էլ իրար նման են, թեև առանձին մանրամասներով տարբերվում են։ Դա նկատվում է ձևկատին կապած ժապավենի բարձր ու ցածր լինելուց, ձևկատի մասում մագերի պատկերման մեջ։

Դիմադծերն արված են բավականին համաչափ և մանրամասն մշակված են։ Նրանց դեմքի կառուցվածքն ունի շեշտված հելլենիստական արտահայտություն։ Առաջին հերթին դա վերարբերում է քթի կառուցվածքին։ Պատկերը զուրկ չէ նաև հոդերանական արտահայտչականությունից։ Մեծ վարպետությունը արտահայտված է ծավալը։ Թեև չափերը ընդհանի համեմատ չափազանց փոքր են, սակայն պատկերն աչքի է ընկնում մակերեսի հիանալի ղգացողությամբ և ընդհանրապես տեխնիկական բարձր կատարելությունով։

Ձևկատին կապած ժապավենը, երկու կողմի վրա սանրած և բաղեղի երկշար տեղերներով հարդարված մագերի խոսում են կնոջ ոչ սովորական մահկանացու լինելու մասին։

Սվ. իրոք, նման ականջօղերը գալիս են վաղ հելլենիստական շրջանից և պատկերում են մենագայի³⁴։ Դրանք սասսայականություն են ստանում պարթևական, հատկապես արևմտյան շրջանների արվեստում, երբ մարդու դեմքը, կիսանդրին և իրանը օդաադործվում էին դեկորատիվ նպատակների համար։ Հելլենիստական և մ. թ. առաջին դարերի այդպիսի օղեր են հայտնաբերվել Թրակիայից³⁵, Դուրա-էվրոպոսից և այլ վայրերից³⁶։


Արտաշատի ականջօղերը հար և նման են Դուրա-էվրոպոսի 36—II դամ-

³³ Н. Н. Погребова, Золотые лицевые пластины из погребений мавзолея Неополя скифского, стр. 151.

³⁴ F. H. Marshall, Catalogue of Jewellery, Greek, Etruscan and Roman, in the Department of Antiquities, British Museum, London, 1911, pl. XXXI, Nos. 1684, 1695, 1699, 1700, 1706, 1707.

³⁵ В. Чужбулева, Новооткрыта еллинистическа гробница на Несебър, «Археология», 1964, № 4, стр. 58, № 3, обр. 3.

³⁶ F. H. Marshall, 2-й т., В. Segall, Katalog der Goldschmiede-Arbeiten, Museum Benaki, Athens, 1938, № 123.



Նկ. 26. 1-3, 5-դամբ. № 40. 4, 6-11-դամբ. № 41, 12-դամբ. № 42

րարանից գտնված արծաթյա ականջօղերին³⁷ (նկ. 52,10); Ճիշտ է, ն. Տոլլ նշում է, որ օքսիդացման պատճառով կնոջ դեմքի որոշ մտնրամասներ լավ չեն երեւում, սակայն գլխի հարդարանքը, դիմադծերի և պատվանդանի նմանութունը կտակած չեն հարուցում, որ ղրանք նույն շրջանին պատկանող վարպետի աշխատանք են: Ուստի կարելի է ենթադրել, որ Արտաշատի ականջօղերը նույնպես պատրաստվել են սիրիա-միջագետքյան արհեստանոցներից մեկում և ներմուծվել են այնտեղից: Հնարավոր է, որ Արտաշատի ականջօղերի կանացի գլուխներն իրենց հարդարանքի պատճառով Հայաստանում ընդունված լինի որպես Անահիտի³⁸, որն իրրև պտղաբերության Աստվածուհի աղերսվում էր նաև բուսականության հետ: Ազաթանդեգոսը նշում է, որ Տրդատը հրամայում է Գրիգորին «...զի պսակս և թալ ոստս ծառոց նուէրս տարցի բազնին Անհատական պաակերին»³⁹:

Այսպիսով, թաղման ծիսակատարությանը ուղեկցող նյութերը մի նոր վառ ապացույց են Հայաստանի և նրա հարևան երկրների, հատկապես Սիրիայի ու Միջագետքի, հետ ունեցած առևտրական ու մշակութային սերտ փոխհարաբերության:

Ուշադրավ են բաց կաթնադույնով արված, հորիզոնական օղտկաձև ղարդով, գրեթե երկկոնաձև, ականջօղերը (նկ. 19, 10, 11, հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 37): Դրանց կախելու օղը բրոնզյա տափակ լտրից է: Ճիշտ այդպիսի երկու ականջօղ հայտնաբերվել է Գառնիից (դամբ. № 109): Դրանք պատրաստված են սովորական, շառ տարածված ուլունքներից, բրոնզե գլխարկի տակ պահպանվել են անցքերը: Ուլունքներից պատրաստված նման ականջօղեր հայտնաբերվել են Ադրբեջանից՝ Խրնրսլիի դամբարաններից⁴⁰, որոնք թվագրվում են մ. թ. ա. I հազարամյակի վերջին քառորդով: Թե՛ Արտաշատի, թե՛ Գառնիի ականջօղերը ղտնվել են մ. թ. ա. II—I դարերով թվագրվող կնիքների և հելլենիստական շրջանին բնորոշ ուլունքների հետ: Այդ նույն ժամանակին են վերաբերում նաև ականջօղերը:

Հեաաքրքիր ձև ունի արևելյան դամբարանադաշտից գտնված ականջօղը, որն ունի նուրբ գեղեցիկ ձևավորված, պատվտնգանի վրա դրված կավե սրվակի (ունգվենտարիա) ձև (նկ. 35,14): Այդպիսի ականջօղեր գտնվել են Գառնիի դամբարաններից⁴¹ (դամբ. № 120, 125): Այդօրինակ ականջօղեր ուրիշ հնավայրերից մեղ հայանի չեն: Պետք է ենթադրել, որ ականջօղերի այս ձևը, կավե սրվակների նման, հանդես է եկել հելլենիստական շրջանում և հարատևել է մինչև մ. թ. I դարը: Գառնիի ականջօղերը թվագրվում են մ. թ. ա. II—I դարերով, նույն ժամանակին կարող է պատկանել նաև Արտաշատի ականջօղը:

Ինքնատիպ ձև ունեն բրոնզե կլոր լարից պատրաստված փոքր ականջօղ-


³⁷ N. P. Toll, The Necropolis, p. 118, 136, fig. 51B, pl. LI, tomb 36—II.

³⁸ Б. Н. Аракелян, Ж. Д. Хачатрян, Раскопки столицы древней Армении Арташата, «Археологические открытия 1975 г.», М., 1976, стр. 508.

³⁹ «Ազաթանդեղայ պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 30.

⁴⁰ Д. А. Халилов, Раскопки на городище Хыныслы, СА, 1962, № 1, стр. 211, рис. 2, в, в.

⁴¹ «Гарни», V, стр. 102—103, рис. 43, 1 44.



36. 27. 1-15—ηωδρ. 36 42

օղերը, որոնք ունեն ասաիճանարար սրվող ծայրեր (նկ. 44, 11, 12; առևմտյան դամբարանադաշտ, դամբ. № 61): Այս ականջօղերի նախաաիպերը հանդիպում են ուրարտական շրջանում⁴²: Դրանք հիշեցնում են Գտոնիի դամբարաններից դտնված արծաթյա ականջօղերը⁴³, որոնք թվագրվում են I—II դարերով: Դրանք ձայնակցում են Մինգեչաուրից⁴⁴ (ոսկյա, մ. թ. I—III դդ.) և հարավային Օսեթիայից⁴⁵ գտնված ականջօղերի հետ: Այդպիսի ականջօղեր գտնվել են Խերսոնեսից⁴⁶, որոնք համարվում են ոչ անաիկ բնույթի ռարոդարոսական: Դրանք Խերսոնեսում հանդես են գալիս ալանների հարավային Ղրիմում հաստատվելու հետ միասին, ալսինքն՝ IV դարից ոչ շուտ: Ն. Վ. Պլատիշեան գտնում է, որ այդ ականջօղերը կրել են միայն մեկ ականջին (աջ), սակայն նման ականջօղերի մյուս հնավայրերում կատարված գյուտերը հերքում են այդ տեսակետը: Այդպիսի ականջօղեր հայտնաբերվել են հյուսիսային Կովկասում⁴⁷, որտեղ լայնորեն տարածված են եղել IV—VI դդ.: Տանահսում⁴⁸ (IV դ.):

Արտաշատի ականջօղերը պահպանում են I—II դարերին: Հնարավոր է, որ ականջօղերի այդ տիպը տարածված լինի Սիրիայից, Միջագետքից:

Բրոնզե ականջօղերից մեկը վաա է պահպանված, սակայն երեւում է, որ միացման տեղում այն ավարտվում է հյուսված լարով (նկ. 35, 7, արեւմտյան դամբարանադաշտ, դամբ. № 59), մյուսը պղնձե լարի վրա անցկացրած ըրոնդե զլանաձև ուլունք է, որն ամրացված է կողքերին փաթաթած ուրած լարով (նկ. 44, 4), իսկ ականջօղերից վերջինը պղնձե բարակ լարից է՝ շրջանաձև, որը կախված է նույն լարից:

Արտաշատի դամբարաններից հալանաբերվել է ընդամենը երեք մասունի, որոնցից մեկը երկաթից է և վաա պահպանված, երկրորդը ըրոնդե օղ է, կլոր լարից պատրաստված, երրորդը արծաթից է, աստիճանարար լայնացող և օվալաձև մահանով ավարտվող (նկ. 51, 7, տր. 2, 5 սմ): Այն ունեցել է ապակե աի, որը չի պահպանվել (1,5×1,3 սմ): Մասանիների այս ձևը հանդիպում է մ. թ. ա. I—մ. թ. I դարերում⁴⁹: Արտաշատի մատանին, ամենալին հավանականությամբ, պատկանում է մ. թ. I դարին:

Գլխի հարդարանքի համար են օգտագործվել ասրերի ձևավորում ու-

⁴² А. А. Мартиросян, Аргнштихинияли, стр. 51, рис. 16, 2.

⁴³ «Гарни», II, рис. 48.

⁴⁴ С. М. Казиев, Археологические раскопки в Мингечауре, МКА, I, 1949, стр. 46, рис. 42, а; Г. М. Асланов, Т. И. Голубкина, Ш. Г. Садыгзаде, Каталог золотых и серебряных предметов из археологических раскопок Азербайджана, Баку, 1966, стр. 18, табл. II, рис. 3.

⁴⁵ Б. В. Техов, ԾՂԻ. աշխ., նկ. 85, 34, 87, 1.

⁴⁶ Н. В. Пятышева, ԾՂԻ. աշխ., էջ 46, աշխ., VIII, 2.

⁴⁷ Д. Б. Шелов, Некрополь Танаиса, МИА, № 98, М., 1961, стр. 54—76—77, табл. XXXIV, 9.

⁴⁸ В. В. Сахангев, Раскопки на Северном Кавказе в 1911—1912 гг., ИАК, № 56, 1914, стр. 132.

⁴⁹ F. Henkel, Die Römischen Fingerringe der Reindlande, Berlin, 1913, № 1520; К. А. Джавахишвили. Памятники глиптики городища Урбиси (Геммы Гос. музея Грузии, V), Тбилиси, 1972, № 43; Н. В. Пятышева, ԾՂԻ. աշխ., էջ 43, աշխ. VII, 12, 13, 82

նեցող գլխիկներով մետաղե և ոսկրե վարսակալ հերոնները: Բրոնզե կլոր լարից պատրաստված մի հերոն հալոնաբերվել է արևելյան դամբարանադաշտից (նկ. 35,4, դասք. № 9), որը գլխի մասում ունի փորագիր գոտիներ (երկ. 9,5 սմ, ծալրը թերի է):

Ուշադրութեան արժանի է VIII բլրից դտնված ոսկրե հերոնը (ծալրը թերի), որի գլխիկն ունի կճղակի ձև (նկ. 34,9,10, պահպ. մասի երկ. 6,5 սմ): Բրոնզե ու ոսկրե գեղեցիկ ձևավորված հերոններ հայտնաբերվել են Արտաշատից, Գառնիի ամրոցի և դամբարանների պեղումներից⁵⁰, Սևանի ավազանից⁵¹ և այլ վայրերից: Հերոն-շքասեղները ես անաիկ աշխարհի տարածված դարդերից են: Մ. թ. ա. II—I. թ. II դդ. հեաաբբերը, գեղեցիկ ձևավորումով հերոններ են գտնվել Ադրբեջանից⁵², Վրաստանից⁵³, Դուրա-էվրոպոսից⁵⁴, Դալյումանից⁵⁵ և ուրիշ հնավայրերից⁵⁶:

Հետաքրքիր են նաև VIII բլրի վրա (դամբ. № 80) գտնված ոսկրե և արեհելյան դամբարանադաշտից գտնված բրոնզե գգալիկները: Ոսկրե դրալիկի (նկ. 34,8, պռը թերի է, պահպ. մասի երկ. 13 սմ) մի ծալրը աստիճանաբար բարակում է, մյուսը նեղանալով շրջանաձև փոքրիկ ակոսով է ավարտվում: Բրոնզե գգալիկը կլոր լարից է պատրաստված, ունի գեղեցիկ ձևավորված գլուխ, որն հիշեցնում է կալի արձանիկների վրա պատկերված բազմոցների և Սիսիանի դամբարանի բազմոցի ոաբերը: Այս գգալիկներն օդտագործվել են սրվակներից քսուքներ և դեղորայք հանելու համար: Ոսկրե գգալիկը կարող էր օգտագործվել նաև որպես շքասեղ: Ոսկրե նման գգալիկ հայտնաբերվել է Գառնիի մ. թ. I դարին պատկանող № 75 դամբարանից (ծալրը թերի): Այն հար և նման է Կերշ թերակղու⁵⁷ և Ուսա-կաբինսկի⁵⁸ դամբարաններից դանված բրոնզե գգալիկներին, որոնք թվադրվում են մ. թ. I—II դարերով: Արտաշատի դրալիկները կարող են վերաբերվել մ. թ. ա. II—I դդ.:

Արտաշատի դամբարաններից հայտնաբերվել են թեղիկի գլուխներ (նկ. 39,7,8) և քարե ճարմանդներ, որոնցից անաիկ շրջանի գամբարաններում

⁵⁰ «Гарни», I, рис. 47; II, рис. 43; V, стр. 97, рис. 10,12.

⁵¹ Ժ. Դ. Խաչատրյան, Անտիկ դամբարան կիճքում, ՊՔՀ, 1969, № 3, էջ 279, նկ. 5:

⁵² С. М. Казиев, Альбом, табл. XXXIX, 2, 10; Т. И. Голубкина, Четыре кувшинных погребения из Мингечаура, «Известия» АН Аз. ССР, № 3, 1956, табл. IV, 15, I, 6; Т. И. Голубкина, Археологическое обследование и раскопки кувшинных погребений в Азербайджане в 1953 г., «Известия» АН Аз. ССР, 1959, № 1, табл. II, 6.

⁵³ Д. А. Хахугайшвили, Уплисцихе, I, Тбилиси, 1964, табл. L, 7; Л. А. Чилашвили, 224. աշխ., էջ 58, ապիտ. XV, 11.


⁵⁴ N. P. Toll, The Necropolis, pl. XXXV, tomb 6—IV, pl. XXXVII, tomb 6—XIII, pl. XXXVIII, tomb 7, pl. LII, tomb 40—I.

⁵⁵ Tos'itiki'ò Sono an'ì Shlnji Fuk'ul, Dattaman III, p'. LXXI, 10, 11.

⁵⁶ G. R. Davidson, The minor objects, Corinth, vol. XII, Princeton, 1952, pl. 82, № № 1325, 1326, 1345 (ոսկրից, հառմեական շրջանի):

⁵⁷ Т. М. Арсеньева, Могильник у дер. Ново-Отрадное, ПМКП, МИА, № 155, М., 1970, стр. 132, 144, табл. 6, 3; 7, 6; 11, 3; 13, 7.

⁵⁸ Н. В. Анфимов, Меотско-Сарматский могильник у станицы Усть-Лабиянской, МИА, № 23, М.—Л., 1951, стр. 198.



Удѣ. 28. 1—10—посуда. № 43

հաճախ են հանդիպում: Կոճականման ճարմանդներն անտիկ աշխարհում արդուզարդի սաս էին կառուցում և ծառայում էին իրրև թիկնոցներն ուսին ամրացնելու միջոց:

Ճարմանդներից մեկը ևս քարից է, ունի կոնաձև անոթ (նկ. 24,1, 39,5, տր. 1,7 սմ, բարձր. 7 մմ), իսկ մյուսը կրաքարից է, երկկոնաձև, վրան երկու զուգահեռ ակոսավոր գծերով (նկ. 43,1, արևմտյան դամբարանադաշա, դամբ. № 59): Նման ճարմանդներ շատ են հայտնաբերվել Արտաշատի բլուրների պեղումներից, Գառնիի հելլենիստական և մ.թ. առաջին դարերի դամբարաններից⁵⁹, որտեղ րացի քարից հաճախ են հանդիպում նաև ապակյա ճարմանդներ, որոնք քարե ճարմանդների ընդօրինակումն են: Քարե և ապակե ճարմանդներ հայտնաբերվել են նաև Վաղարշապատում, Սևանի ավազանում⁶⁰ և այլուր: Արտաշատի քարե ճարմանդները պատկանում են մ. թ. I դարին:

Նույն դամբարանից է դտնվել (նկ. 43,2, արևմտյան դամբարանադաշա, դամբ. № 59) որոնդե տափակ թիթեղից պատրաստված օղակաձև կանթով ճարմանդը: Սակայն նրա պահպանվածության վիճակն այնպիսին է, որ դժվար է ձեռնմասին դադափար կաղմել:

Արդուզարդի հետ են առնչվում նաև մետաղյա հայելիները, որոնք լայն տարածում են ունեցել անտիկ աշխարհում: Նրանք, ինչպես վերը նշեցինք, կապված են նաև անդրհիբիմյան պատկերացումների հետ և հաճախ են հանդիպում Հայաստանի անտիկ դամբարաններում: Հավանարար, այստեղ նրանք ունեն պաշաամոնքային նշանակություն:

Արաաշատում հայելիներ հայտնաբերվել են արևմտյան դամբարանադաշտում (նկ. 43,7, 44,3, 52,2) ճահճուտի մեջ ցածր ըլրի վրա րացված դամբարանում և VIII ըլրի վրա (դամբ. № 80): Գրանք բրոնզե թիթեղից պատրաստված, առանց դարդի, շրջանաձև հայելիներ են (տր. 4,7 սմ) և բոլորն էլ խիսա քայքայված վիճակում էին, ուստի հնարավոր չձղայվ վերցնել: Միայն արևմյան մասում ճահճների մեջ դտնվող ըլրի վրա րացված դամբարանինն էր ամրողջական և լավ պահպանված (տր. 6, 5 սմ):

Տարբեր ձևերի հարդարանք ունեցող, առանց հարդարանքի Արտաշատի հայելուն նման, արծաթե և բրոնզե հայելիներ հայտնաբերվել են Արտաշատից, Գառնիից, Վաղարշապատից, Աշվանից⁶¹: Շրջանաձև, անպոչ հայելիները Հայաստանում հանդիպում են սկսած մ. թ. ա. II—I դարերից, սակայն լայն տարածում են ստանում մ. թ. առաջին դարերում: Այդ երևույթը նկատելի է հատկապես Գառնիում, որտեղ II—I դարերի հայելիները քիչ են, իսկ I—III դդ. դամբարաններում և ամրոցի շերտերում նրանք հաճախ են հանդիպում⁶²:

Տափակ, հարթ շրջանաձև անկանթ հայելիները Հունաստանում տարածված են եղել հելլենիստական և վաղ հռոմեական շրջանում⁶³: Այդպիսի փոքր


⁵⁹ «Гарни», II, стр. 82, рис. 586; V, стр. 94.

⁶⁰ Փ. Գ. Խաչատրյան, Ա. Ա. Քալաբրաբրյան, նշվ. աշխ., աղ. 1, 11:

⁶¹ D. French, Aşvan Excavations, 1969, KP, 1969, Ankara, 1971, pl. 30,3.

⁶² «Гарни», I, рис. 36, II, рис. 45a, 6; V, стр. 97, 119, рис. 12, 50, 51.

⁶³ G. M. A. Richter and Ch. Alexander, A Greek mirror—Ancient or Modern?, AJA, 1917, № 3.



Յկ. 29. 1—10—դամբ. № 44

հայելիները Կերչում⁶⁴ թվագրվում են մ. թ. ա. I և մ. թ. առաջին դարերով⁶⁵։ Սկյութական Նեապոլում⁶⁶ մ. թ. ա. III—I դդ., Ուտ-Լարինսկում⁶⁷ մ. թ. ա. III—I դդ., դրանք ընդող են նաև Գուրա-Նվրոպոսի դամբարաններին, որտեղ նրանք մեծ թիվ են կաղսում և թվագրվում են մ. թ. ա. I—մ. թ. IV դարերով⁶⁸։ Ուրբնիսում հանդիպում են մ. թ. IV դարում⁶⁹։

Արտաշատի մ. թ. ա. I և մ. թ. II դարերին վերաբերող այս պարզունակ ու փոքրիկ հայելիները հիմնականում գործածվել են քաղաքային ընակչության ավելի ստորին խավերի կենցաղում։

Անտիկ շրջանի դամբարաններում ամենաշատ հանդիպում են ուլունքներ, որոնք հանդիսացել են դարդարանքի ամենասիրված ու ասրածված առարկան։

Ի տարբերություն Գառնիի դամբարանների, Արտաշատի դամբարաններում ուլունքներ նույնպես քիչ են հայտնաբերվել։ Հեաաքքիթը է, որ ուլունքներ դառնվել են կարասային թաղումներում (հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 37, տրեմայան դամբարանադաշտ, դամբ. № 61, VII ըլրի վրա, դամբ. № 76) և փայտե պատդարակների կամ դադաղների մեջ կատարված թաղումներում (արևմտյան դամբարանադաշտ, դամբ. № 59)։ Դա կարելի է բացատրել նույն պատճառով, ինչ որ ապակու բացակայությունը։ Այսինքն՝ մ. թ. ա. I և մ. թ. I դարերում դերակշռում են ապակյա ուլունքները, որոնք կրակի մեջ ընկնելով ոչնչացել են։

Արտաշատի ուլունքներից ուշագրավ է լեոնային ըլուրեղից պատրաստված ուռուցիկ, քիչ երկարուկ ուլունքը (նկ. 44,7, արեմտյան դամբարանադաշտ, դամբ. № 61)։ Լեոնային ըլուրեղից պատրաստված մի մեծ ուլունք հայանարեբվել է Գեդադիթի վաղ շեյնիստական սարկոֆագից⁷⁰, Գառնիից։ Լեոնային ըլուրեղից պատրաստված դնդաձև, ձվաձև և այլ ձևերի ուլունքները սովորական են Ղրիմի I—II դդ. դամբարաններից⁷¹։ Նույն ժամանակին է պատկանում Արտաշատի լեոնային ըլուրեղից պատրաստված ուլունքը։

Ապակու մածուկից պատրաստված ուլունքներից հետաքրքիր է աչքերով ուլունքը (նկ. 44,10)։ Անդույն ապակու վրա կաթնավուն շրջանակի մեջ երկնագույն ուռուցիկ աչքեր են արված (2 հատ)։ Հայտնի է, որ աչքերով ուլունքները հանդես են դալիս I հազարամյակի սկզբից և հարատևում են մինչև միջին դարերը։ Դրանք հանդիպում են անտիկ աշխարհի բոլոր երկրներում⁷²։ Հայաստանի առաջին դարերի դամբարաններում արդեն քիչ են հանդիպում։ Հեաաքքիթը-

⁶⁴ В. П. Шилов, Раскопки Калиновского курганного могильника, КСИИМК, вып. 59, 1955, стр. 125.

⁶⁵ Т. М. Арсеньева, *Կղ. աշխ.*, էջ 143, նկ. 2,1-3.

⁶⁶ Н. Н. Погребова, Погребения в Мавзолео Неаполя скифского, МИА, № 96, М., 1961, стр. 174.

⁶⁷ Н. В. Анфимов, *Կղ. աշխ.*, էջ 186, նկ. 13,2.

⁶⁸ N. P. Toll, The Necropolis, p. 122, 123.

⁶⁹ Л. А. Чилашвили, *Կղ. աշխ.*, աշխտ. XXIV,1-4.

⁷⁰ ժ. Դ. Խաչատրյան, Հնագիտական հայտնաբերություններ Գեդադիթում, ԼՀԳ, 1966, № 1, էջ 92:

⁷¹ Е. М. Алексеева, Классификация бус некрополя у дер. Ново-Отрадное, ПМКП, МИА, № 155, М., 1970, стр. 164, 165.

⁷² «Гарни», V, զրականությունը նույն տեղում, էջ 110:

քիր են ոսկեկոթ ուլունքները (նկ. 43,1, արեմտյան դամբարանադաշտ, դամբ. № 59, հարավարևելյան դամբարանադաշտ, նկ. 19,7, դամբ. № 37); Այն Հայաստանում հանդիպում է Աքեմենյան շրջանից, բայց հատկապես լայն տարածում է սաանում հելլենիստական շրջանում: Աքեմենյան շրջանի ոսկեկոթ ուլունքներ են հայանարերվել Ջրառատում⁷³, հելլենիստական շրջանի՝ Գառնիում⁷⁴, Կարմիր Բլուրի⁷⁵ քաղաքային մասում բացված դամբարաններում և այլուր: Այն Հայաստանում հարատեել է մինչև մ. թ. I—II դարերը: Արաշապի ոսկեկոթ ուլունքները գտնվել են մ. թ. ա. II—I դդ. (հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 37), մ. թ. I դարին պատկանող դամբարանից (արեմտյան դամբարանադաշտ, դամբ. № 59):

Ուլունքներից ուշադրության արժանի են կարմիր, թափանցիկ ապակուց պարաստված, լավ պահպանված օվալաձև ուլունքները (նկ. 43,1), որոնք գտնվել են նույն դամբարանից: Կարմիր ուլունքներ սովորաբար քիչ են հանդիպում: Գլանաձև կարմիր ուլունքներ գտնվել են Գառնիի I—II դդ. դամբարաններից⁷⁶: Կարմիր գլանաձև և տակաոձև ուլունքներ են գտնվել Ղրիմում⁷⁷ (Նովո-Ստրադնոյե, I—II դդ.): Կարմիր, թափանցիկ ուլունքները հանդես են գալիս մ. թ. առաջին դարերում, երբ լայն տարածում են ստանում ասորերի գուլների ապակյա անոթները: Այսպիսով, Արտաշատի կարմիր ուլունքները նույնպես թվագրվում են մ. թ. I—II դարերով:

Մեծ թիվ են կազմում ապակաոձև ուլունքները, որոնք պատրաստված են կանաչավուն ապակուց (նկ. 44,7, արեմտյան դամբարանադաշտ, դամբ. № 59, 61):

Նման ուլունքներ հայտնաբերվել են Գառնիի մ. թ. I—II դդ. դամբարաններից և ամրոցից⁷⁸, Այդպիսի ուլունքներ հայտնի են Մինդեշաուրի կարասային թաղումներից⁷⁹, Ղրիմից⁸⁰ (մ. թ. I դ.), Ֆանադորիայից⁸¹ (մ. թ. ա. I—մ. թ. II դդ.): Ուլունքների այս ձևը ընդհանուր է մ. թ. առաջին դարերին:

Արաշատում մինք ունենք նաև դրեթե շեղանկյունաձև սուր ծայրով մի ուլունք (նկ. 43,1, արեմտյան դամբարանադաշտ, դամբ. № 59): Կախիկ ուլունքների այդ ձևը գալիս է հելլենիստական շրջանից, բայց շեղանկյունաձև, սուր ծայրով Արտաշատի ուլունքը ընդհանուր է մ. թ. ա. I—մ. թ. I դարերին: Այդ-

⁷³ А. О. Мнацаканян, Г. А. Тирация, Новые данные о материальной культуре древней Армении, ИАН, 1961, № 8, стр. 74.

⁷⁴ «Гарни», V, стр. 111.

⁷⁵ А. А. Вайман, Г. А. Тирация, 224. 225. 229 230.

⁷⁶ «Гарни», II, рис. между стр. 66 и 67.


⁷⁷ Е. М. Алексеева, 224, 225., 229 230.

⁷⁸ «Гарни», I, рис. 49; V, рис. 55.

⁷⁹ С. М. Казиев, Альбом, табл. XLIII, VIII, 15; С. М. Казиев, Т. И. Голубкина, Об одном кубшинном погребении, ИАН Аз ССР, 1949, №3 табл. IX.

⁸⁰ Е. М. Алексеева, 224. 225., 229 230, 235.

⁸¹ И. Д. Марченко, Раскопки восточного некрополя Фанагории в 1950—1951 гг., МИА, М., 1956, № 57, рис. 4, 24.



Նկ. 30. 1-5, 7-դամբ. № 45, 6, 9, 11-դամբ. № 52, 8, 10, 12-դամբ. № 53

ուխի ուլունքներ դտնվել են վրաստանից, Ադրբեջանից⁸², Հյուսիսային Կովկասից⁸³,

Մեծ հեաաբրբրություն են ներկայացնում նույն դամբարանից դանված սև գույնի վիցանիստ ուլունքները, որոնք պատրաստված են գրաֆիտից (նկ. 43,1): Գրաֆիտե ուլունքներ առաջին սնգոմ են հանդիպում Հայաստանում: Աւգպիտիք մեկ հայտնի շեն նաև այլ երկրներից: Նրանք ևս թվադրվում են մ. թ. I դարով:

Ուլունքներից մեկը քիչ տափակ ատամնավոր ձև ունի, պատրաստված է մուգ կապտավուն ապակուց և պատած մանուշակագույն իոդագիայի թաղանթով (նկ. 19,7): Այն ևգիպտական պաստալից պատրաստված աարբեր ձևերի ուլունքների ընդորինակությունն է: Դրանք երևան են գալիս ուշ հելլենիստական շրջանում և հարաւեում մինչև վաղ միջնագար: № 37 դամբարանի ատամնավոր ուլունքը հարակից նյութերով թվադրվում է մ. թ. ա. I դարով:

Մեր կարծիքով, քննության աոնված ուլունքների մեջ ներմուծվածներ չկան. բոլորն էլ պատրաստված են անդում, ամենայն հավանականությամբ, Արտաշատում:

* * *

Արտաշատի դամբարաններից հայտնարերված նյութերի մեջ ուշագրավ են նաև ապակյա կնիքները, որոնք դրեթե շրջանաձև են, վերին մասում ուտուցիկ, Սրանք իրենց ձևով հիշեցնում են լայն տարածում ստացած ավանդական սրրազան ըգեգին (սկարարեյ):

Կնիքներից մեկը դտնվել է հարավարևելյան դամբարանադաշտից (դամբ. № 37): Այն պատրաստված է կանաչավուն ապակուց (մի ծայրը թերի է), վատ է պահպանված (1, 3 × 1, 5 սմ): Նրա վրա պատկերված է որսի անսարան, մարդու մենամարար վարալի հետ: Կենդանին եակի ոտքերի վրա բարձրացած, առջևի ոտքերը պարդել է դեպի մարդը⁸⁴, իսկ վերջինս (մարդու եակի կեսը վնասված է) ձեռքի սուրն ուղղել է դեպի վարազի դունչը (նկ. 19,2): Մարդը մորուքավոր է, աջ ոտքը դեպի առաջ ծալած: Վարազի մարմինը պրկված է, ետանկյունաձև դունչը ադեղնաձև ղժով անջաաված:

Որսի տեոարանները վաղ հայկական և հելլենիստական շրջանի «հունապարսկական», «արևելա-հունական», «սիրիա-կապադովկիան» և տեղական փոքրասիական կնիքների ամենասիրված ու տարածված թեմաներից մեկն է: Որսորդությունը դիտվում էր ոչ միայն որպես զվարճություն, այլև քաջություն, հերոսություն ցուցարբերելու միջոց: Դրա համար էլ նշանավոր ազնվականները, հաճախ, որսի ժամանակ մասնակցում էին դուրս դալիս ահարկու դազանների դեմ և սպանում նրանց: Այս սովորութիւնները, որ նույնքան հարազատ էին Հայաստանին, որքան և մյուս երկրներին, դարեր շարունակ պահպանվում էին: Այդ-

⁸² С. М. Казиев, Т. Н. Голубкина, 224. աշխ., տախտ. IX.

⁸³ Н. В. Анфимов, 224. աշխ., էջ 169, 186, նկ. 14, 18.

⁸⁴ Հ. Գ. Խաչատրյան, Գիտոգությունների Հայաստանի հելլենիստական շրջանի զիպտիկայի մասին, 129, 1974, № 7, էջ 101, նկ. 4:

պիսի տեսարաններ պատկերվել են ոչ միայն կնիքների, այլև մետաղյա սնոթների, դրամների, քարերի և այլ իրերի վրա:

Որսի աեսարան պատկերող կնիքներ հայտնաբերվել են Գառնիի և Օշականի դամբարաններում: Գառնիի կոպուլտ ապաքուց պատրաստված բաղմանիստ կնիքի վրա պատկերված է մարդու մենամարտը առյուծի⁸⁵, իսկ Օշականի լեռնային բուրեղից պատրաստված շրջանաձև կնիքի վրա՝ մարդու մենամարտը արջի հետ⁸⁶ (նկ. 19, 13): Այսպես դիտին շալմա փաթաթած մարդը ձախ ձեռքի դաշույնը խրել է արջի վրի մեջ, իսկ աջ ձեռքի նիզակով հարվածում է գազանի կրծքին: Արջը աջ թտթը մեկնել է դեպի մարդու ոտքը՝ հարվածելու նրան: Վարպեաը ահող ուսլջբարը շեշտելու համար գաղանի բերանը թեթևակի բաց է պատկերել, իրանը քիչ առաջ թեքված, եանի ձախ ոտքը, որի վերջավորութունը չի երևում, ետ է տրված: Դա գազանի հորձակումը շեշտելու համար է: Բտվականին ուուուցիկ արված պատկերը քարացած է, շարժումը պայմանական, մանրամասները քիչ են արված: համեմաաարար լալ են պատկերված արջի թաթերը և մարդու գլուխը: Համադափութունները քիչ խախտված են:

Արտաշատի կնիքը զուգահեռ և հարակից նյութերով թվագրվում է մ. թ. ա. II—I դարերով: Օշականի կնիքը իր՝ համեմաաարար լավ մշակմամբ կարող է պատկանել վաղ հելլենիսական շրջանին:

Արտաշատի մյուս կնիքը (VIII բլ., գամբ. № 80) պատրաստված է կտնաշավուն անթափանցիկ ապակուց: Հարթ մակերեսին պատկերված է դձայն աջ վազող ձի (1,5×1,3): Պատկերը քիչ ոճավորված է: Զիու գլուխը փոքր է և տրված է մի գծով, կուրծքը շաա մեծ, դեպի առաջ ցցած, հզորութունը շեշտելու համար, մեջքը բտրակ, պոչը, որ սկսվում է շատ վերեից՝ գրեթե մեջքից, ատամնավոր է (նկ. 49, 6): Զիու առջեի ոաքերը ծալած են, քիչ իրարից ետ ու առաջ տրված, ետևի ոտքերը դեպի ետ են ծալած և կարծ: Այսպես կրծքի հզորութունն ու պոչի ատամնավորութունը, հավանաբար, ձիու ոչ սովորական, առասպելական լինելն է շեշտում:

Կենդանիները միասին կամ առանձին պատկերելը նույնպես հատուկ է «հունա-պարսկական», «արեելա-հունական», փոքրասիական կնիքների և նրանց տարատեսակների համար: Հայաստանում հայանաբերվել են մի շարք՝ մեջքին թռչուն կանգնած մի եղջերվի, ձիու, իբար սոտ կանգնած ձիերի, ձիու և քուռակի, առյուծի, արջի և այլ կենդանիների պատկերներով մ. թ. ա. V—I դդ. պատկանող կնիքներ⁸⁷:

Արտաշատի կնիքի զուգահեռները մեղ հայտնի շեն: Նրա պատկերը և պատկերելու եղանակը խոսում են կնիքի տեղում պատրաստված լինելու օգտին: Այն նաբող է թվագրվել մ. թ. ա. I դարով, և պատկանում է փոքրասիական-անդրկովկասյան խմբին⁸⁸:

⁸⁵ Ժ. Դ. Խաչատրյան, սյմ. աշխ., էջ 100 և հտ., նկ. 3:

⁸⁶ С. А. Есаян, А. А. Калактырян, սյմ. աշխ., էջ 38, տախտ. IV₁₀:

⁸⁷ Ժ. Դ. Խաչատրյան, սյմ. աշխ., էջ 102:

⁸⁸ Նույն տեղում, էջ 104:

Արտաշատի դամբարանադաշտերից հայտնարեցված ամենակարևոր նյութերից մեկը, դա արծաթյա փոքրիկ սրվակն է (րարձր. 6, 8 սմ, պս. ար. 1, 7 սմ)։ Այն զրեթե դլանաձև, դեղի վեր թեթեակի նեղացող, երկարուկ անբունի, կոնաձև հասակ, ցածրադիր վիղն ավարավում է աստիճանաբար լայնացող պսակով։ Իրանի մակերևույթ զուգահեռ ակոսավոր դոտիներով բաժանված է դրեթե երեք հովասար մասերի։ Վերին հատվածը, ուսերից սկսած, հարդարված է անրեններից կալմված եղևնաձև ծայրերը դեպի ներքև ուղղված երեք շարք զարդերով (տախա. XXI¹⁵)։ Անոթը, որն, անկասկած, եղել է օժանելիքի սրվակ, ձևով շատ նման է հելլենիստական շրջանի, այսպես կոչված, «փյունիկյան» ապակե սրվակներին։ Արծաթե սրվակի գարդերն անզամ հիշեցնում են վերոհիշյալ սրվակների դարձերը։

Արծաթե սրվակի զարդերը, իրենց ձևով ու մշակումով, ձայնակցում են Արտաշատի I ըլրից հայտնարեցված անոթների կանթերի՝ ամուրի թեքերի և ծովաձիու իրանի հարդարանքի հետ⁸⁹։

Արծաթյա սրվակի զուգահեռներ մեզ հայտնի չեն անախ շրջանի այլ հուշարձաններից, սակայն, վերոհիշյալ կանթերի նման, սրվակը ևս ներմուծվել է Միրիայից։ Այն իր ձևով ու մշակումով կարող է պատկանել մ. թ. ա. II—I դարերին։

Արտաշատի դամբարաններից հայտնարեցված դրամները⁹⁰ փոքրաթիվ են, Դա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ հարավարևելյան և արևելյան դամբարանադաշտերում թաղումները հիմնականում կաարվել են դիակիղմամբ։ Այդ դեպքում սովորաբար դրամներ չէին գրվում։ Ինչ վերաբերում է կարասային և հիմնահողային թաղումներին, սույս դրանք շատ աղքատիկ էին։ Դրամները հայտնարեցվել են միայն VIII ըլրի վրա բացված և ըլուրներից արևմուտք դոնվող ցածր ըլրակի վրա բացված ժայռափոր դամբարաններից։

Ուշագրավ է Տիգրան II-ի պղնձյա դրամը, որը կտրված է Արտաշատում, նրա եակի երեսին պատկերված է թեկավոր նիկեն։ Դրամներից երկրորդը Տրայանոսի (98—117 թթ.) դիդրախման է, որը կտրվել է 98—99 թթ. Կապադովկյան Կեսարիայում։ Նա պատկերված է դեմքով դեպի աջ, գլխին պսակ կա (տախա. XVI₂)։

Մյուս դրամները պարթևական և սասանյան են։ Դրանցից ամենահինը Հրահատ III-ի (մ. թ. ա. 70—57 թթ.) արծաթյա դրամն է։ Թագավորը պատկերված է դեմքով դեպի ձախ, գլխին ժպավեն է կապած։ Մյուս երեսին Արշակն է նստած, պարզած աջ ձեռքում աղեղ (տախա. XXI₂)։ Սասանյան թագավորներից հայանի է Շապուհ I-ի (240—271 թթ.) արծաթյա դրամը։

⁸⁹ Б. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах, ИФЖ, стр. 53 и сл., рис. 8

⁹⁰ Տիգրանի, Տրայանոսի և Հրահատ III-ի դրամները որոշել է Մկրտիչ Զարգարյանը, իսկ սասանյանը՝ Կ. Մուշեղյանը։

Թագավորը զեմքով զեպի ձախ է պատկերված, զիւրին ունի բարձր թագ:

Արտաշատի ըլուրներէից և դամբարաններից հայտնարեւրված զլուսնելը վկայում են, որ Հայաստանում, մ. թ. ա. III դարից սկսած, լայնորեն աարածված են ևղել հելլենիսական երկրների թագավորների կտրած դրամները, իսկ մ. թ. ա. I դարից Հայաստանի դրամական շրջանառութեան մեջ իրենց որոշակի տեղը են դրավում Տիգրան II-ի և նրա հաջորդների կտրած դրամները: Հեագայում, հայկական շուկաներում շրջանառութեան մեջ էին հռոմեական, պարթևական և սասանյան դրամները: Ըստ երևույթին, մասամբ դրանով կարելի է բացատրել Արշակունի հայ թագավորների սեփական դրամներ չկտրելու հանդամանքը:

Ուշագրավ է արևելյան դամբարանադաշտից գտնված բրոնզե դիմաքանդակը, որի զիւրի հետևի մասից դատելով փակցված է եղել ինչ-որ անոթի: Այն պատկանում է սարուկներին վերաբրվող դիմակների թվին: Դիմքն իրական և խիստ չափազանցված անիրական, դրոտեակային կերպավորում ունի՝ խոշոր աչքեր, դուրս պրծած խնձորակներով, կիսոված հոնքերը ուժեղ արտահայտված, մկանուտ են, որի հետևանքով կերպարը ձեռք է բերել ցասկոտ արտահայտութուն: Քթի վերնամասը ամբողջութեամբ ներս է ընկած և միայն ստորին մասն է սրածայր ցցված: Բերանը ավելի շուտ հիշեցնում է բացված ծովախեցու Դիմքի համեմատ չափազանց մեծ է և ընդհանուր կերպարին տալիս է կիսաֆանտաստիկ ընթացք: Մազերը չափազանց խիտ են, ետ սանրված, որոնք երկու կողմերում ավարտվում են երեքական հյուսքերով:

Դիմակի այդպիսի բարձրաքանդակ կա Պերգամոնում⁹¹, որը քթի, բերանի ու մորուքի ձևով, աչքերի փոսիկներով մոտենում է մերին, սակայն Արտաշատի դիմաքանդակը ձայնակցում է Պոմպեյից գտնված բրոնզե վառարանների վրա ամբացված դիմակներին⁹²:

Արտաշատի դիմակը, ամենայն հավանականութեամբ, իապիկյան է և պատկանում է ներմուծված անոթի կամ վառարանի. Այն կարող էր Հայաստան բերվել կամ առևտրական ճանապարհով, կամ հռոմեական զորքերի միջոցով: Արտաշատի դիմակը թվագրվում է մ. թ. ա. I դարի վերջով և մ. թ. I դարի սկզբով, այսինքն, օգոստոսյան շրջտնով:

⁹¹ M. Bleber, The History of the Greek and Roman theater, Princeton, London, 1939, fig. 273.

⁹² P. Gusman, Pompei. La villes moeurs les Arts, Paris, 1899, pp. 298, 350

IV. ԽԵՑԵՂԵՆ

Արտաշատի դամբարանային նյութերի մեջ ամենամասսայականը խեցեղենն է: Դա պատահական չէ, քանի որ ընդհանրապես կենցաղում օգտագործվող իրերը, առարկաներն ու անոթները հիմնականում պատրաստվել են կավից: Սակայն, ի ասորերուծյուն անտիկ շրջանի, մյուս հնավայրերը դամբարանային խեցեղենի, ինչպես վերը նշեցինք, Արտաշատի դամբարանների խեցեղենը, որոշ բացառությամբ արեմտյան դամբարանադաշտի, թաղման յուրահատուկ արարողության հետ կապված, ներկայացված է ընկորների ձևով, որոնց թիվը առանձին դամբարաններում հասնում է մի քանի հարյուրի: Արտաշատի խեցեղենը հիմնականում պատրաստված է սև ու սպիտակ ավազախառնուրդով դարչնագույն կավից: Արտաշատի դամբարանային խեցեղենը, որն աչքի է ընկնում իր բազմադանությամբ, պատկանում է մ. թ. ա. II—մ. թ. III դարերին և վերաբերում է քաղաքի գոյության կարևոր ժամանակահատվածներից մեկին: Այն ձայնակցում է Արտաշատի ըլուրների պեղումներից հայտնաբերված համաժամանակյա խեցեղենի հետ, ուստի մեծ կարևորություն է ներկայացնում քաղաքի խեցեղործության, ինչպես և Հայաստանի մյուս քաղաքների և հարևան երկրների հետ ունեցած առևտրական ու տնտեսական կապերի, աղղեցությունների ու փոխազդեցությունների ուսումնասիրության համար:

1. ՀԵՂԵՆԻՍՏԱՆԿԱՆ ԾՐԱՍԻ ԽԵՑԵՂԵՆ


(մ. թ. ա. II—I դդ.)

Արտաշատի դամբարանադաշտերում հայտնաբերված հելլենիստական շրջանի խեցեղենը երկու խմբի է բաժանվում՝ գունազարդ և հասարակ անտեսության մեջ օգտագործվող անոթներ:

Միագույն խեցեղենը կարասներ են, խոհանոցային անոթներ և թասերի, դավաթների առանձին տեսակներ, որոնք կամ պատած են մի գույնի անգորով, կամ առանց անգորի են:

Խոհանոցային անոթները դրանք վաղ հայկապան շրջանից եկող ձևերն են, թուխ, քիչ խոշորահատիկ կավից պատրաստված լայնաբերան, լայն հաակով, առանց կանթի կամ մեկ և երկու կանթով անոթներ, որոնք գրեթե փոփոխության չեն ենթարկվել ու շարունակվել են նաև հետագայում:

Առանձին խումբ են կազմում կարասները, որոնք ծառայել են այստեղ ինչպես թաղման, նույնպես և հոգեհացի համար ասորեր տեսակի մթերքներ



Նկ. 31. 1-11—դամբ. № 46

ու խմբիչքները բերելու նպատակին: Բացի ամբողջականներից, որոնք օդտա-
զործվել են թաղման համար, դանդաղ են նույն մեծ թվով կարասների բեկար-
ներ (տախտ. I₁₋₄, IV_{1,2,3}): Դրանք սլոյն շտիկերի (բտրծր. 100—115 սմ),
հարթ հատակով (տր. 20—30 սմ), դուրս լայնացող հորիզոնական և թեք
կարած սյուսկներով (տր. 36—40 սմ) հարթ մակերեսով կարասներ են կոչել,
որոնք իրարից քիչ են տարբերվել: Միայն մեկի պսակը վրայից քիչ ակոսա-
վոր է:

Կտրասների այս ձևը շատ բնորոշ է հելլենիստական շրջանին: Մեծ թվով
նման կարասների բեկորներ են հայտնարեբրվել Արտաշատի բլուրներից, Ար-
մավիրից և մյուս հելլենիստական հուշարձաններից:

Հասարակ խեցեղենի խմբին են պատկանում նաև Արաաշատի I բլրի
հյուսիսային պարսպի մոտ, ներսսով բացված մանկական թաղամից գտնված
թասն ու գավաթները (տախտ. X₁₋₃, նկ. 45, 2-4): Թասն սևի աստիճա-
նարար լայնացող կողեր, կլոր պսակ, որի վրա սղզահայաց բարձրանում է
փոքր անցքով կանթր, հատակը հարթ է, մակերեսն անփայլ (պս. տր. 17,4 սմ,
բարձր. 7,2 սմ, հատ. տր. 5 սմ): Հելլենիստական խեցեղենի մեջ նման կանթով
թաս մեղ հայտնի չէ: Եղած սյուզորինակ թասերը առանց կանթի են: Արտա-
շատի այս թասն հիշեցնում է ուրարտական ուղղահայաց և հորիզոնական
կանթերով թասերը:


Գավաթները նույնպես պատրաստված են ձեռքով, նրանց աստիճանա-
րար լայնացող իրանը ավարտվում է հոտտերև պսակով: Վերին մասում ուղ-
ղահայաց ամրացված է տափակ կանթր: Կոպիտ պատրաստված բաժակի
մակերեսն անհարթ է, անփայլ, մեկի հասակը հարթ է, մյուսինը՝ քիչ ներ-
ճկված (պս. տր. 8 սմ, բարձր. 8,2 սմ, հատ. տր. 4 սմ, պս. տր. 6,2 սմ,
բարձր. 6,6 սմ, հատ. տր. 4 սմ):

Շոտտերև պոակով այս գավաթների դուգահեռները նույնպես մեղ հայանի
չեն: Խեցեղենի այս ամբողջ կոմպլեքսն իր մշակումով և շերտազրական առու-
մով կարող է պատկանել մ. թ. տ. I դարին:

Գունազտրդ խեցեղենը սակավաթիվ է: Սակայն եղած մի քանի օրինակ-
ները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Դժվար է, սակայն, որո-
շել, թե այդ նմուշները որ դամբարանին են պատկանել:

Արտաշատի ղունտղտրդ խեցեղենը, Հայաստանի մյուս հնավայրերից
հայտնարեբրված նույնատիպ խեցեղենի ձևերի ու ղունաղարդումների հետ
ունեցած իր ընդհանրություններով հանգերձ, ունի որոշակի տարբերություն-
ներ: Այն շատ կարևոր է խեցեղենի հետադա զարդացումը, ուղ հելլե-
նիստական շրջանի դունաղարդ խեցեղենի առանձնահատկությունների հետա-
գա շարունակումը, հաջորդականությունը և մ. թ. առաջին դարերի խեցեղենի
վրա թողած ազդեցությունն ուսումնասիրելու տեսակետից:

Գունազարդ խեցեղենի խմբին են պատկանում տափաշները, ըմպանակ-
ները, կիսաղնդաձև թասերը, տարբեր չափերի քրեղանները, ձկան փսեսները
և այլ անոթներ: Դրանք պատրաստված են, մեծ մասամբ, բարձրորակ լավ
հունցած բարակ ավազախառնուրդով կավից: Թրծումը լավ է, միայն առանձին
դեպքերում հավասար չէ, երբեմն ունենում են թուխ միջնաշերտ: Պատրաստ-



вз. 32. 1-10—фрагм. № 56

ված են հիմնականում ձևոքով: Անոթների մակերեսը լրիվ, մեկ կողմը, կամ անոթի վերին մասը, պատած է լինում կարմիր, բաց կարմիր, դարչնագույն ան-
 ցորով: Նկարագրողումը կաարված է անոթների մակերեսին անցոր քսելուց հե-
 տո կտու առանց անցոր քսելու: Զարդերը երկրաչափական են և բուսական: Տա-
 փաշները հարդարված են սպիրալաձև և շրջանաձև դարդերով, թասերի, ըմպա-
 նակների և քրեղանների դարդերը անհավորված են պսակներին (որ շատ բնո-
 րոշ է Արաշատի խեցեղենի համար), վզերի վրա, երբեմն էլ ներսում: Հաճախ
 են հանդիպում եռանկյունաձև, եղևնաձև, ծաղկաշղթայաձև, տլիքաձև դար-
 դեր, որոնք արված են սև, կարմիր, դարչնագույն անդրներով, առանձին-ա-
 ռանձին կամ միասին: Զարդերը միշտ չէ որ խնամքով են արված: Լրիվ փայլեց-
 ված անոթներ քիչ են հանդիպում: Հիմնականում փայլեցված են դարդարված
 մասերը, տվելի հաճախ պտակները, որը նույնպես ուշ հելլենիստական խեցեղենի
 բնորոշ գծերից մեկն է:

Ուշագրություն արժանի են դոնադարդ և անգույն փիալաների բեկորները
 (նկ. 22, 1, 38, 1, 24, 5, 36, 2), որոնցից կրեքը հայանաբերվել են հարավ-
 արևելյան (դամր. № 32, 40) և արևելյան դամարյանտողաշտից: Դրանք ունեն
 շեշտված անցում: Մեկի պսակը (դամր. № 40) ներսից հարդարված է դարչնա-
 գույն ֆոնի վրա, շրթի կարմիր դոտուց իջնող դույզ շագանակագույն դծերով
 արված ծաղկաշղթայաձև ռադոներով: Երկու երեսը պատած է բաց կարմիր
 անգորով, դարդարված մասն անփայլ է, իսկ մնացածը թեթևակի փայլեցված:
 Երկրորդի նույն հատվածի ծաղկաշղթայաձև դարդը լցված է շրթից իջնող
 չորս շեղ գծերով, ներսից լրիվ, իսկ դրսից միայն իրանը, բաց կարմիր անգո-
 րով պատած մակերեսն անփայլ է:

Երրորդի՝ դեղնավունին տվող վարդագույն ֆունի վրա, ներսից կարմիրով
 ու շագանակագույնով՝ ալիլը բարդ զարդեր են արված (դամր. № 32): Մա-
 կերեսը թևթև փայլեցված է: Վերջին բեկորը պարասաված է դուրզի վրա
 վառ է թրծված, մակերեսը հարթ է, բայց անփայլ:

Փիալան Հայաստանի հելլենիստական շրջանի ամենատարածված խեցե-
 դեն ձևերից մեկն է: Այն լայն տարածում ունի նաև Արտաշատում, Արտաշատի
 փիալաների ոչ միայն վզերն են հարդարված, դրսից կամ ներսից, այլև հաճախ
 երկուսը միասին, իսկ երբեմն էլ իրանը: Ալիլինակ զարդերով փիալաներ
 շատ են հայտնաբերվել հատկապես Արաշատի ընդհանրի պեղումներից
 մ. թ. ա. II—I դդ. շերտերից¹: Ալիքաձև, եռանկյունաձև և այլ զարդերով
 հարդարված փիալաներ գտնվել են Գառնիի և Արմավիրի² հելլենիստական
 շերտից, Դվինից³, Հելլենիստական գոնադարդ փիալաներ հայանի են նաև
 Վրաստանից⁴ (Ուպլիսցիխ): Գառնիի, Դվինի և Արմավիրի մ. թ. ա. II—I դդ.
 գոնադարդ փիալաներն ավելի խնամքով են պարասաված և ավելի լավ

¹ Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, *աղյ.*, էջ 79 և հտ., տախտ. I, 81

² Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի մ. թ. ա. VII—I դարերի խեցեղենի բնորոշ մի ձև, ՊՔՀ,
 1970, № 2, էջ 271 և հտ., տախտ. III—IV,

³ Գ. Քոչարյան, Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը, ԼՂԳ, 1974, № 5, էջ 85,
 86, 92, նկ. 3,

⁴ Լ. Ա. Խաչատրյան, Уплисцих, II, Тбилиси, 1970, табл. XV, з. 4, XLII, 4.

մշակում ունենւ Արտաշատի պեղումները վկայում են, որ սյդորինակ դարդե-
լուով փիալաները տարածում են ստանում հտակաւպես մ. թ. տ. II—I դարերում:

Արտաշատի այդ ժամանակաշրջանի խեցեղենի մեջ առկա էին մեծ թվով
թեթև փայլեցումով անոթներ, որը բացատրվում էր նաև հելլենիստական խե-
ցեղենի ավանդույթների աստիճանտարար մարումով: Այնուհետև, շուկայական
մեծ պահանջարկը ստիպում էր ավելի քիչ ժամանակ ծախսել մասսայարար
տրապարկով խեցեղեն անոթների վրա: Ուստի Արտաշատի դամբարանադաշ-
տեղից հայտնարեղված անփայլ և թեթևակի փայլեցումով փիալաները կարող
են պատկանել մ. թ. ա. I դարին: Այդ ժամանակով թվագրվող նման փիալա
հայտնարեղվել է Արտաշատի VIII բլրից⁵:

Հետաքրքրուիթյան արժանի է մի կիսագնդաձև թաս: Այն ունի վատ թրծե-
լուց առաջացած թուխ միջնաշերտ (պս. տր. 12 սմ), մակերեսը պատած է կար-
միր անգորով և փայլեցրած (նկ. 32, 1): Ներսում սևով համավածարար արված
է ցանցաձև և դույզ դուգահեռ զծեր (հարավարեկյան դամբարանադաշտ,
դամբ. № 56): Տարբեր ձեերի գունազարդումով կիսագնդաձև թասեր մեծ քա-
նակուիթյամբ հայտնարեղվել են Արմավիրում⁶, Գառնիում, Աշվանում⁷, Վրաս-
տանում⁸, որոնք պատկանում են մ. թ. ա. III—II դարերին: Այդպիսի մի քանի
թասեր հայտնի են նաև Արտաշատի բլուրների պեղումներից, մ. թ. ա. II—I
դդ. շերտերից⁹: Հավանարար, կիսագնդաձև թասերը հանդեռ գալով վաղ
հելլենիստական շրջանում, հարատեւել են մինչև մ. թ. ա. I դարի կեսերը: Սա-
կայն նրանց տարածման շրջանը պեաք է համարել մ. թ. ա. III—II դարերը:
Դրանք ընդող են հաակապես Արմավիրի խեցեղենին: Արտաշատի № 56
դամբարանի կիսագնդաձև թասը ավելի ուշ օրինակ է և կարող է թվագրվել
մ. թ. ա. I դարով:

Այս խմբին է վերաբերում նաև Արտաշատի VIII բլրի վրա պեղված դամ-
բարանից հայտնաբերված թասը (տախտ. IX, 3, նկ. 34, 1), որն իր չափերով
րավականին փոքր է մյուսներից (րարձր. 4, 5 սմ, պո. տր. 8, 6 սմ): Այն ունի
դարչնագույն ֆոն, որի վրա, ներսում, պատկերված է շադանանագույնով ար-
ված խաչաձև եղենաձև վարդյակ, որի աջ կողմերին եղենու տերեւների մեջ կան
րաց դարչնագույն դծիկներ, իսկ թեերի մեջ՝ ալիքաձև դարդեր: Այսինքն,
ստացվել է մեղմ աուլենոի մի այնպիսի ներդաշնակուիթյուն, որը դեղեցիկ տեոք
է հաղորդում անոթին: Այսպիսով, այն տարբերվում է ոչ միայն չափերով,
այլև դարչնագույն ֆոնով և ներսում արված երկդույն վարդյակով: Քանի որ
այդօրինակ թասերը սովորարար ունենում են կարմիր և մուգ կարմիր ֆոն, և
ընդհանրապես մի դույնով, սևով արված ծաղկաշղթայաձև-ալիքաձև դարդ:

Կիսագնդաձև նման վարդյակով թաս մեկ հայտնի չէ: Այն նկատելիորեն

⁵ Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կաճեցյան, նշվ. աշխ., էջ 80:

⁶ Ե. Մ. Արաքեյան, О некоторых результатах археологического изучения древне-
го Армавира, ИФЖ, 1969, № 4, табл. IV; Գ. Ա. Կուրաչյան, Древнеармянская керамика
из раскопок Армавира, стр. 221, табл. I 10; II 7; Գ. Տիրացյան, Հնագիտական աշխա-
տանքներ Արմավիրում, նկ. 3, Ա. Ա. Մարտիրոսյան, Аргинтихияли, рис. 22а, 28.

⁷ St. Mitchell, Aşvan kale, „Anatolian Studies“, Vol. XXIII, 1973, fig. 15.

⁸ Դ. Ա. Խաչատրյան, Уплисцихе, II, табл. XX, 1.

⁹ Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կաճեցյան, նշվ. աշխ., էջ 79, տախտ. I, 5, 9, 10, 12.

հիշեցնում է Արևշատի Թասիկի խաչածեղ եղենածեղ զարդը¹⁰։ Սակայն խաչածեղ եղենածեղ զարդեր II—I դարերի խեցեղեն անոթների վրա հաճախ են հանդիպում։

Այսպիսով, մեր կիսադնդածեղ թասը կարելի է համարել վերոհիշյալ հելլենիստական կիսադնդածեղ թասերի ասորականներից մեկը։ Այն իր մշակումով, պատրաստված է ձեռքով, կոպիտ և թեթև փայլեցված, կարող է պատկանել մ. թ. ա. I դարին։ Նրա հետ նույն դամբարանից դուրս գալիս մեծ անոթի բեկորը ես վերաբերում է այդ ժամանակին։ Թասիկի մեջ դրված էր ամրողական մի ձու, որին վերադրվել է մաքրագործող նշանակություն և սովորաբար հանդիպում է դամբարաններում, ուստի կարելի է ենթադրել, որ թասիկը ծառայել է իրրև ծիսական անոթ։ Թերևս, այդ ենթադրության օգտին են վկայում նաև նույն դամբարանից հայտնաբերված այժի կնիքավոր ոսկե շքասեղը և դալիկը։

Թասերի մյուս խումբը ունի թեթևակի գեպի ներս լայնացող պսակ և բարակ պատեր (նկ. 22,3)։ Նրանցից մեկը (հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 70, պս. տրամ. ~ 36 սմ) ներսից կարմիր անգորով է պատած, դրսից բաց զեղնավուն ֆոնի վրա ունի կարմիր գոտի, մակերեսը փայլեցրած է։ Մյուսը՝ ներսից լրիվ, դրսից միայն վերին մասը, պատած է անգորով և թեթևակի փայլեցրած (արևելյան դամբարանադաշտ, պս. տրամ. 20 սմ)։

Նման կարմիր անգորով պատած, լավ փայլեցրած հելլենիստական շրջանի թասեր հայտնաբերվել են Արմավիրից, միազույն և դունազարդ՝ Գառնիից։ Այդ ձևի հելլենիստական մի թաս էլ հայտնաբերվել է Պանտիկապոլոսի դամբարաններից, որը համարվում է ներմուծված Փոքր Ասիայից¹¹, Թեև Հալաֆի¹² հելլենիստական շրջանի շերտերից։


Ինչպես Արտաշատի բլուրների պեղումներն են վկայում, այս թասերը եղել են խեցեղեն անոթների ամենասիրված ձևերից մեկը։ Մ. թ. ա. II—I դդ. շերտերից հայտնաբերվել են բազմապիսի գունազարդումով մեծ թվով թասեր։ Դրանցից շատերը գունազարդված են ոչ միայն ներսից, այլև դրսից։ Այսպիսով, թասերի այս ձևերը զուտ հելլենիստական են, հանդես են գալիս մ. թ. ա. IV դարի վերջում III դ. սկզբում և հարատևում են մինչև մ. թ. ա. I դարի վերջը։ Արտաշատի դամբարաններից հայտնաբերված թասերն իրենց մշակումով պատկանում են այդպիսի անոթների ամենաուշ օրինակներին և կարող են համարվել մ. թ. ա. I դարի արտադրանք։

Իրենց ձևերով ու զարդերով մյուսներից առանձնանում են հարթ հատակով հորիզոնական կտրված պսակով թասերը։ Դրանք պատրաստված են լավ հունցած կավից։ Բացի երկուսից, որոնց միջուկը դորշավուն է ուժեղ և տևական կրակով շթրծելու պատճառով, մնացածներն ունեն հավասար թրծում, միազույն իւկցի։ Թասերից մեկի մակերեսը պատած է կարմիր անգորով և փայլեցրած է։ Պսակը հարդարված է սևով արված ադեղնածեղ, զիզզագած

¹⁰ Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ, ՊՐՀ, 1966, № 1, էջ 255, ադ. II, 1

¹¹ С. С. Бессонова, Раскопки некрополя Пантыкапея в 1963—1964 гг., СА, 1969, № 1, стр. 141—142, рис. 7.

¹² B. Hroudá, Teil Halaf, Vierter Band, Berlin, 1962, Taf. 81, 117



Նկ. 33. 1, 4—դամբ. № 48, 2, 6, 8—դամբ. № 49, 3, 7, 10—զամբ. № 50, 9, 11, 13—զամբ. № 51

զծերով, թասը ներսից նույնպես ունի կրեք իրար մեջ արված զույգ եռանկյունիներ (նկ. 22,¹¹): Մակերեսը փայլեցված է: Այս թասն իր ձևով ու զարդերով աղերսվում է Արմավիրից հայանարերված թասերի հետ¹³: Ի. Կարապեկյանը դրանք համարում է ուրարտական խեցեղենից սերած և թվագրում է մ. թ. ա. V—III դարերով¹⁴, իսկ Գ. Տիրացյանը ուղիղ, թեթևակի պրոֆիլավորված պսակող թասերը կապում է փոքրասիական փոյսզիական¹⁵ խեցեղենի հետ, նշելով, որ դրանց մեջ կան ավելի վաղ շրջանի և համաստամանայա զուգահեռներ¹⁶:

Թևե ըացառված չէ այդորինակ թասերի կապը ուրարտական և փոյուզրական խեցեղեն ձևերի հետ, յի կարելի անասել նաև սկահակների հետ ունեցած կապը, որոնց նմանությունն ակնհայտ է: Ինչ վերաբերում է Արմավիրի թասերի ժամանակին, ապա դրանք կարող են վերաբերել մ. թ. ա. II—I դարերին: Իսկ այն փաստը, որ այդ թասերը իրենց զուգահեռները չունեն Իջևանի, Շամշադինի, Զրառատի, Աթարբեկյանի, Սևանի V—III դարերով թվագրվող նյութերի մեջ, խոսում է դրանց ավելի ուշ ժամանակաշրջանին վերաբերելու օգտին: Այդ է վկայում նաև Արտաշատի հարավարևելյան դամբարանադաշտից (զամբ. № 40) գտնված թասը, որը մ. թ. ա. II դարից ավելի վաղ չի կարող լինել: Վերջինիս ոչ միայն ներսի զարդերն են համընկնում Արմավիրի թասի հետ, այլև չափերն ու ձևերը:

Այս իմբի աարատեսակները հանդիսացող թասերից մյուսներն ունեն 18—22 սմ տրամադիտ, 5—7 սմ բարձրություն, աարբար լայնությունը ու խորությունը ներձկված վիդ, 1—1,5 սմ լայնությամբ պսակները հորիզոնական են կամ թեթևությամբ դուրս ու ներս լայնացող:

Այդ թասերից երկուսը պատած են կարմիր անդրով և փայլեցրած են, իսկ մյուսների մակերեսները հարթ են ու անփայլ: Թասերից չորսի պսակներն են զարդարված միայն, իսկ մեկի՝ նաև ներսը: Վերջինիս շրթի կարմիր ֆոնի վրա սևով արված կրեքական ուղիղ ղծերը անկյունագծով իրար են միանում ալիքաձև ղծերով (նկ. 41, 2): Այսինքն՝ այն նույնությամբ կրկնում է Արմավիրի¹⁷ վերոհիշյալ թասի պսակի զարդը: Արաաշատի թասի ներսի մասը հարդարված է նաև կենաց ծառի (եղևնաձև) պսակերով: Նման հետաքրքիր հարդարանքով կիսաձվաձև թաս է հայտնարերվել Արտաշատի VIII բլրից: Ծյն զու-


¹³ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, նկ. 3դ, Տե՛ս նաև Արմավիրի 1969 թ. պեղումներից հայանարերված օրինակները, № 76, 131, 1970, № 45:

¹⁴ Ի. Կարապեկյան, Մ. թ. ա. VI—III դարերի վաղ հայկական թասերի մի խումբ, ՊՔՀ, 1971, № 3. էջ 277—279, նկ. 5, 6:

¹⁵ Գ. Ա. Тирациян, Древнеармянская керамика из раскопок Армавира, стр. 220, табл. I, 7:

¹⁶ W. Orthman, Untersuchungen auf dem Asarlic Hüyük bei Ilca, I.M., Bd. 16. 1966, Abb. 14, 5; H. H. Von der Osten, The Alishar Hüyük, Part III, fig. 30, pl. IX; K. Bittel, H. G. Güterbock, Bogazkoy, Neue Untersuchungen in der hethitischen Hauptstadt, Abhandlungen, Jahrgang, 1935, Berlin, 1936, Taf. 19,^{11,12}, Taf. 20,⁷; C. H. Emilie Haspels, La cite de Midas, Céramique et trouvailles diverses phrygie, III, Paris, 1951, pl. 27, s. 28, 5, 6:

¹⁷ Ի. Կարապեկյան, նշվ. աշխ., նկ. 6:



Նկ. 34. 1—դամբ. № 54, 2—5—դամբ. № 55, 6, 7—դամբ. № 57, 8—11—դամբ. № 79

նադարիզված է նաև գրսից: Այս թառերն իրենց դարդերի բովանդակությամբ, ամենայն հավանականությամբ, կառուցված են ծիսական տրալուզությունների հետ:

Թասերից ևրևուօի ոլսակները դարդարված են կարմիրով արված դծերով, որոնք իրարից անջատված են համաշափ լայն շերտերով (նկ. 36, 6, 8, 10, 12, 41, 1): Չնայած նման ձևեր սու դարդեր հանդիպում են նաև Արմավիրում¹⁸, սակայն թառերի այս ձևերն ու հարդարանքը բնորոշ են հատկապես Արտաշատի II—I դարերի խեցեղենի համար: Այդ ձևն ունեցող նման հարդարանքով թասեր մեծ քանակությամբ հայտնաբերվել են Արաաշատի I, II, VII, VIII բլուրների մ. թ. ա. II—I դարերի շերտերի պեղումներից: Թասերից մյուսի սլսակին, դեղնավուն ֆոնի վրա, շաղանակադուլնով արված է ծաղկաշղթայաձև դարդ, որը փայլեցված է: Անոթի կարմիր ֆոնից նման եղանակով անջատված ու դարդարված պսակը դեղեցիկ տեսք է տուլիո ու աշխուժություն հաղորդում թասին: Ծաղկաշղթայաձև նման դարդերը նույնպես Արաաշատի մ. թ. ա. II—I դարերի խեցեղենի տարածված դարդերից են, որոնցից մեծ թվով հայտնաբերվել են Արտաշատի բլուրներից:

Գունազարդ թասերից վերջինի ոլսակը հարդարված է դարչնագույն ֆոնի վրա կարմիրով արված եռանկյունաձև և նետասլաք հիշեցնող, մեկընդմեջ պատկերված եռանկյունիներով (նկ. 36, 12): Նման զարդեր հանդիպում են Արմավիրի¹⁹ և Արտաշատի թասերի վրա: Այս ձևի դարդերը դալիս են ուրարական շրջանից և լայն տարածում են ստանում հելլենիստական շրջանում:

Այս խմբին վերաբերող թասերից մեկն անդարդ է, ներձկված վզով, հասակը ներձկված (պսակի ար. 13 սմ, ըարձր. 4 սմ, հատ. տր. 5, 6 սմ): Ասկերեսը պատած է շագանակադուլն անգորով և փայլեցված է (նկ. 10, 3, հարավարեհլյան դամբարանադաշտ, դամբ. № 19): Արտաշատի պեղումները ցույց են տալիս, որ նման ներձկված հատակով թասերը, ուբարտական ժամանակներից սկսվում—շարունակվում են նաև հետագայում, հասնելով մինչև մ. թ. I դարը: Մեր թասը կարող է պատկանել մ. թ. ա. I դարի վերջին:

Արաաշատի դամբարանադաշտերից մակերեսից և դամբարաններից հայտնաբերվել են դունազարդ խեցեղենի մի շարք բեկորներ, որոնց ձևերը վերականգնել հնարավոր չէ:

Առավել հետաքրքիր բեկորների թվին են պատկանում հարավարեհլյան դամբարանադաշտից գտնված (զամբ. № 40), կաթնավուն մանրահատիկ լավ հունցած կավից, ձեռքով պատրաստված մեծ անոթի բեկորները: Մակերեսը հարթեցված է, թեթևակի փայլեցված: Թրծումը հավասար է բարձր ջերմաստիճանի տակ կատարված, խեցին գնդուն (նկ. 22, 1): Թրծելիս անոթի մակերեսը տեղ-տեղ ստացել է բոց վարդադուլն երանգ: Մակերեսին մուգ կարմիրով արված են եռանկյունաձև, եղևնաձև ծառերի նման գարդեր, որոնց լրիվ պատկերը վերա-

¹⁸ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, ՊՐԶ, 1974, № 3, նկ. 3. Նույնի, Արմավիրի պեղումները, «Լրարեր» (հաս. գիտ.), 1972, № 2, նկ. 7. Նույնի, Հնագիտական աշխատանքները Երևանի մարզում, նկ. 3:

¹⁹ Ի. Կարապետյան, սյս. աշխ., նկ. 4. Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, նկ. 3:

կանգնել ղժրախաարար հնարավոր չէ: Չնայած անոթի մեծությանը, նրա պահանջները բավականին բարակ են: Հարկ է նկատել, որ կաթնավուն կավ օգտագործվել է հասկապես ջնարակած խեցեղեն պատրաստելու համար: Այս անոթը ևս ղամրարանային մյուս նյութերով, մշակումով, համեմատաբար անփայլ նկարազարդումով կարող է թվագրվել մ. թ. ա. I դարի երկրորդ կեսով:

Հետաքրքրության արժանի են տափաշշերը: Դրանցից մեկը գտնվել է արևելյան դամբարանազոտից, կարասային թաղման մեջ (ղամբ. № 1): Նրա մի կողմն ավելի ուռուցիկ է, քան մյուսը (տախա. VIII, նկ. 35,1): Ունի երկու ասփակ կանթ: Ուռուցիկ կողմում ղարլնագույն ֆոնի վրա կարմիրով արված է սպիրալաձև ղարդ: Մյուս կողմում երևում են կարմիր ժապավենի մասերը (բարձր. 40 սմ, պս. ար. 10 սմ): Տափաշշերից մյուսը գտնվել է հարավարևելյան դամբարանազոտից: Այն թուխ, խոշորահասակ կավից է, ուսերին ունի երկու փոքր կլոր կանթ. (տախա. VII, նկ. 5,3): Մի կողմն ավելի ուռուցիկ է, քան մյուսը: Սակայն մինչ այժմ հայտնի տափաշշերից տարբերվում է թուխ գույնով և հատակի մոտ ունեցած խուլ ելուստով, որն, ըստ երևույթին, հենելու, կանգնեցնելու համար է արված (տր. 34 սմ): Մակերեսը փայլեցված է (ղամբ. № 12):

Տափաշշերը հելլենիսաական շրջանի խեցեղենի ամենարճուրդ ձևերից են: Այդպիսիք հայտնաբերվել են Հայաստանի հելլենիսաական շրջանի և հելլենիստական շերակը ունեցող ըողոր հուշարձաններում, Արամավիրում²⁰, Գառնիում, Արաաշաում, Դվինում²¹, Օշականում²² և այլուր: Դրանք ձեռքով պատրաստված երկու կողմից սեղմված անոթներ են և իրարից տարբերվում են շափերով ու նոսր ուռուցիկութամբ: Այս ասակեանից հետաքրքիր են Արաաշաաի դամբարաններից ու ըլուրներից հայտնաբերված ասփաշշերը: Դրանց մի կողմն ավելի ուռուցիկ է, քան մյուսը, որը անղափոխելիս հենելու համար ավելի հարմար էր: Տափաշշերը մեծ մասամբ հարգարված են լինում ըաց ֆոնի վրա արված կարմիր և շագանակագույն համակենտրոն շրջաններով: Երբեմն կենտրոնական շրջանները ունենում են խաչաձև կամ անվաձե ժապավեններ: Համեմատաբար փոքր շափերի ասփաշշերը հարգարված են ավելի ըսզմազան ու ճոխ ղարդերով:

Արտաշատի գամբարաններից գտնված սպիրալաձև ղարդով ասփաշշերը ձայնակցում է Արաաշաաի VII բլրի մ. թ. ա. II դարի շերտին վերաբերող նման ղարգով ու մշակումով ասփաշշի հետ (1974 թ., № 17):


Դամբարանից գտնված վերոհիշյալ տափաշշեր իր մշակումով, որը դեռևս հարագա է մնացել հելլենիստական խեցեղործության լավագույն ավանդներից, իր ձևով և ղուգահեռներով կարող է թվագրվել մ. թ. ա. I դարով:

Արտաշաաի դամբարաններից գտնված թուխ, ելուստով տափաշշերը գրտ-

²⁰ Г. А. Тирация, О расписной керамике древней Армении (VI в. до н. э.—III в. н. э.), ИФЖ, 1965, № 3, стр. 277, табл. II, 4, 5; 'նույնի' Древнеармянская керамика из раскопок Армавира, стр. 222, табл. I, 14, III, 11; Б. Н. Аракелян, Результаты изучения древнего Армавира, стр. 169, табл. III, рис. 2, IV, рис. 4.

²¹ Գ. Քոչարյան, նշվ. աշխ., էջ 83, նկ. 1:

²² С. А. Есаян, А. А. Калантарян, նշվ. աշխ., էջ 31, ապխ. II, 1, 2:



Նկ. 35. 1—5—դամբ. № 1, 6, 10, 12, 13—16 արևելյան դամբարանադաշտից, 7—դամբ. № 3, 8—դամբ. № 4, 9, 11—դամբ. № 9

ներվել է մ. թ. I դարին սլավոնացի, ճիշտ թվագրվող խեցեղեն անոթների հետ՝ սկուտեղի, կարմիր անդորով սլաած փայլեցրած դնդակ իրանով երկկանթանի ջրամանի, ուրբած, շորս կանթով կճաճի և այլն: Տափաշիշը կարելի է համարել այդօրինակ անոթների ամենաուշ օրինակներից մեկը: Այն կարող է որտեղանել մ. թ. ա. I դարի սկզբին:

Արտաշատից և Օշականից հայտնաբերված սպիրտալակ և շրջանների մեջ արված երկղույն յուրօրինակ թուչնածեղ զտրղերով ապփաշշերը լրացնում, հարստացնում են մինչ այժմ հայտնի տափաշշերի զարդաձևերը:

Փոքր Ասիայում տափաշշերը հայտնի են դեռևս II հազարամյակի կեսերից²³: Սակայն տափաշշերն ամենուրեք տարածում են ոտանում հելլենիստական շրջանում և այն պետք է համարել հելլենիստական երևույթ: Տափաշշերը Հայաստանում գոյաակում են մինչև մ. թ. I դարի կեսը: Մ. թ. ա. I դարի կեսից հանգես են գալիս նաև գնդածեղ տափաշշերը՝ մինչև մ. թ. II դարը:

Արաշատի դամբարանադաշտներից հայտնաբերված դունադարդ խեցեղենից ուղադուրջան արժանի են նաև արևելյան դամբարանադաշտից գտնված անոթի ուսի բեկորը և ափսեի հասակի մասը: Առաջինի (արևելյան դամբարանադաշտ, նկ. 36, 1-5, 9, 11, 13) մակերեսին, վիզն իրանից անջատող ակոսավար գստուց ներքև, սպիտակամուս ֆոնի վրա, սլավոնացի են սուր ծայրերը ներքև ուղղված կարմրավուն եռանկյունիներ: Վզին, վլից ներքև և ընդհանրապես նման եռանկյունիներից կաղմված գոտիներ շաա են հայտնաբերվել Արմավիրից²⁴, Արտաշատի ըլուրներից, Գառնիից և այլ վայրերից²⁵: Խեցանոթների մակերեսները գունավոր եսանկյունածեղ վարդերով հարդարելու ավանդները գալիս են մ. թ. ա. II հազարամյակից: Դրանք հանդիպում են ուրարտական²⁶ կարասների, երկկանթանի անոթների, կճուճների ուլ փուլուզիական²⁷ և վաղ հայկական անոթների վրա: Սակայն, առավել հաճախ, իրրև առանձին զարդածեղ կամ այլ վարդածեղների հեա միասին, այն հանդիպում է հելլենիստական խեցեղենի վրա: Մեր օրինակի միայն զարդերն են փայլեցված, որը, ինչպես վերը նշեցինք, Արաշատի մ. թ. ա. I դարի խեցեղենի ընտրող գծերից մեկն է:

Բեկորներից մյուսը, ափսեի հասակն, ունի ցածր օղակաձև ոտք, դրսից

²³ Tahsin Özgüç, Granbungene von 1950 in Kültepe, Bulletin, XVII, 65, Ankara, 1953, S. 116, Abb. 19, 20.

²⁴ Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, ԳԱՏ, 1963, №12, էջ 108, նկ. 6, Ժ. Կ. Խաչատրյան, Հայաստանի մ. թ. ա. VII—I դարերի խեցեղենի ընտրող մի ձև, էջ 272—274, տախա. III, 6, А. А. Мартиросян, Археологические, рпс. 23а, 6.

²⁵ Ժ. Կ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի ձանի նմուշներ, էջ 254, տախա. 1, 2, 7. Քաչատրյան, նշվ. աշխ., տախա. 1:

²⁶ Գ. Ա. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Արեմենյան Իրանը, ՊՐԶ, 1964, № 2, էջ 162, տախա. 11, 1. Մ. Իսրայելյան, Էրեբունի ըրդ-քաղաքի պատմությունը (ըստ արձանագրական և հնագիտական տվյալների), Երևան, 1971, էջ 111—112, աղ. XXVII, А. А. Мартиросян, Археологические, рпс. 72, С. И. Ходжани, Керамика Эрбуну. Сообщения ГМНИ, IV, М., 1968, стр. 136, 140, табл. 11, 1, 5-7.

²⁷ E. Akurgal, Phrygische Kunst, Ankara, 1955, տախա. 33; E. Akurgal, H. Budde, Vorläufiger Bericht über die Ausgrabungen in Sinope, Turk Tarih Kurumu Yayınları, V, № 14, Ankara, 1956, Taf. III.

պատած է դարչնագույն անգորով և փայլեցրած է: Ներսից, ղեղնասլիաակա-
վուն ֆոնի վրա մուգ կարմիրով արված են երկրաչափական դարձեր՝ ղիզղա-
դածն, շեզանկյունածև, շրջանածև և այլն, որոնք եղբրված են մուգ շազանա-
կադույն գծերով (նկ. 36, 5):


Այժմենայն հավանականություններով, հատակը պատկանում է փոխած ափսեի:
Սակայն նրա քիչ ըրածը ցող իրանը ընդող է հելլենիստական խեցեղեն ափ-
սենների, ինչպես հանդիպում են հարևան երկրների անտիկ հուշարձաններում²⁰,
Սրանք մ. թ. առաջին դարերի հռոմեական կարմիր լաքավոր խեցեղենի օրինա-
կով պարաստված սկուտեղի և ափսենների նախատիպերն են: Կարելի է ս. սել,
որ այդօրինակ ափսենների ձևերը Հայաստան են թափանցել մ. թ. ա. I դարում,
սակայն գունավարդվել են և ստացել տեղական խեցեղենին ընդող կերպա-
րանք:

Այսպիսով, Արտաշատի դամբարաններից հայտնարեցված գունավարդ
խեցեղենը թեև քանակով փոքրաթիվ է, սակայն պարունակում է ձևերի ու
հարդարանքի աեսակետից մի քանի հեաաքքի օրինակներ, որոնք կազմում
են Արաաշատ քաղաքի խեցեղենի մասը, այսինքն՝ պարաստված են Արտա-
շատում: Այն Հայաստանի գունավարդ խեցեղենի ավանդների շարունակու-
թյունն է: Ամենայն հավանականությամբ, սկզբնական շրջանում այն կրել է
Հայաստանի վաղ հելլենիստական շրջանի ավելի դարգացած կենտրոնների
(Արմավիրի) գունավարդ խեցեղենի աղղեցությունը: Դա զգացվում է հատկա-
պես Արաաշատի մ. թ. ա. II դարի խեցեղեն ձևերի ու զարդերի վրա: Այսինքն՝
շատ ձևեր կրկնում են Արմավիրի գունավարդ խեցեղենի գույներն ու զարդերը:
Հնարավոր է, որ առանձին անոթներ ներմուծվել են Արմավիրից: Այդպիսիք
կարող են լինել, օրինակ, կիսադնդած թասը, հարթ հասակով եղևնածև դար-
դերով թասերը և այլն, որոնք հելլենիստական (Արմավիր) գունավարդ
խեցեղենի ընդող ձևերից են: Հետագայում դարգացումը գնացել է ինքնուրույն
ճանապարհով, մի շարք ձևեր ուղղակի չեն հարաակել և առաձևանարար դուրս
են մղվել, իսկ որոշ ձևեր ամուր մտել են կենցաղի մեջ և լայն աարածում սաա-
ցել: Արաաշատի խեցեղենի վրա մեծ աղղեցություն է թողել նաև ներմուծված
խեցեղենը, որոնց մի մասը, մասնավորապես ձևան ափսենները, ընդունվել են և
մեծ քանակությամբ տարրեր դունավարդումով արաաղղվել: Արաաշատը
մ. թ. ա. II—I դարերում դարձել էր ավլալ ժամանակաշրջանի արհեստա-
գործություն, այդ թվում նաև խեցեգործության կարևոր կենտրոններից և
ուղղություն ավողներից սեկը: Արտաշատի խեցեղեն արաաղղանքը հավանա-
րար արաահանվել է Հայաստանի տարրեր շրջաններ, Գառնի, Դվին, Հացավան
և այլ վայրեր:

2. I—III դդ. ԽԵՑԵՂԵՆ

Արտաշատի դամբարաններում հայտնաբերված խեցեղենի մեջ գերակշռող
մասը մ. թ. առաջին դարերի խեցեղեն անոթներն են՝ տարրեր չափերի ու
ձևերի կարասներ, կճուճներ, ռափորներ, թասեր, սկուտեղներ, ափսեններ և այլն:

²⁰ Jörg Schäfer, Hellenistische Keramik aus Pergamon, Berlin, 1968, Taf. 1, C₃
F. K. Dörner and T. A. Goell, Arsamela am Nymphaios. Berlin, 1963, pl. 67, 5.
108



Նկ. 36. 1—13—արեւելյան դամբարանադաշտից

Դրանք մասամբ հելլենիստական և նախորդ շրջաններից եկող, ավանդական ձևերի շարունակությունն ու յարգացումն են, մասամբ էլ երևան են գալիս նոր ձևեր՝ հումեական շրջանի խեցեղենի ազդեցությունը: Մ. թ. առաջին դարերում, Հայաստանում, ինչդեռ Արաաշատի պեղումներն են ցույց տալիս, նկատելիորեն ավելանում է ներմուծված խեցեղենի քանակը, որը արդյունք է սոեարաանտեսական կապերի ընդլայնման և Հայաստանի քաղաքական ու անասական դերի աճման, որը սկսվել էր դեռևս Արաաշատյանների ժամանակ և շարունակվում էր Արշակունիների օրոք: Հելլենիստական շրջանում սկսված առհասարակությամբ վերելքը բուն ձևով շարունակվում է մ. թ. առաջին դարերում: Այս շրջանի խեցեղեն սրաաղբանքը հիմնականում պատրաստված է դուրզի վրա: Դուրզի անիվը լայն հնարավորություն է սանդղծում մասսայական արաաղբության համար, բարձրացնում արաաղբանքի որակը: Այն պահանջում է ավելի մանրահատիկ, լավ հունցած կավ, կավանսթների խեցին ավելի բարակ է լինում, բարձրանում է թրծման որտիլը՝ այն դառնում է հավասար¹, Անոթների մի մասի փայլեցումը կատարվում է դուրզի վրա, որը, նույնպես, արաաղբանքում է արաաղբության ընթացքը:

Մ. թ. առաջին դարերի խեցեղենի մեջ ուշադրավ են տափակ, ցածր եզրերով ափսեններն ու սկուտեղները, որոնք իրարից միայն չափերով են տարբերվում: Այդպիսի անոթների թիվը բավական մեծ է: Դրանք հայտնաբերվել են արևելյան, հարավարևելյան (տախտ. XIV, 1-7, նկ. 7, 12, 13, 15, 16, 16, 37, 8, 9, 47, 8, դամբ. № 12, 13, 21, 24, 27, 30, 40, 42, 45) և արևմրտյան (դամբ. № 69) դամբարաններից ու դամբարանադաշտերից:

Ափսեններն ու սկուտեղները պատրաստված են դուրզի վրա և ունեն օղակաձև ցածր ոտք, ուղղահայաց ցածր եզրեր, որոնք դրսից լինում են քիչ կլորավուն, ներսից՝ թեթև թեթևությամբ: Մակերեսները պատած են դաբլնագույն ու կարմրավուն անդորով, որը լինում է երբեմն անհավասար քսած, ուստի տակից երևում է անոթի ավելի բաց գույնի մեկերեսը: Փայլեցումը կատարված է դուրզի վրա, խնամքով:

Սկուտեղները ներսից, երբեմն նաև դրսից, հատակին ունենում են, նախքան թրծելը, սեղմելու միջոցով արված, 3—6 զծերից կաղմված, համակենտրոն շրջաններ: Ափսենների պսակի տրամագիծն է 16—20 սմ, բարձրությունը՝ 2,5—4 սմ, հասակի արամագիծը՝ 7—8 սմ, Սկուտեղներինը՝ պսակի տր.՝ 28—42 սմ, բարձրությունը՝ 3,5—5 սմ, օղակաձև ոտքերի տրամագիծը՝ 14—32 սմ:

Ափսեններ և սկուտեղներ շատ են հայտնաբերվել նաև Արաաշատի բլուրների մ. թ. I—II դարերի շերտերից²: Այդպիսի ափսեններ և սկուտեղներ դանվել են նաև Գառնիից³, որոնք նույնպես թվադրվում են մ. թ. I—II դարերով, Դվինից⁴, որը, դատելով համեմատական նյութից, կարող է վերաբերել մ. թ. I դարին:

¹ Փ. Մ. Կեր-Մարտիրոսով, Античные печи из раскопок Арташата, ВОН, 1975, № 7, стр. 83—84.

² Վ. Գ. Կապուրյան, Ա. Գ. Կանեցյան, նյս. աշխ., էջ 82 և հտ., տախտ. II 10—13 15, 20:

³ «Гарни», I, стр. 41, рис. 28 (տե՛ս նաև ԳԳԹ №, 1967(37):

⁴ Գ. Քաչարյան, նշվ. աշխ., էջ 91—92:

Ափսեաներն ու սկուտեղները գալիս են դեռևս հելլենիստական շրջանից, ևրր դրանք քիչ ավելի թեք կողեր ունեին և ավելի խորն էին: Իսկ այն ձեռով, ինչպես հանդիպում են մեզ մատ, ավելի բնորոշ են հռոմեական շրջանին: Այդպիսիք պարաստվում են սչ միայն ըստ Խտալիայում, այլև փոքրասիական կենտրոններում: Գեղնավուն կավից պարաստված ներմուծված սկուտեղների բեկորներ, կարմիր և մուգ կարմիր լաքով պատած, հայտնաբերվել են Արաաշատի⁵ I, VII, VIII բլուրներից, դամբարանադաշտերից և Գառնիից: Այդպիսի ափսեաներ և սկուտեղներ գտնվել են Աթենքի ադորայից⁶ (մ. թ. ա. II—մ. թ. I դդ.) Անտիոքից⁷ «Պերգամոնյան» (մ. թ. ա. II դ. վերջ մինչև օգոստոսյան շրջանի վերջ), Միրմեկիայից⁸, որը համարվում է փոքրասիական (մ. թ. I դ. կեսեր), Կեպիից⁹ (մ. թ. I—II դդ.), Ցանագորիայից¹⁰ (մ. թ. ա. I—մ. թ. II դդ.) և այլ վայրերից¹¹:

Արաաշատից հայտնաբերված սկուտեղներն ու ափսեաները փոքրասիական կենտրոններից ներմուծված հռոմեական կարմիր լաքավոր խեցեղենի ընդօրինակութունն են: Չնայած դրանք հռոմեական խեցեղենի նրորութունն ու որակը չունեն և պատած չեն լաքով, սակայն իբենց մշակվածությամբ մ. թ. I—II դարերի Հայաստանի խեցեղենի լավագույն օրինակներից են: Արաաշատի սլեղամները վկայում են, որ դրանք մեզ մոտ հանդես են գալիս մ. թ. I դ. սկզբներից և հարատևում են մինչև II դարի վերջը: Արաաշատի դամբարաններից հայտնաբերված խեցեղենի մի մասը, ինչպես № 24, 40, 45 դամբարաններից գտնվածներն են, հարակից մյուս նյութերով թվագրվում են մ. թ. I դարով, իսկ մյուսները՝ I—II դարերով: Իսկ վերաբերում է համեմատարար խորը ափսեաներին (հարավարևմտյան, դամբ. № 30, արևմայան, դամբ. № 69), չնայած իրենց հնատիպության, պետք է համարվեն I—II դարերի ափսեաների տարածեցումներ:

Նույն մշակումն ունեն նաև ձևավոր պսակով և օղակաձև ոտքով ափսեաները (նկ. 7, 8, 12, 8, 35, 8, 37, 8), որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվել են Արաաշատի VIII բլրի մ. թ. I—II դարերի շերակերից¹²: Սրանք իրենց նախատիպերն ունեն Արմավիրից և Արսուշատից գտնված մ. թ. ա. II—I դարերի դունազարդ ափսեաների թվում: Այդպիսիք հանդիպում են նաև «Պերգա-

⁵ Ժ. Գ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. աշխ., էջ 83, տախտ. II_{9,14}

⁶ H. S. Robinson, Pottery of the Roman Period, Chronology, The Athenian agora, vol. V, Princeton, 1959, pl. 1, F1; pl. 60, F1; pl. 62, F27.

⁷ F. O. Waage, Antioch on-the-Orontes, IV, Ceramics and Islamic coins. Princeton, 1948, pl. III, 122k, 124f, pl. IV, 126g, 126k.


⁸ T. H. Кипович, Краснолаковая керамика первых веков н. э., МИА, 25, М., 1952, стр. 298, рис. 2, 4, 4в.

⁹ Э. Я. Николаева, Раскопки городища Кепы в 1964 г., КСИИ, вып. 109, 1967, стр. 98, рис. 36, 13.

¹⁰ И. Д. Марченко, Раскопки восточного некрополя Фанагории в 1950—1951 гг., стр. 120, рис. 4, 11.

¹¹ F. K. Dörner und Theresa Goell, նշվ. աշխ., տախտ. 67, 10.

¹² Ժ. Գ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. աշխ., էջ 83, տախտ. II_{16—19}



Նկ. 37. 1—15—արևելյան դամբարանադաշտից

մոնյան» ուշ հելլենիստական կարմիր խեցեղենի¹³ մեջ: Հոռոմեական¹⁴ կարմիր լաքով պատած խեցեղենի մեջ ևս այս ձևը հանդիպում է (մ. թ. ա. I—մ. թ. II դդ.): Հետևարար, սյետք է ննթադրել, որ անդական ձևերն հարստացվել են ներմուծված խեցեղենի առանձին դժերով:

Նույն մշակումն ունի նաև Արտաշատի VIII րլրի վրա կարասային թաղու- մից գտնված քրեղանը (տախտ. XIII, 1, նկ. 51, 9): Այն հիշեցնում է փիալաները, սակայն իրանից վզին անցումը փիալաների նման շեշտված չէ, ունի օղակաձև ոտք (պս. տր. 16, 4 սմ, բարձր. 6, 4 սմ, հատ. տր. 7 սմ): Պատրաստված և փայլեցված է դուրզի վրա, մակերեսը պատած է կարմիր անդորով: Նման քրեղան գտնվել է Արտաշատի VIII րլրի I—II դդ. շերտերից (1973 թ. № 995), որն իր ձևով հելլենիստական շրջանի փիալաների հետագա դարգացումն է: Սակայն այդ ձևը ընդհանուր է նաև մ. թ. I—II դարերի հոռոմեական կարմիր լաքով պատած խեցեղենին:

Այգպիսի քրեղան է գտնվել Կերշի թերակղզուց¹⁵ և թվագրվում է մ. թ. I—II դարերով:

Ուշագրավ է, որ մեր քրեղանն էլ հայանարեղվել է Տրայանոս կայսեր 98—99 թթ. Կապադովկիան Կեսարիայում կտրած արժաթյա գրամի հետ:

Արաշատի դամբարաններից մենք ունենք մի քանի ընկորներ, որոնք առանձին օրինակներ են և չեն միանում ոչ մի իմրի: Դրանցից մեկը հարավ-արևելյան դամբարանադաշտից գտնված (նկ. 5, 3, դամբ. № 12) այլ տիպի քրեղանի ընկոր է: Այն պատրաստված է դուրզի վրա, ունի գուրս լայնացող կլորավուն պսակ, ներձկված վիզ, պատած է դարչնագույն անգորով և լավ փայլեցված է: Այս քրեղանը ձայնակցում է ուրարական անոթների հետ և իր նախատիպերն ունի հելլենիստական շրջանի Արտաշատի թասերի և Արմավիրի¹⁶ քրեղանների մեջ: Արտաշատի թասը դրանց հետագա զարգացումն է: Այն հարակից նյութերով թվագրվում է մ. թ. I դարով:


Հեռաքրքիր և մեծ խուսը են կաղմում թասերը, որոնք տարրեր ձևեր, շա- փեր ու մշակում ունեն: Թասերի մի տեսակն ունի աստիճանաբար կլորավուն վեր բարձրացող իրան, որն ավարտվում է ներս թեքված պսակով և հենված է օղակաձև ոտքի վրա (նկ. 35, 3, արևելյան դամբարանադաշտ, № 114, 115, դամբ. № 4, հարավարևելյան դամբարանադաշտ, նկ. 20, 9, 10, 21, 4, 31, 7, դամբ. № 40, 46 և այլն, բարձր. 7—8 սմ, պս. տր. 17—18 սմ, հատ. տր. 8—9 սմ): Պատրաստված են թուփ, մուգ դարչնագույն ավադախառն կավերից: Ունեն դեղնականաչավուն, անգորով պատած, փայլեցրած և անփայլ մակերես:

¹³ Antioch on-the-Orontes, IV, p. 4—6, pi. IV, ¹³⁷ FP; Homer A. Thompson, Two centuries of Hellenistic pottery, Hesperia, vol. III, Athens, 1934, Fig. 83, E₂₃, 116. D₁; H. Goldman, Excavations at Gözlu Kule, Tarsus, vol. I, The Hellenistic and Roman Periods, Princeton, New Jersey, 1950, 188, 252.

¹⁴ H. S. Robinson, նշվ. աշխ., տախտ. 60, F5; Э. Я. Николаева, նշվ. աշխ., էջ 98, նկ. 36, ¹⁵:

¹⁵ В. Ф. Гаўдукевич, Некрополи некоторых Боспорских городов, стр. 209, рис. 71.

¹⁶ Г. А. Тирациян, Древнеармянская керамика из раскопок Армавира, стр. 220, табл. I в.



Նկ. 38. 1—10—արևելյան դամբարանադաշտից

Թասերի մյուս խումբը նախորդներից տարբերվում է ավելի կլորավուն իրանով և խորությամբ (տախա. XIII, 2, 3, 4, նկ. 10, 18, 19, 11, 12, 30, 31, 39, 12), պատրաստված են դուրզի վրա, մի մասն ունի դեղնականաչավուն անդոր և անփայլ է, իսկ մյուսը պատած է դարչնագույն և կարմիր անգորով ու դուրզի վրա շատ լավ փայլեցված է: Այս թասերը երբեմն ունենում են ներսում, հատակն ընդգծող, երկու ակոսավոր շրջանադժեր (հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 19, 23, 24, 36, 40, 43, 46, 48, 54, 56, 57, 134, բարձր. 8—10 սմ, պս. տր. 12—25 սմ, հատ. տր. 4, 4—9 սմ):

Մյուսներն ունեն ավելի ուղղահայաց կողեր (նկ. 5, 9, 10, 6, 23, 8, 29, 6, հարավարևելյան դամբարանադաշտ. դամբ. № 12, 19, 33, 40, 44, 45, արևելյան դամբարանադաշտ, № 139): Դարչնագույն և կարմրավուն անդորով պատած դուրզի վրա փայլեցված այս թասերը նույն մշակումն ունեն, ինչ որ վերոհիշյալ սկուաեղները, ափսեները, սափորները, շրամանները և այլն, որոնք պատրաստված են հոսմեական կարմիր լաքով պատած խեցեղենի օրինակով: Այս թասերն իրենց նախատիպերն ունեն վաղ հայկական և, հատկապես, հելլենիստական խեցեղենի մեջ, միայն որոշ փոփոխություն են կրել օղակաձև ոտքերի և արտաքին մշակման մեջ: Վերջինս արդյունք է հարևան փոքրասիական երկրներից ներմուծված, հոսմեական շրջանի խեցեղենի ազդեցության, որոնցից շատ են հայտնաբերվել Արտաշատի I, VII և VIII բլուրներից, հատկապես մ. թ. I—II դարերի շերտերից:

Այգօրինակ թասեր դտնվել են նաև Գաննիի I—II դարերի շերտերից ու դամբարաններից¹⁷:

Այս խմբի թասերի հաճախակի դյուտերը¹⁸ պեղումներից, մ. թ. I—II դարերով թվագրվող շերտերից, վկայում են դրանց ապրածված լինելը: Մեր թասերը աղբյուրվում են նաև հոսմեական շրջանի անոթների հետ: Իլուրատում¹⁹, օրինակ, իրենց տարատեսակներով դրանք շատ են ապրածված եղել: Սկյուֆական նեպալում գտնված նման թասերը համարվում են ներմուծված Փոքր Ասիայից, Օլվիայից կամ հերսոնեսից. դիտվում են որպես հելլենիստական խեցեղենի տարատեսակներ, և թվագրվում են մ. թ. ա. II—I դարերով, իսկ մյուսները մ. թ. I դարից ոչ ուշ²⁰: Ալդպիսի թասերն ունեցել են լոյն տարածում և գտնվել են Օլվիայից²¹, Միրմեկիայից²², որոնք թվագրվում են I դ. վերջով—II դարով: Դրանք քրշ ավելի հաստ պատեր ունեն, և կոպիտ սշակում: Այդ-

¹⁷ «Гарни», II, стр. 51, рис. 20.

¹⁸ Բ. Գ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեգյան, նշվ. աշխ., տախտ. II, 24.

¹⁹ Л. Ф. Силантеева, Краснолаковая керамика из раскопок Илурата, МИА, № 85, Л., 1958, стр. 287—288, рис. 4, 1.

²⁰ Н. Н. Погребова, Погребения в Мавзолея Неаполя Скифского, стр. 112, рис. 13, 4, 22, 3, 30, 7, 34, 1.

²¹ Т. Книпович, Untersuchungen zur Keramik römischer Zeit aus den Griechenstädten an der Nord Küste des Schwarzen Meeres, I. Die Keramik römischer Zeit aus Olbia in der Sammlung der Ermitage. Materialien zur römisch-Germanischen Keramik, IV, 1922, taf. II, 32 c.

²² Т. Н. Книпович, նշվ. աշխ., էջ 303, նկ. 3, 6 (тип 14М).

պիսի թասեր են գտնվել նաև Պերգամոնից²³, Տարսուսից²⁴, Աթենքի²⁵ ազորա-
յից և այլ վայրերից²⁶, Այն հանդիպում է նաև «աերա սիգիլատա»²⁷ («terra
sigillata») կոչվող խեցեղենի մեջ:

Արտաշատի թասերը, նույն գտմարաններից, ինչպես նաև VIII դրից
գանված դուզահեռ նյութերով, թվագրվում են մ. թ. I—II դարերով:

Հաջորդ խումրը կիսագնդաձև թասերն են, որոնք դատած են մեծ մա-
սամր զեղնականաչավուն, երբեմն էլ շագանակագույն անգորով, նրբախեցի
են, պատրաստված դարչնագույն մանրահատիկ կավից, դուրդի վրա, մակե-
րեսներն անփայլ են:

Սրանք դրեթե բոլորն էլ զրսից, վերին մասում, ունեն մեկ կամ երկու գծե-
րից կազմված փորագիր գոտիներ (տր. շՅ—16, բարձր. 8—9 սմ, նկ. 14, 17, 6, 17, 14, 5, 33, 1, հարավարևելյան գամրարանադաշտ, դամբ. № 19, 25, 32, 34, 50): Նման թասեր շատ են հայանարերվել նաև I, VII և VIII դուրերից մ. թ. ա.
I դարի վերջին, մ. թ. I—II դարերին վերաբերող շերտերից: Դժբախտարար,
թասերից ոչ մեկը ամրողչական չէ, բայց, ամենայն հավանականությամբ,
դրանց մի մասն օղակաձև ութ է ունեցել: Արտաշատի VII—VIII դուրերից
նման ներմուծված անոթների մասեր շատ են հայտնարերվել²⁸: Դրանք խեցեղենի
ամենատարածված օրինակներից են և տեղական, հելլենիստական, կիսագնդաձև
թասերի հեաագա դարդացումն են՝ իրենց մշակումով շատ ընդորոշ մ. թ. I—II
դարերի խեցեղենին: Ասկայն հիշյալ թասերը նույնպես աղերսվում են հոռ-
մեական կարմիր լաքով պատած խեցեղենի հեա: Իրենց կառուցվածքով մոտ
են Չանգարուկի (Փոքր Ասիա)²⁹ № 20 աիպին, Սամոս կղզուց³⁰, մերձսևծովյան
քաղաքներ Իլուրատից և Պանտիկապոնից (մ. թ. I դ. վերջ) գտնված, Պեր-
գամոնից ներմուծված և Աթենքի³² ազորայից գանված, հոռմեական շրջանի
թասերին:

Հեաաքրքիր է, որ Արաշատի թասերից երկուսը հարգարված են նաև
փորադիր ղոաուց դեպի հատակն իջնող ակոսավոր ժապավեններով (նկ. 10, 1,
41, 7, դամբ. № 19), որը նույնպես թաց վիճակում է արված, սուր գործիքի
օգնությամբ: Դրանց ծայրերը տարրեր երկարություն ունեն: Մենք ճիշտ այդ-
պիսի թասերի բեկորներ ունենք Արտաշատի VII և VIII դուրերից: Հայանա-
րերվել են նաև նման հարգարանքով տարրեր անոթների մասեր, ինչպես նաև
ջնարակած մի թասի շրթի բեկոր: Անշուշտ, սրանք ընդօրինակված են մետաղ-

²³ Altertümer von Pergamon, I, II, S. 236, Abb. 61, 10, S. 269, № 16.

²⁴ H. Goldman, նշվ. աշխ., տախտ. 193, № 399, 197, № 612.

²⁵ H. S. Robinson, նշվ. աշխ., տախտ. 1, 8, 9, տախ. 8, H12, pl. 13, K51.

²⁶ W. Orthman, նշվ. աշխ., նկ. 21, 3-5.

²⁷ F. Oswald and T. Pryce, Terra Sigillata, London, 1966, pl. LXIII, 1, 11.





²⁸ Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. աշխ., էջ 83, 84, տախտ. II, 261.

²⁹ S. Loeschcke, Stgillata Töpferelen in Tschandarli, MDAI, XXXVI, 1912, taf. XXVIII, 21.

³⁰ W. Technau, Griechische Keramik in Samischen Heralon, MDAI, LIV, 1929, S. 49, Abb. 39.

³¹ Л. Ф. Силактьева, նշվ. աշխ., նկ. 2, 2, 4, 2, էջ 288.

³² H. S. Robinson, նշվ. աշխ., տախտ. 1, F8—10, 4, g76, g1, g40.



Նկ. 39. 1—13—ւրենլյան դամբարանադաշտից

յա անոթներից, սակտյն, ամենայն հավանականությամբ, այո հարցում որոշակի դեր են խաղացել նաև հորիզոնական և ուղղահայաց առեակոսներով, կաշապարի մեջ փչելու եղանակով պատրաստված ապակյա որվակները, որոնք I—II դարերում լայն տարածում ունեին: Խեցեգործության մեջ այն տարածում սացավ մ. թ. II դարի վերջերից սկսած:

Հնաաքրքիր խումբ են կազմում հարավարևելյան դամբարանադաշտից դանված թաս-փիալաները: Սրանք իրարից քիչ ատրերվում են ոլսակների ձևերով, հարդսրանքով:

Թաս-փիալաներից առաջինը (դամբ. N 12, բարձր. ≈ 5 սմ, օգս. տր. ≈ 11 սմ) ունի ցածր իրան, աղեղնաձև, ներձկված վիղ, որն ավարտվում է գուրս լայնացող եռանկյունաձև պսակով (նկ. 4, 15): Պարաստված է դարչնադույն նրրախեցի կավից, դուրզի վրա: Ներսից պատած է կարմիր, դրսից՝ անփուլթ քսած, անփայլ անգորով: Երկրորդ թասը նախորդից ասրբերվում է ավելի լայն պսակով, որը կողքից ունի ալսստվոր ղստի, իրանի սահուն անցում: Պահպանվել է նաև վերջինիս օղակաձև ոտքը: Ներսից հատակն անջատված է զույգ փորադիր շրջանով (նկ. 32, 7, դամբ. N 56, բարձր. 5,1 սմ, օգս. տր. 11,6 սմ, հատ. տր. 4,6 սմ):

Մյուս թասերը, որոնց վերին մասի բեկորներն են պահպանվել, չափերով քիչ ավելի մեծ են, ունեն դուրս թեքված աղեղնաձև պսակներ, մեկը վրալից ուռուցիկ և ներսից ալսստվոր գոտի ունի և տարբերվում է իր կարմիր փալեցրած մակերեսով (նկ. 7, 7, 37, 11, դամբ. N 13, օգս. տր. 18 սմ): Մյուսներն ուղղակի ներսից, պսակի աղեղնաձև մասում, ունեն զույգ ալսստվոր գոտի, որով պսակն անջատվում է իրանից (նկ. 23, 7, 31, 2, դամբ. N 19, 40, 46, օգս. տր. 15—16 սմ):

Խեցեղեն այս անոթները շատ են հանդիպում³³ հարևան հելլենիստական երկրների արտադրանքի մեջ, հատկապես Պերդամոնում, Պրիենայում³⁴ նման թասեր հանդիպում են մ. թ. ա. II դարից, իսկ Օլվիայում և Սկյութական Նեպոլում³⁵ մ. թ. ա. I դարից: Հայաստանում մենք հելլենիստական խեցեղենի մեջ այդպիսի ձևեր չունենք: Սակայն այս թասերը մասսայաբար հանդիպում են հոմեոսական շրջանի խեցեղենի մեջ՝ Ասարչիկ շուրուրից³⁶, Տարսուսից³⁷, Աթենքի Ագորայից³⁸, Բոսֆորից³⁹ (մ. թ. II—III դդ.): Այդպիսի թասեր կան պար-

³³ Jörg Schäfer, *նշվ. աշխ.*, էջ 35—37, տախ. 3, c5, 7—10; David and Joan Oates, *նշվ. աշխ.*, տախ. XXIII 8—11; H. Goldman, *նշվ. աշխ.*, էջ 172, նկ. 189, E.

³⁴ Th. Wiegand und Hans Schrader, Priene, Berlin, 1904, S. 424, taf. 541, 1.

³⁵ Б. В. Фармаковский, Раскопки некрополя древней Ольвии в 1901 г., ИАК, вып. 8, 1903, табл. V, 24; Н. Н. Погребова, Погребения в Мавзолее Неаполя Скифского, стр. 112, рис. 30, а.

³⁶ W. Orthman, *նշվ. աշխ.*, էջ 46, նկ. 22, 2, 7.

³⁷ H. Goldman, *նշվ. աշխ.*, նկ. 195, 532. նկ. 204, 779, 780.

³⁸ H. S. Robinson, *նշվ. աշխ.*, տախ. 5 g65, տախ. 13.K53, տախ. 60, F12, 14, տախ. 66, g53, 65.

³⁹ Н. З. Кукина и Н. П. Сорокина, Стекланные бальзамарии Боспора, ТГЭ, XIII, Л., 1972, рис. 9, 54.

թևական, Մերվի⁴⁰, Տիգրիսի վրայի Սելևկիայի⁴¹, Ուրուկի⁴² հասարակ և ջնարակած խեցեղենի մեջ: Դրանք աղերսվում են Բրիտանական⁴³ թանգարանում պահվող տերա սիգիլատա («terra sigillata») կոչվող խեցեղեն թասերի և հռոմեական խեցեղենի հետ: Հեռավոր նմանություն սնեցող թասեր են հայանարերվել նաև Սուխումի⁴⁴ հին սմրոցից:

Նման թասեր կան Արաաշատի VII և VIII բյուրների I—II դարերի շերտերից: Այսինքն, այդ թասերը հստակ դալույ մ. թ. ա. և մ. թ. I դարերի սահմանադրված, հարատեում են մինչև III դ. սկիզբը:

Դրանք կարելի է ասել, որ պատրաստված են հռոմեական ներմուծված խեցեղենի օրինակով: Դժարախտարար, նման թասեր Հայաստանի այլ հնավայրերից մեղ հայանի չեն, որը հնարավորություն կաար սվելի ճիշա որոշելու նրանց աղերսները:

Հետաքրքրության արժանի են ձկան ափսեները: Դրանց փուլած, քիչ թեք կողերը ներքև կախած պսակ ունեն, ներսից հատակին փոսիկ է արված, որն անջատված է ուղիղ օղակով: Մի մասն ունի օղակաձև ուռ, մյուսները՝ քիչ արտահայտված հարթ հասակ (նկ. 3,4, 5,10, 8,11, 9,3, 15,3, 22,5, 33,11, հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 12, 17, 27, 32, 40, 48): Պարաստված են դուրդի վրա, մակերեսները պատած են անփայլ դեղնականաչավուն, երբեմն անփուլթ, ծորացրած կամ կետերով արած կարմիր անդրով: Ձկան ափսեները Հայաստանում հանդես են ղալիս մ. թ. ա. II դարից սկսած և հանդիսանում են Արաաշատի խեցեղենի ընդհանուր տարածված ձևերից մեկը: Գունավոր զեղեցիկ ղորդերով հարդարված, փայլեցրած և անփայլ, վերահիշյալների նման մեծ թվով ձկան ափսեներ են հայանարերվել Արաաշատի բյուրների պեղումներից: Արմավիրի⁴⁵ ընկողը ծածկված է բաց շագանակագույն փայլեցրած անգուրով: Դրանք հունական աշխարհում լայնորեն արածված ձկան ափսեների ընդօրինակությունն են: Ձկան ափսեների առկայությունը դամբարաններում ենթադրել է տալիս, որ հոգեհացի ժամանակ զոհարերվել են նաև ձկներ, որը սովորական էր հունական աշխարհում և դաղութներում: Ձկան ափսեները գոյաակել են մինչև III դարի վերջը, որից հետո այլևս չեն հանդիպում:

Ուշադրության արժանի է VIII բյուրի վրա կարասային թաղումից գտնված դնդաձև իրանով դավաթը (տախա. XIV,5, նկ. 51,5): Այն ունի ներծկված փոքր կլոր կանթ, որն ամրացված է վերին մասում: Մակերեսը պատած է կարմիր անդրով և դուրդի վրա լավ փայլեցված է:

⁴⁰ Л. М. Рутковская, Парфянская керамика древнего Мерва, СА, 1958, № 3, стр. 131, рис. 4, 40.


⁴¹ W. C. Debevoise, Parthian Pottery from Seleucia on the Tigris, Michigan, 1934, № 209.

⁴² E. Strommenger, Gefasse aus Uruk von der Neubabylonischen Zeit Bis zu den Sasaniden, Berlin, 1967, T. 7,5.

⁴³ F. Oswald and T. D. Pryce, Terra Sigillata, p. 195, pl. LV4,17; H. B. Walters, M.A., F.S.A., Catalogue of the Roman in the Departments of Antiquities British Museum, pl. XLII,35, pl. XLII,35, pl. XLIII,46,49, pl. XLIV,78,81.

⁴⁴ P. В. Пугуридзе, Краснолаковая керамика из Сухумской древней крепости, МАГК, IV, Тбилиси, 1965, стр. 98, рис. 4.

⁴⁵ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, էջ 176:



Նկ. 40. 1—2.—հարավարևելյան դամբարանադաշտից, 3—8—արևելյան դամբարանադաշտից

Գնդաձև միկանթանի դավաթները գալիս են դեռևս երկաթի լայն տարածման շրջանից:

Այդօրինակ դավաթներ հանդիպում են նաև հելլենիստական շրջանում ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում⁴⁶ և Աղբրեջանում, սակայն դրանք լայն տարածում են ստանում մ.թ. առաջին դարերում: Նման դավաթներ շատ են հայտնաբերվել Գառնիի I—II դարերի դամբարաններից⁴⁷, Կամոյից, Արտաշատից, սակայն օգտակալ ուղեքով և այդպիսի մշակումով դավաթ առաջին անգամն է հանդիպում Հայաստանում:

Արաաշատի դավաթը, նույն դամբարանում գտնված դրամներով, ապակյա սրվակներով ու ամֆորայով, թվադրվում է մ.թ. I դարի վերջով և II դարի սկզբով:

Ուշագրություն արժանի է դնդաձև ջրամանների խումբը, որը նույնպես կարմիր անգորով է պատած և դուրզի վրա փայլեցրած Ռոլորն էլ դանվել են Արեմտյան դամբարանադաշտից (տախա. VII_{3,4}, VIII₂, նկ. 42, 45, 1, 46, 1, 3, դամբ. № 58, 62, 67, 68): Հեաաքքիթ է սրանց պատրաստման եղանակը, Յուրաքանչյուր կեսը առանձին, դուրզի վրա պատրաստելուց հետո միացրել են իրար, ուստի դրանք իրանը երկու կողմի վրա փոքր-ինչ ձգված, ձվաձև աեսք է ստացել: Վիզը և կանթերը նույնպես լաարաստվել են առանձին և թաց վիճակում անցքեր բանալով միացրել (պահպ. մասի բարձր. 22—24,5 սմ): Նրանք ունեն ցածր վիզ: Երկայնքով ներձկված շրջանաձև կանթերն ամրացված են ջրամանների վերին մասում, ուսերին մոտ, բացառությամբ մեկի: Վերջինիս կանթը համաբյա եռանկյունաձև կտրվածք ունի, իսկ վերին մասը նույն ձևով հարթեցված է (տախա. VIII₂, նկ. 46, 1): Այն ջաա է հիշեցնում վաղ բրոնզի շրջանի խեցեղեն անոթների կանթերը:


Այս խմբին կարելի է միացնել նաև № 67 դամբարանից գտնված ձեռքով պատրաստված աափաշիշը, որը երկու կողմից սեղմված է, ունի ուսերին հենված վերոհիշյալ ջրամաններին նման կանթեր, և շափերով, ձևով ու մշակումով ավելի հիշեցնում է հելլենիստական շրջանի տափաշիշը (նկ. 46, 1): Մակերեսը պաաած է դեղնականաչավուն անդորով, որը թրծելիս աեղ-աեղ կարմիր գույն է ստացել: Փայլեցված է (պահպ. մասի բարձր. 16, 4 ու):

Վերոհիշյալ դնդաձև ջրամաններն իրենց ղուղահեռներն ունեն Արաաշատի VIII բլրի պեղումներից հայտնաբերված նյութերի մեջ (1974 թ., № 17, 1975 թ., № 27): Նման մի ջրաման հայտնի է Աղիղբեկովի շրջանի Մարաիբոս դյուղից (տախա. XVI₂, բարձր. 19 սմ), որի մակերեսը ևս կարմիր է, փայլեցրած (մ.թ. ա. I դ. երկրորդ կես):

Տափաշիշը, որոնք իրենց աարաաեսակներով լայնորեն տարածված էին Հայաստանում՝ հելլենիստական շրջանում, մ.թ. առաջին դարերում իրատ պակասում են: Դրանք այս շրջանում կորցնում են իրենց կողերի տափա.կու.թյունը և ստանում գնդաձև տեսք: № 67 դամբարանի տափաշիշը կարելի է

⁴⁶ Н. И. Матуашвили, Местная керамика эллинистической эпохи из Вани, МАГК, V, Тб., 1973, табл. 1, а.

⁴⁷ «Гарни», II, рис. 17, табл. IX, XI; «Гарни», V, стр. 41; Г. А. Тирацян, Опыт периодизации истории материальной культуры древней Армении (VI в. до н. э.—III в. н. э.), ИАН, 1957, № 2, стр. 86.



Նկ. 41. 1-9—արեւիյան դամբարանադաշտից

համարել հելլենիստական շրջանի տափաշշերի վերջին նմուշներից մեկը և թվագրել մ. թ. ա. I դ. վերջով—մ. թ. I դ. առաջին կեսով:

Գնդաձև ջրամանների ամենահին օրինակները վերաբերում են ուշ հելլենիստական շրջանին: Այդպիսի ջրամաններ են հայանարերվել Արմավիրից, Արտաշատից. Միսիանի իշխանական դամբարանից (մ. թ. ա. I դ.):

Արտաշատի գնդաձև ջրամաններն իրենց ձևով, պատրաստման ընտրող նշանակով, մշակումով ու կանթերով, ինչպես նաև հարակից նյութերով թվագրվում են մ. թ. I—II դարերով: № 58 դամբարանում, ջրամանի հեռ միասին, դանվել են նաև ապակյա ձվաձև իրանով տեղական երկու սրվակ մ. թ. I—II դդ. թվագրվող: Մ. թ. I—II դարերին պատկանող շերտերից են գտնվել նաև Արտաշատի VIII բլրի ջրամանները, Հայաստանում մ. թ. II դարից հետո թվագրվող ջրամաններ առայժմ հայանի շեն: Մինչդեռ Մերվում դրանք երեան են դալիս մ. թ. II—III դարերում⁴⁸:

Կարմիր փայլեցրած խեցեղենի թվին է պատկանում նաև IX բլրի հյուսիսարևելյան լանջի կարասային մի թաղումից գտնված (1970 թ., № 51) փոքրիկ պուլիկը, որը պատրաստված է դուրզի վրա: Իրանը գրեթե գնդաձև է, ցածրադիր վիղն ավարտվում է դեպի դուրս ու փօր լայնացող ուղիղ պուսկով, ունի օղակաձև ոտք (նկ. 47,5): Մակերեսը պատած է կարմիր անդորով և լավ փայլեցրած է (բարձր. 8 սմ, պս. տր. 5 սմ, հատ. տր. 4 սմ): Այս պուլիկների նախատիպերը հանդիպում են դեռևս II հաղարամյակի խեցեղենի մեջ, բայց Արտաշատի պուլիկն իր մշակումով ու ձևով հիշեցնում է հելլենիստական շրջանի խեցեղենի անոթները⁴⁹, նրա պսակի ձևը բնորոշ է ուշ հելլենիստական խեցեղենին, սակայն օղակաձև կենարոնում թումբ ունեցող ոտքը և մակերեսի մշակումը բնորոշ է մ. թ. առաջին դարերի խեցեղենին: Այն վկայում է, որ հելլենիստական խեցեղենի ավանդույթները շարունակվել են նաև I—II դարերում: Արտաշատի պուլիկը ձայնակցում է Լիճքում⁵⁰ գտնված օրինակին (մ. թ. I դարի վերջ—II դարի սկիզբ):

Ձևով ու մշակումով խեցեղեն մյուս անոթներից առանձնանում են մեկ և երկու կանթով սափորները: Դրանցից երկուսի իրաններն (աախա. XV, 1, 1, նկ. 13,2, 14,1, 20,4, հարավարևելյան դամբարանադաշտ, դամբ. № 24, 39) ունեն սեղմված գնդի ձև, դեպի վիղը սահուն անցումով, որն ավարտվում է դուրս լայնացող հորիզոնական պսակով: Երկայնքով ներձկված երկու կլոր կանթերը հանգում են ուսերին, հատակը թերի է: Հավանաբար ունեցել են օղակաձև ոտք (պահպ. մասի բարձր. 17, 4 սմ, պս. ար. 7, 4 սմ): Պատրաստված են դուրդի վրա, դարձնազույն, սպիտակ ավազախառնուրդով մանրահատիկ կավից, մակերեսը պատած է կարմիր անգորով և փայլեցրած է: Սրանք իրենց կանթերով, պսակով ու մշակումով հիշեցնում են վերոհիշյալ գնդաձև

⁴⁸ Դ. Մ. Рутковская. Парфянская керамика древнего Мерва. СА, № 3, 1958, стр. 129, рис. 4, 41.

⁴⁹ Փ. Դ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ, էջ 265, աախա. II, 4, Տե՛ս նաև Արտաշատի I բլրի նյութերը:

⁵⁰ Փ. Դ. Խաչատրյան, Անտիկ դամբարան Լիճքում, էջ 270, նկ. 4:

չրամանները, նման սափորի բեկորներ գտնվել են Արտաշատի VIII րլրի մ. թ. I—II դարերի շերտերից (1974 թ., № 17): Այն հեռավոր նմանություն ունի Ֆանադորիայի⁵¹ արևելյան դամբարանադաշտից գտնված կրկկանթանի, կարմիր լաքով պատած. սափորի հետ, որը չափերով էլ բավականին մոտ է:

Այս անոթներին որոշակի նմանություն ունեն հարավարևելյան (դամբ. № 43) և արևմտյան դամբարանադաշտերից (դամբ. № 60) գտնված սափորները (վզերը թեքի): Սրանք տարբերվում են իրենց քիչ ձգված իրանով և կանթերի մոտով անցնող զույգ ակոսավոր դոտիներով: № 43 դամբարանի սափորի մակերեսը պատած է կարմիր անգորով և լավ փայլեցրած է (նկ. 28, 10, օղակաձև ութի արամագիծը 9,9 սմ է), իսկ № 60 դամբարանի սափորի մակերեսը դարչնադույն է, դուրգի վրա շրջանաձև փայլեցումով (տախա. XV, 2, նկ. 45, 5, պահպ. մասի բարձր. 13,5 սմ, օղակաձև ոտքի տրամագիծը 7, 4 սմ), նման սափորներ հայտնաբերվել են նաև Արտաշատի VIII րլրի I—II դարերի շերտերից և դամբարանադաշտերից:


Երկկանթանի մյուս սափորներն ավելի մեծ են, լայն վզով, որոնք ավարտվում են դուրս թեքված պսակով (տր. 10—12 սմ): Երկայնքով ներձկված աղեղնաձև կանթերը մի ծայրով կպած են պսակին կամ նրա տակից, իսկ մյուսով նստած են ուսին (նկ. 13, 1): Այս սափորների առանձին մասերի՝ վզերի, կանթերի և իրանի ձևերը հանդիպում են հելլենիստական շրջանի խեցեղեն անոթների մեջ, սակայն, ամբողջությամբ վերցրած, սրանք բնորոշ են մ. թ. I—II դարերի խեցեղեն ձևերին ու մշակմանը:

Նույն ձևն ունեն նաև հարավարևելյան (տախա. XV, 5, նկ. 4, 2, դամբ. № 12, պահպ. մասի բարձր. 28 սմ) և արևմտյան (նկ. 45, 5, դամբ. № 64, պահպ. մասի բարձր. 13 սմ) դամբարանադաշտերից գտնված երկկանթանի անոթները: Վերջիններս արբերվում են միայն իրենց մակերեսի մշակմամբ: Մեկի մակերեսը (դամբ. № 12) պատած է կարմիր, անփուլթ քսած անգորով, մյուսինը՝ դեղնականաչավուն: Երկուսն էլ անփայլ են:


Սափորների այդօրինակ մշակումը դալիս է դեռևս հելլենիստական շրջանից: Այն ավելի շաաանում է ուշ հելլենիստական շրջանում, իսկ մ. թ. առաջին դարերում և հետագայում դառնում է մասսայական: Այդ ձևի անոթներ շաա են գտնվել Արտաշատի VIII րլրի I—II դարերի շերտերից:

Ուշագրության արժանի են նաև դուրզի վրա պարասաված մի կանթանի սափորները, որոնցից իր ձևով առանձնանում է արևմտյան դամբարանադաշտից գտնված (նկ. 50, 1, դամբ. № 63) սափորը (վիզը և կանթը թեքի): Այն ունի կլորավուն, ասաիճանարար լայնացող իրան, որը վերին մասում բավականին հորիզոնական է դառնում (պահպ. մասի բարձր. 17 սմ, հատ. տր. 11, 4 սմ): Մակերեսը պատած է դարչնադույն անգորով և փայլեցրած է: Ասափորի զուգահեռները, Հայաստանից, մեզ հայտնի չեն: Այն իրանի ձևով շատ է նմանվում երկարավիզ լադինոսներին և, ամենայն հավանականությամբ, սլաարասաված է այդ անոթների աղղեցությամբ: Նման իրանով ու կանթով


⁵¹ И. Д. Марченко, Раскопки восточного некрополя Фанагория в 1950—1951 гг., стр. 118, рис. 4. а.



0 2 4
cm



0 1 2
cm



Ул. 42. 1-3—амфип.

М 58

քիչ ավելի լայնսովիզ սափոր դտնվել է Կիպրոսից⁵², որը թվագրվում է մինչ 250 թվականով:

Մի կանթանի սափորներից մյուսը ղնդաձև իրան և հարթ հատակ ունի, մակերևուր՝ հատակից 2 սմ վերև, կանթի հիմքից ներքև պատած է անդորով ու փայլեցրած է, իսկ մնացած մասը դարչնագույն է (տախտ. XV, 3, նկ. 47, 1, արևմայան դամբարանագաշտ, դամբ. № 65, պահպ. մասի բարձր. 18 սմ, հատ. ար. 9,4 սմ):

Սափորներից հաջորդ երկուսը նույնսլես զնգաձև իրան ունեն (հարավարևելյան դամբարանագաշտ, դամբ. № № 24, 40), մեկի վիզը համեմատաբար ղլանաձև է, իրանի և վիզի միացման անդն անջատվում է երկու ղուղահեռ ակոսավոր ղծերով, մյուսինը՝ կարճ, կոնաձև (նկ. 21): Սափորներն ունեն ներճրկված, աղեղնաձև կանթ: Մակերեսները պատած են մուգ ղեղնավուն և ղեղնուկտնաչավուն անգորով և անփայլ են: Սափորների այս ձևը նույնպես շատ տարածված է մ. թ. առաջին դարերում: Վերոհիշյալ բոլոր սափորներն էլ գտնվել են մ. թ. I դարին պատկանող դամբարաններից:

Հարավարևելյան դամբարանից ղանված սափորի վերին մասը (նկ. 40, 2) նախորդներից տարբերվում է համեմատաբար ղզված իրանով, վզի և իրանի միացման մասում ունեցած մեկ և կանթի հիմքից անցնող գույղ փորսղիր գոտիներով: Սափորն իր ձևով հարում է Արաաշատի VIII բլրից (1973 թ., № 205) և Գաոնիի դամբարաններից գտնված II—III դդ. օրինակներին:

Նույն եղանակով մշակված սափորներից վերջինը (հարավարևելյան դամբարանագաշտ, դամբ. № 24, բարձր. 15 սմ, պս. տր. 6, 6 սմ) ունի ղզված, քիչ եռանկյունաձև իրան, ղեպի վեր ու ղուրս լայնացող պսակ (նկ. 12, 3): Կանթը ամրացված է իրանի վերին մասում: Սափորն իր ձևով հիշեցնում է մ. թ. ա. V—IV դարերի անոթներին: Այն շատ է նմանվում Ուրուկից⁵³ (Պարթևական շրջան) և Տարսոնից⁵⁴ (հռոմեական շրջան) հայտնաբերված սափորներին, ղայնակցում է հարավարևելյան Ղրիմից⁵⁵ հայտնաբերված կարփիր լաքով պատած սափորի հեա, որը քիչ ավելի կլոր կողեր ունի և պատկանում է մ. թ. II—III դարերին:

Արաաշատի սափորը նույն դամբարանից ղանված մյուս խեցեղեն անոթներով թվաղրվում է մ. թ. I դարով:

Սափորների այս քիչ ավելի ղզված աանղաձև աեսքը շարունակվում է նաև հետաղայում III—IV դարերում:

Սափորներից վերջինն ունի ղնգաձև իրան, եռաաերևի նման պսակ, երկայնքով ներճկված աղեղնուղև մի կանթ, հարթ հատակ (բարձր. 20 սմ, պս. ար. 12 սմ, հատ. ար. 10 սմ, Արաաշատի VIII բլրի վրա, կարասային թաղումից,

⁵² J. Du Plat Taylor, F. S. A. Roman tombs at Kambl, Vasa, Report of the Department of Antiquities Cyprus 1940—1948, Nicosta, 1958, fig. 6D.

⁵³ E. Strommenger, Gefasse aus Uruk von der Neubabylonischen zeit Bis zuden Sasantden, Berlin, 1967, Taf. 21, 4.

⁵⁴ H. Goldman, նշվ. աշխ., տախտ. 195, 534.

⁵⁵ Г. И. Мосберг, К изучению могильников римского времени юго-западного Крыма, СА, VIII, 1946, рис. 4.

դամր. № 82): ներձկված վիզը շատ կարճ է, մակերեսը պատած է դեղնակա-
նաչավուն անդորով և անփայլ է (տախտ. XVI, 2, նկ. 51, 2): Հայտնի է, որ
ևուստերև լզակով սափորները Հայաստանում հանդիպում են ուրարական
խեցեղենի մեջ: Հետադառնում այն փոփոխություններ է կրում, և հատկապես
հելլենիստական շրջանում, ընդունում է կլասիկ ձևեր: Օյնոխոյաները լայն
տարածում ունենին հելլենիստական շրջանում: Մեծ քանակությամբ օյնոխո-
յաներ են հայտնաբերվել Արմավիրում⁵⁶, Արտաշատում, Գեղաղիրում⁵⁷, Մո-
վինարում⁵⁸, Դվինում⁵⁹ և այլուր⁶⁰, Արտաշատի օյնոխոյան նմանվում է Ար-
մավիրի (1971, № 2) և հատկապես Արտաշատի I ըլրից դտնված (1972 թ.,
№ 112) սափորին: Սակայն Արտաշատի անոթն ունի շատ ինքնատիպ պսակ և
վիզ, որը նրան արրերում է հելլենիստական օյնոխոյաներից: Նույն աիպի
պսակ ունի հարավարևելյան դամրարանադաշտից (նկ. 14, 4, դամր. № 25)
դտնված սափորի վիզը (պս. ար. 10, 5 սմ): Վերջինս, նախորդից տարրերվում
է միայն իր կոնաձև վզով: Արաաշատի եռաաերևի նման պսակով սափորները
հարակից նյութերով թվադրվում են մ. թ. I դարի վերջով, II դարի սկզբով:
Օյնոխոյաները զանազան փոփոխություններ կրելով հասնում են մինչև ուշ
միջնադար:

Ուշադրության արժանի է փոքրիկ պուլիկը (տսիտ. XV, 8, նկ. 20, 5, հա-
րավարևելյան դամրարանադաշտ, դամր. № 40): Այն ունի ուռուցիկ մասի
վրա հորիզոնական ամրացված դանաձև ծորակ, դժրախաարար, վիզը և պսա-
կը թերի է (պահպ. մասի բարձր. 6, 4 սմ, հատ. տր. 5, 4 սմ): Մակերեսը պա-
ատած է դեղնականաչավուն անդորով, վերին մասում ունի կարմիր դոտի, ան-
փայլ է: Այս յուրօրինակ անոթը, ամենայն հավանականությամբ, ծառայել է
երեխաներին կաթ տալու համար, այն իր նախատիպերն ունի ուրարտական
և հելլենիստական խեցեղենի մեջ: Արտաշատի պուլիկն աղբրսվում է Արմավի-
րի մ. թ. ա. I դարին պատկանող շերտից դտնված (1971 թ., № 1, 6Մ քառ. խոր.
60 սմ) ծորակավոր անոթների հետ, որոնք նման են նաև լափերով⁶¹: Պարզա-
պես Արմավիրի պուլիկի ծորակը տեղավորված է կանթի դիմաց, ի տարրերու-
թյուն Արտաշատի պուլիկի, հատակը հարթ է, իսկ մակերեսը կարմիր անդո-
րով պատած և փայլեցրած: Այդօրինակ անոթները անտիկ աշխարհում շատ
տարածված են ևղել: Նման ծորակավոր պուլիկներ (դուտուսներ) հաճախ են
հանդիպում մանկական գերեզմաններում⁶²:

Արտաշատի ծորակավոր պուլիկը հարակից նյութերով թվադրվում է մ. թ.
I դարով:

⁵⁶ Գ. Ա. Կրապյան, Древнеармянская керамика из раскопок Армавира, стр. 217—
218, табл. 1, 2, 3.

⁵⁷ Ժ. Գ. Խաչատրյան, Հնագիտական հայտնադործություններ Գեղաղիրում, նկ. 4:


⁵⁸ Ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանում դտնված գունադարձ խեցեղենի մի քանի նմուշներ,
տախտ. I, 3:

⁵⁹ Գ. Քոչարյան, նշվ. աշխ., էջ 86—87, նկ. 4:

⁶⁰ Ժ. Գ. Խաչատրյան, Ա. Ա. Քալաթբադյան, Մարտունու և վարդենիսի շրջանների անտիկ
և սիջնադարյան հուշարձանները, աղ. I, նկ. 6:

⁶¹ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, նկ. 3: Նույնի, Հնագիտա-
կան աշխատանքները Արմավիրում, նկ. 6:

⁶² Մ. Парович-Пешикан, նշվ. աշխ., էջ 85, նկ. 81, 4—6.



□ 1 2

Նկ. 43. 1-?-դամբ. № 59

Մեծ հեաաքրբրություն են ներկայացնում կճուճները, որոնք դանվել են հարավարևելյան դամբարանադաշտից (նկ. 13,5, գամբ. № № 13, 24), Երկուսն էլ պատրաստված են դուրզի վրսու նրանցից մեկը (գամբ. № 13), որի վերին մասն է պահպանվել միայն, ունի ցածր գլանաձև վիղ, դուրս լայնացող հորիզոնական պսակ, որը վրայից ե կողքից ունի ակոսավոր գոտի, իսկ ներքևից նաե ալիքաձև ատամնավոր զարդ (պս. տր. 20 սմ): Ուսին ունի եռանկյունաձև փորվածքներով գոտի, իսկ նրանից ներքե ստանձին, դրոշմելու եգանակով արված, պայտաձև զարդերից կազմված ծաղկաշղթա: Մակերեսն անփայլ է, երեում են կարմիր անդորի հետքեր (նկ. 7,4):

Ճիշա նույնպիսի կճուճների բեկորներ հայտնաբերվել են Արտաշատի VIII դրրի պեղումներից (1973 թ., № 88, 196):

Այսպիսով, ինչպես ասնում ենք, մ. թ. առաջին դարերում կավանոթներն սկսում են հարդարել նաե դրոշմազարդելու եղանակով, որը հեաազայում դառնում է կարասների հարդարանքի հիմնական ձեր: Նույնպիսի դրոշմազարդ կրող կարմիր լաքով պատած թաս է հայտնաբերվել Կերշում⁶³, որը պատկանում է II—III դարերին, իսկ պայտաձև զարդերից կազմված ծաղկաշղթան կարմիր լաքով խեցեղենի ընդող հարդարանքներից⁶⁴ է: Դրոշմելու և ոեխեֆ զարդերով հարդարելու ավանդույթը նաե պարթևական խեցեղենի հիմնական հաականիշներից⁶⁵ մեկն է:

Արտաշատի դրոշմազարդ կճուճները հաակից նյութերով և շերտազրական տվյալներով թվազրվում են մ. թ. I—II դարերով:

Կճուճներից մյուսն ունի դեպի վեր ասաիճանարար լայնացող իրան, պակը վրայից և կողքից ունի ակոսավոր գոտի, շորս ոլորուն կանթ, երկուսն ուղղահայաց, մի ծայրով ամրացված պակին, մյուսով հենված ուսին, իսկ հորիզոնականները անդավորված են ուսերին (տախա. XII,1, նկ. 11,4): Կանթերի վերին մասերում արված են ոեխեֆ դոտիներ (բարձր. 45,5 սմ, պս. տր. 26 սմ): Մակերեսն անփայլ է, պատած դեղնականաչավուն անգորով: Այդպիսի շորս կանթերով մեծ կճուճ հանդիպում է առաջին անգամ:

Նման մեծ անոթի հորիզոնական կանթ հայտնաբերվել է № 25 դամբարանից (նկ. 14,5), որն ունի նույն մշակումը: Հեաաքրբիր է նաե արևելյան դամբարանադաշտից գանված մեծ անոթի, հորիզոնական աղեղնաձև, ոլորուն կանթը, որն այլ մշակում ունի (նկ. 39,2): Ինչպես անոթի մակերեսը, այնպես էլ կանթը պատած է կարմիր անգորով և փայլեցված: Բեկորներից երեում է, որ վիղը ներձկված է եղել, իսկ կանթը ամրացված է ուսին:

Ոլորուն կանթերով անոթներ հունական աշխարհում վաղուց են հանգի-

⁶³ В. Ф. Гайдукевич, Раскопки Тиритак и Мирмекня в 1946—1952 гг., МИА, № 85, Л., 1958, стр. 163—164, рис. 15.

⁶⁴ В. В. Кропоткин, Римские импортные изделия в Восточной Европе (II в. до н. э.—V в. н. э.), Свод археологических источников, вып. Д1-27, М., 1970, рис. 38, а, 7.

⁶⁵ M. E. Mallowan, Nimrud and Its Remains, vol. I, London, 1966, fig. 296; N. C. Debevoise, Parthian Pottery from Seleucia on the Tigris, Michigan, 1934, fig. 183, 185; N. Toll, The Green Glazed Pottery, The Excavations at Dura-Europos, Final Report IV, Part I, Fas. I, London, 1943, pl. V, fig. 10, pl. VII. fig. 12, pl. XII, fig. 17.

սլում, սկսած մ. թ. ա. VII—VI գտրերից, իսկ հելլենիստական⁸⁶ և հատկապես հռոմեական խեցեղենի մեջ, դրանք մասսայական են։ Ոլորուն կանթերը, իրենց բազմատեսակ ձևերով ու գարգերով, շատ բնորոշ են պարթևական խեցեղենին⁸⁷, որի մեծ քանակությամբ օրինակները հայտնաբերվել են Դուրա-Նվրոպոսում⁸⁸, Աելեկիայում⁸⁹ և այլուր։

Ոլորուն կանթեր շատ են հայտնաբերվել Արտաշատում։ Դրանք երկկանթանի և մեկ կանթով սափորների, փոքր անոթների, մեծ կճուճների և այլ տիպի անոթների կանթեր են, Հստ որում, նրանք ունեն տարրեր մշակում, անգորով, լավ փայլեցրած և առանց անգորի, անփայլ։ Ոլորուն կանթը հաճախ է հանդիպում ջնարակած խեցեղենի մեջ (1973 թ., VIII ըլուր, № 73, 1974 թ., № 55)։

Հայաստանում, ինչպես Արտաշատի պեղումներն են վկայում, դրանք երևան են գալիս մ. թ. ա. I դ. կեսերից և տարածում են սաանում մ. թ. I դուրում։

№ 24 դամբարանի կճուճը իր շափերով և ձևով ձայնակցում է Արտաշատի VIII ըլրից հայանաբերված նույնատիպ անոթի հետ, այն տարբերությամբ, որ վերջինս չունի հորիզոնական կանթեր, իսկ մակերեսը պատած է կարմիր անգորով և փայլեցրած է (աախա. XII, 2)։ Այն գտնվել է մ. թ. I դ. առաջին կեսին վերաբերող շերտից։ Վերջինիս մշակումը նույնն է, ինչ որ վերոհիշյալ հորիզոնական կանթինը։ VIII ըլրից մեզ հայանի է նաև զուլդ ոլորուն ձողերից բազկացած, վերին մասում զուլդ ուղիքի կապով, մի այլ ուղղահայաց կանթ, որի մակերեսը նույնպես կարմիր անգորով է պատած և փայլեցրած է (1970 թ., № 72)։ Կարելի է ենթադրել, որ և՛ դամբարաններից, և՛ VIII ըլրից հայանաբերված ոլորուն կանթերով անոթները պատկանում են նույն ժամանակին՝ մ. թ. I դարին, մանավանդ № 24 դամբարանից գտնված մյուս անոթների շին հակասում այդ թվագրությանը։

Հարավարևելյան № 40 դամբարանից գտնվել է մի փոքրիկ նորրախեցի, կարմիր և շագանակագույն նոսր անգորով պատած րածակ (րարձր. 4 սմ, պս. ար. 8 սմ, հատ. տր. 5,4 սմ), քիչ արտահայտվող հարթ ոտքով, կլորավուն իրանով։ Այդօրինակ ձևեր հանդիպում են սկսած II հազարամյակից և շարունակվում են մինչև միջնադար։

№ 13 դամբարանից հայտնաբերված ըհկորր պատկանում է I—II դդ. թերևս գլանաձև մի անոթի (նկ. 6, 4)։


Արևմտյան մասում գտնվող փոքր ըլրի վրա, քարանձավում հայտնաբերված դամբարանից դտնված ձվաձև իրանով անոթի վիզը թերի է (պահպ. մասի ըրարձր. 15, 6 սմ)։ Պատրաստված է դուրգի սլրա։ Կլոր հաակին նախքան թրժկն արված է 0, 5 սմ լայնությամբ անցք, մակերեսն հարթ է, թեթև փայլեցրած (տախա. XVI, 1)։ Դժվար է սսել, այս անոթն ինչի համար է ծառա-

⁸⁶ David and Joan Oates, նշվ. աշխ., տախ. XXVII, 4; H. A. Thompson, նշվ. աշխ., նկ. 15, 16, 59, 60, 61, 88; B. Hroudai, Tell Halaf, Taf. 74, a, b.

⁸⁷ H. S. Robinson, նշվ. աշխ., տախ. 1, F. 68, տախ. 72, F. 62.

⁸⁸ N. Toll, The Green Glazed Pottery, fig. 2, a, a₂, pl. II, fig. 5, № 1, 3, pl. VII, fig. 12, № 1, pl. VIII, fig. 12, № 2, pl. XII, fig. 17, № 2, 3, 5, fig. 20, F, g, H, 1, pl. XV, fig. 22, № 3.

⁸⁹ N. C. Debevoise, նշվ. աշխ., նկ. 2, 141, 142, 256, 278, 279.



Նկ. 44. 1, 2—դամբ. № 78, 3, 7, 8, 11, 12—դամբ. № 61, 4—դամբ. № 63, 5, 6—դամբ. № 76, 9,
10—դամբ. № 77

լելլ Ամենայն հավանականութեամբ, այն ուստնաախպ պաշտամունքային անոթ է, թվագրվում է մ. թ. III դարի վերջով—IV դարի սկզբով:

Առանձին խումբ են կազմում կոնքերը, որոնք իրենց մի քանի առանձնահատկություններով երեք մասի են բաժանվում: Մի մասը քիչ թեք պատեր ունի, աստիճանարար լայնացող պսակ, որն ավարտվում է դրսից մատով արված ատամնավոր զարդերով: Մակերեսներն անփայլ են, պատած կարմիր կամ դեղնականաչավուն անդորով (դամբ. № 40, 43): Նման մշակումով խորը աաշտեր մենք ունենք և՛ ուրարտական, և՛ հետագա դարաշրջաններից, սակայն պսակի նման հարդարումով դեռևս հայտնի չէ: Այս տաշաերը թվագրվում են I—II դարերով:

Տաշտերի մյուս մասը չափերով ավելի փոքր է, ունի դեպի ներս լայնացող, աղեղնաձև և կլորավուն լուսակ, որն իրանից անջատվում է ներձկված ակոսով (նկ. 5,1, 8,10, 10,3,6, 11,2, 13,1, 16,2, 32,10, հարավարևելյան դամբարանադաշա, դամբ. № 10, 17, 19, 23, 24, 30, 32, 43, 56), մակերեսն անփայլ է, պատած դեղնականաչավուն կամ կարմրավուն անգորով, երբեմն դեղնականաչավունի վրա, որոշ աեղեր կարմիրով անփուլթ քսած դարդեր կան: Մի քանիսի պսակը նման է ուրարտականներին: Կարելի է ասել, որ ուրարտական անոթների որոշ ձևերը հարատեւ են վաղ հայկական, հելլենիստական շրջաններում և հասել մինչև վաղ մրշնագար: Արաաշատում նման սյակներով քրեղաններն ու կոնքերը հանդիպում են մ. թ. I—III դարերի շերտերից (1974 թ., № 45, 47, 1975 թ., № 6, և այլն):

Կոնքերից վերջիններն ունեն դեպի դուրս ու սքր լայնացող պսակ. որը կարծես հարմարեցված է կափարիչ ղնելու համար, պսակից ներքև ներձկված է: Դրանցից մեկի պսակից ներքև կա զույգ փորագիր գոտի: Երկուսի մակերեսը պատած է կարմիր անդորով ու դուրդի վրա փայլեցված (նկ. 28,9, դամբ. 43, № 126), իսկ երրորդին անփայլ է (նկ. 18,4, դամբ. № 33): Այս կոնքերի նախաախպերը մեզ հայտնի չեն: Սրանց պսակի ձևերը անշուշտ մեաաւլա անոթներից է վերցված:

Այդորինակ պսակները ընորոշ են մ. թ. առաջին դարերի խեցեղեն անոթների համար: Իրենց պատրաստման եղանակով և մշակումով սրանք աղերսւվում են մ. թ. I—II դարերի վերոհիշյալ սկոտեղների, ափսեների, թասերի և սափորների հետ, Կոնքերի այս խումբը ևս պատկանում է նույն ժամանակին և աղերսներ ունի հոռմեական խեցեղենի⁷⁰ հետ:

Հեաաքքեր է նաև փոքր կճուճի բեկորը, որի շուրթը իսիի համար նույնպիսի, դուրս ու վեր լայնացող պսակ ունի: Զգված ղնղաձև իրանով կճուճի մակերեսը պատած է կարմիր անդորով և լավ փայլեցրած: Այսինքն՝ մշակումով վերարերում է նույն խմբին և թվագրվում է մ. թ. I—II դարերով (նկ. 29,1, դամբ. № 44):

Արաաշատի դամբարաններից մենք ունենք նաև խփեր (նկ. 26,4, հարավարևելյան դամբարանադաշա, դամբ. № 19, 41): Նրանց մի մասը հիշեցնում է ձկան անոթները, սակայն նրանց վերին մակերեսի ավելի խնամքով

⁷⁰ H. S. Robinson, նշվ. աշխ., տախտ, 60, F4.

մշակված լինելը թույլ է տալիս վերջիններս համարել խուփ: Մյուս խփերը դողավոր են, ունեն ձեռավոր պսակ, ներձկված վիղ ե, ի տարբերություն նախորդների, կարմիր ներկած, փայլեցրած մակերես (ըրարձր. 3, 3 սմ, պս. տր. 15,6 սմ, ռունակի տր. 5,4 սմ): Հավանաբար, սրանք պատկանել են նման մշակում ունեցող անոթների: Խփերի ռունակները նմանվում են անոթների արտահայտվող և օդակաձև ոտքերին:

Խփեր Հայաստանում հայտնի են դեռևս II հազարամյակից, շատ են հանդիպում նաև ուրարտական⁷¹ (քիչ կոնաձև բոնակներով) և հելլենիստական շրջաններում (Արտաշատ, I ըլուր, 1972 թ., № 311, 343), սակայն լայն տարածում են ստանում միջին դարերում, իրենց ուրույն հարդարանքներով՝ ու ռունակներով: Խփերը բնորոշ են նաև հունական և հռոմեական⁷² խեցեղեն անոթներին, որոնք իրենց բոնակներով քիչ են տարբերվում Արտաշատի խրփերից: Արտաշատի դամբարանների խփերը թվադրվում են մ. թ. I—III դարերով:

Արտաշատի դամբարանադաշտի և բլուրների պեղումները մեղ տվեցին նաև կավե հենակների օրինակներ, որպիսիներն անտիկ դարաշրջանից մեղ հայտնի չէին: Կավե հենակներից մեկը ցածր է, ձևավոր (նկ. 20, 12, բարձր. 3,6 սմ, տր. մի կողմից 29,4 սմ, մյուս կողմից 30 սմ), բավականին բարակ, դարչնագույն անդրով պատած և փայլեցրած (դամբ. № 40): Այն կարող է նախատեսված լինել դեղաձև հատակ ունեցող անոթների համար: Այդպիսի հենակներ հայտնարերվել են Արտաշատի I բլրի պեղումներից:

Հենակներից երկրորդը ներձկված մեջք ունի, մի կողմն ավելի նեղ է, քան մյուսը (տախտ. XVI, 8, նկ. 11, 1, բարձր. 13 սմ, տր. 21, 25 սմ, դամբ. № 22): Երկու կողմից պսակներին արված են ատամնաձև դարդեր: Մակերեսը անփայլ է, պատած դեղնակսնաշավուն, տեղ-տեղ կարմիր անդրի հետքերով: Վերջինս նախաաևաված է ավելի սուր հատակով անոթների համար:

Հենակները նույնպես իրենց նախատիպերն ունեն ավելի վաղ շրջանի մեղ: Նման խորը հենակներ հայտնի են Արդիշախիխիլիից⁷³, աքեմենյան շրջանի Իրանից⁷⁴, հելլենիստական շրջանի Թեղ Հալաֆից⁷⁵, Աթենքի Ադրա-լից⁷⁶, Նիմրուդից⁷⁷, որը ձևով ու չափերով ձայնակցում է Արտաշատի հենակի հետ:

Արտաշատի հենակները պատկանում են մ. թ. ա. I—մ. թ. I դարերին:

Դամբարանային խեցեղենի մեղ շատ սովորական են խոհանոցային անոթները: Դրանք թուխ կամ դարչնագույն խոշորահատիկ կավից, հիմնականում ձեռքով պատրաստված անոթներ են (տախտ. X, 2, XVIII, 1, 2, 5, նկ.

⁷¹ А. А. Мартиросян, Раскопки Аргиштихинили, СА, 1967, № 4, рис. 5; նույնի, Аргиштихинили, рис. 64.

⁷² H. S. Robinson, նշվ. աշխ., տախտ. 4, F86, տախտ. 7, g 121.


⁷³ А. А. Мартиросян, Раскопки Аргиштихинили, рис. 5; նույնի, Аргиштихинили, рис. 63.

⁷⁴ R. Ghirshman, Village Perse-Acheménide, Paris, 1954, pl. XXX, g.s. 1212.

⁷⁵ B. Hrouda, Tell Halaf, Taf. 70, 7, Taf. 73, 97.

⁷⁶ H. A. Thompson, նշվ. աշխ., նկ. 76, D64.

⁷⁷ David and Joan Oates, նշվ. աշխ., տախտ. XXV, 9.



Նկ. 45. 1—դամբ. № 62, 2—4—դամբ. № 74, 5—դամբ. № 64, 6—9—դամբ. № 60

3,4, 4,1, 11,6, 15,6, 17,1, 33,12, 13, 50,1, դամբ. № 12, 19, 24, 30, 32, 51), ուուուցիկ կամ քիչ ձգված իրանով, ցածր վզով, դուրս թեքված պսակով, լայն հարթ հատակով: Հաճախ ունենում են տափակ, կլորսովուն կամ աղեղնաձև կանթ, ամրացված պսակին և ուսերին (բարձր. 19—35 սմ, պս. տր. 14—26 սմ, հատ. տր. 15—18 սմ): Մակերեսն անփայլ է, րացի մեկից, լինում են առանց անդորի կամ դարչնադուրն ու կարմրավուն անդորով պատած:

Խոհանոցային անոթները, ընդհանրապես, վաղուց են հայտնի և նրանք դրեթե փոփոխության չեն ենթարկվել: Համենայն դեպս, հելլենիստական և մ. թ. առաջին դարերի խոհանոցային անոթների մեջ ոչ մի տարրերություն չի նկատվում և նույնիսկ դժվար է դրանք անջատել իրարից: Մ. թ. ա. I—մ. թ. II դարերի ճիշտ այդպիսի կճուճներ են հայտնարերվել Արտաշատի բլուրների պեղումներից, Արմավիրից⁷⁸ (1969 թ., № 115), Գառնի⁷⁹ ամրոցի շերտերից և դամբարաններից (դամբ. № 122):

Արտաշատի խոհանոցային անոթները մ. թ. տ. I—մ. թ. II դարերով փվագրվող դամբարաններից են հայտնարերվել:

Արտաշատի հարավարևելյան դամբարանադաշտից հայտնարերված խեցեղենի մեջ մեծ թիվ են կազմում ճրագները (տրամագիծը 7—11 սմ, բարձ. 2—3 սմ), ունենում են կլորավուն կամ ուղղահայաց պատեր, պատրուկի համար արված փոքրիկ քթիկ (նկ. 8,9, 26,7, 33,3, 40,7, դամբ. № 13, 24, 32, 40, 42, 44) և պատրաստված են կոպիտ, պակաս խնամքով:

Այս ճրագները սովորական են Արմավիրի մ. թ. ա. I և Արտաշատի մ. թ. ա. I—մ. թ. II դարերի շերտերի համար: Դրանք համեմատած վաղ հելլենիստական շրջանի ճրագների հետ ավելի անխնամ են պատրաստված:


Մի շտրք դամբարաններում ճրագների թիվն երեքից ավելի է, ուստի կարելի է ենթադրել, որ դրանք օգաագործվել են նաև իրրև ծխարաններ: Քանի որ ծխարանները եղել են նաև թաղման ծիսակատարության անհրաժեշտ մասը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում գլանաձև իրանով, շեշտված ուսերով, քիչ լայնացող վզով, գույգ գլանից բաղկացած երկկանթանի ամֆորան (տախտ. XVI,1, նկ. 51,1, պահպ. մասի բարձր. 77 սմ): Այն պատրաստված է դուրզի վրա, դարչնագույն սպիտակ մանր ավազախոտնուրդով խիա կավից, որի մեջ երեւում են փայլարի հատիկներ: Մակերեսը պատած է թույլ կանաչին տվող անդորով:


Ամֆորաները ծառայել են հեղուկ և սորուն, հատիկային նյութեր պահելու և արտահանելու համար: Ուստի, գրանք հսկայական քանակությամբ արտադրվել են հունական աշխարհում և գաղութներում: Արտաշատի բլուրների պեղումներից հայտնարերվել են ամֆորաների մի շտրք բեկորներ: Դրանք վզի և անոթի պատերի և հատակի մասեր են, տարրեր տեսակի կանթեր, այդ թվում նաև զույգ գլանից բաղկացած: Կտնթերից մի քանիսն իրենց վրա ունեն դրոշմներ: Ամֆորաները ներմուծված են մի քանի կենտրոնից, հիմնա-

⁷⁸ Գ. Ա. Տրագալան. Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, էջ 175:


⁷⁹ «Гарни», V, стр. 38, рис. 14,1, табл. XXII,а.




1




2



3



4



Նկ. 46. 1, 2, 4—դամբ. № 67, 3—դամբ. № 68

կանոնաւ Հոռոզոսից⁸⁰։ Հունական, միջերկրածովյան և փոքրասիական կենտրոնների խեցեղեն արտադրանքի ձեւերն ու կավերը, և հատկապես ամֆորաները, բավաճանին լավ են ուսումնասիրված։ Հայտնի է, որ երկզլան կանթերով ամֆորաներ գլխավորապես արտադրվել են Կոստում⁸¹, ինչպես և այլ կենտրոններում, որոնք շնչին շեղումներով հիմնականում կրկնում են Կոսի ամֆորաների ձեւերը։ Կոսի կավը հիշեցնում է Հոռոզոսի ամֆորաների նմանը, տարբերութեամբ, որ այն փոքր-ինչ ավելի է ավաղ ու փայլար պարունակում⁸²։ Արաաշատի ամֆորան իր երկար, ձգված իրանով, լույզ դլանից բաղկացած, քիչ վեր բարձրացող և ուղղահայաց իջնող կանթով ու կավի բաղադրութեամբ աղերսվում է Կոսի⁸³ ուշ շրջանի ամֆորաների հետ և ամենայն հավանականութեամբ ներմուծված է այնտեղից։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայաստանի սոսկտրական կապեր է ունեցել նաև Միջերկրածովյան հունական կղզիների հետ։ Հոռոզոսի հեա առևարական կապեր հաստատված էին դեռևս ուրարական շրջանից։ Հոռոզոսից են ներմուծված Կարմիր բլուրում 1935 թ. հայտնաբերված⁸⁴ կանացի ֆիդուր պատկերող սկահակի վերին մասը և ալարաստրի վիզը։ Հելլենիստական շրջանում լայնորեն ծավալվեց առևտուրը, որում մեծ դեր էին խաղում Միջերկրականի արևելյան շրջանի երկրներն ու քաղաքները, Պերդամոնը, Եգիպտոսը, Սիրիան, Սամոս կղզին, Հոռոզոսը և այլն։ Սակայն առևտուրը լայն թափ ստացավ հատկապես Հոռոզոսում, որը ոչ միայն արաահանում էր իր սեփական արաաղըրանքը, այլև միջնորդի դեր էր կատարում։ Արաաշատի գյուտերը ցույց են տալիս, որ Հոռոզոսի առևարական շրջանակի մեջ ընդգրկված է եղել նաև Հայաստանը։

Հելլենիստական շրջանում աճեց նաև Կոսի առևտրական կշիռը, որը մեծ շահով գինի էր արտահանում։ Բոսֆորի այդ շրջանին վերաբերող շերտերում մեծ քանակութեամբ Կոսի ամֆորայի բեկորներ են հայտնաբերվել⁸⁵։ Ըստ Մ. Զարդարյանի, Հոռոզոսից հետո Հայաստան ներմուծված ամֆորաների թվով երկրորդը Կոսն է։ Հետաքրքիր է, որ Արաաշատում հոռոզոսյան համարվող ամֆորաների բեկորները հիմնականում հանդես են գալիս մ. թ. ա. II—I դարերի շերտերից, իսկ մ. թ. ա. I դ. վերջերից սկսած և մ. թ. I—II դարերին վերաբերող շերտերում հանդիպող ամֆորաներից ավելի շատ են Կոսից ներմուծվածները։

Արաաշատի ամֆորայի տիպի անոթները հանդիպում են մ. թ. ա. I—մ. թ. II դարերում։ Այդօրինակ անոթները հայտնաբերվել են անաիկ աշխար-

⁸⁰ М. Зардарян, Амфоры из раскопок Арташата, ИФЖ, 1977, № 1, стр. 266—272.

⁸¹ И. Б. Зеест, К вопросу о торговле Неаполя и ее значении для Боспора, МИА, № 33, М., 1954, стр. 74.

⁸² И. Б. Зеест, Керамическая тара Боспора, МИА, № 83, Москва, 1965, стр. 25.

⁸³ И. Б. Зеест, К вопросу о внутренней торговле Прикубанья с Фанагорией, МИА, № 19, Москва, 1951, стр. 109; И. Б. Зеест, Керамическая тара Боспора, стр. 24—25, 104—106.

⁸⁴ Р. М. Жанполадян, О трех образцах стекла из Кармир-блур, СЛ, 1964, № 1, стр. 307 и сл., рис. 1, 3, 5, 6; Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, Ереван, 1955, стр. 51, табл. II, 10, 11.

⁸⁵ И. Б. Зеест, Керамическая тара Боспора, стр. 25.

հի մը շարք վայրերում՝ Բոսֆորում⁸⁶, Էտալիայում, Աթենքում⁸⁷ և այլուր՝ Արտաշատի ամֆորան ձայնակցում է Աթինքի ադորայի ամֆորայի հետ, որը թվագրվում է մ. թ. I դ. կեսով II դարի սկզբով և վ. Գրեյսի⁸⁸ Կոսի համարած, մ. թ. I դարին պատկանող ամֆորայի հետ։ Արտաշատի ամֆորան Տրայանոս կայսեր արծաթյա դրամով և ուղեկցող ապակյա ու կավե անոթներով ճշտորեն թվագրվում է մ. թ. II դարի սկզբով⁸⁹։

Ուշադրության արժանի է դնդաձև, քիչ ձգված իրանով, կլոր հատակով, դուրզի վրա պատրաստված անոթը, որի վերին մասը ուսերից թերի է, պահպանվել է կանթի հիմքը (ապխա. XVII,3, նկ. 3,1, պահպ. մասի բարձր. 37 սմ, դամբ. № 12)։ Դժվար է ասել, նա ունեցել է մի կանթ, թե եղել է երկկանթանի, քանի որ կանթի դիմացի հատվածը նույնպես պահպանում է։ Մակերեսն անփայլ է, պատած դեղնականաչավուն քսուքով, որի վրայից անցնում է երկու կարմիր դոտի։ Նման անոթներ ընդհանրապես քիչ են։ Միակ ստոփորը դտնվել է Արտաշատի VII բլրից, որը միկանթանի է, նույն մշակուսով և հայտնաբերվել է մ. թ. I—II դարերի շերակրից։

Հայաստանում գնդաձև իրանով անոթներ հայտնի են դեռևս ուրարտական շրջանից⁹⁰, ստկայն մինչև առաջին դարերը նրանք այլևս չեն հանդիպում, համեմատյն դեպս մեզ հայտնի չէ։ Սակայն հելլենիստական և պարթևական շրջանի կլոր հատակով անոթներ հայտնաբերվել են Նիմրուզից⁹¹, Տիգրիսի ափի Սելևկիայից⁹², Թեյ Լալաֆից⁹³ և այլ վայրերից⁹⁴։ Հայաստանում դրանք գոյատևում են մինչև VII դարը։ Ընդ ժամանակաշրջանի մի անոթ դտնվել է Դվինից։ Արտաշատի սափորը հարակից նյութերով թվագրվում է մ. թ. I դարով։

Մեծ խումբ են կազմում կարասները, որոնք դամբարաններում օդադործվել են աարբեր նպատակներով, թաղման, հացահատիկ, գինի և այլ ուտեստեղեն պահելու համար։ Դրանք իրենց չափերով, ձևերով ու հարդարանքով բաժանվում են մի քանի ենթախմբերի։

Առաջին խումբը հարթ հասակով, հելլենիստական շրջանից եկող ձևերի շարունակությունն է, այսինքն՝ աստիճանարար լայնացող, վերին մասում ուռուցիկ իրանով, որոնք ունեն հելլենիստական կարասներին ընդողջ թևք, լայնացող, հորիզոնական կտրած (նկ. 6,2, 25,1, 28) կամ կլորավուն պսակներ (նկ. 28,2)։ Մակերեսներն անփայլ են, առանց անգորի կամ դարչնագույն,

⁸⁶ Նույն տեղում, էջ 55—81։

⁸⁷ H. S. Robinson, նշվ. աշխ., տախտ. 19 M-13.

⁸⁸ V. Grace, Amphoras and the ancient Wine trade, Princeton, New Jersey, 1961, fig. 60.

⁸⁹ M. Зардарян, նշվ. աշխ., էջ 269, տախտ. I, 8, II, 7A, 8A.

⁹⁰ A. A. Мартиросян, Город Тейшебани, Ереван, 1961, стр. 122, рис. 51.

⁹¹ M. E. L. Malloyan, Nimrud and its Remains, vol. II, London, 1966, fig. 279; David and Joan Oates, նշվ. աշխ., տախտ. XXV, 11, 12։

⁹² N. C. Debevoise, նշվ. աշխ., նկ. №№ 85, 95, 175, 184, 248; Antonio Invernizzi, The Excavations at Tell Umayr, Mesopotamia, I, 1966, Torino, fig. 14.

⁹³ B. Hrouda, Tell Halaf, Taf. 59, 82, 92, 103

⁹⁴ H. S. Robinson, նշվ. աշխ., տախտ. 20, M-52.

դեղնականաչավուն քսուքով պատած (րարձր. 90—115 սմ, պս. տր. 30—40 սմ, հատ. տր. 20—25 սմ): Սրանց կողքին հանդես են գալիս կարասներ, որոնք հորիզոնական կտրված պսակների վրա ունեն ռելիեֆ լայն դոտի կամ կողքից արված ակոսավոր դոտի, իսկ տակից՝ աստամնավոր դարդու Այս կարասները, սովորաբար, քոչ ավելի ուռուցիկ են լինում և ուսին ու փորին սնննում են պարանաձև ռելիեֆ դոտի (տախտ. IV, 3, րարձր. 110 սմ, պս. տր. 35—40 սմ, հատ. տր. 25—26 սմ):

Կարասների այս ձևերը մեծ քանակությամբ հանդիպում են ըլուրների պեղումները, որոնք տալիս են նաև մի շարք հետաքրքիր այլ ձևեր ևս:

Արտաշատի վերոհիշյալ կարասների ձևերը հանդիպում են Հայաստանի մ. թ. I—III դարերի գրեթե բոլոր հուշարձաններում, Գառնիում, Վաղարշապատում և այլուր:

Կարասների մյուս խումբը ավելի միատարր է: Դրանք ունեն ձգված տեսք դեպի դուրս լայնացող կլորավուն պսակ և արտահայտվող սուր նստուկ (նկ. 17, 2, 31, 5. 50, 2, րարձր. 100—110 սմ, պս. տր. 30 սմ, հատ. տր. 3—7 սմ): Սուր նստուկով, տարբեր չափերի, կարասներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են մ. թ. I—III դարերի շերտերից: Ինչպես վերը հիշատակեցինք, այդպիսի կարասներ հայտնաբերվել են Վաղարշապատում, Գառնիում:

Սուր նստուկով անոթներ կան ուրարտական և հաջորդ շրջաններում, ըստ այն տարածում է ստանում մ. թ. առաջին դարերում: Դրանցից, նեղ իրանով, րարձր, ավելի սուր նստուկներով կարասները II դարի երկրորդ կեսից վաղ չեն հանդիպում: Վերջիններիս տիպը ամբողջ անտիկ աշխարհում հանդիպում է II դարից հետո:


Նրորդ խումբը, ձվաձև կամ ձգված, գրեթե գլանաձև իբանով փսքր կարասներն են, որոնք ունեն կլոր հատակ, դուրս լայնացող ձևավոր նեղ պսակ (նկ. 4, 3, դամբ. № 10, 12, արեմտյան դամբարանադաշտ, դամբ. № 69, տախտ. XVII, 1, նկ. 47, 1): Դժբախտաբար, դրանցից ոչ մեկն ամբողջական չէ, և ճիշտ չափերը դժվար է վերականգնել (պահպ. մասի րարձր. 72 սմ, 36 սմ, 47 ոմ, պս. տր. 15 սմ):

Կարասներից մեկի մակերեսին շահանակադույն անդր է քսած, փայլեցրած, իսկ մյուս երկուսը պատած են կարմիր և դեղնականաչավուն անդրով և անփայլ են: Արեմտյան դամբարանադաշտից գտնված կարասի ուսին կա երկու դույզ գուգահեռ դոտի: Բացի կլոր հատակով վերոհիշյալ սափորներից, Արտաշատի ըլուրների պեղումներից փոքր կարասներ չեն հայտնաբերվել: Միակ այդպիսի անոթը հայտնաբերվել է Հացավանից, որը ձևով ու չափերով ձայնակցում է Արտաշատի արեմտյան դամբարանադաշտից գտնված կարասի հետ (նկ. 47, 2):

Այդպիսիք գտնվել են Նիմրուդից⁹⁵ (հելլենիսական), որը նույնպես ձևավոր ու զարդերով ձայնակցում է Արտաշատի վերոհիշյալ կարասի հետ, Տիգրիոսի փի Սելևկիայից⁹⁶ (մ. թ. I—II դդ.):

⁹⁵ M. E. L. Mallowan, Nimrud and its Remains, fig. 279.

⁹⁶ N. C. Debevoise, Կշվ. աշխ., տախտ. 95.



Նկ. 47. 1, 3—դամբ. № 65, 2—կարաս, Հացավանից, 4, 6—դամբ. № 69, 5—արևմտյան դամբարանադաշտից

Արտաշատի կլոր հատակով կարասները, ուղեկցող մյուս նյութերով, իրենց սշակումով պսակի ձևով, պատկանում են մ.թ. I—II դարերին:


Այսպիսով, քննությունը ցույց է տալիս, որ մ.թ. ա. I դարում, Հայաստանում նկատվում է հիլենիստական շրջանի խեցեգործության ավանդների աստիճանական մարում, որը շարունակվում է մ.թ. առաջին դարերում: Այսինքն, սվելի ու ավելի սակավ են դառնում բազմազույն, գեղեցիկ զարդերով ձևավորված. մակերեսները խնամքով փայլեցված կավանոթները: Դրանք ավելի անփուլթ են պատրաստված, փայլեցված են միայն զարդանախշերը, դրանք ավելի շճշակու նպատակով կամ ուղղակի անփայլ են: Մշակման այս եղանակը աստիճանաբար գառնում է գերակշռող: Սկսվում է ասարածվել զեղնականաշավուն և զեղնավուն քսուքը, որը I—IV դարերում դառնում է իշխող: Մյուս կողմից, Արեւելքում, հռոմեական տիրապետության հաստատման հետ միասին, մուտք է դործում կարմիր լաքավոր շքեղ խեցեղենը, որի օրինակով սկսում են իրեր պատրաստել նաև տեղերում: Հայաստանում երեան են դալիս լաքանման կարմիր և դարչնագույն անգորով պատած, փայլեցրած անոթներ կամ անփուլթորեն, անհավասար քսած, հոսեցրած, լաք հիշեցնող անգորով անոթներ, որն արված է անոթի թրծելուց հետո: Այնուհետև անհասանում են հիլենիստական խեցեղենի որոշ ձևեր (իլիկաձև ունգվենտաբիաներ, փիալաներ, կիսադնդաձև և կիսավաձև թասեր և այլն), և հանգես են դալիս նորերը (բաժակներ, դավաթներ, սկուտեղներ, ափսեններ, սրվակներ և այլն):

Ընդհանրապես կարմիր և գարնագույն անգորով սպտած, փայլեցրած խեցեղենը, որը I—II դարերում ըավականին տարածված էր, III—IV դարերում խիստ պակասում է: Ավելի տիրապետող է դառնում անփայլ խեցեղենը, որը հաճախ առանց անգորի է:

Ավանդական փորագիր զարդերով խեցեղենը, որը հիլենիստական շրջանում գրեթե մոռացության էր մատնվել, պարթևական և հռոմեական խեցեղենի ազդեցության տակ, նորից աշխուժանում է: Այժմ կավանոթները, րացի անփուլթորեն կատարված դունավոր հարգարանքից, ունեն նաև ասորեր հնարքներով արված զարդեր: Ռելիեֆ գոտիներ, որոնք երբեմն ունեն մատով արված ատամնաձև, պարանաձև զարդեր, սանրով արված ալիքաձև և այլ դոտիներ, դրոշմելու եղանակով արված պայտաձև, եռանկյունաձև, անվաձև, կենաց ծառի և այլ տեսակի զարդագոտիներ: Կավանոթների պսակները, ի ասորերություն հիլենիստական խեցեղենի դունավոր զարդերի, հարգարված են ռելիեֆ և ակոսավոր դոտիներով, մասներով արված սլիքաձև և այլ զարդերով:

Այլ է նաև թասերի, ափսենների և սյուս րաց անոթների ներսի հարգարանքը: Կունավոր զարդերը այսանգ ևս փոխարինվում են փորագիր ասորեր օրնամենտներով: Հաճախ հատակն անջատվում է փորագիր և ռելիեֆ դոտիներով, որոնց մեջ կենտրոնում երբեմն ակոս է արվում:

Մ.թ. առաջին դարերում փոփոխության են ենթարկվում կանթերը, ներկայումս, րացի երկայնքով ներձկված կանթերից, հանդիպում են ժապավենաձև, կտրվածքում կլոր, հնատիպ, խուլ կանթեր, հորիզոնական կպցրած և



Նկ. 48. 1—7—Արխայան դամբարանադաշտից

այլն: Ուրոուն մեկ կամ մի քանի զլանից թողկացած կանթերը, որոնք գալիս են ուշ հելլենիստական շրջանից, շարունակվում են նաև մ. թ. առաջին դարերում:

Հելլենիստական շրջանում հանդես եկած օղակաձև ոտքերը լայն ասարածում են ստանում այս շրջանում, երևան են դալիս կլոր և սուր ստուկները:

Այսպիսով, մ. թ. առաջին դարերի խեցեղործները, հրո ավանդական ձևերը շարունակելուց և զարգացնելուց բացի, սահղծում են նոր ձևեր: Այդ շրջանի խեցեղենը ձեռք է բերում ժամանակաշրջանի ողուն ու պայմաններին համապատասխան նոր հասկանիչներ: Այս ամենի վրա իրենց ազգեցությունն են թողնում նաև ջնարակած խեցեղենն ու ապակին:

Ինչպես տեսնում ենք, դամբարանային խեցեղենը, որը սերտորեն կապված է Արտաշատի բլուրների խեցեղեն արտադրանքի հետ, հնարավորություն է ապահովում մ. թ. առաջին դարերի խեցեղենի զարգացման ընթացքին և ուղղությանը, ճշտելու նրա ժամանակագրությունը, որն իր հերթին օգնում է որոշելու, նույն դարերի, մյուս հնագիտական նյութերի թվագրությունը, վեր հանելու առևարանտեսական կապերն ու փոխազդեցությունները:

3. ՋՆԱՐԱԿԻ ԽԵՑԵՂԵՆ


Տակավին դժվար է ասել, թե ինչպես, երբ և որտեղ է կառավել ջնարակի գյուղը: Ջնարակը ապակու ըրակ շերտ է, որը թողկացած է նույն կվարցի և կալաքարի խառնուրդից և ապակուց տարրերովում է միայն խառնուրդի առկուսային հարարերովամբ, պատրաստման եղանակով ու նշանակությամբ, այսինքն՝ այն օգտադործվում է ուրիշ նյութեր ծածկելու նպատակով, ինչպես թրծելուց առաջ, այնպես էլ հետու Ջնարակած անոթների համար, ընարում էին հատուկ, հնարավորին չափ մաքուր կավեր, որպեսզի խեցին թրծելիս միացությունների մեջ չմաներ ջնարակի հետ: Հակառակ դեպքում ջնարակը կլիներ անհարթ և ճաքերով: Միժ մասամբ ընարվում էր ըրաց գույնի կավ, որպեսզի անոթները ունենային թափանցիկ անք, ըսա որում, այդ նպատակով անոթի մակերեսը պատում էին ջնարակի մի քանի շերտով: Այնուհետև լավ ծեծած կվարցի և կալաքարի խառնուրդից պատրաստված թանձր շփոթը քսում էին խեցեղեն իրերի մակերեսին, ապա թրծում: Դձ-նարանայում գանված սեպագրերի մեջ պահպանվել է կավամանները ջնարակելու ըրագորատումը²:

Ջնարակը լինում է երկու տեսակ՝ կապարային և կալաքարի: Կապարայինը ավելի ցածր ջերմաստիճանի տակ է հալվում և ավելի լավ է պահպանվում, իսկ կալաքարինը պահանջում է համեմատաբար ըրածր ջերմաստիճան և շուտ է քալքայվում: Ուսումնասիրությունը ցույց է ապիս, որ և՛ մեկը, և՛ մյուսը օգտագործվել են ջնարակած խեցեղեն արագորող շատ կենտրոններում, ըրաց կալաքարինը միշտ ևղել է դերակշռող:

Անտիկ շրջանի ջնարակը իր ըրագորությամբ շաա քիչ է ասարերվում ապակուց, ուսաի նրա գույնն էլ պայմանավորված է դանաղան մեաաղական

¹ R. J. Forbes, Studies in ancient Technology, vol. V, Leiden, 1957, pp. 111, ff.

² նույն տեղում, էջ 132:



Նկ. 49. 1, 2—դամբ. № 75, 3, 4, 5, 8—արևմտյան դամբարանադաշտից, 6, 7—դամբ. № 80

օրսիդներն տարբեր հարաբերութիւններով: Ամենատարածված դոլչներից են կանաչը, կադատականաշավունը և դեղնավունը, որոնք բնորոշ են եղել Միջագետքի, Եգիպտոսի, Իրանի և Հնդկաստանի³ ջնարակած խեցեղենին:

Ջնարակած խեցեղենի մասսայական արտադրութիւնը սկսվեց պարթեական ջրջանում, մ. թ. ա. I և մ. թ. I դարերում: Հիշյալ ժամանակաշրջանում ջնարակած խեցեղեն էին արտադրում Իսալիայից և Գալիլիայից մինչև Հնդկաստան ու Չինաստան⁴: Այնուհանդերձ ջնարակած խեցեղենի արտադրութեան գլխավոր օջախները Միջերկրականի արևելյան ափերին էին, Փոքր Ասիան, Սիրիան, Միջագետքը, որտեղ հենվելով նախորդ ջրջանների արհեստադրոթութեան կոտակած փորձի վրա ջնարակած խեցեղենի արտադրութիւնը բարձր զարգացման հասավ⁵:

Անդրկովկասում ևս ջնարակած ուլունքները հայտնի են միջին բրոնզի ջրջանից, սակայն անոթները ավելի ուշ են հանդես գալիս, մ. թ. ա. IX դարից հետո:

Ընդհանրապէս, Հայաստանի մ. թ. ս. IX—VI դարերի անոթների ջնարակները ցածրորակ են, մակերեսները անհարթ ու շատ բարակ, հաւանաբար դրանց մի մասը պատրաստվել է Հայաստանում: Օրինակ, Մեծամորում հայտնաբերված արաադրական խոսանի հետքերը, ապակուց և մածուկից պատրաստված ուլունքները, ջնարակած բազալտի և ուլունքների գլուտերը ենթադրել են ալիս, որ զբանք արտադրվել են տեղում: Սպեկտրալ անալիզը ցույց է աւելիս, որ ինչպես ջնարակի, այնպես էլ ապակու և մածուկի դոլչը պայմանավորված է պղնձի խոտնուրդով: Ապակու և ջնարակի համար գլխավոր ելանյութ է ծառայել կվարցը⁶:

Հայաստանում, մ. թ. ա. V—II դդ. հուշարձաններում ջնարակած առարկաների գլուտերը էպիզոդիկ բնույթ են կրում, իսկ մ. թ. ա. I—մ. թ. III դարերում ջնարակած խեցեղենի արաադրութիւնը տարածում է սաանում:

Վրաստանում⁷ և Ադրբեջանում մ. թ. ա. V—I դդ. հուշարձաններում ջնարակած խեցեղեն դեռևս չի հանդիպում: Այն երևան է դալիս միայն մ. թ. առաջին դարերում, ըստ որում ոչ մեծ քանակութեամբ:

Հայաստանում մ. թ. ա. I—մ. թ. III դդ. ջնարակած խեցեղեն հայտնաբերվել է Արմավիրից⁸, Արտաշատից, Գառնիից, Սիսիանից և այլ վայրերից:

³ N. Toll, The Green glazed pottery, p. 31—32; A. Лукас, Материалы и ремесленное производство древнего Египта, М., 1958, стр. 256.

⁴ J. Marshall, Taxila, Cambridge, 1951, p. 408; A. Lucas, Glazed ware in Egypt, India and Mesopotamia, The Journal of Egyptian archaeology, vol. XXII, part II, London, 1936, p. 143; A. Лукас, *т. 24. 224.* էջ 256.

⁵ M. Rostovtzeff, The Social and Economic History of the Hellenistic World. I, Oxford, 1941, p. 1010, pl. CVII—CVIII.

⁶ «Մեծամոր», էջ 71—73.

⁷ Н. Ф. Мамайашвили, Производство и потребление фаянса в средневековой Грузии, Автореф. канд. дисс., Тбилиси, 1970, стр. 5—6.

⁸ Գ. Ա. Տրաքյան, Արմավիրի պեղումները, 129, 1972, № 5, էջ 100—101, նույնի, Արմավիրի պեղումները, 124, 1974, № 12, էջ 62—63, նույնի, Արմավիրի պեղումները, 129, 1972, № 2, էջ 40.

Դրանք արրեր չափերի ափսոսներ են՝ սափորներ, պուլիկներ, ամֆորաներ, աափաշներ, երկկանթանի անոթներ և այլն:

Շատ կարևոր են հատկապես Արտաշատից հայանարերված հստակ շերտազրական պատկեր ունեցող ջնարակած խեցեղենի նմուշները, որոնք օգնում են թվագրելու նաև մյուս հուշարձանների նյութերը:

Արաաշատի դամբարանադաշաներից հայտնարերված ջնարակած խեցեղենի նմուշները թեև քանակով մեծ չեն, սակայն նույնպես որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Դժբախտարար, գրանք բեկորային վիճակում են և միշտ չէ, սր հնարավոր է լինում վերականգնել անոթների սկզբնական տեսքը:

Ուշագրութայն արժանի է մուգ դեղնադարչնադուլին մոսեցող, սև ու սպիտակ ավազախառնուրդով մանրահատիկ կավից պատրաստված անոթի իրանի վերին մասի բեկորը: Նրա իրանի մասում կան ուղղահայաց առեակոսներ (նկ. 53, 1): Մակերեսը դրսից պատած է կանաչավուն հասա ջնարակով, իսկ ներսից՝ ավելի բարակ թաղանթով: Անոթն ամրողութայն, օղի աղղեցութայն գունափոխված, ծածկված է արծաթագույն իոդացիայով (հարավարեելյան դամբարանադաշա, գամր. № 43): Նման մի բեկոր գտնվել է արևելյան դամբարանադաշից: Վերջինս պատրաստված է բաց դեղնավուն կավից, դրսից պատած է կապաականաչավուն (փիրուզագույն), ներսից երկնադուլին ջնարակով: Վերոհիշյալ բեկորների ինչ տեսակ անոթի պակասելը որոշելուն օգնում է Արմավիրում 1970 թ. դանված կանթարուր: Այն ակոսիկներով զարդարված կոնաձև իրան ունի, դեղեցիկ ձևավորված ոտք, դուրս լայնացող պսակ, ափակ կանթերը երկայնքով ներձկված են, պսակին ամրացված մասում, կանթերը երկու կողքերից ելուստներ ունեն: Արմավիրի⁹ անոթը պարասաված է բաց դեղնավուն, սպիտակ ավազախառնուրդով կավից:


Արմավիրում գտնվել է ակոսավոր մակերեսով անոթի մը այլ բեկոր ես, դարչնագույն ավազախառնուրդով դեղնավուն կավից պարասաված, երկնագույն ջնարակով պատած (1971 թ., № 69):

Այս անոթներն արաքին ձևով ու հարդարանքով մեծադյա անոթների ընդօրինակությունն են: Սրանց անմիջական լուրահետները աակավին մեզ հայտնի չեն: Սակայն երկկանթանի և, ընդհանրապես, առեակոսներով զարդարված խեցեղենի անոթներ հանդիպում են սկսած մ. թ. ա. I հարդարմյակի սկզբից: Ուրարական երկկանթանի, ակոսիկներով հարդարված անոթ է հայանարերվել Արմավիրից¹⁰: Մեծադե և կավե մ. թ. ա. VI—II դարերի սափորներ հայանի են Իրանում, Փոքր Ասիայում և Ադրբեջանում¹¹: Արմավիրից

⁹ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, ԼՂԳ, 1972, № 2, էջ 40. Ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, ՊՐԸ, 1977, № 3, էջ 186—187, աղ. II, 9:

¹⁰ Ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանի մ. թ. ա. VII—I դարերի խեցեղենի ընդող մի ձև, էջ 277, աախա. II, 3:

¹¹ W. Culican, The Medes and Persians, London, 1965, fig. 3, 28, 47; P. Amandry, Argenterie Achéménide, Collection Helene Stathatos, III, 1963, p. 160—161, 262—266, 270—272; P. Amandry, Toreutique Achéménide, „Antike Kunst“, 2, 1959, աախա. 221; С. М. Казеев, Из истории Кабалинского магала, ВИА, Баку, 1962, табл. Хз—5; И. И. Раев, Художественная керамика Кавказской Албании, Баку, 1964, рис. 10—15.



Նկ. 50. 1—դամբ. № 77, 2—դամբ. № 82, 3, 5, 6—դամբ. № 81, 4—դամբ. № 63, 7—արևմտյան դամբարանադաշտից

և Արտաշատից հայտնարեցվել են նաև ուշ հելլենիստական շոթանի ակոսիկներով անոթներին բեկորներ և, ինչպես վերը նշեցինք, հարգարման ալո ձևը շարունակվել է նաև մ. թ. առաջին դարերում: Արմավիրի և Արաաշատի երկկանթանի անոթները հրջեցնում են նաև ուրարտական և աքեմենյան շրջանի, կանթերին ելուսաներ ունեցող, սափորները: Նրանք շերաագրական և հարակից նյութերով թվագրվում են մ. թ. ա. I դարով:

Ջնարակած մյուս բեկորներից հեաաքքեր է ըաց գեղնավուն, նրբախեցի կավից պատրաստված սկահակի ոտքը, որը երկու կողմից թերի է: Այն իր սպիտակին մոտեցող կավի գույնով և կաթնավուն ըարակ հարթ ջնարակով նման է հախճապակու: Քանի որ ջնարակած խեցեղեն պատրաստող կենտրոններից սկահակներ գեռ չեն հայտնարեցվել, կարելի է ենթադրել, որ այն հելլենիստական խեցեղենի ջնարակի տարատեսակն է:

Ուշագրավ է Արտաշատի դամբարանադաշտից գտնված ջնարակած անոթի ներքին մասը: Այն ունի արահայտվող օղակաձև ոտք, որն իր հղկվածությամբ, մշակված անկյունավոր ձեերով կատարելության է հասցված: Այն պատրաստված է դուրգի վրա գեղնավուն միասեռ կավից, իսկ մակերեսը պասած է փիրուղագույն ջնարակով (նկ. 53, 1): Անոթը մի անդամ ջնարակել են ըարակ ջերտով ներսից, խեցու ամրությունն ու անթափանցիկությունն ապահովելու համար, և նուրբ, հարթ ըարձրորակ, լավ հալած ջնարակով պասել են գրսից (պահպ. մասի ըարձր. 7 սմ, հատ. տր. 9, 5 սմ): Հավանարար, այն ճիշտ նույնպիսի երկկանթանի սափորի ներքին մասն է, ինչպիսին հայտնարեցվել է VIII բրից (նկ. 53, 2): Վերջինիս իրանն է պահպանվել, կանթերի հիմքով: Երկկանթանի նման ջնարակած անոթներ շատ են հայտնարեցվել Դուրա-էվրոպոսի գամբարաններից¹², որոնց մի մասը տարրերվում է ուսերին եղած փորագիր զարդերով, Ուրուկից¹³, որոնք ունեն համեմատարար ցածր իրան և լայն հատակ: Արտաշատի VIII բրի անոթը գտնվել է մ. թ. I—II դարերի շերտերից: Կարելի է ասել, որ նույն ժամանակին է պատկանում նաև դամբարանադաշտից գտնված սափորը: Այդ թվագրության օգտին են խոսում նաև վերը ըերված դուգահեռները: Այն, հավանարար, ներմուծվել է միջագետքյան կենտրոններից մեկից, շա հնարավոր է Դուրա-էվրոպոսից, որտեղ այդ շրջանում գոյություն ուներ ջնարակած խեցեղենի մասսայական արտադրություն:

Հաջորդը միկանթանի սափորի մասի բեկոր է (նկ. 53, 3): Այն, հստակարար, եղել է քիչ տանձաձև իրանով, անկյունավոր, վերից վար ներձկված տափակ, փոքր կանթով: Անոթը պատրաստված է դուրգի վրա, կաթնագույն կավից, մակերեսը պատած է փիրուղագույն հաստ ջնարակով, որը հոսել է մինչև անոթի ներսը: Այն աղերսվում է Դուրա-էվրոպոսից գտնված ջնարակած սափորի¹⁴ հետ: III—IV դարերի ձգված, տանձաձև իրանով, ըայց առանց ջնարակի սափորներ հայտնարեցվել են Դաոնիից, Վերին Գետաշենից (ՊՊԹ

¹² N. Toll, The Green Glazed pottery, pl. I, Fig. 4, № 1, Fig. 7, pl. III, Fig. 6, №№ 6, 7.

¹³ E. Strommenger. Gefäße aus Uruk..., Taf. 25, g, 28, 6.

¹⁴ N. Toll, The Green Glazed pottery, pl. VII, fig. 24, № 1.

№ 2000/2), Մինդեկաուրից¹⁵, Ուրբնիսից¹⁶, Մցխեթից¹⁷ (ջնարակած մ. թ. II դ.), Տիգրիսի ափի Սելեկիայից¹⁸ և այլ վայրերից, սակայն Արտաշատի ջնարակած սափորը ալձըր ուուցիկ իրան ունի և վերոհիշյալ տանձաձև սափորների նախատիպն է: Այն, ամենայն հավանականությամբ, պատկանում է I—II դարերին: Իր հախճապակու տիպի կավի գույնով և վարպետությամբ կատարված ջնարակով հնարավոր է, որ այն նույնպես ներմուծված լինի Դուրա-էվրոպոսից:

Կարասային թաղուսից հայտնարերված փոքրիկ անոթը (վերին մասը չի պահպանվել) նույնպես պարասաված է դուրգի վրա, դեղնավուն կավից և ունի թանձր պատեր (նկ. 53, 1): Իրանը տանձաձև է և ունի օղակաձև ոտք: Մակերեսը պատած է կանաչավուն բարակ ջնարակով (պահպ. մասի ընդ. 6 սմ, հատ. տր. 4, 4 սմ): Այն կիրառվել է իրրև օձանելիքի անոթ: Ծնշտ այդպիսի փոքր շափերի ջնարակած և հասարակ միկանթանի անոթներ հայտնարերվել են Դուրա-էվրոպոսից¹⁹, Հավանարար, Արտաշատի փոքր անոթը ներմուծվել է Դուրա-էվրոպոսից: Այն գտնվել է սուր նստուկով կարասի մեջ և պատկանում է մ. թ. I—II դարերին:

Ուշագործյան արժանի են արտահայտվող ոտքով փոքր անոթների ներքին մասերը: Դրանցից առաջինը քիչ մեծ է երկրորդից, պատրաստված է ձեռքով, դարչնագույն սև ու սպիտակ ավազախոնուրդով կավից, երկու կողմից պատած է փիրուզագույն ջնարակով, որը անորակ լինելու և ցածր ջերմաստիճանի տակ հալելու պատճառով խիստ անհարթ է, ծակոտկեն (նկ. 53, 2): Ըստ պահպանված մասի, այն պետք է լինի շատ տարածված, ձգված իրանով, ալարասորնաձև սրվակի մաս (պահպ. մասի ընդ. 3, 5 սմ, հատ. տր. 6 սմ): Նույնպիսի, բայց ավելի փոքր սրվակի ներքին մաս է նաև մյուս բեկորը, որը բաց դարչնագույն մանր ավազախոնուրդով կավից է, ձեռքով պատրաստված, հատակին ունի ակոսավոր շրջան (պահպ. մասի ընդ. 3 սմ, հատ. տր. 3, 8 սմ): Անոթի մակերեսը թաց վիճակում պատել են թույլ կանաչավուն ջնարակի բարակ շերտով (նկ. 53, 2):

Այս անոթներն օգտագործվել են իրրև օձանելիքի, հոտավետ յուղորի սրվակներ և ջնարակած խեցեղենի տարածված տեսակներից են: Այդ ձևի անոթներ հայտնարերվել են Վրաստանից²⁰ և Ադրբեջանից²¹: Դրանք վերաբ-

¹⁵ P. M. Vaudo, Мингечаур в III—VIII веках, табл. VI; С. М. Казиев, Альбом, табл. XXIX, 9.

¹⁶ Л. А. Чилашвили, Городища Урбниси, рис. 30, III.

¹⁷ «Мухета», I, стр. 117, табл. 1, 4.

¹⁸ N. S. Lebevoise, Parthian pottery from Seleucia on the Tigris, fig. 345.

¹⁹ N. Toll, The Green Glazed pottery, pl. XVII, fig. 24, № 2: N. P. Toll, The Necropolis, pl. XLIII, tomb 17.

²⁰ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, табл. XX; М. И. Синауридзе, Погребения позднеантичного и раннефеодального времени из Когото, ВГМГ, XXVII-В, Тбилиси, 1967, стр. 114, табл. II, 28.

²¹ Г. М. Асламов, Археологические раскопки на Торпагкала, «Известия» АН Аз. ССР (об. н.), 1961, № 8, стр. 33—34, рис. 4а, б; Д. А. Халилов, Раскопки на городище Хынислы, стр. 214, рис. 4, 3; Т. И. Голубкина, М. М. Расулова, О связях древних Кав-

րում են մ. թ. I—III դարերին ու մեծ մասամբ պատած են փիրուզպոլյն ջնարակով, կոպիա են պատարաստված, ըսա ուսումնասիրողների գրանք համարվում են եղիպական և հունական նման անոթների ընդօրինակություն²²։ Այդպիսիք դտնվել են նաև Տիգրիսի ափի Սելևկիայից²³, Դուրա-էվրոպոսից²⁴, Ուրուկից²⁵ և այլ վայրերից։ Այդ տիպի անոթները հանդես դալով մ. թ. I դարում, իրենց գոյությունը պահպանում են նաև հետագայում։ III—IV դդ. նման մեծ քանակությամբ սրվակներ են դանվել Հյուսիսային Միջագետքից²⁶ (Թել Մահուզ)։ Արտաշատի սրվակները զուգահեռ նյութերով թվագրվում են մ. թ. I—II դարերով։

Ուշադրության արժանի են ափսեների բեկորները։ Դրանցից մեկը պատրաստված է մուգ դեղնավուն կավից և պատած է բաց կանաչավուն հարթ ջնարակով։ Կրակի մեջ ընկնելու պատճառով նրա կավը սեացել է, իսկ ջնարակը ծակոակեն դարձել։ Այն ափսեի վերին մասի բեկորն է. դրսից իրանից դեպի պսակին անցումը եռանկյունաձև է, իսկ ներսից ուղղահայաց (նկ. 54,6)։

Ըսա երևույթին, նույնպիսի ափսեի շուրթ է նաև երկրորդը, որի պսակը քիչ կլորավուն է (նկ. 54,8)։ Այն պատրաստված է բաց դարչնագույն տեղական կավից, մակերեսը պատած է փիրուզագույն ջնարակով, որի շաղախը ցածր ջերմատիճանի աակ հալելու պատճառով առաջացել են խոշոր պղպաղակներ, և մակերեսն անհարթ է։ Երրորդ բեկորը գտնվում է VIII դրի վրա բացված դամբարանից, պատրաստված է գեղնավուն մսնրահատիկ կավից և պատած է գեղնականաչավուն ջնարակով, մակերեսը ծածկված է թոփագիայով (ժանդով, նկ. 54,7)։

Այս աիպի հասարակ ափսեները, ինչպես վերը նշեցինք, շատ տարածված են եղել և Հայաստանում մեծ քանակությամբ հանդիպում են ուշ հելլենիստական և մ. թ. I—II դարերի շերտերից։ Այս ափսեների ղուգահեռները մենք ունենք նաև Արաաշատի I և VII բլուրներից։ Առաջավորասիական կենտրոնների ջնարակած խեցեղենի մեջ ափսեների նման ձևեր մեղ հայանի շին։ Արտաշատի VIII բլրի ափսեի բեկորը գտնվել է մ. թ. ա. I դարի դամբարանից։ Այդ ժամանակով թվագրվող շերտից են հայանարերվել նաև I բլրի բեկորները։ Ամենայն չափանականությամբ, գրանք պատրաստված են տեղում։

Բեկորներից վերջինը ձկան ափսեի ներքին մաս է, օղակաձև ուղղակի, ներսից, հասակին, ուռուցիկ շրջանի մեջ առնված ընորոշ ակոսով, որից 5 սմ վերև կա փորագիր երկրորդ շրջանը (պահպ. մասի բարձր. 3 սմ, հատ. տր. 12 սմ)։ Անոթը պատրաստված է դուրդի վրա, բաց գարչնագույն, ավազախառնուրդով անդական կավից։ Մակերեսը պատած է փիրուզագույն ջնարակով,

казских албанцев со странами Древнего Мира, Ученые записки Аз. Гос. университета, 1967, № 3, стр. 82, табл. II, 1, 2, 4, 5.

²² Т. И. Голубкина, М. М. Расулова, *Изд. арх.*, էջ 86։

²³ N. C. Debevoise, *Parthian pottery...*, fig. 167.

²⁴ N. Toll, *The Green Glazed pottery...*, pl. XVI, fig. 23, № 1, № 6, pl. XVIII, fig. 24, № 1.

²⁵ E. Strommenger, *Gefasse aus Uruk...*, Taf. 28, 2.

²⁶ Roberta Venco Ricciardi, *Sassanian pottery from Tell Mahuz (North Mesopotamia), Mesopotamia, V—VI, Torino, 1970—1971, p. 427—430, 449—453, fig. 92, № 49—55. 150*

որը անդ-տեղ թափվել է: Շաղախը ցածր ջերմաստիճանի աակ է հայված, ուստի մակերեսը անհարթ է (նկ. 54,11):

Ձկան ափսեի վերին մասի մի բեկոր, ներքև կախված ընդորոշ պսակով, հայտնի է VIII բլրից (նկ. 54,12), որը գտնվել է մեծ խորուխյունից, մ. թ. I դարի խեցեղենի հետ: Այլ վայրերից ջնարակած ձկան ափսեներ գեոևս մեղ հայտնի չեն:

Այս խմբին կարելի է միացնել նաև քրեղանի վերին մասի բեկորը՝ դուրս ու ներս քրշ լայնացող հորիզոնական կտրած պսակով, քիշ ներճկված վզով (նկ. 54,10): Պատրաստված է դեղնավուն կավից, պատած է յավ պահպանված մուգ կանաչ հասա ջնարակով: Շրթի վրա կա կավի և ջնարակի կաթիլ, որը մի քանի անոթներ միաժամանակ թրծելու հետևանք է և սշ թե արտադրական խոտան, ինչպես ենթադրվում է²⁷:

Այս քրեղանի զուգահեռները, նույնպես, մենք ունենք միայն տեղական անջնարակ խեցեղենի մեջ: Այն հիշեցնում է նաև 1973 թ. VIII բլրից գտնված ջնարակած քրեղանի բեկորը (նկ. 54,15), տարբերությամբ, որ վերջինիս պսակրն ավելի շաա է դեպի դուրս լայնանում: Արտաշատի ջնարակած քրեղանները ևս պետք է համարել անդական արաադրանք և թվագրել մ. թ. I—II դարերով:

Ափսեների և քրեղանների են պատկանել դարչնագույն և մուգ դեղնավուն, սև ավազախառնուրդով կավից պատրաստված օղակաձև ոաքով հատակները, որոնց մակերեսը ծածկված է բաց կանաչավուն, կապտականաչավուն, կանաչավուն, երկնագույն և կաթնավուն ջնարակով (նկ. 54,15-21): Դրանցից մի քանիսը ներսից ունեն հտտակն ընդդժող զույգ ակոսավոր շրջան (նկ. 54, 5,17,21): Այգօրինակ հատակները բնորոշ են Արաաշատի մ. թ. ա. II դարի վերջի և մ. թ. II դարի անջնարակ խեցեղենի համար: Նման ակոսավոր զարդերով ջնարակած հատակներ նույնպես շաա են հայտնարերվել Արտաշատի բլուրների մ. թ. ա. I և մ. թ. II դարերի շերտերից:

Հավանարար, Արմավիրից²⁸ հայտնարերված ցածր եղրերով ափսեի վերին կեսը, որը ներսից ունի փորագիր զույգ շրջան, պատրաստված է դեղնավուն, սև ավազախառնուրդով կավից և պատած է կապականաչավուն ջնարակով, նույնպես ունեցել է նման ուր:

Արտաշատի ափսեների և քրեղանների հատակները վերարերում են մ. թ. ա. I—մ. թ. II դարերին: Ամենայն հավանականությամբ, Արմավիրի ափսեն, որն իր զուգահեռներն ունի մ. թ. ա. I դարի և մ. թ. I դարի անջնարակ ափսեների մեջ, ներմուծված է Արտաշատից և պատկանում է մ. թ. ա. I դարի երկրորդ կեսին:

Ուշագրավ են թասերի բեկորները, որոնք նույնպես գեղնավուն կավից են՝ պատրաստված դուրսի վրա և ծածկված են փիրուղագույն ջնարակով: Դրանցից մեկի իրանը ուզղահայաց ակոսիկներով է հարդարված, իսկ մյուսի պսակն անջատված է թեթև ներճկումով: Ծրկուան էլ հիշեցնում են մ. թ. I—II դարերի տեղական հասարակ թասերը (նկ. 54, 11,13):

²⁷ Փ. Ի. Тер-Мартirosos, Античные печи из раскопок Арташата, ВОН, 1975, № 7, стр. 81.

²⁸ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, 129, 1974, № 12, էջ 62—63, նկ. 3 գ:

Արտաշատի դամբարաններից մենք ունենք նաև դարչնագույն և մուգ դարչնագույն կավից պատրաստված ջնարակած մի շարք բեկորներ, որոնք դժվար է ասել, թե ինչ անսակի անոթների են պատկանել: Իրանցից ուշագրավ է դարչնագույն կավից նրբախեցի անոթի բեկորը, որի մակերեսին կաթնագույն-մոխրագույն ջնարակի վրալից տարված է շագանակագույն ջնարակի դափ:

Վերոհիշյալ անոթների քննությունը ցույց է ապրիս, որ ջնարակած խեցեղենը Հայաստանում մ. թ. ա. I—մ. թ. II դարերում լայն տարածում էր ստացել: Այն իր ձևերով, հարգարանքով ու ջնտրակով կապվում է ջնարակած խեցեղենի առևելյան²⁹ խմբի հետ: Նրա մի մասը պատրաստված է տեղում, իսկ մյուսը ներմուծված է Միջագետքյան և Միջերկրականի արևելյան ափերին դանվող կենարոններից: Չի կարելի անտեսել Հայաստանից և Իրանից հայտնաբերված ջնարակած անոթների նմանությունը: Սակայն, դժբախաբար, արհեստագործության այդ կարևոր ճյուղը վատ է ուսումնասիրված, ուստի մենք հնարավորություն չունենք ավելի որոշակի խոսելու ջնարակած խեցեղեն արտադրող իրանական կենարոնների ու նրանց կապերի մասին: Հավանաբար, Հայաստան և Իրան ջնարակած խեցեղեն, հատկապես տափաշներ, ներմուծվել են Միջագետքից, հնարավոր է Տիգրիսի ափի Սելեկիայից:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ Արտաշատից գտնված ջնարակած խեցեղենը հիմնականում կրկնում է տեղական հասարակ անոթների ձևերը: Նրա մեծ մասը պատրաստված է տեղական դարչնագույն և գեղնավուն, սվազախառնուրդով կավից: Հասարակ խեցեղենի մեջ էլ են հանդիպում րաց դարչնագույն և գեղնավուն կավերից պատրաստված անոթներ, ինչպես, օրինակ, Արտաշատի № 40 դամբարանից գտնված գունաղարդ անոթը, որը կաթնագույն կավից է: Արտաշատի շրջակայքում այդ կավատեսակները այսօր էլ կան և օգտագործվում են: Արտաշատի շրջանի Յուվա դյուղի կավը դարչնագույն է և գեղնավուն, թրծված վիճակում այն շաա նման է Արաաշատի անտիկ շրջանի խեցեղենի կավերին: Ինչ վերաբերում է ջնարակին, ապա Սովետական Հայաստանի մի շարք վայրերում, ինչպես, օրինակ, էլարում, Այգեհատում, Արարատի շրջանում կան կվարցիտի հարուստ հանքավայրեր, որոնք իրենց քիմիական կաղմով, որպես հումք, միանգամայն պիտանի են ապակի ստանալու համար: Արարատի կվարցիտի հանքավայրերը գտնվում են Արտաշատի շրջանում, Առարատի երկաթուղային կայարանից 1, 5—2 կմ հարավ-արևմուտք: Այսանդի կվարցիտների հանքանյութը հեշտությամբ է ենթարկվում տաքացման ու մշակման: Քիմիական անալիզը ցույց է տալիս, որ այն բնական բովախառնուրդ է և լրացուցիչ խառնուրդներ չի պահանջում³⁰: Վերջապես, հումք կամ կիսաֆաբրիկատ կարելի էր բերել նաև Հայաստանի ավելի հեռավոր վայրերից: Այնուհետև, ապակու՜ վերը նշված բոլոր գույները և, հատկապես, կաթնա-

²⁹ Д. И. Марченко, Об античных глазурированных сосудах из музеев СССР, КСИА, вып. 128, 1971, стр. 21, 22.

³⁰ «Геология Армянской ССР», т. VII, Неметаллические полезные ископаемые, Ереван, 1966, стр. 209—210, 213—214, 338—342.

դույնը, փիրուպագույնը, կոնաչը, կապույտը, դեղնավունը և նրանց սուրբեր
Երանգները հելլենիստական և մ. թ. առաջին դարերի տեղական ապակու բնո-
րոշ գույներին են: Չնայած առաջավորասիական կենտրոնների ջնարակած
խեցեղենին որոշ շափով հատուկ են դունավոր դարդերը, սակայն, Արաաշաի
ջնարակած խեցեղենի դունավոր դարդերը խիստ բնորոշ են անդական դոնա-
դարդ խեցեղենին: Այդ տեսակետից շատ հետաքրքիր են, հատկապես, Արաա-
շաի IV ըրից հայտնաբերված ջնարակած շրջանաձև դարդերով ասփաշշի
բեկորները (ախտ. XXXII_{1,2}): Հարդարանք, որը թեև հանդիպում է այլ
հնավայրերից, ես, բայց դառնորոշ է Հայաստանի հելլենիստական շրջանի
ասփաշշերին:


Հայաստանի ջնարակած խեցեղենը միշտ չէ, որ բարձրորակ է: Այն դիջում
է առաջավորասիական կենտրոնների արաադրանքին: Տեղական ջնարակած
խեցեղենի կավը հաճախ մաքուր չէ, ոչ շատ բաց գույնը, ջնարակի շերտը բա-
վարար հաստութուն չունի, շաղախը մաքուր չէ և ցածր ջերմաստիճանի աակ է
հալված: Ուստի մակերեսը հարթ չէ, հաճախ ծակոտկեն, իսկ փակ անոթների
ներսը, երբեմն, ջնարակած չի լինում:

Այսպիսով, ինչպես անսնում ենք, ուշ հելլենիստական և մ. թ. առաջին
դարերում, Հայաստանն ուներ ջնարակած խեցեղենի արտադրութուն³¹, Ամե-
նայն հազանականությամբ, այն ապակյա սրվակների նման սպասարկել է
տեղական շուկան և մրցել ներմուծված ջնարակած անոթների հետ: Հայաստա-
նի ջնարակած խեցեղենի արտադրության կարևոր կենտրոններից մեկը եղել
է Արտաշատը, որը բավարարել է և՛ սեփական շուկայի պահանջարկը, և՛ արաա-
շանել հարևան շրջաններ: Հավանաբար, Արմավիրի, Գոռնիի և մյուս հնա-
վայրերի ջնարակած խեցեղենի մի մասը տարվել է Արտաշատից: Անտիկ դա-
րաշրջանում, ջնարակած խեցեղենը համեմատարար թանկ էր և հասարակու-
թյան լայն խավերի հաստը մատչելի չէր:

Ջնարակած խեցեղենի արտադրութունը ապակեղործության նման մ. թ.
IV դարից սկսած վայրէջք է ապրում: Այն կենցաղում իր հաստատուն անդն է
գրավում միայն VIII դարից հետո, երբ ջնարակած խեցեղենը կրկին վերելք
ապրեց և հասավ իր ծաղկմանը:

Չուսով ենք, որ Հայաստանի անտիկ շրջանի հուշարձանների պեղումները,
հետազայում, նոր նյութեր կհայթայթեն ջնարակած խեցեղենի ուսումնասիրու-
թյան հետ նախնած մութ հարցերի լուսաբանման համար:

31 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, էջ 192—194:



Уд. 51. 1-9—гладр. М 82

V. Ա Պ Ա Կ Ի

Արտաշատի, Արմավիրի, Միսիանի և Հայաստանի մյուս հնագայլերի վերջին տարիների պեղումները կարևոր նյութեր հայթայթեցին հելլենիստական շրջանի ապակեգործության ուսումնասիրության համար: Քննությունը ցույց է տալիս, որ այդ շրջանում Արտաշատում եղել է ապակու արաադրություն¹: Մինչ Արտաշատի պեղումները Հայաստանի անտիկ շրջանի ապակին ներկայացված էր հիմնականում օժանելիքի սրվակներով, Արտաշատում հայտնաբերված թասերն ու բաժակները հնարավորություն ընձեռեցին ուսումնասիրելու նաև կենցաղային իրերի այդ խումբը:

Արտաշատի դամբարաններում ապակի քիչ է հայտնաբերվել: Բանն այն է, որ արևելյան և հարավարևելյան դամբարանադաշտերում հանգուցյալներին նվիրաբերված ապակին թաղման արարողության ժամանակ խեցեղենի նման նետվել է կրակի մեջ, որտեղ այն հալվել է կամ այնպիսի մանր բեկորների է վերածվել, որ անհնարին է նրա ձևի մասին որևէ դադափար կազմել:

Հարավարևելյան դամբարանադաշտից մեզ է հասել միայն ապակե թասի մի հատակ, իսկ արևելյանից՝ հատակի մի բեկոր և կապտա-կանաչավուն, բաց կանաչավուն, դեղնավուն ապակուց պարաստված անոթների մի շարք անորոշ բեկորներ: Ամրողչական սրվակներ են հայտնաբերվել ըլուրներից արևմուտք գտնվող դամբարանադաշտից և VIII բլրի վրա հյուսիսային պարսպի մոտ, ներսում բացված կարասային և հիմնահողային թաղումներից:

Հնաքերի է արևելյան դամբարանադաշտից գտնված բաց կապույտ (լաղուրիաի) գույնի ապակուց պատրաստված անոթի հատակի բեկորը՝ օղակաձև կլոր ոտքով (հատ. տր. 5, 2 սմ): Այն ապակու որակով, դսւյնով և պատրաստման եղանակով նման է ըլուրների պեղումներից հայտնաբերված տարրեր շափերի թասերի շրթերի բեկորներին ու հատակին (տախտ. XXXII₂): Այդ անոթները պատրաստված են քարե կաղապարի վրա ապակյա թևեր փաթաթելու կամ ծեփելու միջոցով, որից հետո պտտվող անիվի օղնությամբ լրացուցիչ մշակման են ենթարկվել: Ապակին սառը սշապման ենթարկելու եղանակը Միջագետքում, Ասորեստանում կիրառվում էր դեռևս I հազարամյակի առաջին քառորդին², որը շարունակվեց նաև հետագայում: Թասերի ներսը խամրած է, երևում է կաղապարի ֆակտուրան: Դրանք տարրեր խորու-

¹ Ж. Д. Хачатрян, Стеклоделние в Древней Армении (II—I вв. до н. э), стр. 256—258.

² M. E. L. Malowan, Nimrud and its Remains, vol. II, London, 1966, *Axel von Saldern*, Glass, pp. 623—634, fig. 586—593; տե՛ս նաև W. E. E. Turner, Studies of ancient glasses and glass-making processes. Part II, „Journal Society of Glass Technology, vol. 38, № 184, 1954, p. 445.

թյան են, աստիճանաբար դեպի հատապար գնացող կլորավուն իրանով: Բոլոր թասերն ունեն հորիզոնական կարած պսակներ, որն սասցվել է կաղապարը մեաաղե կամ քարե տախաակի վրա ղնելուց (աախտ. XXXII_{1,5}):

Այս թասերն իրենց ձևերով ու շափերով աղերովում են պորֆիրիտե և օձաքարե սկահակների հեա, այն աարերովթյամբ, որ քարե սկահակներն ունեն բարձր ոաքեր: Նրանք ձայնակցում են նաև ուշ հելենիստական խեցեղեն թասերի հեա: Արաաշաաի բլուրներից հայտնարերված այս անոթները աարբեր գույնի ու որակի ապակուց են: Մի մասի ապակու մեջ կրեում են ցածր շերմաստիճանի տակ հալելուց առաջացած կլոր պղպշակներ ե թվազրվում են մ. թ. ա. II—I դարերով:

Արևելյան դամբարանաղաշտից գտնված հատակը նման թասի է սյատկանում և պատրաստված է ավելի բորձրորակ ապակուց, սակայն ներկը լավ խառնված շինելու հեաևանքով ստացվել է ավելի բաց ու մուգ գույների խառնուրդ: Այսինքն, ապակյա թասերը ոչ միայն ձևերով, այլև ֆակաուրտյով, գույներով են աշխատել նմանեցնել քարե սկահակներին: Անոթի այս հաաակը պատրաստված է Արտուշատում³ և բլուրներից հայտնարերված ղուգահեո նյութերով թվազրվում է մ. թ. ա. II—I դարերով:

Վաղ շրջանի ապակյա թասերը լավագույն ապացույցն են այն բանի, որ մինչև փշելու գլուտը ապակյա անոթները պատրաստվում էին քարե և կավե անոթների օրինակով:

Այս առումով հետաքրքիր է նաև արևելյան դամբարանաղաշտից գտնված մի այլ թասի բեկոր: Կապտականաշավուն թափանցիկ հաստ ապակուց պատրաստված կիսաղնդաձև թասի մակերեսը դրսից ունի ուղղահայաց թմբեր, որոնք դեպի վեր աստիճանաբար բարձրանում և լայնանում են: Թասն սովաբավում է կլոր պսակով, հատակը հարթ է (նկ. 52₁₁): Կապտականաշավուն և բաց կանաշավուն ապակուց պատրաստված նման թասերի բեկորներ գտնվել են Արտաշաաի VII և VIII բլուրներից, Գառնի ամբոցից (նկ. 52₁₂, տախտ. XIՃ₈): Մի ամբողղական թաս էլ հայտնի է Քերաևից (հարավարևմտյան Հաաաստան), Փաղնիթի մ. թ. I—II դդ. դամբարանից⁴: Դրանց ուղղահայաց թմբերի հեոավորությունն իրարից 1, 7—3 սմ է:

Ալդպիսի թասեր գտնվել են նաև Վրասաանից⁵ (Ուալիսցիխե): Այս թասերն («Rippenschale») անտիկ ապակու ամենատարածված օրինակներից մեկըն են և օգտագործվել են իբրև ըմպանակներ: Դրանք արտագրվել են արևելյան⁶ և արևմտյան կենտրոններում, մ. թ. ա. I —մ. թ. II դարերում, որից

³ Ж. Д. Хачатрян, *Удг. аџт.*, էջ 256.—258, տախտ. II₁₀:

⁴ R. P. Harper, Pagnik Orient Excavations, 1969, ser. 1, № 2, p. 95, pl. 65₂.

⁵ Д. А. Хачугайшвили, Уплнццихе, I, Тбилиси, 1964, табл. XLIX, 1, 2; նույնի, Уплнццихе, II, Тбилиси, 1970, стр. 112, табл. XXIII, 8 (конец I в. до н. э.—I в. н. э.).

⁶ G. A. Elsen, Glass, vol. I, New York, 1927, p. 213, fig. 53, pl. 40: Recent Important Acquisitions, JGS, XIV, 1972, pl. 4; Ch. W. Clairmont, The Glass vessels, The Excavations at Dura-Europos, Final Report, IV, part V, New Haven, 1963, p. 25, 26, pl. IV, 101, 104—103; O. Vessberg, Glass, The Swedish Cyprus Expeditions, vol. IV, part 3, The Hellenistic and Roman Period in Cyprus, Stockholm, 1956, p. 128, fig. 41₆: դրահանությունը նույն տեղում:

հետո նրանք այլևս չեն հանդիպում⁷։ Մ. Թ. ա. I դարի Թասերն աչքի են ընկնում իրենց խորությամբ, պարաստման մեծ վարպետությամբ և գեղարվեստական ձևավորմամբ։ Նրանք մեծ մասամբ պատրաստված են միլեֆիրի (հազտրան-ծաղիկ) կոչվող և մարմարափայտ պակուց։ Բնականարտր, բարդ ու աշխատատար այս եղանակով պատրաստված Թասերը Թանկ էին, հետևարար ավելի քիչ էին ասարածված։

Մ. Թ. I դարից սկսում են պատրաստել այդպիսի միագույն Թասեր, շնայած դեռևս քիչ քանակությամբ շարունակվում էր միլեֆիրի և մարմարափայտ անոթների արտադրությունը։ Ստեփանյան մ. Թ. I դարի առաջին կեսի Թասերը ղեռնա աչքի էին ընկնում իրենց կապույտ, կանաչ, դեղին և այլ վառ գույներով։ Այս Թասերի լայն ասարածման ժամանակը մ. Թ. I դարի երկրորդ կեսն է։ Այդ շրջանի Թասերը, պահանջարկի մեծացման պահանջով, ավելի անխնամ են պատրաստված, միօրինակ են, սահմանափակ, բաց գույներով։

Այս Թասերը պատրաստվել են կաղապարի մեջ ձուլելու եղանակով, սակայն նրանց ուղղահայաց թմբերի ստացման հարցի վերաբերյալ տարակարծություններ կան։ Գիտնականների մի մասը դտնում է, որ դրանք պատրաստվել են կաղապարի օգնությամբ⁸, մյուսներն այն կարծիքին են, թե կաղապարում ձուլվել է կիսադնդած Թասը, իսկ ուղղահայաց թմբերը հղկելու եղանակով են սաացել⁹։

Հայաստանից հայտնաբերված ապակե Թասերի քննությունը թույլ է ապացուցում, որ դրանք պատրաստվել են հետևյալ կերպ. Թասերը կաղապարի մեջ ձուլելուց հետո նորից տաքացվել են, կտրվել, հարթեցվել ու կտրացվել մինչև պսակը հասնող ուղղահայաց թմբերի վերին մասերը։ Վերջում Թասը ենթարկվել է սառը մշակման, հղկվել է պսակը։ Արտաշատի Թասը ներսից ունի ակոսավոր զույգ գոտի։


Տարակարծություններ կան նաև ապակյա այս Թասերի մետաղե¹⁰, թե՛ կավե անոթների ընդօրինակություն լինելու հարցի վերաբերյալ¹⁰։ Այստեղ, մեր կարծիքով, ճիշտ են այն դիտնականները, որոնք ապակյա Թասերի վրա տեսնում են մետաղյա ըմպանակների աղդեցությունը։ Քանի որ հենց կավե

⁷ Fr. Fremersdorf, Das Naturfarbene Sogenannte blaugrüne Glas in Köln, Die Denkmäler des Römischen Köln, Band IV, 1958, tafel 6, 7; P. La Baume, Glas der antiken Welt I, Römisch-Germanisches Museum der Stadt Köln und Archäologische, Gessellschaft Köln, tafel 7, 2—4, 8, 1, 48, 1; L. Berger, Römische Gläser aus Vindonissa, Basel, 1960, S. 18—19, tafel. 2, 23—29; Thea El. Haevernick, Die Verbreitung der „Zarten Rippenschalen“, Jahrbuch des Römisch-Germanischen Zentralmuseums Mainz, 14. Jahrgang 1967, S. 153—166, tafel 43, 1—4; O. Doppelfeld, Römische und Frankisches Glas in Köln, Köln, 1966, S. 25—27, Abb. 9.

⁸ Н. П. Сорокина, Стекло из раскопок Пантыкалея 1945—1959 гг., МИА, № 103, М., 1962, էջ 215, նկ. 2, 4, 5, 3, 3, 4, Հնադեռ Ն. Մորոկինան բանավոր զրույցի ժամանակ մեզ հայտնեց է, որ ինքը նույնպես դրանց հղկելու եղանակով պատրաստելու կոչմանակից է։ Այդ մասին տե՛ս Ch. W. Clairmont, նշվ. աշխ., էջ 25, 26.

⁹ L. Berger, նշվ., աշխ., էջ 18.

¹⁰ Այդ մասին տե՛ս L. Berger, նշվ. աշխ., էջ 19.



Նկ. 52. 1—7, 9—զամբ. № 84, 8—արևելյան դամբարանադաշտից, 11—Արտաշատի VIII բլրից, 10—Դուրա-էվրոպոսից, 12—Գառնիից.

Թասերն իրենք պատրաստվել են մետաղյա թասերի օրինակով: Ապակե վաղ շրջանի թասերն իրենց հատակին ունեն մեկ կամ մի քանի խորր ակոսավոր փորագիր շրջաններ, որը նույնպես ընորոշ է մետաղյա ըմպանակներին: Տեղին է Նիշյու ասորեստանյան, ուրարական և քեմենյան մետաղյա փիլալաների, սափորների կտվե և ապակե բազմաթիվ ընդօրինակութունները, որպիսիք մեծ քանակութամբ հայտնարերվել են Իրանում, Կովկասում, Փոքր Ասիայում, Մերձավոր Արևելքում: Ապակյա ուղղահայաց թմբերով թասերը, անշուշտ, հելլենիստական լեզվածե զարդերով մետաղյա ըմպանակների ընդօրինակութունն են:

Արտաշատի և Գառնիի թասերն իրենց դուլների միօրինակութամբ և ուղղահայաց թմբերի համեմատարար անփույթ մշակմամբ կարող են վերաբերել այդօրինակ անոթների ավելի ուշ արտագրանքին, ուստի և նրանք ազերսվում են մ. թ. I դարի երկրորդ կեսի թասերի հետ: Պեք է ենթադրել, որ այս թասերը Հայաստան են բերել հռոմեական զինվորները Արեմուտքից, որտեղ դրանք լայն ասրածում ունեին և շատ էին օգտագործվում կենցաղում:


Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ առայժմ այդպիսիք հայտնարերվել են Արաշատում, Գառնիում, Փաղնիքում, որանդ մ. թ. I դարի երկրորդ կեսին դառնվելիս են եզել հռոմեական կայազորներ: Հավանարար, նման թասեր Հայաստան են ներմուծվել նաև առետրական ճանապարհներով:

Ուշադրավ է հարավարեելյան դամբարանադաշտից (դամբ. № 42) զանված փուլած անոթի հատակը, օգակածե ոտքով, որը պատրաստված է հազարանժազիկ (միլեֆիրի) կոչվող տեխնիկայով (աախա. XXXI3): Այս տեխնիկան լայնորեն կիրառվում էր մ. թ. ա. և մ. թ. I դարերում, հատկապես մ. թ. I դարում: Այդպիսի անոթներ շատ են պատրաստվել եգիպտական և սիրիական արհեստանոցներում:

Հարավարեելյան դամբարանադաշտի միլեֆիրի անոթի հաաակը կարմիր, դեղին, կաթնագույն և մանուշակագույն ապակուց է պատրաստված: Երևում են օվալածե, աչքերի նման, ժապավենածե զարդեր: օգակածե ոտքի վրա, որն ամրացվել է անոթը պարաստելուց հետո, նկատելի են տարրեր գույների ապակիների շերտերը: Անոթի հաաակը անհարթ է, որը վարպետի անփորձության հետեանք է:

Միլեֆիրի անոթները շատ թանկ արժեին և մաաչելի չէին ցածր խավերին: Այդպիսի օվալածե, շրջանածե կետերից ու ժապավեններից կաղմված զարդերը ընորոշ են մ. թ. I դարի առաջին կեսի արաադրանքին¹¹: Արաաշատի հարավարեելյան դամբարանադաշտի միլեֆիրի անոթի հաաակը գտնվել է մ. թ. I դարի աճյունասափորի կողքին, հոգեհացի տեղում, մյուս մնացորդների հետ միասին: Այստեղ հայտնարերված խեցեզգեն անոթների բեկորները, մետաղյա իրերը ընորոշ են մ. թ. I—II դարերին: Միլեֆիրի անոթի հաաակը կարող է թվագրվել մ. թ. I դարի առաջին կեսով: Այն հավանարար ներմուծվող բարձրարվեստ, հազարանժազիկ կոչվող տեխնիկայով պարաստված թասերի, գավաթների տեղում կաարված ընդօրինակութուն է. երբ վարպետ

¹¹ Ch. W. Clairmont, Նշվ. աշխ., էջ 10, 11.



Նկ. 53. 1-8—Ձևաբալկած խեցեղեն, դամբարանադաշտերից և Արտաշատի բլուրներից:

ղեռևս լիովին չի հաղթահարել այդ անխնայի հետ կապված դժվարությունները:

Արտաշատի գումբարաններից հայանաբերված ապակու մեջ կան ագաս փշելու եղանակով պատրաստված, տեղական համարվող, ինքնաաիպ ձևի սրվակներ (նկ. 42,2,3, 45,3,4,5, տախտ. XIX 5,6,7, XXI,5): Դրանք հինդն են, որոնք ընդուններից արեմուտք գտնվող դամբարանագաղտից են, կարասային թաղամներից, ունեն փոքր ասորոլուծյուն և պատրաստված են կապտականաչավուն րաց դույնի ապակուց: Երեքն ունեն ավելի ձգված իրան (երկուսը թերի են, մեկի պահպ. մասի բարձր. 6,7 սմ, հատ. տր. 2,5 սմ է, մյուսինը՝ բարձր. 5, 8 սմ, հատ. տր. 2 սմ է), քիչ ներճկված հատակ, որոնց վրա պահպանվել են պորտի հետքերը (տր. 1,3—2,2 սմ): Մեկի ձվաձև իրանի վերին մասը ուռուցիկ է: Բոլորի մջի և իրանի միացման անցք սեղմված է, ինչպես այս տիպի մյուս անոթներին: Ասորոլուծյուն սրվակն ունի երկար, դեպի վեր քիչ նեղացող վիզ, որն ավարավում է դուրս ու ներս լայնացող հորիզոնական պսակով (բարձր. 14,4 սմ, պս. տր. 3,5 սմ, հատ. տր. 3,2 սմ): Երեք սրվակներն էլ տեղ-տեղ ծածկված են օդի ազդեցությամբ դունափոխված արծաթագույն-մանուշակադույն իոդիպցիայով:

Սրվակներից մյուս երկուսը ունեն քիչ ավելի ուռուցիկ իրան, մեկը ամբողջական է (արևմայան դամբարանագաղտ, դամբ. № 82, բարձր. 12,6 սմ, պս. տր. 3 սմ, հատ. տր. 3 սմ), մյուսը թերի (պահպ. մասի բարձր. 5 սմ, հատ. տր. 3 սմ), հատակին երևում են պորտի հետքերը (տր. 2 սմ), պատրաստված են րաց կապտականաչավուն հաստ ապակուց, մակերեսը տեղ-տեղ ծածկված է մանուշակագույն-արծաթագույն իոդիպցիայի շերտով (նկ. 51,5,6, տախտ. XIX,2): Ասորոլուծյունն ունի քիչ ուռուցիկ, դեպի վեր աստիճանարար նեղացող վիզ, որն ավարավում է դուրս ու ներս լայնացող պսակով: Չվաձև իրանով սրվակի մի բեկոր էլ հայտնաբերվել է VIII դրից. ջրավաղանից¹²:

Այսօրինակ սրվակներ շատ են հայտնաբերվել Հայաստանի տարրեր վայրերում, Գառնիում, Կողբի մոտակայքում, Ղափանի շրջանում, Լիճքում, Վերին Գետաշենում, Երևանում¹³, Նախիջևանի շրջանի Բեյուկդյոզ¹⁴ գյուղում և այլուր: Հայաստանում հայտնաբերված սրվակներին որոշակի նմանութուն ունեն Վրաստանում¹⁵ և Ադրբեջանի տերիտորիայում¹⁶ դտնված օրինակները: Այս սրվակներն իրավասր առանձնացվում են որպես անդական արտադրանք¹⁷ և թվադրվում են I—II դարերով: Ինքնաաիպ այդ սրվակներից ոչ Սիրիայում և ոչ էլ ապակեգործական այլ կենտրոններում չեն հանդիպում, իսկ Անդրկովկա-

¹² Ժ. Գ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. աշխ., էջ 84, տախտ. II,2

¹³ «Հին Հայաստանի ապակին», № 43—56. Ժ. Գ. Խաչատրյան, Անտիկ դամբարան Լիճքում, էջ 278, նկ. 3:

¹⁴ Иггар Алиев, В. Г. Алиев, О сормато-аланских памятникках на территории Нахичеванской АССР, СА, № 1, 1976, рис. 2, 4, в. 7.

¹⁵ И. Н. Цицишвили, Гробница у станции Мцхета, КСИИМК, 54, 1954, стр. 121 п сл., рис. 55—2; М. Придик, Новые Кавказские клады, МАР, № 34, стр. 106, табл. V.

¹⁶ С. М. Қазиев, Альбом, стр. 25, табл. XXXIV.

¹⁷ Այս մասին գրականութունը տե՛ս «Գարն», V, стр. 62—63.

սում դրանք մեծ թիվ են կազմում: Ուստի այդ սրվակները չի կարելի սիրիական արտադրանք¹⁸ համարել:

Հայաստանում հայտնաբերված ինքնաաիպ ձևի, ընդգծված ուսերով սրվակները իրարից ասարբերվում են ասլակու որակով, երանգով (գեբակչոողը կանաչն է), իրանի, վզի և պսակի որոշ առանձնահատկություններով: Այս մեներ վկայում են նրանց ասարբեր արհեստանոցների և ասարբեր վարպետների արտագրանք լինելը: Այս տեսակետը հաստատում է նաև այդ սրվակների հատակին եղած փշելու խողովակի հետքերի տարբեր տրամագծերը և ասարբեր շերմաստիճանի տակ սշակվելը, որովհետև նրանցից ոչ բոլորն է, որ բարձրորակ տպակուց են: Արտաշատի սրվակները բոլորն էլ նույն տպակուց են պարաստված, այդ են վկայում ապակու որակը, գույնը և նրանց մակերեսի իռի-սացիայի գույնը: Նրանց վզերի և իրանի միացման տեղը քիչ սեղմված է, սլակները յուրահատուկ ձև ունեն, դուրս ու ներս լայնացող, որը պատրաստված է ապակին դուրս ու ներս ծալելու միջոցով: Ամենայն հավանականությամբ, դրանք պատրաստվել են Արտաշատում, ըստ երեույթին և՛ վզերը, և՛ պսակները ձևավորելու այդ եղանակը ընորոշ է եղել Արտաշատի վարպետներին: Սրվակների հաաակին եղած փշելու խողովակի հետքերի տրամագծերը վկայում են, որ դրանք պատրաստվել են տարբեր վարպետների կողմից:

Այս սրվակների տաբածման շրջանակները թեև դուրս չեն գալիս Անդրոկովկասի սահմաններից, սակայն Ազրբեջանից և Վրաստանից հայտնաբերված նմուշների մեծ մասը առանձին գծերով ասարբերվում են իրարից: Այսինքն, այդ տիպի սրվակներ արտադրվել են Անդրկովկասի մի շարք ապակեգործական կենտրոններում, տեղական՝ անդրկովկասյան շուկայի համար, ապակյա սրվակների նկամամբ եղած բարձր պահանջարկը բավարարելու համար: Նրանց ինչպես տարածման, այնպես էլ արտադրության ժամանակը մեծ չէ: Մենք առայժմ այդպիսի սրվակներ ունենք մ. թ. I և II դարերով թվագրվող դամբարաններից ու շերտեհող: Ուրեմն, դրանց արտադրությունն սկսվում է մ. թ. I դարի կեսերից և հարատևում մինչև II դարի կեսը: Հավանաբար, գրտնով պետք է բացատրել նրանց բացակայությունը Վաղարշապատում: Քանի որ այդ սրվակներից ամենաշատը հայտնաբերվել է Հայաստանում, ուստի կարելի է դրանց արտադրության հիմնական կենտրոնը համարել Հայաստանը:

Արտաշատի դամբարաններից գտնված ապակյա անոթներից չորսը մյուսներից տարբերվում են իրենց տանձաձև իրանով (նկ. 51, 5, 6, ախա. XIX₃, XX_{2,3}): Դրանցից երկուսը գտնվել են VIII բլրի հյուսիսային պարսպի մոտ, ներսում, կարասային թաղումից: Պատրաստված են բաց կապտականաչավուն թափանցիկ ապակուց, ունեն քիչ սեղմված իրան, մեկը բավակտնին հաստ ապակուց է (բարձր. 9,5 սմ, պս. տր. 2,8 սմ, հատ. տր. 3,6 սմ), մյուսի հաակը թևերի է (պս.հպ. մասի բարձր. 11, 5 սմ, պս. տր. 2, 5 սմ): Երկուսի վզի և իրանի միացման տեղը սեղմված է: Առաջին սրվակի հատակին կպած է մի այլ սրվակի շրթի բեկոր, այդ պատճառով այն ուղիղ չի կանգնում (տախա. XIX₃): Երկու սրվակի մակերեսն էլ տեղ-տեղ ծածկված են մանուշակագույն իռիզացիայով:

¹⁸ Иерар Алиев, В. Г. Алиев, 224. 224., էջ 178.

Սրվակներինց մյուս երկուսը գանվել են ըլուրների արևելյան մասինց, կոր վիրապի ճանապարհի մոտ, կարասային թաղումինց:

Այս սրվակները վերոհիշյալներից տարբերվում են իրանի ուտուցիկու-թյամբ և իրենց շափերով (տախտ. XX₂), մեկի բարձր. 16, 5 սմ, պս. տր. 3,6 սմ, հատ. տր. 4 սմ, մյուսի բարձր. 14 սմ, պս. տր. 3,4 սմ, հատ. տր. 5,6 սմ):

Հայաստանում, հատկապես Գառնիի և Լիճքի դամբարաններում, տան-ձածե իրանով սրվակներ շատ են հայտնաբերվել: Դրանք տարբեր շափերի են, թվագրվում են մ. թ. I—II դարերով և համարվում են սիրիական, որովհետև շատ գեպքերում նրանք սիրիական ապակու հետ համընկնում են ոչ միայն շափերով ու ձևով, այլև ապակու գույնով¹⁹: Տանձածե սրվակները ամենատարած-ված ձևերից մեկն են և ունեցել են համեմատաբար երկար կյանք: Այդպիսիք ար-տադրվել են արևելյան, մանավանդ արևմտյան ապակեգործական կենտրոն-ներում: Արևելյան երկրներում տանձածե սրվակներ շատ են հայտնաբերվել Վրաստանում, սիրիական հնավայրերում, Սամոթրակե կղզում, Կիպրոսում, նույնիսկ հեռավոր Հնդկաստանում և այլուր²⁰: Դրանք պատկանում են մ. թ. I—III դարերին: Հնագեաններ Ն. Կունինյան և Ն. Սորոկինյան հատուկ ուսումնա-սիրություն անող գաղթյալները Բոսֆորում՝ Պանտիկասպեյում և Կեպիում դտնված տարբեր տիպի սրվակները, դրանց արտադրության և տարածման ժամանակը Բոսֆորում համարում են I դարի առաջին կեսը²¹:


Արտաշատի սրվակները շատ իրենց ձևով նման են արևելյան կենտ-րոնների արտադրանքին, սակայն մի շարք առանձնահատկություններով ասարբերվում են նրանցից: Արտաշատի տանձածե սրվակները պատրաստված են նույն ապակուց, ինչ-որ վերոհիշյալ տեղական սրվակները: Նրանք նման են ոչ միայն ապակու գույներով ու որակով, այլև մակերեսի իռիզացիայի գույնով: Նրանց վզերի և իրանների միացման տեղերը նույնպես սեղմված են, պսակները նույն եղանակով են պատրաստված: Այսինքն՝ դուրս ու ներս ծալելու եղանակով: Այս հատկանիշները թույլ են տալիս ասե-լու, որ սրանք ևս տեղական են: Առաջին երկուսը պատկանում են մ. թ. I դարին, ավելի ճիշտ I դարի երկրորդ կեսին, որովհետև այդ հատկա-նիշները քիչ ավելի ուշ են հանդես գալիս: Այդ թվագրմանը շին հակասում նաև նույն դամբարանում գտնված, կարմիր փայլեցրած կավե դավաթն ու պնակը, երկգլան կանթով ներմուծված ամֆորան և մյուս իրերը, իսկ երկուսը մ. թ. II—III դարերին, ավելի հավանական է մ. թ. II դարին: Այդ թվագրման օգտին է խո-սում նույն դամբարանից գտնված կապտավուն, դեղաձև իրանով երկկանթանի անոթը:

Նույն ապակուց է պատրաստված արևմտյան դամբարանադաշտից գրտ-նրված ներճկված կոզերով ապակե սրվակի ներքին մասը, որի հատակը նույն-

¹⁹ Г. А. Тирацян, О торговых связях Армении с Сирией в античное время, «Палестинский сборник», 1959, № 4, стр. 75 и сл., ф. Դ. Խաչատրյան, Անտիկ դամբարան Լիճքում, էջ 278, 279, նկ. 2. «Հին Հայաստանի ապակին», № 27—36.

²⁰ «Гарни», V, стр. 56—58.

²¹ Н. З. Кунина и Н. П. Сорокина, նշվ. աշխ., էջ 160, տիպ. I, նկ. II, 15:



Նկ. 54. 1—18—դամբարանագաղտերից և Արտաշատի բլուրներից

պես ներձկված է (հատ. տր. 4, 5 սմ), իսկ մակերեսը տեղ-տեղ ծածկված է մանուշակագույն իռիդացիայով: Ներձկված կողերով, ներմուծված և տեղական սրվակներ Հայաստանում²², առավելապես Գառնիում և Վաղարշապատում շատ են հայտնարեքվել: Ներձկված կողերով տարբեր ձևերի ու չափերի ապակյա անոթներն ընդհանրապես լայն տարածում են ունեցել և արտադրվել են ապակեդործական թև՝ արևելյան և թե՛ արևմտյան կենարոններում և սովորական են եղել I—V դարերին: Ներձկված կողերով բաժակներ և շշեր գտնվել են նաև Արաաշատի VIII րլրի երրորդ շինարարական շրջանին վերաբերող շերտից²³: Արևմտյան դամբարանադաշտից դանված մեր սրվակի հատակը իր ձևերով ձայնակցում է Գառնիից և Հայաստանի մյուս վայրերից գտնված ներձկված կողերով սրվակների հետ: Այն կարող է պատկանել մ. թ. I—II դարերին:

Արտաշատի դամբարանադաշտից հայտնարեքված ապակյա անոթներից վերջինը VIII րլրի հյուսիսային պարսպի մոտ ներսի մասում բացված քարակղզից գտնված սրվակն է (նկ. 44, 1, տախտ. XX4): Այն մուգ կապույտ բարակ ապակուց է, պատրաստված աղաա փշելու եղանակով (բարձր 7,8 սմ, պս. տր. 2 սմ, հատ. տր. 1, 6 սմ), ունի ձգված տանձաձև իրան, աստիճանարար լայնացող պսակ, որը դուրս ու ներս ծալելու եղանակով է պատրաստված, հատակը ներձկված է: Իրանից վզին անցումը սահուն է: Վարպետի տնփորձության պատճառով վզի ներքին մասում, տաք վիճակում սեղմվել է, որի հետևանքով այն ծոմով է և վիզը թեքվել մի կողմ:


Այն հիշեցնում է Գառնիի № 124 դամբարանում դտնված նույն գույնի ու չափերի սրվակը²⁴: Վերջինս, սակայն, ավելի կանոնավոր ձևեր ունի: Պեաք է ենթադրել, Արտաշատի սրվակը անտիկ աշխարհում լայն տարածում սացած և Հայաստան ներմուծված I—II դարերին պատկանող կոնաձև իրանով սրվակների ընդորինակութունն է և, հավանաբար, պատրաստվել է Արտաշատում: Այն կարող է պատկանել I—II դարերին:

Դամբարաններից հայտնարեքված ապակյա անոթների սօջ ուշագրության արժանի են խոր Վիրապ տանող ճանապարհի եզրին, շրանցքի շինարարության ժամանակ բացված, կարասային թաղումներից հայտնարեքված գրեթե գլանաձև իրանով շշերը (նկ. 49, 1, 2, տախտ. XIX, 2): Երկուսն էլ պատրաստված են կաղապարի մեջ փշելու եղանակով, ըաց կանաչավուն երանգով թափանցիկ բարձրորակ ապակուց, որը հալված է բարձր ջերմաստիճանի տակ: Նրանք ունեն ներձկված հատակ, մեկը համեմատարար ավելի գլանաձև է, քիչ հորիզոնական ուսերով (բարձր. 11,2 սմ, պս. տր. 3,1 սմ, հատ. տր. 4 սմ): Վիզը կարճ է. ուռուցիկ, պսակը հորիզոնական, դուրս լայնացող, ներքև ու վերև ծալելու միջոցով պատրաստված, վզի և իրանի միացման տեղը քիչ սօղմված է: Մյուսն առաջինից տարբերվում է վերին մասում քիչ լայնացող իրանով և թեք ուսերով (բարձր. 10, 7 սմ, պս. տր. 3 սմ, հատ. տր. 3, 5 սմ): Այս շշերն իրենց ձևով աղերսվում են Գառնիի № 71 դամբարանից գտնված

²² «Հին Հայաստանի ապակին», № 79—84:

²³ Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կաճեցյան, նշվ. աշխ., էջ 89, աախտ. II, 15, III, 13, 14:

²⁴ «Гарни», V, стр. 59, табл. XXI, 4:



Նկ. 55. 1—5—Հարավարևելյան դամբարանադաշտից, 6, 7—արևմտյան դամբարանադաշտից

րաց կանաչավուն, տեղ-տեղ անգույնի հասնող ապակուց պատրաստված սրվակի հետ: Վերջինիս իրանի վերին մասը քիչ լայն է. ներքևին համեմատ, ուռուցիկ կարճ վիզը ավարտվում է գուրս լայնացող հորիզոնական կարած պսակով, հաասակը ներճկված է²⁵:

Հայաստանում գտնված այս սրվակներն իրենց ուղղակի զուգահեռները չունեն, իսկ ընդհանրապես, քիչ թև շատ նմանություն ունեցող սրվակների թիվն էլ մեծ չէ: Անգույն ապակուց գլանաձև իրանով մի սրվակ գտնվել է նդիսպոսից²⁶ (րարձր. 10, 3 սմ), գլանաձև և դեպի վեր աստիճանաբար լայնացող իրանով շշեր հայտնի են Սիրիայից²⁷, որոնք թվագրվում են II—III դարերով²⁸: Այդպիսի շշերի մի ամբողջ խումբ կա Դամասկոսի²⁹ ազգային թանգարանում, որոնք տարրեր չափերի են: Արևմտյան ծագում ունեցող այդպիսի մյուս սրվակները թվագրվում են տարրեր ժամանակներով՝ մ. թ. I դարով³⁰ և II—III դարերով: Կլ. Այսինգսի հրատարակած այդպիսի սրվակներից մեկը միայն լայն պսակով և չափերով է տարրերվում մեր օրինակներից (րարձր. 12, 5 սմ): Նա նկատում է. որ այդ ձևը Քյոլնի ապակիների շարքում թվագրվում է III դարով: Գառնիի սրվակը իր հետ գտնված փորագիր երկրաչափական զարդեր ունեցող սրվակով թվագրվում է III դարով: Նույն ժամանակին են պատկանում նաև Արտաշատի շշերը, որոնք նույնպես ավելի շատ աղերսվում են արևելյան օրինակների հետ, և արտագրության ժամանակով էլ նույնն են՝ III դարի, ուստի հնարավոր է, որ մեր օրինակները պատրաստվել են սիրիա-միջագետքյան, հյուսիսային ապակեգործական արհեստանոցներից մեկում: Արտաշատի շշերի պսակները՝ ձևերը ընդողջ օն այդ շրջաններում պատրաստված II—III դդ. ապակյա անոթներին:

Ուշագրավ է ըլուրների արևելյան մասից վերոհիշյալ տանձաձև սրվակների հետ գտնված, կապույտ, հաստ ապակուց պատրաստված, զնգաձև իրանով երկկանթանի անոթը (րարձր. 9, 4 սմ, պս. տր. 3, 2 սմ): Վերջինիս. դեպի գուրս լայնացող պսակն արված է ներքև ու վերև բարձրացնելու միջոցով (տախտ. XX6): Այս սրվակն իր ձևով ձայնակցում է Մարտոնու շրջանի Քարածի դյուղի անոթի³¹ հետ, տարրերությամբ, որ Արտաշատի սրվակի վիզն ավելի երկար է և չունի փորագիր գոտիներ: Հայաստանից հայտնաբերված այդօրինակ անոթների մեծ մասն ունի Արտաշատի սրվակի նման ինքնատիպ պսակ, որը չի հանդիպում սիրիական և արևմտյան կենտրոնների արտագրանքի մեջ: Այն, ըստ երևույթին, փոքրասիական ինչ-որ անհայտ կենտրոնում է

²⁵ «Հին Հայաստանի ապակին», № 134:

²⁶ M. C. C. Edgar, Graeco-Egyptian Glass, Lé Cairo, 1905, table IX, № 32702.

²⁷ D. B. Harden, Ancient Glass, II, Roman. The Archaeological Journal, vol. CXXVI. 1970, pl. X F.

²⁸ S. Abdul Hak, Contribution d'Une decouverte Archéologique Récente A l'Etude de la Verrerte Syrienne A l'Epoque Romaine, JGS, VII, 1965, fig. 8, 12.

²⁹ Н. П. Сорокина, Рецензия на кн. Б. Н. Аракелян, Г. А. Тирацян, Ж. Д. Хачатрян, Стекло древней Армении, серия: «Археологические памятники древней Армении», 3. Памятники древней эпохи, вып. 1, Ереван. 1969, ВДИ, 1973, № 3, стр. 196.

³⁰ Fr. Fremersdorf, նշվ. աշխ., էջ 45, տախտ. 95:

³¹ «Հին հայաստանի ապակին», № 72:

պատրաստվել: Արտաշատի սրվակը կարող է թվագրվել II—III դարերով, շատ հավանական է II դարով:

Արտաշատի ապակյա անոթներից վերջինը գտնվել է նույն անդից: Պատրաստված է բաց կանաչավուն ապակուց և ունի սեղմված գնդաձև իրան (տախտ. XIX): Թվագրվում է II—III դարերով:

Այսպիսով, Արտաշատի ըլուրների և գամբարանների պեղումներից հայտնարեբրված ապակեղենը վկայում է. որ Արտաշատում սկսած հելլենիստանան շրջանից եղել է ապակու արտադրութուն, իսկ մ. թ. I դարերում, սմենայն հավանականությամբ, Արտաշատը հանգիսացել է Հայաստանի ապակեգործության խոշոր կենտրոններից մեկը, որին III—IV դարերում միացավ նաև Վաղարշապատը, Արարատյան դաշտում ապակեգործության մյուս կարեոր կենտրոնը: Արտաշատի ապակեգործական արհեստանոցները ոչ միայն րավարարել են քաղաքի ընկղւթյան ապակու պահանջարկը, այլև արտահանել են Հայաստանի մյուս շրջանները: Հավանարար, Գառնիում և մյուս վայրերում հայտնարեբրված ապակյա իրերի մի մասը ասրված է Արտաշատից: Հուսով ենք, որ Արաաշատի և Հայաստանի մյուս հնավայրերի հետագա պեղումները ի հայտ կրերեն նորանոր նյութեր այս հարցին ավելի սպառիչ պատասխան ասլու համար:

VI. ԿԱՎԵ ԱՐՁԱՆԻԿՆԵՐ

Դամրարաններից ու գամրարանագաղտերից հայտնարեցված նյութերի մեջ մեծ թիվ են կազմում կավե արձանիկները, որոնք Հայաստանում, այսքան շատ, առաջին անգամն են ի հայա գալիս: Դրանք հիմնականում կրկնում են բլուրներից հայտնարեցված կավե արձանիկները և հնարավորություն են ընձեռում արվեստի մինչ այժմ անհայտ բնագավառներից մեկի՝ կորուսված ստիկայի ուսումնասիրության համար:

Հայաստանում կավե արձանիկներ սկսել են պատրաստել V—IV հազարամյակից, որոնք պաշտամունքային ընդլի ռենին: Հետադադում կավե արձանիկները տարածում են ստանում ու ճ հիլինիստանյան շրջանում և մ. թ. առաջին դարերում: Վերջիններս իրենց գեղարվեստական արժանիքներով և պատրաստման եղանակով իրիստ տարրերով են նախորդ շրջանների կավե արձանիկներից: Դրանք, ռացառութլամր մեկի¹, դիտվել են մի կողմից: Պատրաստված են մի փեղկանի կաղապարի մեջ, փափուկ կավը շերա-շերտ ոեղմելու եղանակով, այնուհետև հարթել են փայաե կտրիչով (стека) և թրծելիս հեշտ շորանալու և ճճաքելու համար տակից փոսիկ են արել, որի խորութլումը պայմանավորված էր արձանիկի հաստութլասը: Կավե արձանիկների մի մասը պատած է դեղնականաշավուն քուրքով, իսկ երկուսի վրա կարմիրով հորիզոնական, ալիքաճև և ուղիղ գոտիներ են արված (տախտ. XXIII 4,5, XXIV):

Հայաստանից հայտնարեցված կավե արձանիկները, ենթադրվում է, որ կաղապարից հանելուց հետո ենթարկվել են լրացուցիչ մշակման², սակայն նրման մշակման հետքեր նկատելի չեն:

Կավե արձանիկներն իրենց վրա վարպետի նշան կամ արձանագրութլուն չունեն, ռացառութլուն է կազմում հարավարևելյան դամրարանագաղտից գտնված արձանիկի պատվանգանը, որի վրա սուր գործիքով, նախքան թրծելը, հունարեն արձանագրված է: Վերևի տողում գրված է ΡΗΟΥΗΝΑ, ներքևի տողում՝ ΙΑ: Դժվար է սսել, թե ինչ է նշանակում այս արձանագրութլունը, կարելի է ենթադրել, որ վերևի տողի ռուր արձանիկի տիրոջ անունն է, իսկ ներքևինը տարեթիվ է՝ 11 (տախտ. XXVII 3):

Ինչպես Արտաշատից, նուլնպես և Արմավիրից ու այլ վայրերից գտնված կավե արձանիկները պաշտամունքային և կենցաղային ընդլի են: Տարած-

¹ VIII դրից գտնված հեծյալի կլոր արձանիկի ճին, ճիու սարքերը և հեծյալը ճեռքով աուանճին-աուանճին պատրաստելուց հետո միացրել են իրար:

² Փ. Ի. Тер-Мартirosos, Терракоты из Арташата, ВОИ, 1973, № 4, стр. 82.

ված են եղել կանացի արձանիկները. կինը երեխայի հետ, քնար կամ սաղ նվաղեցրիս, մերկանալիս, առանձին կանգնած և այլն: Սովորական են եղել նաև հեծյալի ու ղինվորի արձանիկները³:

Անկախ բովանդակությունից, կավե արձանիկների մեջ նկատելի են երկու ոճական ասորերակ⁴, որոնց նմուշները զգալի թիվ են կազմում և թույլ են տալիս ենթադրել, որ դա հետևանք է ոչ թե առանձին վարպետների նախասիրության, այլ ներկայացնում է մի ամբողջ ուղղություն, որի օգտին են խոսում հետևյալ պարագաները:

Այդ տարրերակներից մեկը չափազանց մանրամասն մեղրատազրում է պակերվող մարդկանց ու առհասարակ ֆիզուրների մանրամասները և աչքի է ընկնում չափազանց հստակ սշակվածությամբ: Երկրորդ ասորերակին հատուկ են ընդհանրացումները և մանրամասն մշակումներից շեղված ձեռված խուսափելը:

Առաջին հայացքից թվում է. որ դրանք տեխնիկական մակարդակի տարրերության արդյունք են, սակայն, ինչպես նշեցինք, քանակով բավականին շատ են և դրանով իսկ ինքնին վկայում են առանձին ուղղություն լինելու մասին: Երկրորդ ուղղության կավե արձանիկները համաչափությունների, շարժման վերարտադրության, ինչպես նաև այդ ընդհանրացված մակերեսի մշակման վարպետությամբ ամենևին չեն զիջում առաջին ուղղությանը: Քերես ավելի ճիշտ կլինի ասել, որ առաջինը առավել ճշտությամբ է պահպանում հունական, հելլենիստական արվեստի արևելյան, մասնավորապես ասիական ավանդույթները:

Ուշադրության արժանի են ռազկաթոռին նստած կանացի արձանիկները՝ մերկ երեխայի հետ միասին (արևելյան և հարավարևելյան դամբարտնադաշտ): Նրանք հավասար թրծում ունեն, մակերեսները պատած են դեղնականաչավուն քսուքով (տախտ. XXII_{2,3}):

Այս թեման շատ ընդունակ շրջանի կավե արձանիկներին: Կինը պատկերված է դիմացից՝ նստած դիրքով: Ստորին մասը հարդարված է հագուստի շքեղ ծալքերով: Չախ կողքին դեմքով դեպի կինը կանգնած է մերկ երեխան, որը հավել է մոր կրծքին:

Ընդհանուր թեման մանկանը կերակրելու կոմպոզիցիան է, որն ինքնին խորհրդանշում է մայրության և պաղարերության դազափարը: Դրա օգտին են

³ Б. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата 1970—1973 гг., стр. 57—58. Նույնի, ձին Արտաշատ, Երևան, 1975, էջ 38—41, նույնի, Очерки по истории искусства древней Армении, с. 74—76, табл. LXXXIV—LXXXV: Փ. Ի. Тер-Мартirosos, նշվ. աշխ., նկ. 12, Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, 12Գ, 1974, № 12, էջ 64, նույնի, 1975 թ. Արմավիրի պեղումների նյութերից. Ժ. Ի. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի կորոպլոստիկան, ՆՊ, 1977, № 5, էջ 37—60:

⁴ Արտաշատի ըլուրների մակերեսից պատահաբար հայտնարված կավե արձանիկների իսկ ընկերները քննարկելիս Յ. Ի. Տեր-Մարտիրոսովը ենթադրում է, որ նստած կնոջ արձանիկները պատրաստված են տեղում՝ դրսից եկած վարպետների կողմից: Թե Արտաշատում եղել է երկու արհեստանոց, որոնցից վերոհիշյալ արձանիկները պատրաստող արհեստանոցը մոտ է կանգնած եղել հելլենիստական աշխարհին և ավանդույթներին, իսկ երկրորդը՝ շարահարների արձանիկները պատրաստող արհեստանոցը կապված է եղել արևելյան ավանդույթների հետ: Փ. Ի. Тер-Мартirosos, նշվ. աշխ., էջ 85, 90:

խոսում՝ արձանիկի՝ կնոջ դիմացից հանդիսավոր տեսքով պատկերված լինելը և ղղեստների ոչ սովորական, այլ կանոնիկ ընույթը: Ընդհանուր պատկերի մեջ թույլ է շեշտված հեռանկարը: Այդ պատճառով այնքան էլ պարզորոշ չի երևւում նսաած դիրքը, որի մասին կարելի է կուհել ծնկների հասվածում որոշ մասնամասների ընդդժումից:

Կատարման տեսակետից առավել հետաքրքիր և հորինվածքային առումով առավել հարուստ է մի այլ արձանիկի բեկոր: Այստեղ պատկերված են ոչ թե երկու, ինչպես նախորդներին, այլ երեք ֆիգուր (տախտ. XXIIe): Խմբից առանձնացող այս միակ օրինակի ֆիգուրներից երկուսը իրենց կեցվածքով կրկնում են նախորդներին և դրանով իսկ վկայում բովանդակույթյան նույնության մասին: Սակայն այսանդ կանգնած երեխայից րացի առկա է նաև ավելի փոքրը, նստած կնոջ ծնկներին, որի ձեռքից բռնել է կանգնած երեխան: Այս արձանիկը միաժամանակ տարրերվում է վերոհիշյալ կանացի արձանիկներից նաև մշակման մանրամասնությամբ: Այստեղ կարելի է տեսնել նույնիսկ փոքր երեխայի մանր մասները, ինչպես նաև մարմնի մկանները և նույնիսկ մարմնի ձևի զգացողութունը շորի տակից: Սակայն զգեստի ծալքերը մի փոքր ռճավորված են, մի հանգամանք, որը, շնայած իր սխեմատիզմին, բացակայում է վերոհիշյալ արձանիկների վրա: Ծալքերն այստեղ արված են կատարյալ ճառագայթաձև, մինչդեռ մյուս արձանիկներում նրանք ունեն տարրեր ուղղութուններ, թեև, այսանդ ևս, վարպետները հետևել են ընդունված սաանդարտին: Ցավոք, արձանիկի վերին մասը րացակայում է և այդ պատճառով դժվար է ասել, թե ինչ գործողութուն է կատարվում երկու երեխաների միջև: Ասակայն նրանց ձեռքերի պակի միմյանց ուղղվածութունը հնարավորութուն է տալիս ենթադրելու, որ կերակրման րովանդակութունն այս հորինվածքում միակը չէ:

Այս սյուսեծով հորինվածքային մյուս տարբերակը նույնպես պատկերում է ևրեխան դրկին կնոջ, որն ամփոփված է սյունների և նրանցից խոյացող գոգավոր կամարի շրջանակի մեջ: Պահպանված են երկու օրինակ միայն, որոնցից մեկից միայն գլխամասը, կամարով և սյունների խոյակներով հանդերձ, իսկ մյուսից՝ միայն կրծքամասը, խոյակը և երեխան: Ծրկուսն էլ րավականին մանր և հստակ մշակվածութուն ունեն (տախտ. XXII₄):

Կամարաձև շրջանակի հորինվածքը տարածված էր. հսվանարար, պաշաամունքային տիպի քանդակագործության մեջ և կիրառվել է ամենատարրեր քանդակներում: Այն, հավանարար, ընդօրինակվել է տաճարներում եղած աստվածների արձաններից, որոնք սովորարար կանգնեցված էին լինում սյունների մեջ կամ խորշերում:

Հսյակական հեթանոսական պանթեոնում, որը գլխավորում էր Աբամազդը՝ բոլոր աստվածների հայրը, րացառիկ տեղ էր դրավում Անահիտը:

Անահիտի պաշամունքը տարածված էր Առաջավոր Ասիայում, Միջին Ասիայում, Իրանում, Փոքր Ասիայում: Սակայն նա առավել մեծ ժողովրդականութուն էր վայելում Հայաստանում: Ստարոնր վկայում է, որ «Պարսից բոլոր աստվածները պաշտվում են նաև Մարաց և Հայոց կողմից, րայց Անահիտի պաշամունքը հայոց մեջ դերաղանցում է բոլորից⁵: Անահիտի

⁵ Strabo, XI, 14, 16.

պաշտամունքի տողև նսեմանում էր անգամ Արամադդը: Ուստի անահիթի նվիրված մեծ թվով առճարներ են եղել Հայաստանում, որանդ կանգնեցված էին նրա ոսկյա և պղնձյա արձանները⁶: Դժբախտաբար, առ այսօր հայտնաբերված ու պեղված շեն այդ տաճարներից ոչ մեկը և մեզ հայանի չէ, թե ինչ ձևով է պատկերվել ասավածուհին: Անահիթին են վերադրվում պղնձի մի արձանի դուխը⁷, Կամոյի շրջանի Հացառատ գյուղում գտնված ոսկյա մեղալիոնը՝ երեխան դրկած կնոջ պատկերով⁸ և վերոհիշյալ նստած մերկ երեխան կողքին կանգնած կնոջ կավե արձանիկները⁹: Մենք ևս միանում ենք այդ գիտնականներին և գանում, որ վերոհիշյալ երեխաների հետ պատկերված ըրլոր կավե արձանիկները ներկայացնում են Անահիթին:

Այս կոմպոզիցիան, որ հին արմատներ ուներ և վաղուց էր հայտնի Արևելքում, լայն արածում ստացավ հատկապես հելլենիստական շրջանում: Այդպես են պատկերվել Արտեմիսը, Կիրելան, Աֆրոդիտեն, Դեմետրեն և ուրիշներ: Հայտնի է, որ հելլենիստական շրջանում հայկական պանթեոնի աստվածները համադրվեցին հունականների հետ, ինչպես, օրինակ, Արամադդը՝ Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Միհրը՝ Հեփեստոսի, Վահագնը՝ Հերակլեսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի և այլն: Սակայն կարող էր մի ասաված իր ֆունկցիաներով համապատասխանել հունական կամ հարևան երկրների մի քանի ասավածների: Ուշ հելլենիստական շրջանում և հապակապես առաջին դարերում Միջերկրական ծովի արևելյան շրջաններում և Առաջավոր Ասիայում, ազգերի ու պաշտամունքների այդ խառնարաններում, ուժեղ պայքար էր տեղի ունենում պաշտամունքի հարցերում, որի արդյունքը լինում էր առաջին հերթին մի շարք ասավածների համադրութուն (սինկրետիզացիա) մեկի մեջ: Այնուհետև յուրաքանչյուր ասածու նախկինում հասակորեն վերադրվող ֆունկցիաները նույնությամբ չեն պահպանվում: Որոշ ասավածներ ձեռք են բերում մի շարք ֆունկցիաներ և հակում են ցուցարարում դառնալու ընդհանուր, ունիվերսալ¹⁰: Մեզ մոտ այդ դերը կատարում է Անահիտը: Ըստ երևույթին Անահիտը, որ պաշտվում էր շաա երկրներում, յուրաքանչյուր երկրում պատկերվել է արրեր ձևերով, տեղական հատկանիշներին համապատասխան: Օրինակ, Միջին Ասիայում այն հիմնականում պատկերվել է մի ձեռքը սեղմած կրծքին, երբեմն ձեռքին ունենալով եռաանկ կամ նուռ և այլն, մյուսը իջեցրած ներքև, դեպի փորը կամ գիրկը: Թեև քիչ, բայց հանդիպում են նաև մերկ երեխայի հետ պատկերված արձանիկներ¹¹:

⁶ Կ. Վ. Միլիխ-Փաշայան, անահիթ դրոսուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 103—125:

⁷ Ենգիլման, Պղնձե գլուխ մի ի Հայաստան գտնուած, ժրագմավէպ», 1883, էջ 130—141:

⁸ Վ. Արաբաբայան, Ար: նստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956, էջ 86:

⁹ Ե. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата, стр. 58; Ф. И. Тер-Мартиросов, նշվ. աշխ., էջ 84—86:

¹⁰ Գ. А. Кошелевко, Культура Парфин, М., 1966, стр. 181—182:

¹¹ Л. И. Ремпель, Терракоты Мерва и глиняные статуи Нисы, Труды ЮТАКЭ, т. I. Ашхабад, 1948, стр. 332—337; Г. А. Пугаченкова, Коронластикa древнего Мерва, Труды ЮТАКЭ, т. XI, Ашхабад, стр. 118—123; նույնի, Материалы по короплас-

Այս առումով հետաքրքիր են Դվինում հայտնարեբրված քարե արձանները: Դրանցից երկուսը¹² հիշեցնում են Անահիտին: Մեկը հագուատով է, վզին ունի մի քանի ուլունքաշար: Դժրախաարար, պահպանվել է միայն կրծքի վերին մասը, ուստի գծվար է ասել նրա ինչպիսին լինելու նույն անգում գտնված երկրորդ արձանի դուրսը չի պահպանվել: Նրա ստորին մասը անմշակ է, հավանաբար պատվանդանի վրա է կանգնեցված եղել: Այստեղ համալսափությունները պահպանված չեն, կինը պատկերված է շաա լայն ու կարծ, իսկ հագուատը ու մյուս մանրամասները ընդհանուր դժբրով են արված: Կինը ձեռքերով բռնել է կրծքերը (թե նոներ), որով և նմանվում է Միջին Ասիայում հայտնարեբրված Անահիտի արձանիկներին: Հավանաբար, այստեղ մենք ունենք Անահիտի զուա տեղական, սկզբնական, ավանդական պատկերը, երբ նրա ֆունկցիաները սահմանափակ էին, իսկ պաշտամունքը տարածված չէր:

Հայաստանում հայտնարեբրված կավե արձանիկներից ոչ մեկը, մյուս երկրներից հայտնի, Անահիտի արձանիկների ընտրող հատկանիշները չունի, մինչդեռ, Անահիտը, ինչպես վերը տեսանք, ամենաշատ սիրվել է հայոց մեջ և դա պետք է որ իր արտահայտությունը գաներ արվեստի բոլոր ընդգրկվածներում, այդ թվում նաև կորուպլաստիկայում: Ըստ երեույթին, Անահիտի կերպարն ունեցել է որոշակի կանոնիկ ձևեր: Բայց երբ հայկական պանթեոնի ասավածները համադրվեցին հունականների հետ, և տեղական արձանների հետ միասին հայկական աաճարներում դրվեցին Փոքր Ասիայից և նույնիսկ Հունաստանից բերված արձանները, ապա այդ կանոնիկ ձևերը պետք է որ իւրիտվեին: Անահիտը կարող էր պատկերվել հելլենիստական աշխարհում տարածված և ընդունված կին ասավածուհիների օրինակով: Ամենայն հավանականությամբ, Հայաստանում Անահիտի մի շարք բարեմասնություններից շեղվել է հատկապես մեծ, ասավածամոր, մեծ մոր, մեծ տիկնոջ հատկանիշը, պատկերելով նրան մանկան հետ միասին, դրա մեջ ամփոփել ու շեղտել են նրա պողարերության, ամենայն Հայոց աշխարհի հովանավորողի ու պահպանի արգասավորության հատկանիշները: Քանի որ ռամեծն Անահիտ, որով կեայ և կենդանութիւն կրէ երկիրս Հայոց»¹³, Տրդատը Գրիգոր լուավորչին դիմելիս ասում է. «մանավանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր և Թագաւորք ամենայն պատուեն... որ է մայր ամենայն զդառաութեանց, բարերար ամենայն մարդկան ընութեան և ծնունդ է մեծին արին Արամազդայ»¹⁴:

Անահիտից Թագավորները իւնամակալություն էին հայցում, «Ողջույն հասեալ և շինութիւն դիցն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ ինամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ և քաշութիւն հասցէ ձեզ և

тпке Бактрии-Тохарстана, Эллинистический и Ближний Восток, Византия и Иран, М., 1967, стр. 177—179, 182—183; Г. А. Пугаченкова, Л. И. Ремпель, История искусства Узбекистана с древнейших времен до середины девятнадцатого века, М., 1965, стр. 72.

¹² Կ. Գ. Վաֆադարյան, Հեթանոսական շրջանի գամբարաններ Դվինում, ՊՐԷ, 1974, № 4, էջ 41, նկ. 2, 3:

¹³ «Ագաթանգեղոս», էջ 38:

¹⁴ Նույն տեղում, էջ 31:

քաջէն վահագնէ ամենայն հայոց աշխարհիս...»¹⁵; նա Ոսկեմայր, Ոսկեծին, Ոսկեհաա¹⁶ աստվածուհի էր, ստեղծագործող և ծննդարերող հաակություններ ուներ:

Կալե արձանիկներ պատրաստող վարպեաները Անահիտին պատկերել են նույն թեմայով, իրաց ասրերը հորինվածքներով, նսաած, ծծկեր երեսան գրկին կերակրելիս, մանուկը կողքին կանգնած կամ երկու երեսալի հեա միասին, ծծկերը գրկին, իսկ մանուկը կողքին կանգնած, իազմոցին պակած, մանուկը ցածրադիր աթոռի վրա կողքին կանգնած ե ալլն: Նրա սեծությունը ե ոչ հասարակ մահկանացու լինելը շեշտելու և ալլելի հանգիսավորություն հաղորդելու համար, այս կոմպոզիցիան երբեմն պատկերված է սյուների մեջ, կամարի տակ: Անահիտը ծծկեր մանուկի հեա է պատկերված նաե Կամոլի շրջանի Հացատատ գյուղում գանված ոսկե մեգալիտնի վրա: Տարբերությամը, որ այսանգ երեսան աջ կողմում է և քիչ անրնական դիրքով¹⁷:

Կորոպլաստիկայում Անահիտի կնրպարը ասրերը կոմպոզիցիաներով պատկերելը ևս մի ապացույց է Անահիտի լայն ժողովրդականության մասին: Այսինքն՝ նրա պատկերը գրվել է ոչ միայն աաճարներում, ալլն աներում, կախվել է իբրև մեգալիտն, ականջող և թալիսման:

Հայաստանի կալե այս արձանիկների ճիշտ զուգահեռները մեղ հայանի շեն, Կինը երեսալի հետ պատկերելը կորոպլաստիկայում շաա է տարածված եղել, սակայն գրանցից քիչ թե շաա նմանություն ունեն միայն արևելյան կենարոններում պասրաւավածները: Դրանք¹⁷՝ հիմնականում նմանվում են Արաաշաաից և Արմավիրից գանված արձանիկներին, որտեղ նսաած կինը կերակրում է ծնկին գրած ծծկեր երեսալին: Հավանաբար, սկզրնական շրջանում Անահիտը պատկերվել է ծծկեր երեսան գրկին նսաած (սյուների մեջ և առանց սյուների) կերակրելիս և վերոհիշյալ եոաֆիգուր արձանիկի նման, երկու երեսալով, ինչպիսիք հայտնի են Արմավիրից, Արաաշաաի դամարանաղաշաից ու VII դրից և թվագրվում են մ. թ. ա. I գարով, իսկ մերկ մանուկը կողքին կանգնած կնոջ կալե արձանիկը՝ մ. թ. I—II դդ.: Վերջին աիպի արձանիկներ շաա ևն հայանարեովել Արաաշաաի VII և VIII դուրների I—II դարերի շերաերից: Նույն ժամանակին են վերարերում նաև պասահաբար գանված արձանիկները, որոնք թվագրվում են մ. թ. ա. II—մ. թ. I դարերով¹⁸:

Կանացի այս նալծ արձանիկները պասրասավել են Հայաստանում: Ըսա որում, ծծկեր երեսալի հետ պատկերված թե՛ Արաաշաաի, թե՛ Արմավիրի արձանիկները ընդորինակված են ներմուծված հելլենիսաական արձանիկնե-

¹⁵ Նույն տեղում, էջ 73:

¹⁶ Նույն տեղում, էջ 422:

¹⁷ Ժ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի մեղալիտները (մ. թ. ա. II—մ. թ. I դդ.), «Լրաբեր հաս. գիտ.», 1973, № 5, էջ 53—54, տախա. II:

¹⁸ Ahmed S. S., Early Parthians-Philhellenism as evidenced in figurines from Seleucia on the Tigris, Level III, Annales archeologiques arabes Syriennes, vol. 17, 1967, T. 1/2, III; E. Rohde, Griechische Terrakotten, Amelang, Leipzig, 1970, № 30; W. Van Ingen, Figurines from Seleucia on the Tigris, Ann Arbor, London, 1939, p. 6, № 20, pl. III.

¹⁸ Փ. Կ. Եր-Մարտրոսով, աշխ., էջ 86, 88:

րից, ուստի դրանք ավելի կանոնավոր են ու կատարյալ: Արմավիրի արձանիկի մակերեսն անզամ դեղնականաչավուն քուրթի վրայից, հելլենիստական արձանիկների օրինակով, պատած է վարդագույն ներկով: Դժբախտարար, մինչև օրս մենք չենք հայտնաբերել ո՛չ կաղապար և ո՛չ էլ արհեստանոցի հետքեր ու խոտան, ուստի կոնկրետ նշել արտադրութայն վայրը դժվար է:

Կավե արձանիկներ կարող էին պատրաստել և՛ Արմավիրում, և՛ Արտաշատում, և՛ Վաղարշապատում ու Հայաստանի մյուս քաղաքներում: Սակայն կասկածից վեր է, որ կավե արձանիկներ արտադրող հիմնական կենտրոններից մեկը եղել է Արտաշատը¹⁹: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ կավե արձանիկների պատրաստման ժամանակը համընկնում է Արտաշատի բուռն վերելքի հետ, իսկ հայտնաբերված կավե արձանիկների թիվը խոսում է այդ ենթադրութայն օգտին:

Արտաշատի հարավարևելյան դամբարանադաշտից հայտնաբերվել է մերկացող կնոջ պատկերով երկու արձանիկ (տախտ. XXIII,3): Այստեղ կինը պատկերված է սյունների մեջ, կամարած շրջանակի տակ (պահպ. մասի բարձր. մեկինը՝ 11 սմ, լայն. 7,5 սմ, մյուսի բարձր. 6 սմ): Նա կանգնած է կողքի, դեմքը դարձրած դեպի աջ: Ձախ ձեռքով թեթեակի բռնել է խոյակից և գեղեցիկ շարժումով հանում է ծալած ձախ ոտքի սանդալը:

Չնայած արձանիկները լավ չեն պահպանվել, սակայն երևում է. որ պատկերը կատարված է մեծ վարպետությամբ, համամասնությունների դաշտում: Մարմինը վայելչակազմ է, շարժումը ընկան ու նազելի, դիմադժերը կանոնավոր, մազերը երկու մասի բաժանված՝ բարձր սանրվածքով:

Կանացի ֆիգուրը ինչպես իր կեցվածքով, այնպես էլ մշակմամբ մեծապես հիշեցնում է Հունաստանի հելլենիստական ժամանակաշրջանի քանդակազորությունը: Այն վերարտադրում է ուղ դասական շրջանի լավագույն ավանդությունները, մասնավորապես շարժման վերարտադրության հարցում:

Սա անտիկ արվեստի սիրված թեմաներից մեկն է, և այդ թեմաներով պատրաստված հայտնի բոլոր արձանիկները կապված են Աֆրոդիտեի հետ: Այսինքն՝ մերկացող Աֆրոդիտեն պատրաստվում է մտնել ջուրը:

Այդ թեմայով պատրաստված արձանիկներ են հայտնաբերվել Փոքր Ասիայից²⁰ (Միրինա, մ. թ. ա. II դ., չսյունիա), Բուլղարիայից²¹ (հելլենիստական) և այլ վայրերից²²: Այս թեման հանդիպում է նաև հունական բրոնզե արձանիկների մեջ: Էրմիտաժում պահվող բրոնզե արձանիկներից մեկը, որը գտնվել է Մակեդոնիայից, պատրաստված է մ. թ. I դարում հռոմեացի վարպե-

¹⁹ Նույն տեղում, էջ 85—90:

²⁰ E. Rohde. Griechische Terrakotten, № 40; Simone Besques, Catalogue raisonné des figurines et reliefs en terre cuite grecs et romains, Myrina, t. II, Paris, 1963, pl. 21 a; August Koster, Die Griechischen Terrakotten, Berlin, 1926, № 81; H. H. Брунова, Греческая терракота, М., 1969, стр. 119, № 127.

²¹ Ц. Дремсизова-Нелчинова, Г. Тончева, Антична терракота от България. София, 1971, № 127.

²² Fr. Winter, Die Typen der figuralen Terrakotten, Berlin und Stuttgart, 1903-2061—5, 207, 1, 3.

տի կողմից, մ. թ. ա. II դարի հելլենիստական կերպարի համաձայն: Հայտնի են այդպիսի արձանիկների 70-ից ավելի կրկնություններ²³: Այդ արձանիկները պատրաստված են Պրակսիտելի, Աֆրոդիտեի արձանների թեմաներով և գտնվում են մոտումենայ քանդակագործության աղբյուրության աակ²⁴:

Արտաշատի հարավարևելյան դամբարանադաշտի արձանիկները այդ թեմայով պատրաստված արձանիկների ասարածակներից մեկն են: Այս առումով մեծ հեաքքրություն է ներկայացնում Արտաշատի VII բլրից հայտնարերված կավե արձանիկը (պահպ. մասի բարձր. 8, 5 սմ): Այն բաղկացած է երկու ֆիգուրից, որոնք մրմյանցից բաժանվում են միջանկյալ սյունով և ամփոփված են երկու կամարների մեջ²⁵: Առաջին ֆիգուրն իր շարժումով կրկնում է վերոհիշյալ քանդակի գործողությունը, կանգնած է ուղիղ, ձախ ձեռքով հենվել է միջանկյալ սյան խոյակին, իսկ աջով հստում է սանդալը (ասիսա. XXIII):

Երկրորդ ֆիգուրը պակերված է արդեն լրիվ մերկացած, նա քայլում է դեպի աջ, ոակայն յոթվել է ետ և վերջին գգեստն է կախում սյունից: Շարժումները վերարտադրված են գեղեցկության զուտ հելլենիստական ըմբռնումով:

Մերկացող ցնոջ վերոհիշյալ արձանիկները հավանարար ներկայացնում են Աստղիկ դիցուհուն, որը նույնպես կարևոր տեղ էր գրավում հայկական հեթանոսացան պանթեոնում: Այն սիրո ու դեղեցկության աստվածուհին էր, ինչպես նաև կապված էր ջրի ու պտղարերության պաշամունքի հեա: Աստղիկին էր նվիրված հայոց ամենամասայտկան ու սիրված տոներից մեկը՝ վարդավառը²⁶: Ինչպես վերը նշեցինք, Աստղիկը հասադրվում էր Աֆրոդիտեի հետ, որի սիրո, դեղեցկության, պտղարերության ու ջրի հետ կապված լինելու հատկանիշները միանգամայն համապատասխանում էին Աստղիկին:

Աստղիկին նվիրված մի շարք տաճարներ կային: Նրա պաշտամունքը լայն ասարժում ուներ Հայասանում: Այն ուժեղ է հակապես Տարոնում, որտեղ Աստղիկին վերարերող ավանդական մի ղրույց է պահպանվել: Ըստ որի, Աստղիկը սովորություն ուներ դիշերները լողանալու Եփրատի (Արածանի) կիրճում: Երիասարդները լեռների լանշում կրակ էին վառում Աստղիկին տեսնելու, նրա դեղեցկությամբ զմայլվելու համար: Սակայն Աստղիկը նրանց հայացքներից քողարկվում էր շրջապար մշուշ ասարժելով²⁷:

Մերկ կանանց արձաններ և արձանիկներ Հայասանում վաղուց են հայտնի, որոնք ամուր կապված են տեղական, ավանդական անդրիադործության²⁸ հեա և եթե նրանց մեջ մենք ունենք անգամ Աստղիկին պակերող արձաններ, ապա ո՛չ պատկերման եղանակով և ո՛չ էլ կոսպոգրիաներով դրանք շեն առնչվում Արաշատի կավե արձանիկների հետ:

²³ «Античная художественная бронза», каталог выставки, Л., 1973, стр. 10, № 21.

²⁴ Н. Н. Брицова, Греческая терракота, стр. 119.

²⁵ Ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանի անաիկ շրջանի կորոպլաստիկան,

²⁶ Ղ. Ալիշան, Հին հայաստանում կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 283.

²⁷ Գ. Սրվաճախյան, Գրոց-բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 97—98.

²⁸ Լ. Գ. Ղաֆաջարյան, Հեթանոսական շրջանի դամբարաններ Դվինում, էջ 40—41.

Աֆրոդիտե-Ասադիկի հետ է կապվում նաև Արտաշատի մարմարե արձանը²⁹, Հստ որում, ե՛ր այս, և՛ կալն արձանիկները, պատրաստված լինելով Պրաքսիտելի ու նրա դարձրոցին պատկանող ստեղծագործությունների ազդեցությամբ³⁰, ունեն նույն արտահայտչաձևերը, դրավչությունը, յուրահասակ մեղմությունն ու թուլանքը: Նրանք իրենց թեթևությամբ խստորեն տարբերվում են Անահիտին վերագրվող, նստած սնուց վերոհիշյալ կապժ արձանիկների հանդիսավորությունից:

Կավե արձանիկների մեջ նկատելի են ընդունված որոշ կանոններ, որոնք առավելապես վերաբերում են հագուստի մշակմանը: Այդ կանոնները երբեմն վեր են ածվում սխեմատիզմի, թեև ի սկզբանե դրանք երևան են եկել ռեալիստական դիտողականությունից: Մարմնի առանձին հասվածներում մշակվել են շորերի ծալքերի առանձին տեսակներ, ծնկների վրա նրանք արվում էին գոգավոր, իսկ ներքևում՝ ուղղահայաց և աղեղնաձև: Այգալիսի մի հատված է բովանդակում արևելյան դամբարանադաշտից դտնված կանացի արձանիկի բեկորը (պահպ. մասի բարձր. 5 սմ): Կինը կանգնած է ձախ ոտքի վրա հենված (ոտքերը չեն պահպանվել): Նրա զդեատը աղեղնաձև ծալքերով իջնում է մինչև ծնկները (տախտ. XXIII⁶, XXIV⁶):

Գծվար է ասել, թե ում է պատկերել այս արձանիկը, բայց ծնկների վրայով անցնող վարդագույն հորիզոնական պուլգ գոտիները վկայում են, որ ոյ հասարակ սնազու, հավանարար ինչ-որ աստվածուհու կամ իշխանուհու:

Այս առումով հեաաքըքիր է նաև հարավարևելյան դամբարանադաշտից գտնված արձանիկի պատվանդանը, որի վրա պահպանվել են մարզու ոաքերի թաթերը միայն (պահպ. մասի բարձր. 4, 7 սս): Մակերեսը պատած է դեղնականաչավուն քսուքով, որի վրա շագանակագույնով հորիզոնական դծերի մեջ ալիքաձև գոտի է արված (տախտ. XXIII¹):

Թեք գծերով է հարդարված նաև Արմավիրի³¹ ծնկաչոք մարզու արձանիկի պատվանդանը, սակայն վերջինիս մակերեսը, կրակի մեջ ընկնելու պատճառով, սևացել է, ուստի դժվար է ասել, թե այդ ժայպավենները ներկով են արված, թե փայլեցման եղանակով:

Հստ երևույթին, այս արձանիկները մարմնավորել են աստվածների, և արձանիկների վրա արված զարդերով շեշտել են նրանց ֆունկցիաները կամ այդ եղանակով ընդգծել են պատկերված մարդու վերնախավին պատկանելը:

Հայանի է, որ այդօրինակ զարդերը ընորոշ են հելլենիստական շրջանի տեղական խեցեղենին: Ուստի, մեր նկարագրած դունազարգված արձանիկները կարող են պատկանել մ. թ. ա. I դարին: Գունազարգման այս եղանակը գուտ

²⁹ Б. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах, стр. 52.

³⁰ Աֆրոդիտեի կերպարը հելլենիստական քանդակագործության լեջ ամենատարածվածներից մեկն էր: Մարմարե, բրոնզե, կավե արձանիկները տարրեր ձեափոխություններով կրկնում էին մոնումենտալ արվեստի մեջ մշակված մերկացած Աֆրոդիտեի կերպարը: Ամենաշատը կրկնում էին կնիզացի քանդակագործ Պրակսիտելի ստեղծած Աֆրոդիտեի պատկերները: М. М. Кобылкина, Античная скульптура Северного Причерноморья, М., 1972, стр. 10.

³¹ Գ. Ա. Տիբուցյան, Արմավիրի պեղումները, լՂԳ, 1972, № 2, էջ 40, նկ. 5:

անդական երեւոյթ է ե շի հանդիպում մյուս երկրներէից գանձած անտիկ շրջա-
նի կավե արձանիկներին մեջ:

Արաաշատի անբակոասներին թվում րավականին ստվար խումբ են կազ-
մում երաժիշտներին արձանիկները: Դրանք գերազանցապէս կանացի են և
պաականում են երկու անսակի երաժշտական դորժիք նվագողներին: Մեկը
քնարն է, դրված ձախ ուսին, իսկ մյուսը՝ կրծքին սեղմած փոքր բնով վին,
չնար (սազ) հիշեցնող մի երաժշտական դորժիք է (աախա. XXIV_{3,4}): Երա-
ժիշտներին արձանիկներ հայտնի են նաև Արաաշատի VII րլրից ե բլուրների մա-
կերեսից: Դամբարանադաշտից գանձած ջնարահարի վինը ե ձեռքերը պատ-
կերված են դնդերի ձևով, իսկ բլուրների մակերեսից հայտնաբերված արձանի-
կը³² ա՛վելի լավ մշակում ունի:

Մշակվածության տեսակետից բոլոր երաժիշտներին կավե արձանիկներն
էլ րավականին կոպիտ են: Այդ հանդամանքն առավել ես նկատելի է հա-
գուստների մշակման մեջ, սակայն պահպանված են մարմնի համաշափու-
թյունները և կեցվածքը, որը բնորոշ է հելլենիստական արվեստին: Բոլորն էլ
հենված են մի ոտքի վրա և հաղուսաներն էլ հանդարա ե միալար գանգվա-
ծալին ծալքերով նշմարվում են ոտքերի վրա: Քնարահարներից մեկը վզին
ունի ուլունքաշար (աախա. XXV₁₋₅):

Մյուսներից առանձնանում է հարավարեելյան դամբարանադաշտից դըտ-
նըված քնար նվագող կանացի արձանիկներից մեկը, որի դեմքը, ինչպես ե
գլխի հարդարանքը մանրամասն մշակված է (աախա. XXV₁): Ուշագրավ է
քթի կառուցվածքը, որը միանդամայն սարբերվում է հունական ավանդե-
րից, այն մի փոքր արծվաքիթ է: Այս քանդակի մեջ կանհայտորեն արտահայտ-
վել է հոմեական դիմաքանդակի արվեստի ազդեցությունը, որոնց մեջ հա-
ճախ հանդիպում ենք ազգային հաականիշներով օժաված ասրբեր զիմա-
րանդակներին: Դա նոր երեւոյթ էր մարդու անհասականությունը պատկերե-
լու դորժում ե հանձինս այս արձանիկի մեք ունենք այդօրինակ դիմապատ-
կերներից մի եզակի օրինակ: Ուշագրավ է նաև ազգային ասարզը, ասփակ
զլխաշորի ձեով, որը հայերի կենցազում պահպանվել է առ այսօր: Դամբա-
րանադաշտի, ինչպես նաև րլուրների կավե արձանիկները դանվել են մ. թ.
I—II դդ. դամբարաններից ու շերաներից:

Ըստ բովանդակության, կավե այս արձանիկները պատկերել են տեղա-
կան երաժիշտների: Երաժշտությունը մշտապես հնչել է ժողովրդական առ-
նահանդեսների, խնջույքների, թաղման արարողությունների ե ոազմի երթերի
ժամանակ:

Հնագիտական պեղումները վկայում են, որ երաժշտական դորժիքները
Հայաստանում զալիս են դեռես մ. թ. ա. II հազարամյակից³³, Երաժշտա-

³² Ե. Ի. Аракелян, Очерки по истории искусства древней Армении, стр. 75, табл. XXXVII 2. Փ. Ի. Тер-Мартиросян, Նշվ. աշխ., էջ 88—90, նկ. 4.

³³ Է. Խաճաղուան, Հայկական հին երաժշտական դորժիքները, «Աշխատություններ», Հա-
յաստանի պետական պատմական թանգարան, 4. 5, Երևան, 1959, էջ 63 և հտ., Է. Akurgal, Urartaische und Altiranische Kunstzentren, Ankara, 1968, fig. 62, խնջույքի տեսարան
է, որտեղ երաժիշտը քնար է նվագում:

կան դործիքների մասին ռազմաթիվ վկայություններ են պահպանվել նաև մեր միջնադարյան աղբյուրներում, մանրանկարներում ու պաակերաքանդակներում:

Փավստոս Բուզանդը ինչույքի ժամանակ Պապ Թագավորի սպանության տեսարանը նկարագրելիս մյուս գործիքների՝ թմրուկների, սրինդների, փողերի կողքին հիշատակում է նաև քնարը: «Իրև ընդ գինիս մտին, որպէս զանաշին ուրախութեանց նուազն մատուցին արքային Պապայ և առ հասարակ թմրկահարք և սրնգահարք, քնարահարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարրառոհացն»³⁴: Քնարի և ջնարի մասին է հիշատակում նաև Թովմա Արծրունին, երբ հայ զինվորները պատերազմի են դուրս եկել Բուղտի գեմ: «Յձայնժամ հրաման ետուն սմենայն զօրանց ելանել ի պատերազմ. և ահա աղազակ և փողք և քնարք և ջնարք, և վառուկ ղենու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ սնհուն զօրացն մինչև գրէթէ ի հիմանց լլեռանն սապալել, և եհան զզօրսն մինչև մերձ ի գլուխ լերին»³⁵: Մատենադարանի ձեռագրերից մեկում (№ 732) ասված է, որ քնարի և թմրուկի ազիբը խոնավանալիս ախորժելի ձայն չի հանում³⁶:

Մի շարք հիշատակություններ կան նաև վինի, ջնարի մասին: Ինչպես վերը նշեցինք, Փավստոս Բուզանդը³⁷ նշում է, որ ներսես կաթողիկոսի մահից հետո նորից սկսեցին մեռելների վրա փողերով, փանդիոններով, վիներով ողբալ: Մովսես Խորենացին խոսում է այն մասին, որ ինչույքի ժամանակ Խորով Գարդմանացին գինով հարրած հեամուռա է լինում «ջնարահար քաջամատն կնոջ»³⁸: Գրիգոր Մագիստրոսը գրում է, որ Սառում լալկան ջնարահարները խմրով քաջի գովքն էին անում: «Այլ եթէ վարդապետն քո ծայրագոյն, ի Սարաւի ծորեալ, իբէն ջերմուկն ջայլիր ջոկ կապեալ ջնարահարացդ, ջատագով քաջին շեռուցանէն»³⁹:

Այսպիսով, կավե արձանիկները և աղբյուրները ցույց են աւելիս, որ քնարը և ջնարը վաղուց ի վեր ընդունված են եղել հայերի մեջ, և նաև հայկական երաժշտական գործիքներ են, որոնք հնչեցվել են ապրքեր առիթներով:

Երաժիշտներ պաակերող կավե արձանիկները անաիկ շրջանի կորույլասափակայի սիրված թեմաներից մեկն են եղել: Երաժիշտներ պաակերող կավե արձանիկներ են հայանարերվել անաիկ շրջանի մի շարք հուշարձաններում⁴⁰: Սակայն մեր երաժիշտների կավե արձանիկները նույնպես ավելի մոտ են կանդնած արևելյան աիպերին: Վին նվագող կանանց նման արձանիկներ են

³⁴ Փ. Բուզանդ, V, լԲ:

³⁵ «Թոսմայր վրդ. նոճունուտ, Պասմուքուն տանն Արծրունեաց», Տիգրիս, 1917, էջ 296:

³⁶ Է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 86:

³⁷ Փ. Բուզանդ, V, լԱ:

³⁸ Մ. Խորենացի, գ. III, գլ. ԾԵ:

³⁹ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղբյուրանդրասյուր, 1910. էջ 209—210:

⁴⁰ Charlotte Ziegler, Die Terrakotten von Warka, Berlin, 1962, № 385, 389; W. Van Ingen, նշվ. աշխ., տախտ. XXXVII|270,271; Maurice Chehab, Les terres cuites au Liban, A l'Époque Hellénistique, le Rayonnement des civilisations grecque et romaine sur les cultures Periphéritiques, Paris, 1965, p. 507—510, pl. 127.

հայտնարեցվել Տիրգրոսի ասիի Սելեկիայից⁴¹ և միջինասիական հուշարձաններից⁴²,

կավե արձանիկների թվում մենք ունենք կանացի պատկեր, շքեղ դահավորակի վրա կիսապտուկած վիճակում, որի վերնամասը թերի է: Այն ես պաականում է ժանրային անսարանների տիպին և հավանարար կապված է անդրշիրիմյան աշխարհի հետ: Այն որպես կենցաղային պատկեր ավելի ընդունելի է հունական ավանդությունը, որը հելլենիոսական շրջանում հավանարար ընդունվել է նաև Հայաստանում: Հիանալի վերարտադրված են շորերի ծալքերը: Ամենայն հավանականությամբ, նույն վարպետությամբ պատկերվել է նաև դեմքը, որը չի պահպանվել (աախա. XXIV₁):

Գահավորակի վրա նսած կնոջ արձանիկի մի բեկոր հայտնարեցվել է Արաաշաաի VII բլրից (աախա. XXIV₂): Բազմոցի վրա նսած աղամարդու մի արձանիկ էլ հայտնի է Գաոնից: Առավել հետաքրքիր մի բեկոր, բազմոցի մասով, դանվել է Արմավիրից⁴³:

Կավե արձանիկների մեջ բավականին մեծ խումբ են կազմում հեծյալները, որոնցից հայտնարեցվել են ինչպես դամբարանադաշից, այնպես էլ բլուրների⁴⁴ պեղումներից և Գաոնից: Հեծյալների արձանիկների շափերը շատ են ասրերեցվում իրարից (մոտ 7—8 սմ մինչև 18—20 սմ): Այս արձանիկների մեջ առավել բացահայտ ձևով են արահայտված արևայան և արեեկյան ուղղությունների հակահիշները: Դրանց մի մասին ընդունելի է զանգվածայնությունը, իսկ մյուսները աչքի են ընկնում իրենց մանրամասն մշակմամբ և մակերեսը պատկերելու արտակարգ զղացողությամբ: Բոլորն էլ պատկերում են աղամարդկանց, բավականին անվրդով դիրքով հեծած բուռն շարժման մեջ դտնվող քառասորոփ ու ծառս եղած ձիու վրա (աախա. XXVI₁₋₅): Պատկերների այս հակադրությունը բավականին հին ավանդույթներ ունի Հայկական լեռնաշխարհում և ինքնին կարող է վկայություն լինել այս պատկերների առնվազն հորինվածքի անդական ծագման մասին: Մի կերպարի մեջ ասրերեք ընավորությունների մարմնավորման երեույթը դալիս է տակավին ուրարական արվեստի ավանդույթներից (վահանների վրայի առյուծները)⁴⁵: Մարդիկ ձիու վրա պատկերված են երեք քառորդ թեքմամբ: Այս կեցվածքը հայ կերպարվեստում պահպանվեց մինչև XIII—XIV դդ. (հայ կենցաղային քանդակներ): Սակայն, ի ասրերեքություն նախորդ և հետագա նմուշների, սրանք կրում են հելլենիոսական արվեստի վառ արահայտված կնիքը, որը նկատելի է հա-

⁴¹ W. Van Ingen, *ԾԳ. աշխ.*, տախա. XXXVIII₂₇₅, XXXIX₂₈₅: Ch. Ziegler, *ԾԳ. աշխ.*, № 399:

⁴² В. Н. Пилипко, Терракотовые статуэтки музыкантов из Мерва, ВДИ, 1969, № 2, стр. 101—104, рис. 1, 2, *զբականությունը տե'ս նույն տեղում*:

⁴³ Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի 1973 թ. պեղումների արդյունքների նյութերից, ՊՐԸ, 1974, № 2, էջ 176, նկ. 3:

⁴⁴ Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении, стр. 75, табл. LXXXIX, 1, 2:

⁴⁵ Առյուծները պատկերված են խաղաղ դիրքով, սակայն կասաղած դեմքով: Այդ երեույթը ընդգծում է Բ. Բ. Պիտրովսկին, նշելով Ն. Ակուրդալի ապավորությունը: Б. Б. Пиотровски, Искусство Урарту, Л., 1962, стр. 118:

մաշափությունների ներդաշնակ գեղեցկությունը պահպանելու և ընդհանուր կերպարի ռեալիստական մշակման մեջ: Այդ հանգամանքը առավել լավ երեվում է արեմտյան ուղղության քանդակների մեջ, որոնք մեծ հմաությամբ պատկերում են մարդկանց և կենդանիների մարմինները, շորերի ծալքերը, ինչպես և շարժման ներքին ռիթմը: Տարադի տեսակներն իրենց հերթին ադրսվում են հելլենիստական ասարզների հետ, հատկապես թիկնոցները, որոնց ծալքերի արտահայտման ձևի մեջ նկատելի է վերոհիշյալ տիպականացած մոտեցումը:

Հեծյալների արձանիկներից երկուսը, որոնցից մեկը գտնվել է դամբարանադաշտից (աախտ. XXVI), մյուսը՝ VIII դրից, պատկերված են ձիերը հանդիստ կանգնած վիճակում, միայն առջեի ձախ ոտքը բարձրացրած դիրքով: Ըստ երևույթին, այսպեղ շեշտված է նրանց պաշամոնքային նշանակութունը: Այս և վերոհիշյալ արձանիկների միջև ընդհանուր է հեծյալի դիրքը, հագուստը և շարժումը: Ամենայն հավանականությամբ, դրանք միևնույն կերպարը վերաբաղող հեծյալներ են:

Արդյոք ո՞ւմ է պատկերել հեծյալի արձանիկը, որը, մոր ու մանկան արձանիկի նման, ամենաառաժմածն է և հայանի արձանիկների մեջ թվով ամենաշատը:

Հայ հեծելազորայինի՞: Դժվար թե: Ճիշտ է, հայկական այրուձին վաղուց էր հայանի ու փառարանված, սակայն նրա անդեն լինելը, ծածանվող մեծ թիկնոցը, որը կիսանգարեր հեծյալ մարտիկին կռվելու ժամանակ, չի իրոսում դրա օգտին:

Պարթևական շրջանում, Առաջավոր Ասիայում և Հռոմեական կայսրության մեջ, լայնորեն տարածված էր հերոսացած ու անմահացած (աստվածացված) հեծյալի կերպարը, որը պաշտամոնքային նշանակութուն ուներ⁴⁶: Շատ հնարավոր է, որ մեր հեծյալների արձանիկները պատկերում են հենց այդ կերպարը:

Արդյոք մեր հեծյալը չի՞ մարմնավորում Միհրին, Արամազդի որդուն, արեգակի և կրակի աստծուն: Ձին կապված էր արեգակի պաշտամոնքի հետ և հին Արևելքում ու Փոքր Ասիայում համարվում էր սրբազան կենդանի⁴⁷: Արեվելքի մի շարք ժողովուրդներ ձին համարում էին Արև՝ աստծուն ձոնված կենդանի⁴⁸: Հայերի մոտ նույնպես ձին պաշտվում էր և կապված էր արևի հետ: Քսենոփոնը իր ավար վերցրած պառավ ձին նվիրում է ղեղշավագին, որպեսզի նա անուցի ու զոհարների Հելիոսին⁴⁹, իսկ փոխարենը վերցնում է մարուկներից մեկը:

Ի. Ա. Օրբելին և Կ. Վ. Տրևերը դտնում են, որ Կովկասի ժո-

⁴⁶ А. Н. Щеглов, Фракийские посвященные рельефы из Херсонеса Таврическо-го, Древние фракийцы в Северном Причерноморье, М., 1969, стр. 173—177; М. М. Кобылина, Античная скульптура Северного Причерноморья, М., 1972, стр. 18.

⁴⁷ Այդ են վկայում ձիու պատկերով առաջավորասիական և հասկապես արեմենյան ու պարթևական սիստեմները:

⁴⁸ Հերոդոտոսը վկայում է, որ մասագետները բոլորից առավել պաշտում են արևը և նրան զոհ են մատուցում ձիեր (Herod., I, 216):

⁴⁹ Քսենոփոն, Անարասի (Թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երեան, 1970, էջ 98 և ծան. 26:

ղովորդներն իրենց հավաաալիքներում ձիու կերպարի մեջ անսնում էին արևի ասածուն՝ Միհրի⁵⁰։ Ձին իբրև արևի խարճրղանիշ լավ հայտնի էր իրանալեզու ցեղերի մոտ։ Սարարոնը վկայում է որ աքեմենյանների արապեաաաթյան ջրջանում Արմենիայի սաաաապր պարսից արքային ուղարկում էր տարեկան 20000 մարուկ միհրական աոների համար⁵¹։

Միհրի հետ են կապվում Տիգրան III-ի (մ. թ. ա. 20—8 թթ.) զրամների վրա պաակերված, աոչևի ոաքը բարձրացրած ձին⁵², Տիգրան IV-ի և էրասոյի զրամի վրա պաակերված ձին⁵³, վրասաանից հայանաբերված, հաաակին ձիու պաակերով արծաթյա թասերը⁵⁴, հունա-րակտրիական վերջին թագավոր Հելիոկեսի զրամների ընդօրինակաթյունների վրա պատկերված աոչևի ոաքը բարձրացրած ձին⁵⁵ և այլն։

Այս հարցի պարղարանման համար մեծ հետաքրքրաթյուն են ներկայացնում ձիու աոչևի ոաքը բարձրացրած հեծյալի արձանիկները։ Հինարևելյան պաաաամոնքային պատկերների մեջ հաաաաա են հանդիպում⁵⁶ կենաց ծառի մոա կանղնած, աոչևի ոաքը բարձրացրած սրրաղան կենղանիներ, կոմպոզիցիա, որր սիմվոլիկ է և ունի պաաաամոնքային նշանակաթյուն։ Աոչևի ոաքը բարձրացրած ձիու վրա նաաած հեծյալի պատկերներ կան վրասաանից⁵⁷ (Ուրրնիսի) հայտնաբերված փոքրասիական համարվող կնիքների վրա (մ. թ. ա. I—II դդ.), Բուվղարիայում⁵⁸ հայանաբերված արծաթյա թասի վրա (մ. թ. II—I դդ.), Նիսայից հայանաբերված պարթևական կնիքների դրոշմվածքների վրա,

⁵⁰ А. Борисова, Надписи на серебряной чаше из Борн (Грузия), Сообщения Гос. Эрмитажа, IV, 1963, стр. 8.

⁵¹ Strab., XI, 14, 9.

⁵² Զ. Պաուկեան, Արտաղեսան հարաաթեան զրամները, Վիեննա, 1969, աաթա. 6, նկ. 29—1, աաթա. 4, նկ. 30, P. Z. Bedoukian, A classification of the coins of the Artaxiad dynasty of Armenia, The American Numismatic society, Museum Notes 14 (1968), New York, p. 64, pl. XI₃.

⁵³ P. Z. Bedoukian; Coinage of the later Artaxiads, The American Numismatic Society, Museum Notes 17 (1971), New York, p. 138, fig. 3.

⁵⁴ К. Мачабели, Позднеантичная торевтика Грузии (по материалам торевтики первых веков нашей эры), Тбилиси, 1976, стр. 84, ссылка 196.

⁵⁵ В. М. Массон, Древнебактрийские монеты, чеканенные по типу тетрадрахм Гелиокла, «Эпиграфика Востока», II, М—Л., 1956, стр. 63—75; Б. Я. Ставиский, Кушанская Бактрия: проблемы истории и культуры, М., 1977, стр. 114, 115, 119, 120, рис. 12г.

⁵⁶ E. Strommenger-M. Hlrmer, Fünf Jahrtausende Mesopotamien, München, 1962, S 269, 273; К. Мачабели, Позднеантичная торевтика Грузии, Тбилиси, 1976, стр. 86.

⁵⁷ К. А. Джавахишвили, Памятники глиптики городища Урбниси, Тбилиси, 1972, стр. 91—92, № 131—135.

⁵⁸ Атанас Милчев, Новооткрыто сребърно Тракийско съкровище от с. Якимово III, Михайловградско, «Археология», 1973, № 1, стр. 1—3, рис. 3 а, б; Т. Герасимов, Златна апликация с изображение на Тракийския бог-кошкин, «Известия» на Археологическая институт, XV, 1946, стр. 186; К. В. Тревер, Памятники грекобактрийского искусства, М.—Л., 1941, стр. 87—90, рис. 23—24.

որը համարվում է հեծյալ թագավորի պատկերը⁵⁹։ Նման պատկերներ կան Յրահատակի և Գոթարոհի՝ մ. թ. ա. I դ. վերջի—մ. թ. I դ. դրամների վրա⁶⁰։

